ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ**

___ *Անհոփում* ___

___ *Ա. Խուդավերդյան, Լ. Պետրոսյան,
Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան* ___

Ներկայացված աշխատանքով գիտական շրջանառության մեջ են մտցվում Լանջրիկի, Քեթիի և Կապսի մարդաբանական նյութերը: Աշխատանքում փորձ է արվել համալիր ձևով ներկայացնել Շիրակի դաշտի կուրաբաքսյան մշակույթը կրողների մարդաբանական յուրահատկությունները և միջավայրի էկոբիոլոգիական ու սոցիալական հանգամանքների ադապտացիաները:

Շիրակի կուրաբաքսյան խմբի մարդաբանական նյութերի ուսումնասիրության արդյունքում հաջողվել է հաստատել հետևյալը. երեք զանգերի վրա փաստված է, որ գլուխները կտրված են, ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց մոտ կան ատամների կարիես, ատամների քարեր, կենդանության օրոք ատամների կորուստ, որ վկայում են ա) սննդակարգում գերակշռող կոպիտ, ածխաջրերով հարուստ սննդի օգտագործման մասին, բ) էպիգոդիկ ստրեսի նման մարկերներ, ինչպիսիք են էմալի հիպոպլազիան և *cribra orbitalia*-ն, ցույց են տալիս, որ բացասական գործոնների պարբերաբար ազդեցությունը (վարակերը, պարազիտները, քաղցի փուլերը) խոչընդոտել են մանուկ հասակում օրգանիզմի բնականոն զարգացմանը, գ) բերանի խոռոչի հիգիենայի բացակայություն, որը նպաստել է բորբոքային հիվանդությունների պարադոնտոզի, կարիեսի ավելոյար աբսցեսի տարածմանը, դ) բորբոքային գործընթացների (սիֆիլիս, թոքախտ) առկայությունը մատնանշում է ինֆեկցիոն բնույթի զանազան հիվանդությունների լայն տարածման մասին:

Сведения об авторах

Худавердян Анаит Юрьевна - к.ист.н., Институт археологии и этнографии НАН РА, E-mail: akhudaverdyan@mail.ru

Петросян Левон Ашотович –к.ист.н., Институт археологии и этнографии НАН РА, E-mail: galstyan-1966@mail.ru

Хачатрян Амазасп Акопович - Ширакский краеведческий музей, E-mail: smuseum@web.am.

Еганян Лариса Гришаевна –к.ист.н. Ширакский краеведческий музей, E-mail: smuseum@web.am

ԵՌՈՏԱՆԻ ԵՎ ՔԱՌՈՏԱՆԻ ՏԱԿԴԻՐ-ԶՈՀԱՍՍԵՂԱՆՆԵՐ
ՄԵԾ ՄԵՊԱՍՍԱՐԻ Ց

Մեծ Սեպասարից հայտնաբերված կուրարաքայան մշակույթի ծիսական խեցեղենի մեջ կան դեղնավուն, մանրահատիկ, երբեմն նաև քիչ ավազախառն, լավ հունցված և լավ թրծված կավից, եռոտանի կամ քառոտանի, սեղանաձև իրերի բեկորներ, որոնց երեսը հարթ է, անկյունները՝ սուր (տախտ. I, նկ.1-3, տախտ II, նկ. 3, 9) կամ քիչ կլորացող (տախտ. II, նկ. 1, 2, 4-8): Կան շրթերիզը քիչ բարձր (տախտ. II, նկ. 2, 5, 7, 8), երբեմն էլ ակոսով ընդգծված երեսով ձևեր (տախտ. II, նկ. 7, 8) : Սեղանի երեսի եզրերից սկսվում և աստիճանական թեքությամբ իջնում են իրանի հետ միաձույլ, կորությամբ դեպի դուրս հակված, խոյի երկարավուն գլուխ հիշեցնող ոտքերը (տախտակ II, նկ.1, 4, 5, 9): Գտածոների մեջ կա նաև ուղիղ ոտքերով տարբերակ (տախտակ II, նկ. 2): Սեղանաձև իրերի երեսներն ունեն 2-3սմ հաստություն, ոտքերի բարձրությունը 8սմ-14սմ է: Քննարկվող իրերի տարբերությունները եռանկյուն կամ քառակուսի ձևերի և կտրվածքում դրանց շրջանաձև, ձվաձև կամ քառակուսի ոտքերի քանակի (երեք կամ չորս) միջև է: Կախված ոտքի բարձրությունից և երեսի չափերից՝ տարբեր են նաև ոտքերի և երեսի միացումով ձևավորված կամարի կորությունն ու բարձրությունը:

Կրակի (մեկը նաև կարմիր ներկի) հետքերով այսպիսի իրերի բեկորներ հայտնաբերվել են ինչպես պաշտամունքային կառույցում՝ ուղղահայաց դիրքով կանգնած քառանիստ կոթողի մոտ, պայտաձև, խոյազուլիս պատվանդանների, անոթաձև օջախ-կրակարանի, նախշագարդ և անզարդ, ծիսական ամբողջական և բեկորային տարատեսակ անոթների ու նվիրաբերված-գոհաբերված այլ նյութերի հետ (in situ), այնպես էլ պեղավայրի տարբեր հատվածներում:

Կուրարաքայան մշակույթի հուշարձաններից քառանիստ կամ եռանիստ հատած բուրգի ձև ունեցող այսօրինակ իրեր հայտնաբերվել են Շրեշ բլուրում¹, Մոխրաբլուրում², Աղթամիրում³, Հատիձում⁴, Ագարակում⁵: Հայտնի են նաև Դվինից, Շենգավիթից, Քյուլ-թափայից⁶, Այրումից⁷, Արևիկից⁸ Գառնիից⁹, Քերիից¹⁰, Շիրակավանից¹¹:

¹ *Խանգաղյան Է.*, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 67, աղ. XVIII: *Յ. Խանզադյան*, Раннебронзовое поселение близ с. Аревик, СА, 1969, N 4, рис. 10.

² *Թումանյան Գ.*, Ագարակ I, Վաղբրոնզիդարյան բնակավայրը (2001-2008թթ.), Եր., 2012, էջ 52:

³ *Խանգաղյան Է.*, Գառնի IV, 1949-1966 պեղումների արդյունքները, Եր., 1969, էջ 70:

⁴ *Խաչատրյան Թ.* Древняя культура Ширака, Եր., 1975, стр. 72-73, рис. 33.

⁵ *Թումանյան Գ.*, Ագարակի հնավայրի I տեղամասի 2002թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XIII, Եր., 2005, էջ 52, տախտ. XIV/2:

⁶ *Խանգաղյան Է.*, 1967, նշվ. աշխ. էջ 67, աղ. XVIII:

⁷ *Եսայան Ս.* Древняя культура племен Северо-Восточной Армении, Եր., 1976, стр. 33, табл. 19/6.

⁸ *Խանզադյան Յ.* Раннебронзовое поселение близ с. Аревик, Советская Археология, 1969, N 4, рис. 9/1.

Միայն Հայկական լեռնաշխարհին հատուկ նման իրերը հայտնի են «*եռոտանի պատվանդաններ*»¹² կամ «*տակդիրներ*» անուններով¹³: Ըստ Է. Խանզադյանի՝ «նրանց վրա կա՛մ կավամաններ են դրվել, կա՛մ էլ պաշտամունքային նշանակություն ունեցող որևէ իր, արձանիկներ և այլն»¹⁴, միաժամանակ չբացատրելով նաև դրանց կենցաղային բնույթը¹⁵: Իրերը կարող են լինել վաղբրոնզիդարյան խեցեղենին բնորոշ զարդանախշմամբ (Շրեշ բլուր, Արևիկ, Քեթի, Շիրակավան և այլն) կամ անզարդ, ինչպես Մեծ Մեպասարի տարբերակները:

Վաղբրոնզիդարյան մշակույթի ուշ փուլում իրերն այլևս փայլեցված չեն, կոպիտ են, կավի մեջ խառնուրդներ կան, որոշակի փոփոխություն կա նաև ձևում, իսկ Հառիճի, Ծենգավիթի և Աղթամիթի օրինակները ցույց են տալիս, որ տեղի է ունենում որոշ պարզեցում՝ դառնալով իրերն այդ փուլին դասելու բնութագրական և տարբերակիչ հատկանիշ¹⁶:

Մեծ Մեպասարի գտածոները կրկնում են Հայկական լեռնաշխարհի համանման նյութերի ձևերը, նկատելի են նաև փոքր տարբերություններ ոտքերի և երեսի ձևավորման մեջ, որ կարելի է դիտել որպես լոկալ առանձնահատկություն: Հայաստանի հնագիտական հուշարձաններից հայտնի համանման գտածոների ձևերի համադրմամբ, ինչպես նաև քննարկվող իրերի հետ հայտնաբերված հստակ թվագրվող մյուս նյութերով, եռոտանի և քառոտանի սեղանաձև իրերը թվագրվում են կուրարաքայան մշակույթի ուշ փուլով:

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող իրերի բեկորներ նախնական դիրքով գտնվել են նաև պաշտամունքային կառույցում, կրակի մնացորդների հետ, այսինքն՝ անմիջականորեն կապված են կրակի (=օջախի) հետ և ակնհայտորեն ծիսական գործառույթ ունեն, հետևաբար նույնքան կարևոր է նաև վերջիններիս ծիսական բովանդակության բացահայտումը:

Չոգևոր մշակույթին առնչվող հնագիտական նյութը խոսում է դառնում ինչպես գրավոր աղբյուրներում պահպանված վկայությունների, այնպես էլ հավատարմիքների, սովորույթների և ծեսերի համադրումներով: Վերջինս, լինելով անհրաժեշտ, նաև բարդ է, քանի որ ծիսական իրերից յուրաքանչյուրը հաճախ ունի իմաստաբանական մի շարք կապերի հանգեցնող բազմաթիվ հատկանիշներ:

⁹ Խանզադյան Է., 1969, նշվ. աշխ., էջ 70, աղ. XX ստորինը:

¹⁰ Петросян Л. Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Ер., 1989, стр. 44, табл. 34/4; Badalyan R., Avetisyan P. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 161, pl. IV/17.

¹¹ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա., Հին Շիրակավան (1977-1891թթ. պեղումների արդյունքները), Եր., 2002, էջ 14, աղ. II, 7-11: Badalyan R. S., Avetisyan P. S. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 229, pl. II/20.

¹² Խանզադյան Է., 1967, նշվ. աշխ., էջ 67:

¹³ Թումանյան Բ., 2012, նշվ. աշխ., էջ 52:

¹⁴ Խանզադյան Է., 1967, նշվ. աշխ., էջ 67-68:

¹⁵ Хавзадян Э., 1969, նշվ. աշխ., էջ 168:

¹⁶ Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 73:

Այդուհանդերձ, նման մոտեցումն ուղղակի անհրաժեշտ է, որ ուսումնասիրությունը չլինի իրերի սուկ ձևի, որակի, չափերի և զուգահեռների փաստում:

Խեթական գրավոր աղբյուրներից հայտնի է, որ ծիսական որևէ կառույցում զոհաբերություն կատարելիս զոհ մատուցվում էր ոչ միայն աստվածություններին, այլ նաև ծիսական նշանակալից, հաճախ աստվածացված օբյեկտներին. գահին, պատվանդանին, որի վրա կանգնեցված էր աստծու արձանը, օջախին (=զոհասեղանին), պատուհանին, փայտյա սողնակին¹⁷: Ըստ նույն աղբյուրների վկայությունների՝ կրակի հետ անմիջականորեն կապված օջախներն աստվածացվում էին, նրանց նաև զոհ էին մատուցում¹⁸: Հետևաբար, ենթադրելի է, որ օջախների հետ կապված իրերը, այդ թվում նաև քննարկման առարկա նյութերը, ծիսական և պաշտամունքային որոշակի գործառույթ են ունեցել, և իրերի ձևերի վերը նշված բոլոր մանրամասները ծիսականորեն իմաստավորված են եղել:

Քննարկվող իրերը համադրելի են խեթական աղբյուրներում հիշատակվող սեղաններին: Խեթական ծիսական տեքստերում հաճախ են հիշատակվում զոհաբերությունը դնելու համար տեղադրվող հատուկ սեղանների մասին: Այսպես, խեթական թագավորի և թագուհու մասնակցությամբ ծեսերում օգտագործում էին երկու սեղան, մեկը՝ թագուհու, մյուսը՝ թագավորի համար¹⁹: Մի քանի ծեսերում շեշտվում է նաև յուրաքանչյուր աստվածության համար տեղադրվող առանձին սեղանի (օրինակ՝ Հաթիի պահապան աստվածուհու համար) մասին: Ծիսական սեղանները ոչ միայն կարող էին լինել մի քանիսը և կոչվել զոհ մատուցողի անունով, այլ նաև հաճախ սեղան էին տեղադրում և՛ թագավորի, և՛ թագուհու, իսկ մի ծեսում խոսվում է թագավորի, թագուհու, թագաժառանգների ու ճանաչված մարդկանց համար դրված աստվածություններին նվիրված ծիսական տասնութ սեղանների մասին, ընդ որում զոհաբերվելիք հացերի և աստվածությունների թիվը նույնն է²⁰: Այսինքն՝ յուրաքանչյուր աստվածության համար դրվում էր առանձին հաց: Նույն սեղանին կարող էին դրվել մի քանի աստվածությունների համար նվիրաբերումներ, ինչպես ամսվան նվիրված խեթական տոնին էր, երբ պատրաստվում էր տասներեք հացիկներով և լուսնակերպ մի հացով սեղան²¹:

Այսինքն՝ եռոտանի կամ քառոտանի իրերը տակդիր-գոհասեղաններ են, որոնք օգտագործվել են նվիրաբերվող-զոհաբերվող սնունդը կամ առարկան դնելու համար և չեն հակասում իրերին տրված վերը բերված բնութագրումներին:

Խեթական ծիսակարգում թագավորը, մոտենալով սեղանին, մանրում էր հացերը՝ դնելով դրանց կեսը սեղանի մի, մյուսը՝ հակառակ կողմում²²: Սեղանի տարբեր կողմերում դնելը ենթադրում է, որ արարողությունը կատարվել է՝ առա-

¹⁷ Ардзиева В. Ритуалы и мифы Древней Анатолии, Москва, 1982, стр. 66.

¹⁸ Шаншавили Н. Происхождение и функции очажных подставок Куро-аракской культуры. Археология, этнология и фольклористика Кавказа (материалы международной конференции), Первостольный святой Эчмиадзин, 2003, стр. 58-59.

¹⁹ Ардзиева В., նշվ. աշխ., էջ 140:

²⁰ Նույն տեղում, էջ 66, 116:

²¹ Նույն տեղում, էջ 66:

²² Նույնը:

ջնորդվելով ծիսակարգում աջ-ձախ (խեթական ծիսակարգում թագավորը սովորաբար հարաբերվում է աջ հատկանիշի, իսկ թագուհին՝ ձախի հետ²³), ուժեղ-թույլ, տղամարդ-կին հակադիր հատկանիշները շեշտելու անհրաժեշտությունից: Աջ կողմում դնում էին ամպրոպի աստծու օջախը (=գոհասեղանը) և գոհ մատուցում արական աստվածություններին, որ ծեսի ժամանակ կատարում էր ամպրոպի աստծու գահին նստած տղամարդը (=քուրմը), իսկ ձախ կողմում Հեփաթ աստվածուհու համար դրված օջախին (=գոհասեղանին) գոհ էր մատուցում կինը (քրմուհին)²⁴: Ծիսակարգում արականի և իգական հակադիր հատկանիշների արտացոլումը պահպանված է հոգեհացի ծեսում: Շիրակում հոգեհացի ժամանակ տղամարդկանց և կանանց համար սեղանները տարբեր սենյակներում կամ նույն սենյակում առանձին-առանձին դնելը նման հակադրության հետնագույն վկայություն են:

Քննարկվող նյութերի ծիսական գործառնություն արականի և իգականի հակադրության մասին են վկայում եռանկյուն կամ քառանկյուն ձևերը: Այն, որ եռանկյուն և քառանկյուն գոհասեղանները ծիսական որոշակի իմաստի կրողներ են, ծիսակարգում արական և իգական հատկանիշների տարբերակման մարմնավորում երեքի և չորսի ծիսական բովանդակության կրողներ, կարող են հաստատել երկրաչափական այդ ձևերի մասին հնդեվրոպական պատկերացումները: Քառակուսին խորհրդանշում է աշխարհի չորս կողմերը, չորս անկյունները²⁵, իսկ երեքը՝ տիեզերքի երեք շերտերը²⁶: Երեքը՝ դինամիկ, իսկ չորսը ստատիկ ամբողջականություն են, որոնց գումարը կազմող մոզական յոթ թիվը խորհրդանշում է տիեզերքի ամբողջականության գաղափարը²⁷: Եռանկյան և քառակուսու հետ կապված հնագույն այս պատկերացումներն արտացոլված են վաղբրոնզիդարյան ծիսական անոթների և պաշտամունքային իրերի (օջախներ, հենակ-պատվանդաններ, կանանց արձանիկներ և այլն) զարդանախշերում:

Գտածոների մեջ կա կարմիր հետքով քառանկյուն գոհասեղանի բեկոր: Թեև միակ օրինակն է, կարծում եմ, պատահական չէ և ենթադրում է ծիսակարգում նաև գույնի կարևորումը, մանավանդ որ կարմիրը տիրական է Մեծ Մեպասարի պաշտամունքային կառույցների ներքին ձևավորման մեջ, նաև ծիսական իրերի գունային լուծումներում²⁸:

Կարմիրն արևի, կրակի և արյան գույնն է: Արյունը սեմանտիկական նույն շարքում է կյանքի և մահվան հետ: Այստեղից էլ շատ կարևոր կոսմոգոնիկ մոտիվ՝ առաջին մարդու զոհաբերում աստվածներին կա՛մ իր միջավայրից մեկին, կա՛մ

²³ *Ардзиева В.*, նշվ. աշխ., էջ 137, 142:

²⁴ Նույն տեղում, էջ 136-137:

²⁵ *Голан А.* Миф и символ, М., 1993, стр. 105; *Ардзиева В.*, նշվ. աշխ., էջ 24:

²⁶ *Голан А.* նշվ. աշխ., էջ 32:

²⁷ *Топоров В.*, Числа, Мифы народов мира (шумитин`МНМ), Энциклопедия, т. 2, Москва, 1992, стр. 630.

²⁸ *Еганян Л.* Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индоевропейских верований и ритуалов, РАН, Институт этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая, Маргианская археологическая экспедиция. Труды Маргианской археологической экспедиции. Том 4, Исследования Гонур-Деле в 2008-2011 гг. Москва, 2012, стр. 278.

ինքն իրեն: Այսինքն՝ գոհի արյունով նոր կյանքի արարում: Տիեզերքի բոլոր չկանոնակարգված տարրերը գոհի մարմնի մեջ են ամփոփված և գոհաբերությամբ ավարտվում էր կանոնակարգման արարումը²⁹: Կարմիրը նույնացվում է արև-մուտքի, անդրաշխարհի և դժոխքի աստծու կամ տիրակալի հետ³⁰, որով էլ պայմանավորված են մահվան տիրակալ Յամայի³¹ և հինհռոմեական Վակիսի հագուստի կարմիր գույնը, Պրիսպի արձանը կարմիր ներկելը, փյունկյան Կադմուս ֆալիկ աստվածությանը «կարմիր աստված» կոչելը³² և այլն:

Այսինքն՝ գույնը խորհրդանիշ է, որն ամփոփվում է պաշտամունքի երբեմն խոր թաքնված կամ գաղտնագրված իմաստաբանությունը: Կարմիրով նշված ուղղանկյուն գոհասեղանը ձևով և գույնով համադրելի է հնդեվրոպական ընկալումներում արականին հատկացվող հատկանիշներին և ծիսակարգում կարող էր օգտագործվել արական աստվածությանը նվիրաբերում-գոհաբերություն մատուցելիս:

Եվ վերջինը: Ինչպես արդեն նշել ենք, գոհաբերության սեղանները բեկորային են (նաև՝ in situ գտնվածները), այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ծիսակարգի ժամանակ դրանք նույնպես գոհաբերվել են: Ծիսակարգից հետո անոթները կոտրելու ծես փաստված է նախ Մեծ Մեպասարի սրբարանում, որտեղ արարողակարգի ժամանակ օգտագործված բոլոր ամանները կոտրված են: Նման ծեսի մասին գրավոր վկայություններ կան խեթական տեքստերում: Այստեղ ևս ընդունված էր կենդանիների, խմիչքների, մրգերի և հացի գոհաբերությունից հետո բոլոր անոթները կոտրել³³: Ծեսն անցել է նաև քրիստոնեությանը: Աստվածաշունչը վկայում է այն անոթները, որոնց մեջ եփվում էր գոհաբերության կենդանու միսը, օգտագործելուց հետո պետք է կոտրելին. «*հողի ամանը, որի մեջ եռ է ածուել այս միսը, պիտի կոտրուի...*»³⁴:

Զոհաբերության ծեսից հետո անոթները կոտրելու ավանդույթը հատկապես արտացոլվել է թաղման ծեսում: Այն փաստված է Հայաստանի և հարևան երկրների տարածամանակյա թաղումներում³⁵: Նույն հավատալիքներից է սերում

²⁹ Дьяконов И. Архаические мифы Востока и Запада, Москва, 1992, стр. 133.

³⁰ Голан А., նշվ. աշխ., էջ 44:

³¹ Гринцер П. Яма, Мифы народов мира, Энциклопедия, т. 2, Москва, 1992, стр. 683.

³² Голан А., նշվ. աշխ., էջ 45:

³³ Otten H. Hethitische totem rituale, Berlin, 1958, p. 13-16.

³⁴ Աստվածաշունչ, Ղեկուցող, Գլ. 2, Ողջակեզի, հացի ընծայի եւ մեղքի պատարագի կանոններ, Շտուտգարդ, 1989, էջ 424:

³⁵ Տե՛ս **Խնկիկյան Օ.**, Դամբարանադաշտեր Միսիանի շրջանում, ԼՀԳ, 1984, թիվ 9, էջ 59: **Նույնի՝** Մյունխի մ.թ.ա. IV-I հազ. թաղման ծեսի մեկնության փորձ, ԲԵՇ, 1993, թիվ 3, էջ 126-135: **Խանգաղյան Է., Մկրտչյան Գ., Պարսապյան Է., Մեծամոր, Եր., 1973, էջ 169: Դևեջյան Ս.,** նշվ. աշխ., էջ 100: **Թումանյան Գ.,** Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), թեկնածուական ատենախոսություն 1997, էջ 17: **Խաչատրյան Ժ.,** Արտաշատ II, Եր., 1981, էջ 47: **Եզանյան Լ,** Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ, հ. 1, Եր., 2010, էջ 139:

ծեսը, երբ Օսիրիսի հարությանը նպաստելու համար եգիպտացիները նրա գերեզմանի վրա անտօնների բեկորներ էին շարում³⁶:

Օեսի հետնագույն վկայությունը՝ գերեզմանի վրա գինին հեղելուց հետո շշերն ու բաժակները, քարերին խփելով, կոտրելն է, որ մինչև անցյալ դարի 70-ական թվականները պահպանվում էր Լենինականում³⁷: Թաղման ծեսի ավարտին անտօնները կոտրելու նպատակը հանգուցյալի և իրերի փոխազդեցության կապերը կտրելն է³⁸ և վերածնունդն ապահովելը³⁹: Աստվածություններին նվիրաբերում-գոհաբերություններ մատուցելիս գոհասեղանները կոտրելու մոտիվը նույնպես մեռնելով վերածնվելն է, մասնավորապես եթե այն դիտարկենք նաև Մեծ Մեպասարում հնագիտական նյութով փաստված գարնանամուտին նվիրված ծեսերի համատեքստում. հնի մահը նախորդում էր նորի ծննդին, մեռնում էր հին տարին, որպեսզի ծնվեր նորը: Վերածնության նպատակով էր կատարվում նաև խեթական թագավոր Մուսիլին աֆագիայից՝ խոսելու ունակությունը կորցնելուց բուժելու ծեսը: Թագավորի մահվան մոտիվն արտահայտվում էր նրա անօտարելի սեփականությունն իրերը՝ սեղանը, անոթը, անկողինը, տոնական հագուստները, մարտակառքը և զենքերը հեռացնելով, իսկ ծիսական մահից հետո ծնունդը արտահայտվում էր մաքրագործող լվացմամբ⁴⁰: Նույն խորհուրդն ուներ նաև հիվանդին բուժելու նպատակով կատարվող հայկական ծեսը, երբ սուրբ ծառի մոտ հիվանդի ձեռքերը, ոտքերը լվանալուց հետո կուլան, խփելով ծառին, ջարդում էին⁴¹:

Այսպիսով, եռոտանի կամ քառոտանի իրերը գոհաբերության սեղաններ են, որոնց ձևերը երեքի և չորսի խորհրդանշական իմաստների տիրույթում են. եռանկյունին՝ իգականի, ուղղանկյունը՝ արականի: Պաշտամունքային իրերի յուրաքանչյուր ձև նախատեսված է եղել համապատասխան սեռի աստվածությանը գոհ մատուցելու համար: Տարբերակման իմաստը պահպանվել է նաև կանանց կամ տղամարդկանց կողմից գոհ մատուցելիս. կանանց համար դրվել են եռոտանի, իսկ տղամարդկանց համար՝ քառոտանի սեղաններ: Իրերի ծիսական գործառույթում հավանաբար որոշակի իմաստ է ունեցել նաև գույնը, և կարմիրով նշվել է արական աստվածությանը գոհ մատուցելու համար հատկացված սեղանը: Կարևորվել է նաև վերածնունդը կամ նորացումն ապահովելու նպատակով գոհասեղանները կոտրել-գոհաբերելը, որով էլ ավարտվել է ծեսը:

³⁶ *Церен Э. Лунный бог, Москва, 1976, стр. 364.*

³⁷ *Մեղրոյան Գ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, Հայ ազգագրություն և բանահյուսություն 6, Եր., 1974, էջ 249:*


³⁸ *Եզանյան Լ., նշվ. աշխ., էջ 140:*

³⁹ *Դեղյան Ս., 2006, նշվ. աշխ., էջ 100: Թումանյան Գ., 1997, նշվ. աշխ., էջ 17:*


⁴⁰ *Արձառնա Յ., նշվ. աշխ. էջ 108:*

⁴¹ *Ղազինյան Ա., Իրանի Ղարաղաղ գավառի հայերի ուխտավայրերը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 284:*


Տախտակ I




1 0 3



1 0 3




1 0 3



1 0 4

Տախտակ II



**ТРЕХ –И ЧЕТЫРЕХУГОЛЬНЫЕ ГЛИНЯНЫЕ СТОЛИКИ-
ПОДСТАВКИ ИЗ МЕЦ СЕПАСАРА***Резюме**Л. Еганян*

При раскопках памятника раннебронзового периода Мец Сепасар, обнаружены многочисленные образцы глиняных фрагментарных ритуальных столиков-подставок куро-араксской культуры трех-и четырехугольной форм. Предметы со следами огня, изготовленные из тщательно растертой, светлой глины, обнаружены и в ритуальных помещениях у очага или в слое золы. Предметы относятся к позднему этапу раннебронзового периода.

Сопоставляя упоминания в хеттских источниках об ритуальных столиках с указанными глиняными предметами, также хеттские и армянские верования и обычаи, можно уверенно сказать, что квадратные и треугольные предметы- ритуальные столики-подставки были предназначены для жертвоприношения; прямоугольные-мужским, а треугольные-женским божествам.

Ритуальная особенность столиков-подставок не только в форме: с красной отметиной предназначалась для жертвоприношения для божества мужского пола. После ритуал столики разбивались, цель: обновление и возрождение.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եզանյան Լարիսա Գրիշայի – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: smuseum@web.am.

*Համազասպ ԽԱՉԱՏՏՅԱՆ, Լարիսա ԵԳԱՆՅԱՆ,
Լևոն ՊԵՏՐՈՍՅԱՆ, Անդրեաս ՖՈՒՐԹՎԱՆԳԼԵՐ,
Թորիաս ՆԵՈՒՍԵՐ, Դորոթեա ՄԱՈՒԵՐՄԱՆ*

ԱԶԱՏԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2014թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2014թ. Շիրակի երկրագիտական թանգարանի և Հալեի համալսարանի հայ-գերմանական համատեղ հնագիտական արշավախմբի կողմից շարունակվեցին Ազատանի ուշ բրոնզ-երկաթի լայն տարածման ժամանակաշրջանների հնավայրի պեղումները:

Նպատակ ունենալով հստակեցնել առաջին դամբարանադաշտի տարածման սահմանները՝ աշխատանքներն իրականացվեցին տվյալ տարածքով արևելք-արևմուտք ձգվող հեղեղատի աջ, բարձրադիր, թեք լանջին: Այստեղ պեղվեցին երկու կից կրոմլեխներ և նույն լանջի վերին և միջին հատվածներում գտնվող, նույնպես կրոմլեխով շրջագծված 2 կիսավեր դամբարաններ:

Հարավային կրոմլեխն ուներ մոտ 4մ տրամագիծ: Հիմնահողային թաղման խուցը գտնվում էր կրոմլեխի հարավային կողմում: Այն ուներ հյուսիս-արևելք կողմնորոշում: Կմախքը կծկված վիճակում պատկած էր աջ կողքին՝ դեմքով դեպի հյուսիս: Ոտքերի առջև դրված էին երեք խեցանոթ՝ մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. I, չափագրություն): Ներկայացվող դամբարանի նյութերը հիմնականում համապատասխանում են ուշ բրոնզի ավարտական փուլին և թվագրվում մ.թ.ա. 14-13դդ:

Այս դամբարանին հյուսիսային կողմից կից կրոմլեխն ուներ մոտ 6մ տրամագիծ: Թաղման խուցը գտնվում է կրոմլեխի հյուսիսային կողմում և ծածկված է երկու մեծ, անկանոն ժայռաբեկորներով: Աջ կողքին կծկված, հյուսիս-հարավ դիրքով կմախքի վրա դրված էին միջին չափի մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. II, նկ. 1-6, չափագրություն 2): Կրոմլեխի հյուսիսային կողմում՝ սալաքարով ծածկված առանձին փոքր խցում, հայտնաբերվեց երկու կճուճ (աղ. II, նկ. 7, 8): Քննարկված դամբարանը, ըստ հայտնաբերված նյութերի, համաժամանակյա է հարավային կրոմլեխին:

2014թ. արշավախմբի կողմից պեղված հաջորդ դամբարանը գտնվում էր նախորդից մոտ հարյուր մետր արևմուտք: Լանջի մակերեսին թափված մի քանի ժայռերի տակից՝ հարավային կողմում՝ դիտվում էին ոսկորներ և խեցանոթների բեկորներ: Պեղումների ընթացքում այստեղ բացվեց կիսով չափ ավերված դամբարան: Կմախքի մնացորդների դիրքը հուշում էր, որ այն կծկված դիրքով պատկած է եղել աջ կողքին, հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղությամբ, դեմքով դեպի հարավ (չափագրություն 3): Հանգուցյալին ուղեկցող նյութեր էին՝ սևանյան տեսակի բրոնզյա դաշույն, մեկական բրոնզյա ապարանջան, ականջօղ, երեք խեցանոթ, սարդիոնից և շաղախից ուլունքներ (աղ. 3): Նման անոթները հայտնի են ուշ բրոնզի վաղ փուլի, իսկ Ազատանի գտածոների զուգահեռները՝ հիմնականում ուշ բրոնզի դարի վերջին փուլի և վաղերկաթիդարյան ժամանակաշրջանից: Ուսումնասիրվող դամբարանի ժամանակագրական տեղորոշման խնդրում մեծ կարևոր

րություն ունի մ.թ.ա. II հազարամյակի վերջում և I-ի սկզբում ձևավորված սևանյան տեսակի դաշույնը:

Այս դամբարանի գտածոների մեջ կան բրոնզյա ապարանջան և մատանի, ինչպես նաև սարդիոնից, շաղախից և խիտունջից ուլունքներ: Ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան ժամանակաշրջանին բնորոշ այս նյութերով դամբարանը թվագրվում է մ.թ.ա. 11-10-րդ դարերով:

Հաջորդ կիսավեր դամբարանը գտնվում էր սրանից վերև՝ մոտ 200մ հյուսիս-արևելք: Դամբարանը նախորդների նման շրջափակված է եղել մոտ 4մ տրամագծով, լանջի թեքությամբ հողածածկույթը ներքև սահելու պատճառով թաղման խցի վրա դրված մեծ, անկանոն ժայռաբեկորները տեղաշարժված և մասամբ ավերված, ձվածիր կրոմլեխով: Թաղման խուցն ուներ հյուսիս-հարավ կողմնորոշում: Կմախքից պահպանվել էին գանգը, ազդոսկրերը և մի քանի այլ ոսկորներ: Ըստ պահպանված ոսկորների՝ կարելի է ենթադրել, որ թաղումը կատարվել է հարավ-հյուսիս ուղղությամբ, կմախքն ունեցել է աջ կողքին կծկված դիրք, դեմքով՝ դեպի արևելք: Դատելով ազդոսկրի մոտ կուտակված տարբեր ոսկորներից՝ չի բացառվում դիամասնատման ծեսը (չափագրություն 4): Թաղման ուղեկցող նյութերն են երկու կճուճ և ոսկորից իլիկի գլուխ (աղ. IV, նկ. I, 2, 3), որոնց ձևերը և զարդանախշերը թույլ են տալիս դամբարանը թվագրել մ.թ.ա. 11-10-րդ դարերով:

2014 թվականին Ազատանում պեղումներ ընթացան նաև ամրոցի հարավ-հայաց լանջի ստորոտում, որտեղ նախ 1995թ. այնուհետև նաև 2013թ. պեղվել էին պատահական բացված ժայռափոր մեկական դամբարաններ (չափագրություն 5, նկ. 1): Դամբարանի այս տիպը Հայաստանի ուշ բրոնզ-վաղ երկաթի ժամանակաշրջանների դամբարանային համալիրներում փաստված չէ և առայժմ եզակի է:

Տեղանքը, որտեղ բացվել են նշված ժայռափոր թաղումները, հեղեղատի արևմտյան լանջի ստորոտն է, որտեղ վերին շերտն իրենից ներկայացնում է կրային զանգվածով շաղախված բազալտյա հոծ կեղև, որը նստած է հրաբխային ծագման թույլ, պեմզայատիպ զանգվածի վրա: Թաղման համար հեղեղատի լանջի ստորին մասում հորիզոնական անցք է բացվել, այնուհետև մոտ 1մ խորանալով ժայռի մեջ և ընդարձակվելով, հորիզոնական հարթ մակերեսով թաղման խուց է փորվել: Թաղումը կատարելուց հետո մուտքը փակվել է մեծ քարով կամ միջին մեծության քարերի շարվածքով՝ միաժամանակ պահպանելով լանջի բնական թեքությունը: Կառուցողական նման լուծումն ապահովել է թաղումների աննկատ մնալը:

2013թ. պեղված դամբարանի հարևանությամբ, դեպի հյուսիս պեղվեցին ևս 2 ժայռափոր թաղումներ (նկ. 1):

Ժայռափոր դամբարաններից հյուսիսայինի մուտքը ուներ մոտ 0,8մ լայնություն և փակված էր մեծ ժայռաբեկորով: Մոտ 1մ խորանալով ժայռի մեջ անցքն ընդարձակվում և վերածվում է 1,2մx1,8մ չափերով, հյուսիս-հարավ կողմնորոշմամբ թաղման խցի (չափագրություն 5, նկ. 3): Խցի կենտրոնում բացվեց հարավ-հյուսիս դիրքով, աջ կողքին կծկված դիրքով պատկած, դեմքով դեպի արևելք կմախքը: Մի քանի անոթներ շարված էին կմախքի շուրջը շուրջը: Այլ անոթներ և մեկ այլ զանգ բացվեցին ավելի ցածր մակարդակում: Ընդհանուր առմամբ, դամբարանը

րանից հայտնաբերվեցին հինգ ամբողջական և տարբեր անոթների մի քանի բեկորներ, մեկական բրոնզյա ապարանջան և մատանի (աղ.V): Դամբարանում թաղման ուղեկից իրերը համաժամանակյա են հարևանությամբ պեղված ժայռափոր մյուս դամբարանների նյութերին և Հայաստանի այլ հուշարձաններից հայտնի բազմաթիվ գուգահեռների համադրմամբ թվագրվում են մ.թ.ա. 12-րդ դարով:

Հարավային ժայռափոր դամբարանի մուտքն ունի մոտ 0,8մ լայնություն և նույնքան երկարություն: Թաղման խուցն ունի մոտ 1,5մ կողերով անկանոն ուղղանկյան ձև: Դամբարանում կմախք և գանգ չհայտնաբերվեցին: Գտնվեցին կենդանական մի քանի ոսկորներ (չափագրություն 5, նկ. 2):

Խցում հայտնաբերվեցին տասը կավամաններ՝ քրեղաններ, կճուճներ և տարատեսակ այլ նյութեր (աղ.VI), որոնք ունեն ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններին բնորոշ հատկանիշներ, համադրելի են 2013թ.-ին պեղված ժայռափոր դամբարանի նյութերին ու թվագրվում են մ.թ.ա. 12-րդ դարի սկզբով:

Ազատանում 2014 թվականին շարունակվեց նաև կատակոմբային դամբարանների ուսումնասիրությունը: Պեղվեց ևս մեկ կատակոմբային դամբարան, որն այս ձևին բնորոշ կառուցվածք ունի. քարե խցանով փակված ուղղահայաց հորատանցք, որը, ներքևում ընդարձակվելով, վերածվում է թաղման խցի և կրկնում է Արթիկի կատակոմբային թաղումների ձևը: Արթիկում կատակոմբային թաղումները կատարված են տուֆի շերտի մեջ, իսկ Ազատանում վերին շերտը հրաբխային ծագմամբ, պեմզայատիպ, փափուկ ապարների վրա նստած բազալտյա կեղև է: Դամբարանը ներառված էր 5, 5մ x 4, 5մ ձվածիր, գույգ շարքով կրոմլեխի մեջ: Կրոմլեխի հյուսիսային մասում՝ մակերեսին, հսկայական ժայռ է, որը գրավում է կրոմլեխի ներքին մակերեսի մեկ երրորդից ավելին: Մրան հարավային կողմից հարում էին մի քանի խոշոր ժայռաբեկորներ: Կատակոմբի մուտքը գտնվում է հարավային կողմում՝ մեծ ժայռից մոտ 1,2մ ներքև: Ժայռի տակ բացվեց մոտ 0,7մ բարձրությամբ, միջին քարերով շարված պատ, որը փակում էր թաղման խցի մուտքը: Դրա դիմաց հորիզոնական դիրքով ընկած էր կոպտատաշ բազալտե մոտ 1,25մ բարձրությամբ կոթող, որն, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե կանգնած է եղել մակերեսին և, բացի ծիսական նշանակությունից, մատնանշել է մուտքի տեղը: Մուտքը փակող պատը հեռացնելուց հետո բացվեց 0,7մ լայնությամբ և մոտ 1մ երկարությամբ միջանցք, որը, մտնելով ժայռածածկույթի տակ, ընդարձակվելով վերածվում է 2,3մ երկարությամբ և 1,5մ լայնությամբ թաղման խցի: Կատակոմբում կատարվել է մի քանի թաղում: Արդեն իսկ մուտքի մեջ հայտնաբերվեցին խեցանոթներ, մարդկային և կենդանական ոսկորներ, մուտքի ձախ կողմում, թաղման խցի սկզբնամասում քրեղանի մեջ՝ մարդու գանգ:

Դամբարանից հայտնաբերվեցին թվով տասնվեց անոթներ, երկաթյա դանակ, բրոնզյա երկու ապարանջան, երեք մատանի, ականջօղ, ասեղ և հերուն (աղ. VI, նկ. 1-22, չափագրություն 6): Դամբարանում կատարվել են տարժամանակյա հինգից վեց թաղում: Ավելի վաղ թաղումների ոսկորները և ուղեկցող նյութերը տեղափոխելով դամբարանի խորքը և պատերի տակ՝ կատարվել են հաջորդ թաղումները: Դրա հետևանքով անոթների բեկորները խառնված էին մարդաբանա-

կան նյութերի և կենդանական ոսկորների հետ: Համեմատաբար անխաթար պահպանված էր վերջին թաղումը, որ բացվեց խցի ձախ կողմում՝ արևմտյան պատի երկայնքով, և ուներ հարավ-հյուսիս դիրք:

Պեղված դամբարանները դիտարկենք ժամանակագրական հերթականությամբ:

Թիվ 2 կրմվեխի հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք հիմնահողային դամբարանախցում գտնվեցին երեք խեցանոթներ՝ մեկ կճուճ և երկու քրեղան (աղ. 1, նկ. 1, 2, 3): Կճուճն ունի հարթ հատակ, փքուն իրան, գլանաձև, քիչ բարձր վիզ, դուրս ոլորված շուրթ: Ուսերին արված են ակոսագոտիներ, ևս մեկը՝ իրանի ուռուցիկ մասում (աղ. 1, նկ. 1): Անոթների այս տեսակի սկզբնավորումը և լայն տարածում ստանալը ակնհայտ են Քեթիի «Քարոտ հողեր» դամբարանադաշտի վերին գյուղին հարակից տարածքներում պեղված միջինից ուշ բրոնզի անցման ժամանակաշրջանի թիվ 18-20 դամբարաններում¹, լավ հայտնի են նաև Հառիճի², Լոռի բերդի³ դամբարաններում: Նկատենք, որ կճուճների այս տեսակը հաջորդ՝ երկաթիդարյան ժամանակաշրջանում գրեթե ամբողջությամբ ձևափոխվում է, ինչը հավանաբար պայմանավորված է կիրառության փոփոխությամբ:

Ներկայացվող դամբարանի մյուս նյութերը միայնցից փոքր-ինչ տարբեր երկու քրեղաններ են (աղ. I, նկ. 2, 3), որոնցից մեկի հատակին մոտ մասը զարդարված է երեք շարք ակոսագոտիներով (աղ. I, նկ. 2), նույն նախշով մյուսի միայն ուսերն են զարդարված (աղ. I, նկ. 4): Ի տարբերություն այս դամբարանի ներկայացված կճուճի՝ նման քրեղանների ձևը թեև ավելի վաղ է, սակայն տարբեր ժամանակներում չնչին փոփոխություններ է կրել:

Ազատանի դամբարանի ոլորված շուրթով քրեղանները հայտնի են դեռևս միջին բրոնզի ժամանակաշրջանից, ավելի լայն կիրառություն են ունեցել հատկապես ուշ բրոնզի դարաշրջանում և կրելով ձևի ու հարդարման որոշ փոփոխություններ՝ շարունակում են օգտագործվել նաև հետագա դարերում: Ազատանի դամբարանների նյութերը (կճուճ, քրեղան) հիմնականում համապատասխանում են ուշ բրոնզի ավարտական փուլի՝ մ.թ.ա. 14-13դդ. նյութերին:

Քննարկված դամբարանից արևելք պեղված արևելք-արևմուտք կողմնորոշմամբ հիմնահողային դամբարանում գտնվեց խոհանոցային երեք կճուճ (աղ. II, նկ. 1, 4, 6), որոնցից երկուսն ունեն դուրս ձկված շուրթեր (աղ. II, նկ. 1, 4): Շուրթի նման ձևը գալիս է ուշ բրոնզի դարաշրջանից և շարունակվել է պահպանվել նաև հետագայում:

Հաջորդ դամբարանը գտնվում է նախորդից արևմուտք՝ հարյուր մետր հեռու: Գետնի մակերևույթին՝ փոքր ժայռի հարավային եզրի տակից, երևում էին ոսկորների և խեցանոթների բեկորներ: Կիսով չափ ժայռի տակ կատարված թաղման ուղեկցող նյութերն են՝ սևանյան տեսակի բրոնզյա դաշույն, բրոնզյա ապարանջան և ականջոդ, երեք խեցանոթ և սարդիոնից ու մածուկից ուլունքներ (աղ. III), նաև խոշոր գորշ կճուճներ, որոնց զուգահեռները ուշ բրոնզի դարի վերջին

¹ *Петросян А. Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, табл. 42-44.*

² *Хачатрян Т. Древняя культура Ширака, 1975, Ер., стр. 97-123.*

³ *Деведжян С. Лори-Берг I, Ер., 1981, табл. XII-XIV.*

փուլից և վաղ երկաթիդարյան ժամանակաշրջանի հուշարձանների՝ Արթիկի թիվ 69, 77⁴ և այլն, Մեծամորի⁵, ինչպես նաև Թալինի⁶, Շիրակավանի⁷, Չեչմանիսի⁸ և այլ դամբարանների նյութերում են: Ուշագրավ է հատկապես առավել փքուն իրանով, ցածր վզով քիչ հանդիպող կճուճը (աղ. III նկ. 3): Նման անոթներ հայտնի են Մաստարայի ուշ բրոնզի վերջին փուլի թիվ 7⁹, Տանձավերի թիվ 3¹⁰, ուշ բրոնզի և վաղերկաթիդարյան, ինչպես նաև Արթիկի վաղերկաթիդարյան դամբարաններից: Գտածոներից է նաև դուրս թեքված շուրթով խոհանոցային կճուճը (աղ. III, նկ. 2): Անոթների այս տիպն սկսվում է ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան ժամանակաշրջաններից և շարունակվում են նաև հետագա դարաշրջաններում: Ուսումնասիրվող դամբարանի ժամանակագրության համար կարևոր է սևանյան տեսակի դաշույնը (աղ. III, նկ. 6), որի գուգահեռները Թալինի վաղերկաթիդարյան թիվ 64¹¹, Մաստարայի թիվ 24¹², ինչպես նաև Մակարաշենի¹³, Թոեդքի¹⁴ և մ.թ.ա. 9-8դդ. թվագրվող մի շարք այլ դամբարանների նյութերում են: Նշենք նաև, որ վերջին երկուսը երկմետաղ են: Օնիկ Խնկիկյանը, անդրադառնալով ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան դաշույնների տեղայնացման հարցին, նյութերի համեմատական վերլուծությամբ հանգել է այն եզրակացության, որ դաշույնների ներկայացվող տեսակը ձևավորվել է Կուր Արաքսի միջագետքում մ.թ.ա. II հազ. վերջում և I հազ. սկզբում¹⁵: Դամբարանում գտնվել են նաև բրոնզյա զարդեր՝ ապարանջան և մատանի (աղ. III, նկ. 7, 8), սարդիոնից (աղ. III, նկ. 4), մածուկից և խխունջից (աղ. III, նկ. 5) ուլունքներ, որոնք նույնպես բնորոշ են ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան ժամանակաշրջանին:

Լեռան հարավիայաց լանջի ստորոտում պեղված ժայռափոր երկու թաղումները գտնվում էին կողք կողքի: Դրանցից հարավայինի նյութերը տասն են. կավամաններ՝ քրեղաններ, կճուճներ և տարատեսակ այլ նյութեր (աղ. VI): Այս դամբարանից հայտնաբերված քրեղանները երկու տեսակի են: Առաջինը հարթ հատակով, երկթեք իրանով, դուրս թեքված կամ ոլորված շուրթով (աղ. VI, նկ. 4, 5,

⁴ Хачатрян Т. Арктикский некрополь, каталог, Ер., 1979.

⁵ Khazadryan E. Mesamor II, necropol, volum II, Paris, 1995, pl. 42 (1).

⁶ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Եր., 2006, աղ. 19, նկ. 12, աղ. 34, նկ. 5:

⁷ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան, Եր., 2002, աղ. LXXV, նկ. 8

⁸ Դեհջյան Ս., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետքում, Եր., 2001, աղ. III, նկ. 1.

⁹ Pavel Avetisyan, Arsen Bobokhyan, the pottery traditions of the Armenian middle to late Bronze age transition in the context of bronze and iron age periodization, p. 189, fig. 42 (12).

¹⁰ Хакікян Օ., Syunik During the Bronze and Iron Ages, Mayreni Publishing, 2002, p. 188, pl. XXVII.

¹¹ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 215, աղ. 19, նկ. 12:

¹² Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia I, Mt. Aragats and its Surrounding Region// BAR International Series 1697, 2007, p. 218, pl. VI.

¹³ Мартиросян А. Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, стр. 205, рис. 10.

¹⁴ Менабде М., Давлианидзе Ц. Могильник Триаleti, каталог I, Тбилиси, 1968, табл. VII, рис. 323.

¹⁵ Խնկիկյան Օ., Հայաստանի դաշույնատեսակների տեղայնացման փորձ (ուշ բրոնզ վաղ երկաթի դար), Բանբեր Երևանի համալսարանի, 1991, N 2, էջ 79-91:

7) է: Այս տեսակն ուշ բրոնզի դարի վաղ փուլի գնդաձև իրանով քրեդանների փոքր-ինչ ձևափոխված, երկթեք իրանով անոթներից է, որոնք, սկսած ուշ բրոնզի վերջին փուլից, հայտնի են Արթիկի գրեթե բոլոր Շիրակավանի թիվ 3, 4, 6¹⁶, Մեծամորի թիվ 8¹⁷, Քուչակի թիվ 1-5 և այլ դամբարաններից¹⁸: Նշենք, որ ուշ բրոնզի ավարտական փուլի և վաղերկաթիդարյան ժամանակաշրջանների վաղ և ուշ փուլերի ձևերը հաճախ միասին են հանդիպում: Երևույթը դիտվում է նաև ներկայացվող դամբարանում (աղ. VI, նկ. 6), սակայն վերջինիս ձևը լրիվ չի համապատասխանում վաղ փուլի հատկանիշներին և վաղ նյութերի այլափոխված տեսակ է: Քննարկվող դամբարանում գտնվել է նաև սկուտեղ հիշեցնող իր (աղ. IV, նկ. 8), որը մոտ է Արթիկի թիվ 208 և թիվ 223¹⁹, Քեթիի թիվ 34²⁰ և Ոսկեհասկի վաղերկաթիդարյան դամբարանների սկուտեղներին²¹: Մյուսը ևս քիչ հանդիպող, հարթ հատակով, երկթեք իրանով անոթ է (աղ. VI, նկ. 9), որը, չունենալով ստույգ զուգահեռներ, որոշ ընդհանրություններ ունի Օշականում հայտնաբերված օրինակներից մեկի²² և Թալինի թիվ 57 դամբարանի նմուշի հետ²³: Դամբարանի վերջին իրը փոված կողերով թասի բեկորն է (աղ. VI, նկ. 10): Նման նյութեր հայտնի են Թալինի թիվ 70, 71²⁴ և Շիրակավանի վաղերկաթիդարյան թիվ 31²⁵ դամբարանների նյութերում: Մեծ թվով նման իրեր հայտնի են Շիրակավանի բնակատեղիի վաղերկաթիդարյան շերտերից²⁶: Ժամանակագրության հստակեցման հարցում առավել կարևոր է Մեծամորի հրդեհված շերտում զուգահեռ նյութերի առկայությունը²⁷:

Հյուսիսային կողմում բացված կատակոմբային թաղման նյութերը մասամբ կրկնում են հարավայինին (աղ. V, նկ. 2, 4, 6): Այստեղ նորույթ են քիչ բարձր վզով կճուճը, բաժակը, սաջի բեկորը, բրոնզյա ապարանջանն ու ականջօղը (աղ. V): Ուսերը ակոսագոտիների մեջ ներառված, հատիկաշարով զարդարված այս կճուճը (աղ. V, նկ. 1) Արթիկի թիվ 275 դամբարանի օրինակի կրկնությունն է²⁸: Այս նյութերն ընդհանրություններ ունեն նաև թիվ 14, 15, 17 և այլ դամբարանների նյութերի հետ: Ազատանի օրինակին շատ մոտ է նաև Թալինի թիվ 89 դամբարանի գտածոն²⁹: Նշված նյութերը զգալի չափով մոտ են նաև վաղերկաթիդարյան խոհանոցային կճուճներին: Դամբարանի մյուս նորույթը գլանաձև բաժակն է

¹⁶ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLIII:

¹⁷ Kahanzadyan E., նշվ. աշխ., աղ. 44:

¹⁸ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 189, աղ. II.

¹⁹ Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 194, 203:

²⁰ Петросян Л., նշվ. աշխ., աղ. 59:

²¹ Նույն տեղում, աղ. 66, 67:

²² Есаян С., Калантарян А., Ошакан І, Основные результаты раскопок 1971 – 1982., табл. LXXXIX, рис. 5.

²³ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 37, նկ. 9:

²⁴ Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 256, աղ. X:

²⁵ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LXXI, նկ. 17:

²⁶ Նույն տեղում, աղ. LXXVII, նկ. 7, 9-11:

²⁷ Խանզադյան Է., Մկրտչյան Գ., Պարսամյան Է., Մեծամոր, Եր., 1973, աղ. XVI, XV:

²⁸ Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 225, 118-121:

²⁹ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 259, աղ. 57:

(աղ. V, նկ. 3): Ճիշտ նույն ձևն ունի նաև այս դամբարանից գտնված բաժակը (աղ. V, նկ. 3): Նկատենք, որ Ագատանի նշված բաժակները յուրօրինակ են և տարբերվում են նույնիսկ Շիրակի դաշտի Քեթիի³⁰ համաժամանակյա նյութերից: Վերջիններիս նմանակները հայտնի են նաև Հայաստանի երկաթիդարյան մի շարք հուշարձաններից՝ Օշական³¹, Թալինի թիվ 5 դամբարան³², Մաստարա³³: Մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Շիրակավանի բնակատեղիի վաղերկաթիդարյան շերտերից³⁴ և Մեծամորի հրդեհված շերտից³⁵:

Ագատանի այս դամբարանում գտնվել են նաև մեկական բրոնզյա ապարանջան, մատանի (աղ. V, նկ. 8,9): Գտածոների մեջ կա նաև սաջի բեկոր (աղ. VI, նկ. 5): Տնտեսական կենցաղում օգտագործվող սաջեր հայտնի են Կարմիր բլուրի³⁶, Մեծամորի³⁷ և Շիրակավանի³⁸ երկաթիդարյան բնակատեղիներից:

Նյութերի քանակով և բազմազանությամբ այքի է ընկնում Ագատանի դամբարանադաշտի դարավանդի վրա պեղված կատակոմբային թաղումը (աղ. VII): Ժամանակագրական առումով այս դամբարանի նյութերը համահունչ են Ագատանի արդեն քննված դամբարանների նյութերին, այդ թվում են նաև երկթեք իրանով քրեղանները (աղ. VII, նկ. 16, աղ. VII, նկ. 14): Այս դամբարանի նյութերում կան նաև ավելի վաղ ձևավորված գնդաձև իրանով քրեղաններ (աղ. VII, նկ. 3, 6, 10), որոնք եզակի չեն նաև վաղերկաթիդարյան հուշարձաններում և գտնվել են Քեթիի թիվ 5, 31, 32, և 36 դամբարաններում³⁹: Քրեղանների այս տեսակը սակավ քանակով հանդիպում է երկաթիդարյան փոքր-ինչ ավելի ուշ փուլերի հնավայրերում. Գոլվինո⁴⁰, Քեթի⁴¹ և այլ:

Ագատանի կատակոմբային այս թաղման ուղեկցող նյութերի մեջ կա նաև ուսերին բազմալար ակոսագոտիներով մի սափոր, որի իրանը զարդարված է կտրելու եղանակով արված եռանկյունաձև, մեջը կետերով, մի դեպքում էլ՝ եռանկյունիներով լցված զարդանախշերով (աղ. VI, նկ. 5): Սափորների այս տեսակը ևս երևան է գալիս վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններում՝ Արթիկի թիվ 223⁴², Այգեշատի թիվ 1, 5, 13, 31⁴³ և այլ, ինչպես նաև Գոլվինոյի մ.թ.ա. 9-8-րդ դամբարաններ: Մյուս անոթը հարթ հատակով, փքուն իրանով, դուրս թեքված շուրթով կճուճ է, որի իրանը զարդարված է կետերով լցված եռանկյունիներով

³⁰ Петросян А., նշվ. աշխ., աղ. 57, 61:

³¹ Есаян С., Калантарян А., նշվ., աշխ., աղ. LXVII, նկ. 4:

³² Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 233, աղ. 37, նկ. 5:

³³ Avetisyan P., Bobokhyan A., նշվ. աշխ., էջ 180, նկ. 43 (3):

³⁴ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LX, XL, նկ. 1-4:

³⁵ Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., աղ. X:

³⁶ Երևանի հնագիտական իրերի կատալոգ, Եր., 1969, աղ. XXXIX (33-41), աղ. XL:

³⁷ Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է., նշվ. աշխ., աղ. XXI:

³⁸ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLIX, նկ. 37:

³⁹ Петросян А., նշվ. աշխ., աղ. 56-58:

⁴⁰ Мартиросян А., Раскопки в Головино, Ер., 1954, табл. XII.

⁴¹ Նույն տեղում, աղ. 71:

⁴² Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 203:

⁴³ Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 1, 5, 13, 25:

(աղ. VI, նկ. 2): Անոթի նման ձևը հայտնի է Մեծամորի հրդեհված շերտից⁴⁴, Թալինի թիվ 48, 69⁴⁵, Օշականի թիվ 67⁴⁶ դամբարաններից: Ազատանի կճուճի զարդերը կրկնում են Մոզի երկրորդ և երրորդ բլուրների պեղումներով հայտնաբերված նյութերը⁴⁷: Նման զարդեր ունեն նաև Շիրակավանի թիվ 115 դամբարանի անոթները, որոնց մեջ առկա է նաև Ազատանի դամբարանի կճուճի նմանակը⁴⁸: Ուսումնասիրվող դամբարանի մյուս կճուճը (աղ. VI, նկ. 11) ևս զուգահեռներ ունի Շիրակավանի թիվ 9, 10 և 11 համաժամանակյա դամբարաններում⁴⁹: Ազատանի դամբարանում գտնված մյուս կճուճն ունի հարթ հատակ, փքուն իրան, ցածր, գլանաձև վիզ, դուրս ոլորված շուրթ: Ուսերը զարդարված են սեղմումով արված ցանցագոտիով (աղ. VI, նկ. 1): Իրի ձևը զգալի ընդհանրություններ ունի Լենինականի⁵⁰, Արթիկի թիվ 274⁵¹, Մաստարայի թիվ 7, 18⁵² դամբարանների նյութերի հետ: Ազատանի կատակոմբային թաղման նյութերում կա նաև ձեռածեփ կիսագնդաձև անոթ (աղ. VI, նկ. 12), որի զուգահեռները Արթիկի թիվ 263, 579⁵³ և Թալինի թիվ 57⁵⁴ դամբարանների նյութերում են: Նույն դամբարանում կա նաև վերը ներկայացված կճուճներից որոշ չափով տարբերվող ևս մի օրինակ, որն ունի հարթ, լայն հատակ, գնդաձև իրան, ցածր վիզ, դուրս թեքված շուրթ, ուսերին՝ քիչ բարձր ելուստներ (աղ. VI, նկ. 14): Կճուճների այս տեսակը հայտնի է երկաթիդարյան գրեթե բոլոր հուշարձաններից (Թալին, Մաստարա, Օշական և այլն), և հարդարումը կրկնում է Դիլիջանի Կամոյի փողոցի⁵⁵ և Քեթիի թիվ 42⁵⁶ դամբարանների նյութերը:

Քիչ հանդիպող, փոքր-ինչ ուռուցիկ իրանով, բարձր ուսերով անոթի (աղ. VI, նկ. 4) վաղերկաթիդարյան օրինակները հայտնի են Օշականի թիվ 85⁵⁷, Շիրակավանի թիվ 121⁵⁸, Քեթիի թիվ 36⁵⁹, Չեչմասնիսիի թիվ 1 և 16⁶⁰ դամբարանների նյութերում: Վերջիններս իրանի թեթևակի ուռուցիկությամբ առավել մոտ են ուշբրոնզիդարյան նյութերին: Սրանց մոտ է նաև ձգված իրանով, պարանագարդ գոտիներով խոհանոցային կճուճը (աղ. VI, նկ. 9), որի մեզ հայտնի զուգահեռը Շիրակա-

⁴⁴ *Խանգաղյան Է., Մկրտչյան Կ., Պարսափյան Է., նշվ. աշխ., էջ 40, նկ. 50:*

⁴⁵ *Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., աղ. 31, 69:*

⁴⁶ *Есаян С., Калантарян А., նշվ. աշխ., աղ. LXXVII:*

⁴⁷ *Onnik S. Xnkikyan, նշվ. աշխ., աղ. LXVII (26–28):*

⁴⁸ *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 115:*

⁴⁹ *Նույն տեղում, աղ. LXVI:*

⁵⁰ *Мартиросян А., 1964, նշվ. աշխ., էջ 128, նկ. 51:*

⁵¹ *Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 225:*

⁵² *Badalyan R., Avetisyan P., նշվ. աշխ., էջ 215, 217, աղ. III, աղ. V:*

⁵³ *Хачатрян Т., նշվ. աշխ., էջ 220 և 371:*

⁵⁴ *Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., նշվ. աշխ., էջ 233, աղ. 37:*

⁵⁵ *Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, Եր., 1969, աղ. XXII, նկ. 1:*

⁵⁶ *Петросян Л., նշվ. աշխ., աղ. 71, նկ. 2:*

⁵⁷ *Երևանի քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ III, Եր., 1972, աղ. LXXXVII, նկ. 1,4:*

⁵⁸ *Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. 61, նկ. 1, 2:*

⁵⁹ *Петросян Л., նշվ. աշխ., աղ. 60, նկ. 1:*

⁶⁰ *Դնեջյան Ս., 2001, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 9, աղ. VI, նկ. 1:*

վանի թիվ 106 դամբարանի նյութերում է⁶¹: Այս դամբարանի խոհանոցային կճուճը (աղ. VI, նկ. 7) տարածված է ինչպես ուշ բրոնզի, այնպես էլ վաղերկաթիդարյան ժամանակաշրջանների նյութերում:

Ազատանի այս դամբարանում գտնված վերջին խեցանոթը հարթ լայն հատակով 12սմ բարձրությամբ գավաթն է, որի իրանի վրա պահպանված է ունկի հիմքը (աղ. VI, նկ. 8): Այն Շիրակի մարզում վերջերս պեղված Մայիսյանի թիվ 3 դամբարանի բաժակի նմանակն է, տարբերությունը միայն չափերի մեջ է: Այս բաժակները նման են նաև Թռեղքի մ.թ.ա. 9-8-րդ դարերով թվագրվող թիվ 6 և 7⁶², Շիրակավանի թիվ 101⁶³, Քեթի⁶⁴ դամբարանների նյութերին:

Այսպիսով, Ազատանի դամբարանների 2014թ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք թաղման մի նոր ձևի՝ *ժայռափոր* թաղումների հետ, որպիսիք Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում հայտնի չեն: Ամենայն հավանականությամբ դամբարանների նման տիպի ի հայտ գալը պայմանավորված է երկրակազմական գործոնով: Ազատանի հուշարձանախմբի այս հատվածում՝ բարձրադիր դարավանդի հարթ տարածքը և հարավիայաց լանջը ծածկված են բազալտի հոծ, ոչ հաստ կեղևով, որի տակ հրաբխային ծագման, պեմզայատիպ փխրուն ապարներ են: Տեղաբնիկներին քաջ հայտնի է եղել դա: Հարթ տարածքում թաղում կատարելու նպատակով մի փոքր հատվածում ծակվել է բազալտի կեղևը, փորվել ուղղահայաց հորատանցք, որն արդեն փխրուն ապարները հեշտությամբ քանդելով և մի ուղղությամբ ընդարձակելով վերածել են թաղման խցի: Այնուհետև հորատանցքը փակելով համապատասխան չափի քարե խցանով՝ դամբարանի տարածքը եզրագծել են կրովելիով:

Նույն երևույթը Շիրակում տեսնում ենք Արթիկի⁶⁵ և Ոսկեհասկի⁶⁶ դամբարանադաշտերում: Քանի որ նմանատիպ դամբարանները նախատեսված են եղել բազմակի թաղումների համար կրովելիսին կից՝ արտաքին կողմում, դրվել է սալաքար, որը ցույց է տվել մուտքի ուղղությունը: Սա փաստված է 2013 և 2014 թվականներին կողք կողքի պեղված 2 կատակոմբային դամբարաններում, իսկ 2015թ. հարևանությամբ պեղված 3-րդ կատակոմբային դամբարանի մուտքի մասում դրված էր եղել կոպտատաշ բազալտից կոնաձև կոթող, որը հավանաբար վերջին թաղումից հետո չէր կանգնեցվել և պեղումներով հայտնաբերվեց մուտքի մոտ:

Կատակոմբային և ժայռափոր դամբարանների նյութերի գույքակազմի քննությունը ցույց է տալիս, որ դրանք չեն տարբերվում համաժամանակյա կրովելիով շրջափակված հիմնահողային թաղումների ուղեկցող նյութերի գույքակազմից, հետևաբար թաղման այս ձևը պայմանավորված չէ հանգուցյալների ունեցվածքային կամ հասարակական ցենզով: Նկատենք, սակայն, որ ի տարբերություն հիմնահողային թաղումների՝ ժայռափոր և կատակոմբային բոլոր դամբարաններ-

⁶¹ թրոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. XLL, նկ. 9:

⁶² Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., աղ. I, նկ. 2:

⁶³ թրոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., աղ. LIX, նկ. 11:






⁶⁴ Петросян Л., նշվ. աշխ., աղ. 70, նկ. 2:



⁶⁵ Шачатрян Т., Арктикский некрополь, Ер., 1979, стр. 3,4:

⁶⁶ Петросян Л., Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, стр. 69, 70:

րում, բացի մեկից, կատարվել են տարժամանակյա մի քանի թաղում: Մա հուշում է, որ դրանք եղել են ընտանեկան դամբարաններ: Գուցե վաղ երկաթի ժամանակաշրջանում երկրակազմական բնույթով թելադրված թաղման այս ձևը ձեռք է բերել որոշակի սովորութային, ծիսական և պաշտամունքային բովանդակություն, սակայն առաջացած հարցերը պատասխան կստանան հետագա պեղումներով, եթե հայտնաբերվեն Ազատանի երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի հիմնահողային թաղումներին փոխարինելու եկած, մեծ քարարկղային դամբարաններին համաժամանակյա կատակոմբային և ժայռափոր դամբարաններ: Այդ դեպքում կփաստվի դրանց ավանդական բնույթը, ինչը կարող է ծիսական և պաշտամունքային բովանդակությամբ կապվել քարանձավի հետ:

Գտածոների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն խեցեղենի՝ այստեղ մետաղյա իրերը սակավ են, իսկ կավանոթները՝ տնտեսության մեջ և կենցաղում օգտագործված:










Նկ. 1


Ագատան 2014

Օ-12 n (Չարավախին կրոնվելխ)




Ազատան 2014

Օ-12 n (Զյուսիսահին Կրոնլեխ)






Ագատան 2014

R - 12 (ժայռի տակի դամբարան)











Ազատան 2014

S - 12 (ժայռի տակի կիսավեր դամբարան)













Ագատան 2014

S - 11 n (Ջորակի մեջ հյուսիսային կատակոմբ)




Ազատան 2014

S - 11 s (Ջորակի մեջ հարավային կատակոմբ)



Ագատան 2014

N - 14 (Կատակոմբ)



Հայտնաբերված նմուշների քննությունը ցույց է տալիս, որ հիմնական աղերսները առկա են Թռեղքի և Արագածոտնի տարածաշրջանների համալիրներում, ինչը խոսում է Շիրակի և այդ տարածաշրջանների սերտ տնտեսական կապերի և մշակութային ընդհանրությունների մասին:

РАСКОПКИ АЗАТАНСКОГО НЕКРОПОЛЯ 2014 ГОДА

___ Резюме ___

А. Хачатрян, Л. Еганян, Л. Петросян,
А. Фуртванглер, Т. Неусер, Д. Мауерман ___

В 2014 году совместная экспедиция Краеведческого музея Ширака и университета им. Мартина Лютера г. Галле/ФРГ/ продолжала раскопки некрополя поздней бронзы-раннего железа Азатана. Были раскопаны 4 грунтовые захоронения в кромлехах, одно катакомбное захоронение с вертикальной шахтой и два склепа с горизонтальными шахтами.

Кромлехные захоронения находятся на юго-западном склоне возвышенного плато. Во всех кромлехах были обнаружены одиночные грунтовые захоронения, в которых скелеты лежали в скрюченном виде, зависимо от пола на левом или на правом боку. Вышеупомянутые захоронения датируются 14-11в.в. до н.э..

Грунт плато и юго-западного склона из себя представляет рыхлую вулканическую породу типа пемзы, покрытой сплошным слоем базальтовой коры. На плато было раскопано, обводненное кромлехом, большое катакомбное захоронение, в склепе которого были обнаружены остатки шести скелетов. Это семейный склеп, где поочередно, в течении времени, производились захоронения мужчин, женщин и одного младенца. Из погребения были найдены 16 разнотипные керамические сосуды, бронзовые браслеты, кольца, серьги, иголки и железный нож. По материалам весь комплекс датируется 9-8в.в. до н.э.

По конструкции погребения этого типа не отличаются от катакомбных захоронений Артика и Воскеаска. В двух случаях во внешней стороне кромлеха вплотную ставлялись отдельные каменные плиты, которые указывали местонахождение пробки.

Особый интерес представляют захоронения в склепах с горизонтально выкопанными шахтами в скальной породе. Эти захоронения находятся на самом низу выше упомянутого склона. Первый такой склеп нами был раскопан в 1995г., второй в 2013г. Рядом с последним в 2014г. были раскопаны 2 однотипные захоронения. По сопутствующим материалам обе датируются 12-ым веком до н.э.

Возможно в дальнейшем захоронения этого типа приобрели мифологический аспект и специальный ритуальный обряд.

Տեղեկություններ հեղինակների մասին

Խաչատրյան Համազասպ Հակոբի – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.

Եգանյան Լարիսա Գրիշայի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: smuseum@web.am.

Պետրոսյան Լևոն Աշոտի – ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ

Ֆուրթվանգլեր Անդրեաս - դոկտոր, Հայլերի/Գերմանիա/ համալսարան,
E-mail: dadasfurt1@web.de

Նեուսեր Թորիաս - Հայլերի համալսարան,
E-mail: tobias.neuser@student.uni-halle.de

Մաուերման Դորոթեա - E-mail: dorothea.mauermann@adendorf.com

QURIA ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՎԱԿՆԵՐԸ

Արճեշի շրջանի Հաղի գյուղի մոտ Ուրարտուի Արգիշտի II թագավորի (մ.թ.ա. 714-685թթ.) թողած արձանագրության մեջ հիշատակվող ^{KUR}Quria երկիրը¹ գտնվում էր Վանա լճից հյուսիս-արևելք,² «Աշխարհացոյց»-ի Աղիովիտ գավառի տարածքում՝ Գնունի նախարարական տոհմի տիրույթում:³ Այս սեպագրային երկրանունը իմաստաբանական ուղղակի կապի մեջ է *Գնունի* տոհմանվան, Գնունի հազարապետների արքունի մատովակներ լինելու իրողության,⁴ ինչպես նաև նրանց տիրույթի՝ հետագա Արճեշ գավառի, մինչև Մեծ եղեռն ունեցած համբավի հետ՝ որպես ընտիր խաղող և ընտիր գինի ունեցող շրջանի:⁵

Գնունի տոհմանունն առաջին ստուգաբանողը եղել է Մովսես Խորենացին: Նա գրում է. «Գիտեմ եւ զԳնունիսոյ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն, որ սքանչելի իմն դիպեալ եղեւ ըստ գործոյն եւ անունն քանզի պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր եւ ի համեղ գինեաց՝ ունէր եւ կոչումն անուանն Գին»:⁶ Խորենացու առաջարկած *Գին/Գնունի/գինի* ստուգաբանական շարքը կարելի է համարել նույնարմատ և իմաստաբանական նույն շարքին պատկանող հետևյալ բառերով. *օրինակ* «Խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղևով, մեծ՝ կլոր հատիկներով, որից կախան են պատրաստում»,⁷ *գինեճաշիկ* «խաղողի ծաղիկը, որից հետո երևում է ազոխը»,⁸ *գինուկ* «գինու խաղող, բարակ կեղևով, սպիտակ մանր հատիկներով»,⁹ ինչպես նաև՝ «*գինն* գինին է»:¹⁰ Սրանց բոլորի հիմք **գին*-ը ծագում է հ.-ե. **uei-/*ui* «ոլոր(վ)ել, փաթաթ(վ)ել, գալար(վ)ել» արմատից, որից են ծագում նաև փաթաթվող-գալարվող բույսերի և ոլորվող-հյուսվող շիվեր ունեցող ծառերի, մասնավորապես, խաղողի վազի և ուռենու անունները հնդեվրոպական մի շարք

¹ *Меликишвили Г., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, надп. N 276; Арутюнян Н., Топонимика Урарту (այսուհետև՝ ТУ), Ер., 1985, стр. 123.*

² *ТУ, стр. 41, 123.*

³ *Արոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 338:*

⁴ *Պետրոսյան Ս., Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, «Պատմաբանասիրական հանդես» (ՊԲՀ), 1999, թիվ 2-3, էջ 175-178:*

⁵ *Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան հ.1, Եր., 1986, էջ 462:*

⁶ «Մովսիսի Խորենացու պատմութիւն Հայոց», Եր., 1981, գիրք Բ, գլուխ Ը:

⁷ *Մայխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1, Եր., 1944, էջ 435:*

⁸ *Նույն տեղում, էջ 436:*

⁹ *Նույն տեղում, էջ 437:*

¹⁰ «Բառագիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները, *Հ. Ամալյանի*, Եր., 1975, էջ 66, ծան. 183:

լեզուներում. հմմտ *v i i i* դ. *ἄμπελον* (Hesych.) «խաղողի վազ», լատին *vitis* և հին պլավ. *vinjaga*՝ նույն նշանակությամբ:¹¹

Ուրարտուի Սարդուրի II թագավորը (մ.թ.ա. 764-735թթ.) Եթիունիի դեմ ձեռնարկած արշավանքի դրվագներից մեկում ասում է. «Գնացի Եթիունե (երկրի) վրա, երբ դարձա (եղա) Եթիունե երկրի կողմում (?), ամբողջ (?) Երիախե (երկիրը) անջատեցի (?) բուն (?) Կուրիանե (երկրից): Արշավեցի Բյանե (երկրի) վրա»:¹² Թեպետև դժվար է բերված հատվածի ամբողջական ընկալումը, այդուհանդերձ պարզվում է, որ Կուրիանե/Quria(ni) երկիրը հարևանն է եղել կենտրոնական Շիրակում գտնված Էրիախի¹³ երկրի: Քանի որ Սարդուրի II-ը Բյանի/Բզանի (հյուսիսային Վանանդում) երկիր մտել էր Էրիախիից, ոչ թե Կուրիա(նի)ից, ուրեմն վերջինս չէր կարող գտնվել ո՛չ Էրիախիի և Բզանիի միջև,¹⁴ ո՛չ էլ «Չալդրը լճի կամ Շիրակի մոտակայքում»,¹⁵ այլ միայն Շիրակի (Էրիախիով) մոտակայքում:

Ի.Դյակոնովի կարծիքով, Սարդուրի II-ի կողմից հիշատակված ^{KUR}Quriani երկիրը կարող էր լինել ավելի ուշ ասորեստանյան արձանագրություններից մեկում ^{KUR}Gurania կոչված երկիրը, որը գտնվում էր «Ուրարտուի և Գամիրայի միջև»:¹⁶ Բայց այս հիշատակությունից պարզ երևում է, որ Գուրանիան եղել է հետագա Վիրքի (Իրերիա) հովտային մասն զբաղեցրած կիմերների Գամրիա երկրի հարևանը, այսինքն՝ գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսում: Այս երկուսից տարբեր է Ռուսա I արքայի (մ.թ.ա. 735-713թթ.) Ծովինարի արձանագրության մեջ հիշատակված ^{KUR}Guria(ini) երկիրը, որը գտնվում էր «այն կողմից ծովային գավառում՝ լեռնա(շղթայի) ստորոտի» 19 երկրների շարքում,¹⁷ որովհետև սրանք բոլորը տեղորոշվում են Սևանա լճից՝ «ծովից» հարավ և արևելք ընկած շրջաններում:¹⁸ Վերջին երկու երկրանունների տարբերությունը Quria-ից արտացոլված է նրանց Guria- գրության մեջ, *g*-ի դիմաց *g*: Ս. Հմայակյանը Quria(ni)-ն տեղորոշում է Էրիախիից հարավ,¹⁹ որոշակի ճշտումով՝ հարավ-արևելք, «Աշխարհացոյց»-ի Արագածոտն գավառի հյուսիսում՝ Էրիախիի և Ուազա/^AAza երկրի (Արարատյան դաշտի Արաքսամերձ ձախափնյակում) միջև:

¹¹ *Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ИЯИ)*, т. II, Тб. 1984, стр. 650, *Աճառյան Հ.*, *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. I, Եր., 1971, էջ 554:

¹² «*Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*» (այսուհետև՝ ՀԺՊԲ), հ. I, Եր., 1981, էջ 79 (թարգմ. Հ. Կարապետյանի):

¹³ *ТУ*, стр. 258-259.

¹⁴ *ТУ*, стр. 67.

¹⁵ *ՀԺՊԲ*, հ. I, էջ 82, ծան. 20:

¹⁶ *УКН*, надп. N 155 F; *Дьяконов И., Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետև՝ АВИИУ)* «Вестник древней истории», 1951, NN 2, 3, 4, надп. N 50, пр. 2; *Նույնի, Предыстория армянского народа, Ер., 1968, стр. 169.*

¹⁷ *УКН*, надп. N 266, *ՀԺՊԲ*, հ. I, էջ 85:

¹⁸ *ՀԺՊԲ*, հ. I, էջ 85, ծան. 2:

¹⁹ *Հմայակյան Ս., Շիրակը Լուշա-Կատարգա-Վիտերուխի դաշնության կազմում, «ՇՊՄՄ հանրապետական առաջին գիտաժողովի թեզիսներ», Գյումրի, 1994, էջ 22:*

Կուռիա(նի) երկրի այսպիսի տեղադրության մասին խոսում է նաև նրա Quria(ni) անունը՝ բաղկացած *կուռ «խաղող», «գինի» արմատից²⁰, -ia և ուրարտական սեպագրության լեզվից հավելված -ni վերջածանցներից: Այս վերջածանցներից առաջինը, ի տարբերություն երկրորդի, պատկանում է բուն տեղանվանը, ծագում է հ.-ե. *-(i) iā նախածնից՝ հայերենում գործուն վաղնջահայերենի փուլում (մ.թ.ա. III հազ.- մ.թ.ա. XIIIդ.) և վերածված -ի վերջածանցի:²¹ Այն՝ որպես տեղանվանակերտ վերջածանց²² (հմմտ. *Այլի, Լոռի, Կարբի, Կորի, Կուսայրի, Ուշի և այլն*), իր արտացոլումն է գտել նաև սեպագրային և հետին գուգահեռ ձևերում (հմմտ. *Արծանիա/Արածանի, Արլիա/Այլի, Արկանիա/Արկնի, Ալիա/Հաղի, Գիարնիա/Գաունի*):²³ *Կուռ արմատը ծագում է հ.-ե. *ger «դարձնել», «գալարել», «ուրել» արմատի *gōr- միջին ձայնդարձից, որից ունենք մի կողմից *կուել, կունակ* և այլն,²⁴ մյուս կողմից՝ խաղողին և գինեգործությանը վերաբերող հետևյալ բառերը:

Կուել (<*կուռի-ակ, իսկ *կուռի <*կուռ-ի -ի վերջածանցով՝²⁵ ծագած հ.-ե. *-(i) iā վերջածանցից) «վայրի խաղողի մի տեսակ, որից ներկ են պատրաստում գինին ներկելու համար»:²⁶ *Կուռ* «խաղողի որթի գլխավոր ճյուղերը, որոնց վրա գտնվում են մի քանի շիվեր»:²⁷ *Կուսկաս սալ* (կուսկաս<կուռ-ա-կաս) «խաղողի որթի նոր արձակած ճյուղերը ձողի վրա կապել, որպեսզի դեպի վեր բարձրանան»:²⁸ *Կուռի* (<կուռ-ի) ծածկաբար՝ «գինի»:²⁹ *Կուռել* (<կուռ-ճ կամ *կուռ-իճ, -ճ կամ -իճ վերջածանցների համար հմմտ. մի դեպքում *լիճ, կորճ, հարճ, մորճ, մուրճ* «մուր», մյուս դեպքում՝ *թնիճ, կաիճ, ուտիճ, պատիճ և այլն*) «կարասի տակի գինին կամ ամանի մեջ եղած մի հեղուկ ուրիշ ամանով քաշել ցամաքեցնել»:³⁰ Նույն *կուռ «խաղող, գինի», արմատն է, ամենայն հավանականությամբ առկա նաև Կապուտան (Ուրմիա) լճի արևմտյան ափի հին հայկական Կուռիճան գավառի անվան մեջ:³¹ *Կուռիճան* <*կուռ-իճ-ան՝ բաղկացած *կուռ արմատից, հիշյալ -իճ վերջածանցից և -ան տեղանվանակերտից (հմմտ. *Ալեան, Դերջան, Երեան, Թորդան* և այլն): Կուռիճան գավառն իր տեղադրությամբ համընկնում է սեպագիր Gilzan գինեվետ երկրին³² կամ նրա մի մասին:

²⁰ Հմմտ. *Պետրոսյան Ս.*, Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ, էջ 176-177:

²¹ *Ջահուկյան Գ.*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 231:

²² *Петросян С.* Племенный союз Хайаса–Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 3, էջ 81, 84-85:

²³ *Կարազեռզեան Յ.*, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», հ. I, գիրք 1, Եր., 1998, էջ 84, 132, 206:

²⁴ *Աղայան Է.*, բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 102-103, 107-108:

²⁵ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 627:

²⁶ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 494:

²⁷ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 638:

²⁸ ՀԲԲ, հ. II, էջ 490:

²⁹ Նույն տեղում, էջ 494:

³⁰ ՀԲԲ, հ. II, էջ 491:

³¹ *Երեմյան Ս.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 35, 108:

³² Հմմտ. *Дьяконов И.*, *АВВВУ*, надп. N 23, 27, 28 և *ТУ стр.* 64.

Աղիովտի և Արագածոտնի Quria երկրանունների ստուգաբանական-իմաստաբանական նույնությունը հաստատելու է գալիս հետևյալ իրողությունը: Հայոց արքունի մատովակի գործակալությունն զբաղեցրած Գնունի նախարարական տոհմը տիրությունը ուներ ոչ միայն Աղիովիտ և Առբերանի գավառներում, որտեղ էր գտնվում Quria-ն, այլև Արագածոտնում, որտեղ գտնվում էր Quria(ni)-ն: Գնունի տոհմի՝ Արագածոտնում տիրությո՞ւն եննալու առթիվ Ն. Ադոնցը գրում է. «Մաստաբա գյուղի հինավուրց եկեղեցում պահպանվել է մի արձանագրություն, որի մեջ ասված է, թե եկեղեցին կառուցվել է Գնունյաց Թեոդորոս եպիսկոպոսի օրոք: Այս հանգամանքը պարզաբանում է Ներսեսի Վարքում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի՝ Գնունիները հիշվում են Շիրակի նախարարությունների թվում, և անկասկած, ապացուցում է Գնունի տոհմի առնչությունը Արագածի ստորոտի բնակավայրերին»:³³ Ն. Ադոնցը, ըստ այսմ, կարծում է, թե այստեղ է գտնվել Գնունիների բնօրրանը, այսուհանդերձ շեշտում է, որ այստեղ նրանք բնակվել կարող էին միայն որպես պալատական մատովակներ:³⁴

Հարցում հստակեցում մտցնում է Ամատունիների օրինակը: Հագարապետի պաշտոնում Գնունիներին փոխարինելով՝ նրանք ստացել էին Արագածոտնում գտնվող Օշականն իր շրջակայքով՝ խաղողաշատ ու գինեվետ մի տարածք: Արշակունյաց անկումից հետո միայն կարող էր «ձեռական իշխանության» իրավունքով Ամատունիներին հանձնված Օշականն ու շրջակայքը դառնալ նրանց սեփականությունը՝ արդեն ժառանգական իրավունքով:

Հայկական լեռնաշխարհի խաղողագործության և գինեգործության օջախներից մեկը՝ Արագածոտնը լինելու վկաներից են Մեծամորի բրոնզիդարյան սրբարանում ծիսական հաց թխելու օջախի և սաջի կողքին գտնված երկարավիզ սափորները, որոնք «վկայում են գինու հեղման արարողություններ»:³⁵ Նույնպիսին է եղել Արագածոտնի դերը նաև ուրարտական դարաշրջանում, երբ նրա հարավային մասը կրում էր Quria-ին իմաստակից Uaza/°Aza անունը՝ նույնական հայերեն *վազ* «խաղողի որթ» բառի հետ:³⁶ Վերջինս ծագում է *վազել* «դուրս ցատկել» բայի *վազ* արմատից, որի նախածնը հ.-ե. *ueg'h- «շարժվել, ընթանալ» արմատն է:³⁷ Uaza երկրի՝ ուրարտական դարաշրջանում գինեգործության խոշոր կենտրոն լինելու մասին են խոսում Կարմիր բլուր հնավայրի (Թեյշեբաինի քաղաք) պեղումներից հայտնաբերված 9 մառանների գետնաթաղ կարասները, որոնց ընդհանուր տարողունակությունը հասնում է կես միլիոն լիտրի:³⁸

Հաջորդ հազարամյակներում ևս Արագածոտնի երկու մասերը պահել էին խաղողագործության և գինեգործության նշանավոր կենտրոններ լինելու իրենց

³³ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 338:

³⁴ Նույնը:

³⁵ Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966թթ. պեղումների տվյալներով), Եր., 1973, էջ 123:

³⁶ УКН, N127 IV; Арутюнян Н., Новые Урартские надписи Кармир-Блур, Ер., 1966, стр. 91, пр. 43.

³⁷ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 293, Джаукян Г., Очерки по истории и дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр. 264-265.

³⁸ Мартirosյան А., Город Тейшебаини, по раскопкам 1947-1958 гг., Ер., 1961, стр. 96.

համբավը: Թրք. աղավաղում-վերիմաստավորումով հայտնի *Դավալու* գյուղանունը իր հիմքում ունի արաբերեն *davālī* «մի տեսակ խաղող» բառը³⁹ և ոչ թե թրք. լեզուների *davalu/develu* «ուղտատեղ» բառը (Արարատյան դաշտի բնակչությունը երբևէ ուղտաբուծությամբ չի զբաղվել): Ըստ երևույթին, *Դավալի* անունով են արաբները կոչել իրենց քաջ հայտնի Դվինի շրջակայքը, իսկ հետո այն վերագրվել է նույն շրջանի Դավալու/Արարատ գյուղին, ապա և՛ ներկայիս Արարատ քաղաքին:⁴⁰ Արագածոտնի այս կամ այն մասին օտարներից տրված մի անուն է հիշատակում XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին: Շահ-Աբասի գործերի ավերած և բնակիչներին բռնագաղթի ենթարկած Արևելյան Հայաստանի գավառների թվում Լոռի-Համզախիմանի (հյուսիս-արևելքում), Կարսի (արևմուտքում) և Կաղզվանի (հարավ-արևմուտքում) միջև նա հիշատակում է «զՇարապխանէն, զՇիրակուան, զԶարիշատ»:⁴¹ Թվարկված գավառներից առաջինը համապատասխանում է Արագածոտնի հյուսիսային մասին, երկրորդը՝ Շիրակին, երրորդը՝ հյուսիսային Վանանդին: *Շարապխանէ* անունը հյուսիսային Արագածոտնն ստացել էր պարսիկներից այն պարզ պատճառով, որ նա ըմբռնվել է ողջ Արևելյան Հայաստանի մասանը, գինետունը: Պարսկերեն *շարափխանէ* բառը հենց «մառան, գինետուն» է նշանակում:

Արագածոտնի հյուսիսում էր գտնվում առ այսօր կանգուն Փարսի գյուղը, որի անունը մեր «խաղողային» բնույթի տեղանուններից է: Նրա հիմքում *փար*-արմատով և *պ*- աճականով կազմված *փարպ բառն է (հմմտ. *ամպրոպ* բառի կազմությունը),⁴² որին հավելվել է վերոհիշյալ *-ի* տեղանվանակերտ վերջածանցը: *Փարպ* բառի *փար*- արմատը նույնն է *փարել* «պարփակել, բովանդակել» և *փարիլ* «փաթաթվել, գրկախառնվել» բայերի արմատի հետ, բայց իմաստով ավելի մոտ է վերջինիս: *Փարել* և *փարիլ* բայերը ծագում են հ.-ե. **sper-* «ոլորել, փաթաթել» արմատից, որից են նաև հուն. *σπεῖρα* «գալար կամ ոլորկ (օձի ցանցի)», «պարան», *σπάρος* «մի տեսակ բույս, որ հյուսելով պարան են գործում», *σπάργω* «բարորել» և այլն:⁴³

Հ.-ե. **sper-* արմատի հունարենում ունեցած նշանակություններից առաջինն ու երկրորդը բնորոշ են նաև հայերենին, որում ունենք *պարան* բառը ոչ միայն «պարան, չվան», այլև «շուռ գալը, շուռ տալը, շրջվելը» նշանակություններով (հմմտ. *պարան գալ, պարանիլ* «պտույտ գալ, դառնալ»),⁴⁴ իսկ *-ոց* վերջածանցի հավելումով ունենք *պարանոց* «վիզ, ճիտ»:

Հնդեվրոպական այս արմատի «ոլորել, փաթաթել» իմաստը հատկացվել է նաև խաղող վազի որևէ առարկայի (ծառ, ձող, ցից) փաթաթվելով աճել-բարձրանալուն, ուստի *պարան* բառը բարբառներում նշանակում է նաև «այգիների

³⁹ ՀԱԲ, հ. IV, էջ 416:

⁴⁰ Ասլանյան Ա., Գրգեարյան Հ., Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 29:

⁴¹ Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցույ, Վաղարշապատ, 1896, էջ 53:

⁴² ՀԱԲ, հ. I, էջ 163:

⁴³ ՀԱԲ, հ. IV, էջ 487-488:

⁴⁴ ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 77, ՀԱԲ, հ. IV, էջ 56:

(իմա՝ խաղողի այգիների) մի տեսակ չափ», «որթատունկերի մեկ ուղղությամբ տնկված շարքը»:⁴⁵ Ի նկատի առնելով *պար-/փար-* համարժեքությունը՝⁴⁶ *Փարսյի* տեղանվան հիմք *փարպ «վայրի խաղող» բառի հնչյունական տարբերակը կարող ենք տեսնել *պարսպուտ* (<*պարպուտ) «վայրի որթ, վագ»⁴⁷ բառի մեջ (-*ուտ* վերջածանցի համար հմմտ. *դանդուտ, ճապուտ, մամուտ, ջաջուտ* բուսանունները): Պարպուտ հիմքին -*ինէ* վերջածանցի հավելումով կա բարբառային *պարսպուտինէ* «վայրի որթ, որ բուսնում է Ջեյթունի լեռներում» բառը:⁴⁸

Բերված «խաղողա-գինիական» ստուգաբանությամբ տեղանուններին իմաստով հարող տեղանուններ կային նաև Վանա լճի շրջակայքում: Դրանցից մեկը Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի հիշատակած ^{URU}Zanziuna բնակավայրի⁴⁹ անունն է: Նրա հիմքում առկա են հայերեն *չանչ* բառը (սեպագրությամբ սա կարող էր արտացոլվել միայն zanz- տեսքով) և -*ին* վերջածանցը (հմմտ. *կորին, հերին, ջանջին, տրոփին և* այլն): *Չանչ* նշանակում է «խաղողի ողկույզը, որի վրայից հատիկները պոկած են. քնթեռն», «քամած խաղողի մնացորդը» (չանչից օղի են քաշում, չանչը գինուն կծվություն և թթվություն է տալիս) և համարվում է իրական կամ կովկասյան փոխառություն:⁵⁰ Մեր կարծիքով, հակառակ ուղղությամբ՝ հայերենից այդ լեզուներ կատարված փոխառությունն ավելի հավանական է, որովհետև *չանչ* բառի և իր *չաչ* տարբերակի հայերեն գրական լեզվում և բարբառներում ունեցած բազմազան նշանակությունները⁵¹ բացառում են այդ հնարավորությունը: Բանն այն է, որ *չանչ* բառը խաղողին վերագրվել է նրա հատիկներից զրկված տունկը ձեռքի նմանեցնելու պատճառով, ուստի ունենք նաև բառի նախնական նշանակությանն ավելի մոտ *չանչ*՝ «գրող, մճիկ», *չանչ անել* «գրող չափել» *չանչել* «ձեռքի մատները լայն բացած գրող չափել, մճիկ հանել», *չանչուլ* «կատվի թաթ, թաթուլ, թանթուլ»:⁵²

Չանչ բառի «ձեռք» > «խաղողի չանչ» իմաստային զարգացման համար հմմտ. *թեք խաղողոյ* «խաղողի որթի կոտրակ», այսինքն՝ «խաղողի վագի ստորին չոր և հաստ մասը»⁵³ և *թեւ* «մարդու բազուկ, ձեռք՝ ուսից մինչև դաստակը (մատների ծայրը)»,⁵⁴ նաև *մատ* «խաղողի որթի ճյուղերը» և *մատն* «ձեռքի և ոտքի մատ»:⁵⁵ Առավել ուշագրավ է *կուտ* բառը, որն ինչպես վերևում տեսանք նշանակում է «խաղողի որթի գլխավոր ճյուղերը, որոնց վրա գտնվում են մի քանի շիվեր»,⁵⁶ բայց

⁴⁵ ՀՄԲ, հ. IV, էջ 56:

⁴⁶ ՀՄԲ, հ. IV, էջ 55:

⁴⁷ ՀՄԲ, հ. IV, էջ 29, ՀԲԲ, հ. IV, էջ 54:

⁴⁸ ՀԲԲ, հ. IV, էջ 54, ՀՄԲ, հ. IV, էջ 29-30:

⁴⁹ *ABNIN*, N 27.

⁵⁰ ՀԲԲ, հ. IV, էջ 10, ՀՄԲ, հ. III, էջ 623-624:

⁵¹ ՀԲԲ, հ. IV, էջ 10, ՀՄԲ, հ. III էջ 623-624

⁵² ՀԲԲ, հ. IV, էջ 10:

⁵³ ՀԲԲ, հ. II, էջ 100, 475, ՀՄԲ, հ. II, էջ 177:

⁵⁴ *Նույն տեղում*, էջ 99:

⁵⁵ ՀՄԲ, հ. III, էջ 270:

⁵⁶ ՀՄԲ, հ. II, էջ 638:

որը նույնն է *կուլ* «բազուկ, թև, ձեռք, ուսից մինչև մատների ծայրը»⁵⁷ բառի հետ: Իսկ Է. Աղայանը ցույց է տվել, որ վերջինս ծագում է հ.-ե. *gōr- «դարձնել», «գալաբել, ոլորել» արմատից,⁵⁸ այսինքն՝ այն նույն արմատից, որից են նաև խաղողագործությանն ու գինեգործությանը վերաբերող *կուլ* արմատով բառերը և Quria երկրանունը:

Ուրարտական Արամալի/Արմարիլի նահանգի բնակավայրերից «խաղողային» բնույթի անուն էր կրում *Տինուակ*-ը (<*Տինու-ակ),⁵⁹ որի անվան երկրորդ բաղադրիչը առկա է նաև նույն Վանա լճի ավազանի *Արդուակ* (<*Արդու-ակ),⁶⁰ Ուրմիա լճի ավազանի *Բարուակա* (<*Բար-ակ)⁶¹ տեղանունների, հայ. *բարունակ* (<*բար-ունակ) «երկայնատարած ուռն որթոյ»⁶² բառի մեջ: *Տինուակ*-ի *Տին*- բաղադրիչը հայ. *ծին* (<հ.-ե.*gén) բառն է՝ արմատակիցը *ծան* «ճանաչել» (նաև «հայտնի», իսկ ազգակից լեզուներում՝ «ծանոթ, սովոր»)՝⁶³ բառի՝ առկա նաև *ծնեբեկ*, *ծնիկ*, *ծնծատ*, *ծնծեղ*, *ծնծղար* բուսանուններում:⁶⁴ Ըստ երևույթին, **ծինի-ունակ* կոչվել է մշակովի՝ սովորական, ծանոթ խաղողը՝ ի տարբերություն վայրի խաղողի: Վերջինը կարող էր կոչվել **արդի-ունակ*, որում *արդի* բաղադրիչը հավանաբար «ժայռ» է նշանակում և արմատակիցն է հին հնդկ. adri- «սար, ժայռ» և իլյուր. adri «ժայռ, խութ» բառերի:⁶⁵ Հայերենի օրինաչափությամբ հ.-ե. *dr->րդ->արա-, ուստի այս բառերի արմատակիցն է լինելու Վանա լճի *Արտի* կղզու՝⁶⁶ անունը՝ «ծովածայռ, խութ» իմաստներով: Սեպագիր *Bar-unaka տեղանվան և հայերեն **բար-ունակ* բառի առաջին բաղադրիչները ծագում են հ.-ե. *bher- արմատի ստորին *bhr- ձայնադարձից: Այս արմատի վերին ձայնադարձից ունենք *բեր/բերք* «բերք, հողի բերած արդյունքը, պտուղ» բառը, որի ազգակիցներն են. հուն. φέρμα «պտուղ», φορά «պտղաբերություն, բերք», պարս. bar «բերք, պտուղ, արդյունք» և այլն:⁶⁷

*Ardi-unak, *Տինուակ*, *Bar-unaka սեպագիր տեղանունների և **բար-ունակ* բառի երկրորդ բաղադրիչները արտացոլում են հ.-ե. *uein-ag «խաղող, խաղողուտ» բառի կարճ տարբերակը: Այս նույն նախաձևի երկար տարբերակն է առկա *գինակ* (հ.-ե. *u-> հայ. գ-) «խաղողի մի տեսակ, դեղնականաչ գույնով, հաստ կեղևով, մեծ կլոր հատիկներով» բառում: Մրանց հետ միասին հ.-ե. *uein-ag նախաձևից է ծագում նաև հին պլավ. vinjaga «խաղողի վազ» բառը, սիկ նախաձևին մերձավոր ձև է համարվում վրաց. venag «խաղողուտ» բառը:⁶⁸ Վերջինս փոխառյալ է լինելու հայերեն *գինակ*-ի հնագույն ձևից (երբ դեռևս տեղի չէր ունեցել հ.-ե. *u->հայ. գ

⁵⁷ ՀԲԲ, հ. II, էջ 484:

⁵⁸ Աղայան Է., նշվ. աշխ., էջ 102-103, 107-108:

⁵⁹ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 235.

⁶⁰ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 34.

⁶¹ АВИИУ, надп. N 49; ТУ, стр. 54.

⁶² «Նոր բարգիռք հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 467:

⁶³ ՀԱԲ, հ. II էջ 443, 457:

⁶⁴ ՀԲԲ, հ. II էջ 345, 346, ՀԱԲ, հ. II, էջ 464, 465:

⁶⁵ Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 13 և ծան. 8:

⁶⁶ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 41, 45, 108:

⁶⁷ ՀԱԲ, հ. I, էջ 440-441:

⁶⁸ ИЯИ, т. II, стр. 649, пр. 2, стр. 881, пр. 1.

հնչյունափոխությունը) այնպես, ինչպես հայերենից են փոխառյալ «զինի» նշանակող բառերից այս դեպքում հատկապես հիշատակելի վրաց. *ղվինի, ղվինո*, մեգր. *ղվինի*, լագ. *ղունի, ղինի* բառերը:⁶⁹

Մեր նախնիների խաղողագործության և գինեգործության հովանավոր աստվածություններից ոմանք լինելու էին նաև երկնային մատովակներ: Այդպիսին էր լինելու հայասական Սnagašta-ձ կոչված 2 աստվածություններից⁷⁰ մեկը (մյուսը կարող էր լինել միայն խաղողագործության հովանավոր աստվածություն): Սnagašta-ձ//Սnagasta- ղիցանվան մեջ առկա է վերոհիշյալ *<unak-//*ունակ- բառի ավելի հին *unag- ձևը (հ.-ե. * g-> հայ. *կ*) և -asta-// -աստ վերջածանցը (հմմտ. *ասագ-աստ, գգ-աստ, իմ-աստ, հաւ-աստ-ի-ք*):⁷¹

Հին Հայաստանում պալատական մատովակի և հագարապետի՝ երկրի գլխավոր տնտեսի, պաշտոնների միասնությունը դարավոր արմատներ ուներ: Քսենոփոնի վկայությամբ, երբ Հայաստանի փոխսատրապ (հյուպարքոս) Տիրիբագոսը դիմել էր փախուստի, նրան հանկարծակիի բերած հույն վարձկանների կողմից «գրավվեց Տիրիբագոսի վրանը և նրա մեջ արծաթյա ոտքերով մահիճներ և ըմպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ»:⁷² Հացի և գինու փոխադարձ կապը իր դրսևորումներն էր գտել ոչ միայն հայի առօրյայում, այլև իր հոգևոր կյանքի բազմաթիվ ոլորտներում: Հողվածում քննարկվող հայցերի տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության են արժանի ինչպես «Հա՛ցն ու զինի՛ն, Տե՛ր Կենդանին» աղոթքի, երդման և ոգեկոչման հանրահայտ բանաձևը, այնպես էլ այն հանգամանքը, որ մեր եկեղեցու ծիսակարգում մեկ ընդհանուր՝ *Սպասս* անունով է կոչվում պատարագի ժամանակ օրհնվող հացն ու զինին:⁷³ Հայոց Արամայիս նահապետի 2 որդիների վերաբերյալ ավանդազրույցի պատատիկները ևս վկայում են հացի և գինու միասնական պաշտամունքի հնամենի ակունքների մասին: Արարատյան դաշտում հաստատված Արամանյակի սերունդների թվարկումը թե՛ Մովսես Խորենացու, թե՛ Անանուս պատմիչի (Մեբեոս) երկում սկսվում է նրա որդի Արամայիսով, ով Արմավիրը հիմնադրելուց հետո «գորդի իւր զՇարայ՝ գյուղվածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղիւի իւրով ի դաշտ մի մօտաւոր յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ», իսկ Արամայիսի մյուս որդին՝ Ամասիան, «անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ... զլեառնն Ամասիա անուանէ իւրով անուամբ Մասիս. Եւ ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկած ամս սակաւս, եւ մեռաւ»:⁷⁴ Շարայի առնչությունը հացառատ Շիրակին, իր անվան «հացահատիկային» ստուգաբանությամբ հանդերձ, վկայում է նրա

⁶⁹ ՀՄԲ, հ. I, էջ 558-559:

⁷⁰ *Хачатурян В. Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики)*, Ер., 1971, стр. 148 ("Keilschrifturkunden aus Boghazköi", Hf. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV, 31-33).

⁷¹ ՀՄԲ, հ. IV էջ 672:

⁷² *Քսենոփոն*, *Անարասիս*, Եր., 1970, էջ 94 (թարգմ. Ս. Կրկյաշարյան, *Xen. Anabasis, IV, 21*):

⁷³ ՀՄԲ, հ. IV, էջ 254:

⁷⁴ *Խորենացի*, *Ս, ժր (հմմտ. Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն*, Եր., 1939, գլ. Ս, էջ 5):

նախատիպի հացահատիկի անձնավորում աստվածություն (ոգի) լինելու մասին,⁷⁵ իսկ Ամասիան՝ որպես Մասիա/Արարատ լեռան անվանադիր, առնչություն ունի խաղողագործության հետ, որովհետև այս լեռն է խաղողագործության և գինեգործության առաջին օջախը համարվում թե՛ հայկական, թե՛ աստվածաշնչային ավանդությունների համաձայն:⁷⁶

Եթե Quria կոչված երկրներից Արագածոտնինը առնչվում է Արամայնակին և կրկնորդ կերպար Արամայիսին՝ Արգածոտնը նրանց տիրույթն էր, ապա Ադիովտինը գտնվում էր Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի (մ.թ.ա.859-824թթ.) կողմից Aramalé անվամբ հիշատակված ուրարտական նահանգում:⁷⁷ Ասորեստանի մեկ ուրիշ թագավոր՝ Սարգոն II-ը (մ.թ.ա. 722-705թթ.), նույն այս նահանգը կոչում է Armarili և Armariali:⁷⁸ Այս անունների Aram- և Arm- սկզբնամասերը այնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին առկա է նաև *Արամանեակ/Արամայիս* և *Արմաիք* առնչության դեպքում: Մեպագրային Aramali<*Aram-ali (հմմտ. *դարան-ադի*, *Ման(ան)ադի*, *Մարդ-ադի* հին հայկական գավառանունները) տեղանվան հիմք *Aram-ը նույնական է ինչպես Ուրարտական թագավորության հիմնադիր Arame/Aramu թագավորի (մ.թ.ա. IXդ. կեսեր), այնպես էլ հայոց Արամ նահապետի⁷⁹ անունների հետ:⁸⁰ *Արամանեակ* անվան նման դրանք ևս իրենց հիմքում ունեն հ.-ե. *arə/*Har- «հերկել, վարել», արմատը⁸¹ և արգասիքն են հողագործության մեջ արորի (*արոր*< հ.-ե. *arə-tro-)⁸² ներդրման՝ հացաբույսերի մշակության բրիչային ձևից արորայինին անցնելու երևույթի և դրանք ընդգրկված դարաշրջանի: Տնտեսամշակութային այդ առաջընթացի արգասիքն էր նաև Արա Գեղեցիկի անունը (*Արայ*<*arə- և -այ վերջածանց. հմմտ. նաև Արարատյան բարբառում տղամարդկանց նկատմամբ կիրառվող *ա՛րա* կոչական բառը)⁸³: Արան՝ Արամ նահապետի որդին և անվանադիրն էր Արարատյան դաշտի (Այրարատ, դաշտն Արայի),⁸⁴ հովանավորը արորային հողագործության և ժառանգորդը մեռնող-հառնող մի աստվածության:

⁷⁵ **Պետրոսյան Ս.**, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 177-189, Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 281-285, 306:

⁷⁶ **Պետրոսյան Ս.**, Միսակ և Նոյ նահապետների մասին հայոց ավանդությունների պատմական հենքը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. VI, Գյումրի, 2003, էջ 5-16, Նույնի, Արարատյան լեռների հին անունների և անվանադիրների մասին, ՊԲՀ, 2010, թիվ 3, էջ 223-225:

⁷⁷ *ABNIN*, NN 27, 28.

⁷⁸ **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն. ակունքները. X-VIդդ. մ.թ.ա. Եր., 1972, էջ 85, ծան. 1 էջ 111:

⁷⁹ **Խորենացի, Ա.** ժբ-ժգ:

⁸⁰ **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 53-55:

⁸¹ Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 176-180, 305-306, 365-366:

⁸² ՀԱԲ, հ. I, էջ 350:

⁸³ Հմմտ. **Պետրոսյան Ս.**, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, էջ 197-198:

⁸⁴ **Խորենացի, Ա.** ժե, ժգ, Սէբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ. Ա, էջ 6, 7:

Հ.-ե. *arə- և *aruo- «ազատ հողագործ» արմատակից նախաձևերից սերած բառեր կան մի շարք ժառանգ լեզուներում, որոնցից են հայ. *հարաւունք* «ցանք, վարուցան, սերմ, արտ» (Մշո բարբառում ունենք *հարվունք* «գարնան և աշնան եղանակին՝ անձրևներից կակղած հող, որ կարելի է արորով վարել»⁸⁵), հուն. ἄροσρα «վարելահող», լատին. arvom «դաշտ», միջ. իռլ. arbor «հացահատիկներ», իւեթ. araya «ազատ, ապահարկ», լյուկ. arawa «(հարկից) ազատ, լիտվ. arvas «ազատ» և այլն⁸⁶ հ.-ե. aruo- «ազատ հողագործ» նախաձևն է ընկած ուրարտական Արմարիի նահանգի բնակավայրերից մեկի Arbu անվան⁸⁷ հիմքում (սեպագր. b/b, u, v, իսկ u/u, o): Մա ուրարտական արքայատոհմի բնակավայրերից էր, որովհետև Մարգոն II-ն այն կոչում է «Ուրսայի հայրական տուն», իսկ հարևան Ռիյար բնակավայրը՝ «Իշտարդուրիի քաղաք»՝ ի նկատի առնելով Ռուսա I-ին (Ուրսա) և Մարդուրի II-ին (Իշտարդուրի):⁸⁸

Arbu-ի գուգակից Rijar-ի անունը ևս հնդեվրոպական ծագումով հողագործական բնույթ ունեցող տեղանուն է: Այս անունը պահած *Շրեր* գյուղը (Շրեր<*Շրի-ար) «թաղված էր այգիների և ծառաստանների մեջ: XIX դարի կեսերին ուներ 82 տուն, վերջերին՝ 100, իսկ 1915թ. նախօրյակին՝ 110 տուն հայ բնակիչ. զբաղվում էին *երկրագործությամբ*, անասնապահությամբ, *պտղաբուծությամբ*, *խաղողագործությամբ* և արհեստներով»: ⁸⁹ Rijar<*Rii-ar տեղանվան առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *reHi- «ունեցվածք» արմատից, որից են նաև հին հնդկ. rayi «բարիք, ունեցվածք, հարստություն», ավեստ. raevant «հարուստ», լատին. res (սեռ. հոլով. rei) «ունեցվածք, իրեր» բառերը: ⁹⁰ Rii-ar տեղանվան երկրորդ բաղադրիչի համար հմմտ. -ար վերջածանցը *արդ-ար*, *կերպ-ար*, *մոլ-ար*, *պալ-ար* և այլ բառերում:

Հնագույն Ադիոպտի և Արագածոտնի Quria անունները և դրանց իմաստակից մյուս տեղանունները վկայություններն են Հայկական լեռնաշխարհի առանձին շրջանների տնտեսության մեջ խաղողագործության և գինեգործության առաջատար ճյուղեր լինելու, երբ դրանց հարևան և այլ շրջաններից շատերում այդպիսի դեր վերապահված էր հացազգի բույսերի մշակությանը: «Խաղողա-գինիական» ստուգաբանությամբ բերված և այլ տեղանունների առաջացման ժամանակաշրջանը, անտարակույս, նախորդել է դրանց սեպագրային գրանցում ստանալու դարաշրջանի և, մեր կարծիքով, գուգադիպել է արորային հողագործության արգասիք քննարկված տեղանունների մյուս խմբի առաջացման դարաշրջանին: Պատմական այդ գործընթացը պայմանավորված է եղել միննույն էթնիկական ընդհանրությանը պատկանող Հայկական լեռնաշխարհի բնակչության տարբեր հատվածների ըստ տնտեսամշակութային հատկանիշների առանձնացման և

⁸⁵ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 57:

⁸⁶ ИЯИ, т. II, стр 477, 885.

⁸⁷ АВИИУ, надп. NN 46, 49.

⁸⁸ Արոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., էջ 193-194:

⁸⁹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., նշվ. աշխ., հ. II, Եր., 1988, էջ 364:

⁹⁰ ИЯИ, т. II, стр. 747; Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 181-182:

դասային խմբավորման հասարակական պահանջով, իսկ դրանք նախորդել են մեր լեռնաշխարհում պետական կազմավորումների առաջացման և պետությունների ձևավորման դարաշրջանին:

СТРАНЫ QURIA И ДРЕВНЕАРМЯНСКИЕ ВИНОЧЕРПИИ

___ *Резюме* ___

___ *С. Петросян* ___

По сообщению Мовсеса Хоренаци, родовое имя нахараров Гнуни происходит от арм. гини «вино». Наследственное владение Гнуниев находилось в древнеармянской области Алиовит, а как придворные виночерпии они имели поместье на севере древнеармянской области Арагацотн. В Урартский период эти земли именовались Quria-, так же «винное» название: ср. арм. *кури* (կուրի) - в арго «вино», слово индоевропейского происхождения. Quria в Алиовите была в составе урартской провинции Арамали/Армар(ий)али, а Куриа в Арагацотне, по древнеармянским эпическим сказаниям, считаются вотчиной Арамаяка - старшего сына этнарха армян Хайка (Хоренаци, I, 12). В основе л.и. *Арамаяк* (Արամայակ) и топонимов *Агамали/Армар* (ii)a-li и.-е. *arə «пахать, вспахивать»: ср. арм. *арор* (արօր<արար<и.-е. *are-tro-) «орало, соха». И.-е. корень *arə- наличествует и в имени основателя Урартского государства царя Араме (Arame, Aramu).

Появление названий Quria должно быть обусловлено процессом дифференциации населения армянского нагорья по хозяйственно-культурным типам задолго до появления здесь государственности, но после широкого распространения пашенного земледелия. В данном случае имеется в виду факт распространения у предков армян в Алиовите и Арагацотне уже виноградарства и виноделия, а их соседи продолжали преимущественно заниматься культивированием зерновых.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Սարգիս Գարեգինի - պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊԱԻ պատմության և իրավագիտության ամբիոն,
E-mail: Vahe1996@mail.ru

ՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

Մեծ Հայքի Սոկաց աշխարհի Սյուս Իշայր գավառում՝ Բաղեշ քաղաքից 35 կմ հարավ-արևելքում է գտնվել Խիզան քաղաքը: Այն հաճախ հիշատակվել է XIV-XV դդ. ձեռագիր հիշատակարաններում՝ որպես հայկական գրչության կենտրոն: Խիզանից հայտնաբերվել է մի ձեռագիր (Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 2865, 4բ, Պատմագիրք Հայոց), որի մանրանկարն¹, ըստ ընդունված կարծիքի, հետևյալ բովանդակությունն ունի: Պատմահայր Մովսես Խորենացին գրում է իր «Հայոց պատմութիւն»-ը, պատվիրատու Սահակ Բագրատունին ձեռքը մեկնել է դեպի պատմահայրը՝ հանձնարարական շարժումով, իսկ նրանց ոտքերի մոտ՝ հատակին, ծնկաչոք կեցվածքով ձեռագրի ստացող Ներսես Գնունեցին է (նկ. 1): Նկարի տակ ծանոթագրված է. «Սահակ Բագրատունին խնդալն Մովսես Խորենացոյ բան»: Մանրանկարը համարվում է 1567թ. գործ, իսկ ծաղկողի անունը հայտնի չէ:



Նկ. 1

Ինչպես նշվեց, մանրանկարը համարվում է Խիզանի դպրոցի ստեղծագործություններից, սակայն, ամենայն հավանականությամբ, մանրանկարի հեղինակը Կիլիկիայի մանրանկարչական դպրոցի (կազմավորված XII դարում և գոյատևած մինչև XIV դարի 80-ական թթ.) ներկայացուցիչ է, քանի որ նկարը բավականին ցայտուն կերպով կրում է Կիլիկյան դպրոցի ազդեցությունը: Իսկ ինչ վերաբերում է մանրանկարի բովանդակությանը, ապա, մեր կարծիքով, այն չի համապատասխանում իր ներքոգրյալ ծանոթագրությանը և արտահայտում է բոլորովին այլ ժամանակաշրջան, միջավայր ու գործիչներ: Մեր կարծիքով, նկարում պատկերված թագա-

կիր անձնավորությունը կարող էր լինել Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն II Մեծագործը (1198-1219թթ.), իսկ մյուս երկուսը՝ նրա ժամանակակիցները: Բերենք փաստարկներ:

1. Թագակիր անձնավորությունը Սահակ Բագրատունին լինել չէր կարող հետևյալ պատճառով: Սահակ Բագրատունին թագավոր չէր, իշխան էր, ապա՝ մարզպան (481-482թթ.) և չէր կարող կարմիր կոշիկներ ու թագ կրել, այն էլ՝

¹ Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, Մատենադարան, Եր., 1982, նկ. N 63:


կիլիկյան թագ (հմմտ. Լևոն II արքայի թագը՝ ըստ դրամի (նկ. 2, 3)², Լևոն III արքայի թագը (նկ. 4)³, Լևոն V արքայի թագը (նկ. 5)⁴:



նկ. 2



նկ. 3



նկ. 4



նկ. 5

2. Կարծեցյալ Մովսես Խորենացու փոխարեն տվյալ պատկերում կարող էր հանդես գալ Ներսես Լամբրոնացին, ով իր կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել էր Լևոն II-ի արքունիքում որպես ատենադպիր, պալատական խորհրդատու և թարգմանիչ⁵:

² Գատվարյան Մ., Լևոն Բ Մեծագործ, Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1978, էջ 589:

³ Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, Լևոն Գ թագավոր, Կեռան թագուհի և նրանց որդիները նկ. N 13:

⁴ Նույնի, Լևոն Ե թագավոր, նկ. N 35:

⁵ Աբգարյան Գ., Գրիգորյան Գ., Ներսես Լամբրոնացի, Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 8, Եր., 1982, էջ 253:

3. Հանձին ձեռագրի պատվիրատուի՝ կարծեցյալ Ներսես Գնունեցու, պետք է մահմեդական գործչի տեսնել, քանի որ իր կրոնական պատկանելությանը համապատասխան, նա կրում է մահմեդական փաթոթոց, իսկ իր ոտաբոբիկ ու ծնկաչոք կեցվածքով հուշում, որ իրենից վերև գտնվող երկու կերպարների հանդեպ ստորադաս վիճակում է:
4. Շինության աշտարակը և ներքին հարդարումը ևս բնորոշ են մահմեդական կառույցներին:
5. Մանրանկարի խորքում՝ պատվանդանի վրա դրված գիրքը, որը համարվում է Մովսես Խորենացու երկը, ամենայն հավանականությամբ, Ղուրանն է, որը մահմեդականի երդման արարողության կարևոր ատրիբուտներից մեկն էր՝ այս դեպքում մահմեդական գործչի հնագանդության ու հավատարմության երաշխիքը:

Իսկ կոնկրետ ի՞նչ իրադարձություն է արտացոլում մանրանկարը: Նրա պատմական հենքը կարելի է գտնել Լևոն II-ի և հարևան Բկոնիայի (Ռումի) սելջուկյան սուլթանության քաղաքական հարաբերությունների մեջ: Կիլիկյան Հայաստանի միջազգային հարաբերությունները Լևոն II-ի կառավարման տարիներին բավականին բարդ էին: Այդ տարիները համընկել էին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող խոշոր քաղաքական իրադարձություններին և արմատական փոփոխություններին: 1176թ. Միլիոկեֆալունի ճակատամարտում Բկոնիայի սելջուկներից կրած ծանր պարտության հետևանքով Բյուզանդիան այլևս Կիլիկյան հայկական թագավորության հետ անմիջական սահման չունեցավ և զրկվել էր Արևելքում որևէ դերակատարություն ունենալու հնարավորությունից: Պատմության թատերաբեմից վերջնականապես հեռացել էին Կիլիկիայի երբեմնի ամենավտանգավոր ախոյանները՝ Սեբաստիայի և Մելիտենեի Դանիշմենյան ամիրայությունները: Եգիպտոսի սուլթան Մալահեդդինի (1169-1193թթ.) հարվածների տակ գրեթե կործանման եզրին էին հասել Արևելամիջերկրածովյան խաչակրաց պետությունները: Ներքին գահակալական կռիվներից սաստիկ թուլացել էին Բկոնիայի և Հալեպի սուլթանությունները: Չնայած բարդությանն ու հաճախակի փոփոխականությանը՝ ընդհանուր առմամբ Կիլիկիայի համար միջազգային այդ իրադրությունը բարենպաստ էր: Լևոն II-ը հմտորեն կարողացավ օգտվել դրանից, առավելագույնս ընդարձակեց իր պետության սահմանները և «ծավալապաշտությունը դարձրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնաքարը»⁶: Լևոն Մեծագործը կապեր ուներ թե՛ պապականության, թե՛ Հռոմեական Սրբազան կայսրության և թե՛ Բյուզանդիայի հետ: Միջազգային ասպարեզում շատ էր բարձրացել նրա անձնական հեղինակությունը: Երկրի շահերից բխող անկախ և ճկուն դիվանագիտության որդեգրումը, Կիլիկիայի տարածքների ընդարձակումն ու պաշտպանունակության ամրապնդումը, պետական համակարգի արդիականացմանը միտված բարեփոխումների իրականացումը ուղեկցվում էին երկրի բնակչության սովորացումով, նրա տնտեսական վերելքով, քաղաքների և արտաքին առևտրի զարգացումով: Այս գործոնների շնորհիվ Կիլիկյան հայոց պետությունն այնքան հզորա-

⁶ *Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 231:*

ցավ, որ դարձել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, և դրա ազդեցությունը շարունակաբար զգացվեց թագավորության հետագա ողջ գոյության ընթացքում:⁷

Լևոն II-ը դեպի արևելք պետության տարածքն ընդլայնել էր ի հաշիվ Անտիոքի իշխանության⁸: Նա դիվանագիտական ճկունություն ու խոհեմություն էր ցուցաբերել նաև Իկոնիայի սուլթան Խլիճ-Արսլան II-ի (1156-1192թթ.) որդիների միջև ծագած գժտության ժամանակ: Նա արշավել էր արևմուտք և հյուսիս, գրավել Իսավրիայի և Կապադովկիայի սահմանամերձ շրջանները: Իկոնիայի սուլթան Խլիճ-Արսլանը դեռևս կենդանության օրոք էր իր պետությունը բաժանել որդիների միջև, ինչը թուլացրել էր Փոքր Ասիայի սելջուկների ռազմական հզորությունը և կասեցրել նրանց արշավանքները Կիլիկյան Հայաստան: Այժմ Լևոնն ինքն էր արդեն հաջող պատերազմներ մղում սելջուկ-թուրքերի դեմ, ուստի Խլիճ-Արսլանի՝ միսյանց դեմ մարտնչող որդիներին այլ բան չէր մնում, քան ապավինել նրա հովանավորությանը: 1195թ. նրանցից Մուղիս էդ-դին Տողրուլշահը՝ Մալիքը (Ալբիստանի էմիրը 1192-1201թթ.), գալիս է Լևոնի մոտ, ընդունում նրա գերիշխանությունը և իրեն կախյալ հայտարարում նրանից:⁹ Լևոնն իր հերթին փայլուն կերպով իրականացնում է իր խոստումը. նա արշավում է Մալիքի եղբոր՝ Կեսարիայի տեր Նուր էդ-դին Սուլթանշահի դեմ, հաղթանակ տանում նրա նկատմամբ, գրավում անգամ Կեսարիայի հարևան մի բնակավայր: «Արիագոյնն Լևոն տիրեաց երթանասուն և երկու բերդի, էր գոր նախնիքն իւր կալեալ էին և էր գոր ինքն էառ ի յունաց և ի թուրքաց... Եւ էլ մեծն Լևոն և էառ բերդ մի մերձ Կեսարիոյ և էտ նմա» մեխքին՝ Ալախստանի տիրոջը:¹⁰

Ցավոք, աղբյուրները լռում են Լևոնի և Մուղիս էդ-դինի միջև կնքված որևէ գրավոր համաձայնագրի առկայության մասին, սակայն դժվար չէ կռահելը, որ այդպիսին եղել է. ռազմական օգնության դիմաց գերիշխանության ճանաչումը և փոխադարձ պարտավորությունները պետք է որ ամրագրվեին պայմանագրով:

Հետագայում ևս՝ թագավոր օծվելուց հետո, Լևոն II-ին տեսնում ենք Իկոնիայի սուլթանության այս կամ այն թագաժառանգին իր քաղաքական աջակցությունը ցուցաբերելիս,¹¹ սակայն դրանք ավելի շուտ դրվագային միջամտու-

⁷ *Կիրակոս Գանձակեցի*, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, գլ. Գ, էջ 118: *Միքայելյան Գ.*, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 178 (*Միքայել Ասորի*, Ժամանակագրություն, էջ 501): Նույնի, էջ 178-179 (*Վարդանայ Բարձրաբերդցույ Պատմություն տիեզերական*, էջ 182): *Օրմանեան Մ.*, Ազգապատում, հ. Ա, Պեյրութ, 1959, էջ 722:

⁸ *Միքայելյան Գ.*, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, էջ 144:

⁹ *Տեր-Պետրոսյան Լ.*, նշվ. աշխ., հ. Բ, էջ 234 (տե՛ս *Մսբատ*, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 212):

¹⁰ *Միքայելյան Գ.*, նշվ. աշխ., էջ 155 (*Միքայել Ասորի*, Ժամանակագրություն, էջ 501-502):

¹¹ Գիյաս էդ-դին Քեյ Խոսրովի և եղբոր՝ Ռուքն էդ-դինի միջև ընթացող հակամարտության ժամանակ Լևոն II-ն աջակցում էր Ռուքն էդ-դինին (տե՛ս *Հովհաննիսյան Ա.*, Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., Էջմիածնի հանդես, 2012, էջ 86): Սուլթան Գիյաս էդ-դին Քեյ Խոսրովի (1205-1210թթ.) որդիներ Բզզ էդ-դինի ու Ալա էդ-դինի՝ գահի համար մղված պայքարի ժամանակ Լևոնն օգնում էր Ալա էդ-դինին: Սակայն Բզզ էդ-դինը ոմն Ջելալ էդ-դինի միջնորդությամբ

թյուններ էին, և կարծես թե կախյալ ճանաչվելու կամ գերիշխանություն ընդունելու խնդիր որևէ մեկի առջև Լևոնը չէր դրել: Ի նկատի առնենք, որ սկսած XIII դարասկզբից՝ Բյուզնդյանի սուլթանությունը վերականգնել էր նախկին հզորությունը և իր հերթին աջակցում էր Անտիոքի դքսությանն ու Հայեալի սուլթանությանը՝ ընդդեմ Գիլիկիայի, ուստի միջազգային իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում կտրուկ փոխվել էր՝ հոգուտ Գիլիկյան Հայաստանի հակառակորդներին:¹² 1216թ. սելջուկյան զորքերն անգամ ներխուժել էին Գիլիկիա, նրանց հաջողվել էր մի քանի օրվա ընթացքում կողոպտել սահմանամերձ շրջանները, գերեվարել մարդկանց, տիրանալ մեծ թվով անասունների ու նշանակալի ավարի: Լևոն II-ը հիվանդության պատճառով չէր մասնակցել ռազմական գործողություններին:¹³ Ըստ Մսբատ սպարապետի՝ 1216թ. սելջուկների հետ բախումներն ավարտվել էին հայերի պարտությամբ, որի պատճառներից մեկը ժամանակագիրը համարում է թշնամու գերակշռությունը, իսկ մյուսը՝ Լևոնին ենթակա որոշ իշխանների անտարբերությունն ու անհավատարմությունը:¹⁴ 1218թ.¹⁵ կնքված հաշտության պայմանագրով Լևոն II-ը գերիներին ազատում է՝ տարածքային զիջումների և սուլթանի գերակայությունը ճանաչելու պայմանով: Կարծիք կա նաև, թե Լևոնը գերյալ իշխաններին ազատել է ոչ թե զիջումների գնով, այլ ուժի ցուցադրությամբ:¹⁶ Այնուամենայնիվ, սելջուկ-թուրքերի՝ Գիլիկիայի դեմ ունեցած ռազմական հաջողությունները վկայում են, որ Լևոն II-ը կորցրել էր նրանց նկատմամբ նախկինում ունեցած իր ազդեցությունն ու հեղինակությունը, ուստի «իր գահակալման վերջին տարիներին ստիպված էր զգալի զիջումներ կատարել հարևան Բյուզնդյանի սուլթանությանը»:¹⁷ Հետևաբար, մանրանկարում արտացոլված դրվագը կարող է վերաբերել Լևոն Մեծագործի կառավարման այն ժամանակահատվածին, երբ Գիլիկյան Հայաստանը նա դարձրել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, իսկ Բյուզնդյանի սուլթանությունը գտնվում էր թուլացած ու պառակտված վիճակում:

Նկարագրված իրադարձությունները կարծես ամրապնդում են մեր այն կարծիքը, թե մանրանկարում պատկերված ծնկաչոք անձնավորությունը բարձրաստիճան մահմեդական է և ստորադաս վիճակում է գտնվում Լևոն Մեծագործի հանդեպ: Նրա ոտաբոբիկ ու ծնկաչոք դիրքը շեշտում է թագակիր անձնավորու-

կարողանում է առանձին դաշինք կնքել Լևոնի հետ և չեզոքացնել նրանից եկող վտանգը (տե՛ս Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 172):

¹² *Հովհաննիսյան Ա., Գիլիկիայի հայկական թագավորության և Բյուզնդյանի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 85:*

¹³ *Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 173:*

¹⁴ Նույնի, էջ 175 (Մսբատայ Սպարապետի պատմություն, էջ 107-108):

¹⁵ *Հովհաննիսյան Ա., Գիլիկյան Հայաստանի և Բյուզնդյանի սելջուկյան սուլթանության միջև 1918թ. կնքված հաշտության պայմանագրի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ. Քաղաքագիտություն», Եր., 2010, էջ 73:*

¹⁶ *Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 275-276 (Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմություն, էջ 216; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586-587):*

¹⁷ *Հովհաննիսյան Ա., Գիլիկիայի հայկական թագավորության և Բյուզնդյանի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 93:*

թյունից՝ տվյալ դեպքում Լևոն II-ից, կախման մեջ գտնվելու և հնազանդ լինելու մասին: Հնարավոր է, որ պատկերվածը Խլիճ-Արսլանի որդի Մուղիս Էդ-դին Տողրուլշահն է, քանի որ, ինչպես տեսանք, Մուղիս Էդ-դինն էր ռազմական աջակցության դիմաց իրեն կախյալ հայտարարել Լևոնից, բացի դրանից, Լևոնը Մուղիս Էդ-դին - Նուր Էդ-դին հակամարտության տարիներին ավելի ուժեղ էր, ինքնուրույն ու անկախ: Այդ տարիներին նրա մղած պատերազմները սելջուկների դեմ կրում էին հարձակողական ու նվաճողական բնույթ, երբ սելջուկ-թուրքական հետագա գահակալական պայքարների ընթացքում, ինչպես վերևում նշվեց, Լևոնն այլևս նախկին ազդեցիկ դիրքը չունեի տարածաշրջանում, նրա մղած պատերազմները սելջուկների դեմ արդեն պաշտպանողական բնույթ էին կրում և անգամ ուղեկցվում տարածքային զիջումներով:

Եթե ընդունենք, որ խնդրո առարկա մանրանկարում լուսապսակով պատկերված անձնավորությունը Ներսես Լամբրոնացին է, ապա անվիճելի կլինի այն փաստը, որ Լևոն II-ի հանդեպ պարտավորություններ ստանձնած բարձրաստիճան մահմեդականը Մուղիս Էդ-դին Տողրուլշահն (Մալիք) է: Խլիճ-Արսլանի որդիների գծությունն ու Լևոն Մեծագործի միջամտությունն այդ առճակատմանը տեղի է ունեցել 1195 թ.¹⁸, երբ Ներսես Լամբրոնացին տակավին ողջ էր: Նա Լևոնի արքունիքի ատենադպիրն էր և առանց նրա մասնակցության դժվար թե կայանար Մուղիս Էդ-դին Տողրուլշահին վասալ ճանաչելու պայմանագիր-պարտավորագրի կնքման արարողությունը: Լամբրոնացին կնքել էր իր մահկանացուն 1198թ. հուլիս ամսին՝ Լևոնի թագադրությունից (1198թ. հունվարի 6) ամիսներ անց, այսինքն՝ չէր կարող ներկա լինել հետագա որևէ դիվանագիտական բանակցության:¹⁹ Իսկ այժմ փորձենք պարզաբանել, թե ինչու էր Ներսես Լամբրոնացին մանրանկարում լուսապսակով հանդես գալիս:

1. Հայկական եկեղեցիներում սովորույթ է եղել սրբերի շարքում պատկերել նաև կաթողիկոսներին:²⁰ Ճիշտ է, Լամբրոնացին կաթողիկոս չէր և 1175թ.-ից Տարսունի նահանգի արքեպիսկոպոսն էր, սակայն այնպիսի հռչակ էր վայելում երկրում, որ յուրաքանչյուր պետական կարևոր նշանակության հարց առանց նրա մասնակցության չէր լուծվում: Այս առթիվ Մ. Օրմանյանը գրում է. «Ապիրատեն (1194-1203թթ. կաթողիկոսական աթոռը զբաղեցրած Գրիգոր Զ Ապիրատ-Լ.Պ.) առելի ժիր եւ գործունեայ էր իր քեռորդին Ներսես Լամբրոնացի Տարսունի արքեպիսկոպոսը, տակաւին հազիւ քառասուն տարէկան, որուն ամէն եկեղեցական և

¹⁸ Այստեղ կարող է հարց ծագել՝ եթե Լևոն Մեծի միջամտությունը երկու եղբայրների հակամարտությանը տեղի է ունեցել մինչև Լևոնի թագադրվելը, ապա ինչու է վերջինս մանրանկարում թագով պատկերված: Ենթադրելի է, որ մանրանկարն ստեղծվել է հետագայում, հետևաբար ով էլ որ լինեի հեղինակը, չէր կարող մեր հռչակավոր թագավորին առանց թագի պատկերել:

¹⁹ Կարծիք կա նաև, թե Լամբրոնացին վախճանվել էր Լևոնի թագադրման արարողությունից առաջ, և, ըստ այդմ, Լևոնի՝ թագավոր հռչակվելը դրվում է 1199թ. հունվարի 6-ին՝ հիմք ընդունելով թագադրման հանդեսին ներկա գտնված և հանվանե հիշատակված 14 եպիսկոպոսների շարքում Ներսես Լամբրոնացու անվան բացակայության փաստը (Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 802-804:)

²⁰ Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, էջ 6:

քաղաքական գործերու մէջ առաջնակարգ դեր վարելը տեսանք, եւ որ Լեւոնի գլխաւոր խորհրդակիցն ու գործակիցն էր, եւ որուն ընտրելիութիւնն (կաթողիկոսական ընտրություն-Լ.Պ.) ալ խօսուէր»:²¹ Այսպիսով, կաթողիկոս Գրիգոր Ապիրատը ստվերում էր մնացել, ինչպէս Օրմանյանն է նկատում, իր մեղմ ու վարանոտ բնավորության պատճառով:²² Գրիգոր Զ Ապիրատին հաջորդած Հովհաննէս Զ Սսեցին (1203-1221թթ.) նս որոշիչ դեր չի կատարել Կիլիկյան Հայաստանի քաղաքական կյանքում:

2. Ներսէս Լամբրոնացին նաև մատենագիր է եղել, գիտնական, փիլիսոփա, հրապարակախոս, բանաստեղծ, երաժիշտ, թարգմանիչ, տիրապետել մի քանի օտար լեզուների (հունարեն, լատիներեն, ասորերեն, եբրայերեն, դպտերեն): «Նա ամենէն աւելի ոգով փարած է բոլոր եկեղեցիները միացնելու բարձր՝ բայց անգործադրելի խորհուրդին»:²³ Լամբրոնացուն վստահված է եղել նաև երկրի արտաքին գործերը վարելու ու կարգավորելու պարտավորությունները, որոնց համար նա բազմիցս է ուղարկվել օտար երկրներ: Լեւոնի թագադրման շուրջ բանակցություններ վարելու համար Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանությունը նույնպէս Լամբրոնացին էր գլխավորել²⁴:

3. Լամբրոնացու հայրը Լամբրոնի ազդեցիկ իշխանական տոհմի ներկայացուցիչ էր, որից ժառանգած նյութական միջոցներով Ներսէս Լամբրոնացին օժանդակել է դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, ձեռագրերի գնմանը, ընդօրինակմանը, վանքերի, եկեղեցիների ու այլ շէնքերի կառուցմանը, հասարակական այլ կարիքների²⁵:

Անկասկած, նման բեղմնավոր գործունեություն ծավալած պետական ու եկեղեցական ակնառու գործիչն իր ժամանակակիցների կողմից պետք է, որ ընկալվեր և ընկալվել է որպէս Սուրբ: Ինչպէս հայտնի է, Ներսէս Լամբրոնացուն մեծաբեղ են «Տիեզերական վարդապետ», «Սիրելի», «Սուրբ» մակդիրներով:²⁶ Ավելին, Լամբրոնացին ժամանակին Կոստանդնուպոլսում դասվել է տոնելի սրբերի շարքը:²⁷ Հույներն ու հռոմեացիները կոչել են նրան երկրորդ Պողոս առաքյալ Տարսոնացի:²⁸ Հայ եկեղեցին Ներսէս Շնորհալու և նրա անվանակից ու աջակից Ներսէս Լամբրոնացու հիշատակներին տոն է սահմանել, որը կոչվել է «Ներսիսյանց»:²⁹

Այժմ պարզաբանենք, թե ինչու մանրանկարի տակ բերված ծանոթագրությունը չի համապատասխանում մանրանկարում պատկերված իրողությանը: Ըստ երևույթին, գրությունն արված է ոչ թե մանրանկարչի կողմից, այլ ավելի ուշ՝

²¹ *Օրմանյան*, նշվ. աշխ., էջ 776-777:

²² *Նույն տեղում*, էջ 809:

²³ *Նույն տեղում*, էջ 802:

²⁴ *Միքայելյան Գ.*, նշվ. աշխ., էջ 157:

²⁵ *Արգարյան Գ., Գրիգորյան Գ.*, *Ներսէս Լամբրոնացի, Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 8, էջ 253:

²⁶ *Նույն տեղում*, էջ 254:

²⁷ *Օրմանյան Մ.*, նշվ. աշխ., էջ 802:

²⁸ *Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ.Մաթևոսյանը, Մ.Էջմիածին, 1999, էջ 188:*

²⁹ *Նույնը:*

հետագայի միջամտություն է, որը կատարված է ոչ այնքան բանիմաց ու գրագետ անձնավորության կողմից: Դրա վկայությունն են տառերի անհամաչափությունը և գրվածքի՝ նկարի հանդեպ ոչ սիմետրիկ տեղադրությունը: Գրությունը կատարյալ ու անթերի կլիներ, եթե գրված լիներ նման տաղանդավոր վարպետի կողմից, ինչպիսին է մանրանկարի հեղինակը, որի գործն ինքնին բարձր արվեստի նմուշ է:

Այսպիսով, ամբողջացնելով պատկերը, կարելի է եզրակացնել, որ մանրանկարը հեղինակել է կիլիկյան մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ, ով քաջատեղյակ է եղել Լևոն Մեծագործի իշխանության տարիներին երկրում տեղի ունեցած քաղաքական, ռազմական, եկեղեցական ու դիվանագիտական անցուդարձին և դրանցից մի դրվագ վավերացրել իր ձեռքի աշխատանքում, որտեղ պատկերված են ոչ թե Մովսես Խորենացին՝ «Հայոց պատմութիւն»-ը գրելիս, պատվիրատու Սահակ Բագրատունին և ձեռագրի ստացող Ներսես Գնունեցին, այլ, ըստ երևութին, Լևոն Մեծագործն ու Ներսես Լամբրոնացին, իսկ նրանց ոտքերի տակ՝ ծնկաչոք կեցվածքով Լևոն Մեծագործի օգնությանը դիմած և զերիշխանությունն ընդունած Բկոնիայի սուլթան Խլիճ-Արսլանի որդի Մուղիս էդդին Տողրուվշահը, ով, Ղուրանի առջև երդվելով, իր հպատակությունն է հայտնել Լևոն Մեծագործին:

ПОПЫТКА НОВОЙ ИНТЕРПРЕТАЦИИ ОДНОЙ МИНИАТЮРЫ

___ Резюме ___

___ Л. Петросян ___

В городе Хизан (губерния Мокк) была найдена рукопись, миниатюра которой, согласно принятому мнению, изображает родоначальника армянской историографии Мовсеса Хоренаци во время работы над книгой «История Армении». Напротив Хоренаци сидят якобы марзпан Армении (181-182гг.), заказчик произведения Саак Багратуни, а под ногами Хоренаци и Саака Багратуни, на коленях стоит получатель рукописи Нерсес Гнунецци.

Видимо, такое содержание миниатюре приписано по недоразумению, потому что присутствующие в нем образы с киликийской царской короной и мусульманской чалмой, как и вообще, миниатюра в целом, нас переносят совсем в другую среду и эпоху. По нашему мнению, миниатюра отображает подписание соглашения, которое состоялось между Киликийским царем Левоном II (1198-1219гг.) и владельцем Альбистана Мугис эд-дин Тогрулшахом (1192-12012гг.), одного из престолонаследников Иконийского султаната. Последний поссорился со своим братом, прибыл к Левону и поставил себя в зависимость от него. Взаимные обязанности, по-видимому, записывал выдающийся деятель своего времени Нерсес Ламбронаци.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Լուսինե Մարգարի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,

ԳՊՄԲ պատմության և իրավագիտության ամբիոն,

E-mail: Vahe1996@mail.ru

**ՇԻՐԱԿԻՑ ՀԱՅՏՆԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ
ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՏՈՏԻՎՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Շիրակում պեղված են բազմաթիվ տարժամանակյա գոտիներ, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ ուրարտական մի քանի օրինակների¹: Ս.Եսայանը ուրարտական գոտիներն ըստ զարդամոտիվների բաժանում է հինգ խմբերի: Համաձայն այդ խմբավորման՝ Շիրակից հայտնի բրոնզե գոտիները պատկանում են առաջին՝ երկրաչափական զարդանախշերով, երկրորդ՝ բջջաձև զարդանախշերով և չորրորդ՝ ծիսական զարդանախշերով խմբերին²:

Առաջին խմբին են պատկանում Լենինականից հայտնի գոտին (49X9սմ)³, որի մակերեսը զարդարված է յոթ զարդագոտիներով, որոնցից վերին երկրորդ և ներքին երկրորդ զարդագոտիները կրում են երկու շարքով զուգահեռ դասավորված կետեր, զարդագոտիներից երեքը եզրագծված են զույգ գծերով, կենտրոնական զարդագոտին դատարկ է (նկ. 8): Նմանօրինակ գոտու բեկոր պեղվել է 1952 թ. Լենինականի «Սսի կոմբինատի» թիվ 9 դամբարանում (նկ. 4): Գոտին ունի ինը զարդագոտի, որոնցից չորսը եզրագծված են զույգ զարդագոտիներով, որոնց մեջ չորս զուգահեռ շարքերով դասավորված են կետերը: Գոտիների զարդամոտիվի վաղ նմանօրինակները հայտնի են Տլիի դամբարանադաշտից⁴: Գոտիների համաժամանակյա նմանօրինակները հայտնի են Կարմիր-բլուրից⁵ և հրատարակված են Հ. Քելների ուրարտական գոտիների կատալոգում⁶:

Բջջաձև զարդանախշերով գոտիները բաժանվում են երկու ենթախմբի՝ ձվաձև և շեղանկյուն բջիջներով զարդարված նմուշների: Շեղանկյուն բջիջները, որոնք ոճավորված կենաց ծառեր են, լինում են սրածայր և կլորացող գագաթներով՝ դասավորված մեկ հորիզոնական շարքով: Պատկերները դասավորված են ինչպես բջիջների մեջ, այնպես էլ բջիջների գագաթների միջև⁷: Հայտնի են կլորավուն գագաթներով շեղանկյունաձև բջիջներով շիրակյան երկու նմուշներ Անիպեմզայի թիվ 6 դամբարանից (նկ.6) և Կարսի մարզի Զաքիմ գյուղի գանձից (նկ. 7):

¹ *Տե՛ս Ավագյան Բ., Հակոբ Կարանյանի մի հնագիտական հավաքածուի մասին, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական յոթերորդ գիտաժողով (ՇՊՄԺ VII), Գյումրի, 2007, էջ 34-40: Ավագյան Բ., Պատահական գտածոների հավաքածու Լենինականից, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 155-159:*

² *Есаян С. Урартские бронзовые пояса Ширака и их новые параллели в Западной Армении, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 91:*

³ *Նույն տեղում, էջ 91:*

⁴ *Техов Б. Центральный Кавказ в XVI-X вв. до н. э., М., 1977, стр. 125, к. 97-5:*

⁵ *Пиотровский Б. Ванское царство /Урарту/, Изг. Восточной литературы, М., 1959, стр. 112.*

⁶ *Kellner H., Gertelbleche aus Urartu, Prghistorische Bronzefunde, Abteilung XII, Band 3, Franz steiner vergal, Stuttgart, 1991, tabl. 78-79/341, tabl. 72-73/283-285, 290, 292:*

⁷ *Есаян С., նշվ. աշխ., էջ 94:*

Կարսի գոտին գտնվել է 1904թ., գոտու եզրանախշը նախշված է կետերով, որոնցից անջատվում են արմավազարդերը: Կենտրոնական զարդամոտիվը կազմված է երեք բջիջներից, որոնցից վերինը և ստորինը կազմում են կիսաշրջաններ, կենտրոնական՝ ամբողջական բջիջներում ձախից աջ պատկերված են՝ առաջին՝ աղեղը լարած և ծնկի վրա հենված նետաձիգ, երկրորդ՝ նետաձիգին ընդառաջ սլացող թևավոր ձի, երրորդ՝ ոճավորված կենաց ծառ, չորրորդ՝ ցատկող առյուծ: Վերին կիսաշրջանում ձախից աջ պատկերված են՝ առաջին՝ մարդու գլուխ, երկրորդ՝ կենաց ծառ, երրորդ՝ թևավոր ձի, չորրորդ՝ թևավոր առյուծ, հինգերորդ՝ առյուծի գլուխ: Ներքևի կիսաշրջանում ձախից աջ պատկերված են՝ առաջին՝ ցատկող ցուլ, երկրորդ՝ կենաց ծառ, երրորդ՝ թևավոր ձի, չորրորդ՝ թևավոր առյուծ: Գոտու աջ մասը զարդարում է ոճավորված կենաց ծառը, որի չորս ճյուղերը դասավորված են չորս շարքով, նմանօրինակ քառաշար դասավորություն ունի Մյունխենի թանգարանի ուրարտական գոտիներից մեկը⁸ և մասնավոր հավաքածուներից մեկում հայտնված գոտին⁹: Անիպեմզայի գոտին գտնվել է 1930թ. պեղումների ժամանակ, գոտու եզրագոտին զարդարված է ուռուցիկ կետերով և շրջանակներով, շեղանկյուն բջիջները արված է զույգ փորագրված զծերով: Ինչպես Կարսի, այնպես էլ այս գոտին զարդարված է կետրոնական ամբողջական բջիջների և վերին, ստորին կիսաշրջանների շարքերով: Սակայն գոտու բեկորային վիճակը թույլ չի տալիս լիարժեք բնութագրել առասպելական պատկերները: Պահպանված վերին երկու և ստորին մեկ կիսաշրջաններում պատկերված են հինգ կամ յոթ շրջանակներից կազմված երեք վարդակներ: Կենտրոնական բջիջների շարքի պահպանված հատվածներում պատկերված են ոճավորված անգղառյուծ՝ պոչի հատվածը թերի, թևավոր առյուծի մարմնով և գիշատիչ թռչնի գլխով, թերի պահպանված ցլի գլուխ և ոտք, ցատկող առյուծի թերի մարմին՝ առանց գլխի, և վազող ցուլ: Վերին կիսաշրջաններից մեկում պատկերված է ցատկող ձի, ստորինում՝ ցատկող առյուծ, մարդագլուխ, ձկան պոչով անգղառյուծ և ցատկող ձի: Գոտու աջ մասում է տեղավորված է կենաց ծառը, որը բաժանված է երեք ճյուղերի: Դրանք ունեն եռաշար դասավորվածություն: Նմանօրինակ կենաց ծառ և մարդագլուխ, ձկան պոչով անգղառյուծ ունեն անհատական հավաքածուներից մեկում տեղ գտած գոտին¹⁰ և Մյունխենի թանգարանում պահպանվող պատահական գտածոներից մեկը¹¹:

Գոտիների չորրորդ խմբին է պատկանում Լենինական 22 հավաքածուի թիվ 11՝ լավ պահպանված ուրարտական բրոնզե գոտու ձախակողմյան բեկորը:¹² Գոտու (նկ. 1) կենտրոնական մասում պատկերված է վազող թևավոր անգղառյուծ՝

⁸ Kellner H., նշվ. աշխ., աղ. 59/224:

⁹ Նույն տեղում, աղ. 55/211:

¹⁰ Նույն տեղում, աղ. 54/206:

¹¹ Նույն տեղում, աղ. 57/221:

¹² Լենինականյան հավաքածուի այս նմուշի հերթական համարն է 11, ոչ թե 49, ինչպես նշված է Թ. Խաչատրյանի «Древняя культура Шурака III-I тыс. до н.э.», Ер., 1975, աշխատությունում, էջ 19 ծան. 71: Թ. Խաչատրյանի կողմից նշված № 49(ա) ֆոնդային համարով գոտին Հայաստանի պատմության թանգարանի մետաղյա իրերի զետեղարանում է պահվում Շիրակից՝ Սպանդարյանի դամբարան, գտնված անհատական իրերի հավաքածուի մեջ և բերված է Հայոց ազգագրական ընկերությունից:

գրիֆոն, գիշատիչ թռչնի գլխով և թևավոր առյուծի մարմնով¹³, ներգծված խաչով արևի սկավառակ և կենաց ծառ: Գոտիների որոշ մոտիվներում կենաց ծառին փոխարինում է մարդակերպ աստվածության պատկերը¹⁴: Անգղառյուծի պատկերում առանձնահատուկ ընդգծված են թևերի փետուրները, առջևի և ետևի թաթերը, տնկած պոչը, վզի և իրանի վրա մանր շտրիխներով ընդգծված են մանր աղվափետուրները¹⁵: Դեմքի վրա ընդգծված են կյոռ պչքը և խոշոր ու կեռ կտուցը: Ուշագրավ է ճակատից վիզը գնացող փոքր գծիկներով՝ աղվափետուրներով, զարդարված բաշը, որի նմանօրինակները հայտնի են ուրարտական գոտիների մոտիվներում: Անգղառյուծի նմանօրինակ կարող է հանդիսանալ Արևմտյան Հայաստանից պատահաբար գտնված և Հ. Քելների ուրարտական գոտիների կատալոգում հրատարակված թիվ 255 գոտու առյուծապոչ անգղառյուծի մոտիվը¹⁶: Անգղառյուծի նմանօրինակներն են Տլիի դամբարանադաշտի թիվ 40 դամբարանից Ադանայի թանգարանում պահվող գոտիների անգղառյուծները:

Ուրարտական գոտիների վրա պատկերված անգղառյուծները տարբերվում են պոչերով, հանդիպում են 1. կարիճի պոչով¹⁷ 2. առյուծի պոչով¹⁸, 3. ձկան պոչով անգղառյուծներ¹⁹: Լենինականյան գոտու անգղառյուծի պոչը առյուծի է, նմանօրինակները հայտնի են Հայկական լեռնաշխարհի ուրարտական բազմաթիվ գոտիների մոտիվներում: Անգղառյուծները ուրարտական արվեստում ծառայել են նաև որպես կահույքի, գահավորակի մաս²⁰:

Գոտու երեք կողմերում հավասար հեռավորության վրա անցքեր են արված, հավանաբար կաշվի կամ կտորի վրա կարելու համար²¹: Գոտու բեկորի վերին հատվածի եզրագարդը զարդարված է ոլորապտույտ զարդաքուղով, որի բազմաթիվ զուգահեռները տեսնում ենք Նուզիից պեղված խեցանոթների վրա, նաև ուշբրոնզիդարյան դամբարանադաշտերից հայտնաբերված խեցեղենի և մետաղյա

¹³ Մ. Պետրոսյանը, գտնում է, որ գոտու կենտրոնական մասում կենաց ծառի և արևի սկավառակի աջ և ձախ կողմերում պատկերված են եղել զույգ անգղառյուծներ, որոնցից պահպանվել է միայն մեկը: Պետրոսյան Մ., Գյումրիի պեղածո գոտու բեկորի զարդանախշերի շուրջ, ՇՊՄԺ I, Գյումրի, 1994, էջ 30-32: Պետրոսյան Մ., Գյումրու ուրարտական գոտու բեկորի մեհենագրերը, ՇՊՄԺ VII, էջ 43-50:

¹⁴ Kellner H., նշվ. աշխ., էջ 59, աղ. 62-63/240, 245, 246, 64/243, 244-65/241, 242:

¹⁵ Есаян С., նշվ. աշխ., էջ 101:

¹⁶ Kellner H., նշվ. աշխ., աղ. 67/255:

¹⁷ Նույն տեղում, աղ. 68-69/266, աղ. 62-63/235:

¹⁸ Նույն տեղում, աղ. 68-69/261, աղ. 62-63/235, աղ. 66-67/255:

¹⁹ Նույն տեղում, աղ. 37/136, աղ. 68-69/266, աղ. 62-63/235, աղ. 66-67/251:

²⁰ Пиотровский Б. Искусство Урарту, VIII-VI вв до н.э., Л., 1962, стр. 45-51, к. 11-24: Нтамакян С. The study of Urartian monuments in the republic of Armenia (1992-2007), in Aramazd, Yerevan, 2010, p. 17, tabl 9:

²¹ Լոռի-բերդի՝ միջին երկաթի դարաշրջանով (Ք.ա. VII-VI դդ.) թվագրվող, թիվ 2 դամբարանից հայտնի նշանավոր ոսկե դիադեմայի՝ ականախույր, ծայրերին կաշվի կամ կտորի վրա կարելու նպատակով նույնպես մանր անցքեր են արված, նաև Լոռի-բերդի համաժամանակյա (Ք.ա. VII-VI դդ.) թ. 4 դամբարանից պեղված ականախույրի վրա, Деведжян С. Лору-берг, 1, Ер., 1981, էջ 64-65, 74, նկ. 23 б 1, 23а, 24, 25) և ուրարտական արվեստին բնորոշ որոշ գոտիների եզրերին, Есаян С., նշվ. աշխ., էջ 92-93, նկ. 2-6, էջ 96-97, նկ. 7-10, 12, էջ 100, նկ. 16):

իրերի վրա: Ուրարապտույտ զարդաքուղի մոտիվը կարելի է տեսնել նաև Լոնդոնի թանգարանում պահվող, Վանում պեղված ուրարտական վահանի բեկորի վրա և ուրարտական այլ հուշարձաններում: Գոտու բեկորի ներքին հատվածի եզրագարդը զարդարված է պտուղներով և արմավագարդերով, որը Բ.Վուֆտինը զուգակցում է բեռլինյան օրինակի հետ: Ըստ Ս. Եսայանի՝ այս գոտու արմավագարդերը որոշ նմանություն ունեն էրեբունիի Խալդ աստծո տաճարի և պալատի արմավագարդերի հետ²²: Գոտու զարդամոտիվը հաճախ ենք հանդիպում ուրարտական արվեստում: Հատուկ նշենք կենաց ծառի և արևի սկավառակի զուգակցումը, որը հաճախ է հանդիպում ուրարտական արվեստում, մեկ այլ դեպքում կենաց ծառերի միջև է տեղադրվում արեգակի սկավառակը²³, սակայն մեր գոտու դեպքում գործ ունենք սակավ հանդիպող կենաց ծառի և վարդակի համադրության հետ, որը Բ.Պիտրովսկին նույնացնում է Կարմիր բլուրից հայտնի գոտուն²⁴, Կելերմեսից և Լիտոե դամբանաբլուրից հայտնի ակինակների ոսկե պատյանի կենաց ծառերին²⁵: Կենաց ծառի վրա պատկերված վարդակի նմանօրինակները քիչ են, մեր մոտիվին ոճով նման է Բադիշի երկրագիտական թանգարանում պահվող, Արևմտյան Հայաստանից հայտնի պատահական գտածոյի կենաց ծառով և վարդակով մոտիվը²⁶: Ուրարտական ժամանակաշրջանով թվագրվող ոճավորված կենաց ծառերի մոտիվը դիտարկվում է նաև խեցեղենի վրա: Կենաց ծառերով մաքուր կավից կտրվածքում ուղղանկյունաձև բարձրորակ թրծումով կարմրագույն անոթի կանթ հայտնաբերվել է Շիրակում՝ Սև ամրոցի ուրարտական կառույցի պեղումներից: «Սև ամրոցի» կանթի հիմնական մասում կան երեք դրոշմվածքներ (նկ. 13), որոնք կատարված են նույն դրոշմիչով և ներկայացնում են փոքրիկ ուղղանկյունաձև, դաշտի մեջ առնված կենաց ծառի ռելիեֆ պատկերներ: Կենաց ծառի մեկ դրոշմակնիքով խեցաբեկոր է պեղվել նաև Հոռոմի ամրոց-բնակատեղիում (նկ. 11): Կենաց ծառի նմանատիպ պատկերումներ հայտնի են ուրարտական զարդամոտիվներից: Լենինականի գոտու վերին և ստորին եզրագարդերի զարդանախշերը՝ ուրարապտույտ զարդաքուղը, սրածայր պտուղներով և արմավագարդերով դրասանգը նույնպես նմանվում է Կելերմեսից և Լիտոե դամբանաբլուրից հայտնի ակինակների ոսկե պատյանների վրայի զարդանախշերի, իսկ ուրարապտույտ զարդաքուղը բնորոշ է նաև Կարմիր բլուրից հայտնի Արգիշտի I-ի, Սարգուրի II-ի և Թոփրաք-Վալեից հայտնի Ռուսա III-ի վահաններին²⁷: Արևի սկավառակով պսակված և

²² *Есаян С.*, նշվ. աշխ., էջ 101:

²³ *Kellner H.*, նշվ. աշխ., աղ. 64-65/242:

²⁴ Բ.Պիտրովսկին գրում է, որ Կարմիր բլուրի գոտու վերջնամասում տեղավորված է երիզապատված խիստ ոճավորված կենաց ծառը, նմանատիպ պատկեր կա նաև Անի-Պեմզայից հայտնի գոտու վրա: Այսպես, ոճավորման արդյունքում տարալուծված կենաց ծառի պատկերը այս անդրկովկասյան տիպի գոտին մի կողմից կապում է լավ ճանաչված ուրարտական գոտիների խմբի հետ, մյուս կողմից էլ սկյութական արվեստին բնորոշ այն նմուշների հետ, որոնք ունեն հինարևելյան բնույթի տարրեր, *Пиотровский Б.* Кармур Блур II, Ер., 1952, էջ 36-37, *Пиотровский Б.* Ванское царство М., 1959, стр. 242, к. 82, стр. 250, к. 86-87):

²⁵ *Пиотровский Б.*, նշվ. աշխ., էջ 251:

²⁶ *Kellner H.*, նշվ. աշխ., աղ. 64-65/241, 242:

²⁷ *Пиотровский Б.*, նշվ. աշխ., էջ 251-252: *Есаян С.*, նշվ. աշխ., էջ 91:

սրածայր պտուղներով դեպի վերև ուղղված ճյուղերով կենաց ծառի նման պատկերներ մեծ թվով հանդիպում են ասուրաուրարտական մշակույթի կնիքների մեջ: Այս գոտու բեկորը դասվում է չորրորդ՝ ծիսական տեսարաններով գոտիների խմբին: Ուսումնասիրելով Մյունխենի թանգարանի գոտիների երկու բեկորները և Լուվրի գոտու բեկորը՝ Ս.Եսայանը եզրակացնում է, որ Լենինականի գոտու բեկորը դասվում է սակավ հանդիպող պատկերներով ուրարտական գոտիների թվին, որին նմանվում են Արևմտյան Հայաստանի տարածքից գտնված նոր գտածոները:

Ծիսական մոտիվներով են Սպանդարյանի դամբարանում պեղված գոտու բեկորները (ՀՊՊԹ 49ա), որոնք կրում են փորագիր կենդանակերպ և երկրաչափական նախշազարդեր (նկ. 5): Գոտին թվագրվում է Ք.ա. IX-VIII դդ.: Բրոնզե մեծ թիթեղից պատրաստած գոտիները կրում էին իբրև զարդ, պաշտպանության միջոց և պաշտամունքի առարկա: Այս գոտիները առաջ են եկել ուշբրոնզիդարյան մշակույթի II փուլից ոչ շուտ և հարատևել են մինչև ուշ ուրարտական ժամանակաշրջանը²⁸: 49ա բրոնզե գոտին ներկա վիճակում թերի է: Պահպանվել են վեց բեկորներ, որոնք կրում են փորագիր կենդանակերպ և երկրաչափական նախշազարդեր: Գոտին թվագրվում է Ք.ա. IX-VIII դդ. և չի դասվում Հ. Ա. Մարտիրոսյանի դասակարգած չորս խմբերից և ոչ մեկին²⁹: Ուշագրավ է բրոնզե գոտու մոտիվը: Գոտու երկու թերի բեկորների վրա պահպանվել են գայլերի/հինգ պատկերներ, որոնցից ամբողջական են միայն երկուսը: Վերին ձախ կողմի գայլակերպ էակի երախը կիսաբաց է, ունի թռչնի ճանկեր հիշեցնող ետևի ոտքեր և հազարտոնուկ հիշեցնող (յուրաքանչյուրը ութ ճանկ) առջևի ոտքեր: Այս էակին ընդառաջ է գալիս երախը կիսաբաց երկրորդ գայլը, որի պոչը նման է կարիճի պոչի, այն ունի երկու ականջ և չորս թաթ, մինչդեռ առաջինը չունի ո՛չ պոչ, ո՛չ ականջներ: Սպանդարյանի գոտու վրա պատկերված անպոչ և անականջ կամ փոքր ականջներով առասպելական կենդանիների նմանօրինակներ են պատկերված Շիրակավանի թիվ 10, 11 Ք.ա. IX-VIII դդ. թվագրվող դամբարաններում պեղված գոտիների մոտիվներում³⁰: Թիվ 11 դամբարանի գոտու (նկ. 3) բեկորի վերին ժապավեններից մեկի վրա պատկերված է երևակայական անականջ կենդանիների շարք, իսկ ստորին ժապավեններից մեկի վրա՝ փոքր ականջներով կամ եղջյուրներով կենդանիների շարք: Թիվ 10 դամբարանից հայտնի գոտու (նկ. 2) գրեթե ամբողջական 13 երևակայական պատկերներից միայն մեկն է, որ պոչ չունի: Ուշագրավ են Սպանդարյանի գոտու հինգ գայլերի մարմինների վրա շրջանակների մեջ տեղադրված, ոճով տարբեր, հավասարաթև մալթյան խաչերը, որոնք հայտնի են Վանի թագավորության արվեստից, մասնավորապես Այանիսի Խաղդիի տաճարի ներքին հարդարման խորաքանդակներից (նկ. 9, 10): Այս մոտիվը բազմիցս կրկնվում է Արևմտյան Հայաստանի տարածքից գտնված ուրարտական գոտիների մոտիվներում, որոնց մի մա-

²⁸ Մարտիրոսյան Հ., Ուշբրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները 2, Եր., 1969, էջ 32-33, աղ. XXXVIII, աղ. XXXIX:

²⁹ Մարտիրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 33:

³⁰ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Շիրակավանի դամբարանները, ՊԲՀ, 2, Եր., 1980, էջ 273-277: Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան /1977-1981թթ. պեղումների արդյունքները/, Եր., 2002, էջ 98, նկ. 13, 14:

սը այժմ պահվում է անհատական հավաքածուներում, իսկ մյուսը՝ Մյունխենի ու Ադանայի թանգարաններում³¹: Առանց շրջանակների, նման հավասարաթև խաչեր են պատկերված Շիրակավանի թիվ 10 դամբարանից պեղված գոտու երևակայական կենդանիներից մեկի մարմնի վերևում՝ գլխից ձախ, կենդանիներից մեկի դիմաց՝ երկնային լուսատուի տակ, մյուս կենդանուն ընդառաջ թռչող թռչնի տակ և վերջին դեպքում՝ երկու հավասարաթև խաչեր են պատկերված երևակայական կենդանու իրանի ետևում՝ պոչի մոտ: Ըստ Մ.Դևեջյանի բանավոր հաղորդման՝ նման հավասարաթև խաչ է պատկերված Լոռի-Բերդի թիվ 49 դամբարանում պեղված բրոնզե թերի թիթեղի վրա: Մալթյան խաչից իր ոճով լրիվ տարբեր է Տլիի դամբարանադաշտից հայտնի, Ք. ա. XII-X դդ. թվագրվող, թիվ 76 դամբարանի բրոնզե գոտու խաչի մոտիվը³²: Մալթյան խաչերի մոտիվը մեզ հնարավորություն է տալիս դիտարկելու և ենթադրելու լճաշեն-մեծամորյան գոտիների վրա ուրարտական արվեստի ունեցած ազդեցության մասին, մանավանդ որ այս տիպի խաչեր հանդիպում են նաև անտիկ շրջանում. օրինակ՝ նման հինգ խաչեր են դաջված Ք.ա. III-I դդ. թվագրվող, հունարակտրիական մշակույթին պատկանող, Ղազախստանի պետական թանգարանում պահվող արծաթե անոթի հատակին³³: Բացի մալթյան խաչերից, ուրարտական զարդարվեստի նշանավոր մոտիվներից են կարիճի պոչով օժտված առասպելական կենդանիները: Ուրարտական զարդարվեստի ցայտուն ազդեցություն է համարվում լճաշեն-մեծամորյան գոտիների վրա հանդիպող մալթյան խաչի և կարիճի պոչով առասպելական էակի համադրությունը, ինչը հնարավորություն է տալիս նման զարդանախշերով գոտիները թվագրելու Ք.ա. IX-VIII դդ. և դասելու Ս.Եսայանի առաջարկած չորրորդ՝ ծիսական խմբին:

Շիրակավանի գոտիների վրա պատկերված երևակայական կենդանիները առասպելական գայլեր են: Ինչ վերաբերում է Սպանդարյանի գոտու վրա կենտրոնում պատկերված անականջ և անպոչ առասպելական գայլանման կենդանուն (որի ետևի ոտքերը թռչնի ճանկեր են հիշեցնում, իսկ առջևինը՝ հազարտունուկ՝ յուրաքանչյուրը ութ ճանկ, իսկ կենդանու իրանի վրայի մալթյան խաչը իր գեղարվեստական հարդարանքով տարբերվում է մյուս չորս գայլերի իրանների վրա եղած միանման խաչերից), կարող է նաև կիսաբաց երախով շուն լինել, որը թռիչքի պատրաստ կանգնած է գայլի դիմաց: Այս դեպքում գործ կունենանք առասպելական գայլի և առասպելական շան հակադրության հետ, որը թվում է, թե կարող է մի դրվագ հանդիսանալ լճաշեն-մեծամորյան մշակույթում պատմվող առասպելից: Առասպելի էությունը և բովանդակությունը դեռ ուսումնասիրության կարիք ունի: Սակայն ուրարտական մոտիվների առկայությունը գոտու վրա թույլ է տալիս ցուցաբերել այլ մոտեցում և խոսել այստեղ գոյություն ունեցող ուրարտա-

³¹ Kellner H., նշվ. աշխ., աղ. 14-15/64, 26-27/97-99, 28-29/100,101,102, 30-31/103, 52-53/193, էջ 63 նկ. 19:

³² Техов Б., նշվ. աշխ., էջ 130:

³³ Греввер К. Памятники греко-бактрийского искусства, Памятники культуры искусства в собраниях Эрмитажа, I, М.-Л., 1940, стр. 110-111.

Էթիունյան հակադրության մասին, որն արտահայտվում է գեղարվեստական մի դրվագի մեջ և ուսումնասիրության անհրաժեշտություն է զգում³⁴:

Հետաքրքիր են երեք արժիվների պատկերները, որոնց թռիչքը կարծես հատուկ խոչընդոտում է գայլերի վազքը: Գոտու այս մոտիվին համահունչ է Շիրակավանի գոտու մոտիվը, որտեղ հավասարաթև խաչերից մեկի վերևում պատկերված թռչունը խոչընդոտում է գլուխը ետ շրջած և երախը լայն բացած երևակայական կենդանու ընթացքը:

Միջնադարյան Հայաստանում արժիվը Գնունիների և Արծրունիների ու այդ տոհմերի մանուկների, ինչպես նաև Բյուզանդական Մակեդոնական արքայատոհմի խորհրդանիշն ու հովանավորն էր³⁵: Ուրարտական շրջանում արժիվի կերպարանքով է պատկերվել Արծիբիդիի աստվածությունը, որը Խալդիի սուրհանդակն է եղել³⁶: Շիրակում արժիվի զարդանախշով եզակի խեցաբեկոր է հայտնի Հայկաձորի ուշ ուրարտական ամրոցից (նկ. 12)³⁷: Գոտու կենդանակերպ երկու բեկորների մոտիվը կարելի է բաժանել երեք մասի, գայլերով զարդարված վերին և ստորին համաչափ ժապավեններ և կենտրոնում գտնվող սրբագործված տարածք (սակրալ դաշտ): Վերին և ստորին ժապավենների պահպանված մասերում գայլերն են և արժիվներից երկուսը, իսկ կենտրոնում սրբագործված տարածքով պաշտպանված այծիկներն են: Սրբագործված տարածքը թերի է, ոչ ամբողջական, և երևում են միայն երեք այծիկներ: Սրբագործված տարածքից դուրս, այծերի վազքին ընդատաջ, իր թռիչքն է ուղղել արժիվներից երրորդը: Տպավորություն է ստեղծվում, թե արժիվները պահպանում են սրբագործված տարածքը, որը երիզված է եռաշար ձվաձիբ զարդանախշով լցված ուղղանկյունով: Գոտու պատկերների ռճավորումը առաձգական է, նկատելի է շարժում պատկերելու ձգտումը: Գոտու վեց բեկորներից չորսի վրա պահպանվել են թերի երկու մեծ եռանկյունիներ, որոնք զարդարված են երկրաչափական զանազան զարդանախշերով, պարզունակ և բարդ փորագիր զարդերով՝ մեծ և փոքր եռանկյունիներ, մեծ և փոքր բեկյալներ, բոլորանախշեր, շրջանակներ, ալիքաձև պատկերներ, եռաշար ձվաձև զարդանախշ: Գոտու զարդարված մակերեսը բոլորված է ալիքաձև պատկերներ հիշեցնող եզրանախշերով: Անչափ ուշագրավ է գոտու ձախ եռանկյան զագաթը, որտեղ իրար միացող բոլորանախշերը ուղղված են դեպի սրբագործված տարածք: Կենսաց ծառի և սրբագործված տարածքի միջև է ընկած թռչող արժիվը:

³⁴ Տիրացյան Գ., Արեշյան Գ., Հնագիտությունը և Ուրարտու-Հայաստան պրոբլեմը, ՊԲՀ, 1990, հ.3, էջ 72: Հմայակյան Ս., Ուրարտական պետության և մշակույթի ձևավորման խնդրի շուրջ, Հայաստանի հնագիտական հուշարձանները 16, Ուրարտական հուշարձաններ, պրակ 3, Եր., 1995, էջ 105-106:

³⁵ Համեմատենք Ք.ա. II-I դդ. թվագրվող հունաբաղկասկական ասեղնագործություններից մեկի մոտիվի հետ, որտեղ թները բացած արժիվին ընդատաջ՝ ծաղիկից դուրս է գալիս մերկ երեխա-գինվորը: Тревеп К., նշվ. աշխ., էջ 145:


³⁶ Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 58-60:



³⁷ Խաչատրյան Հ., Հայկաձորի բնակավայրի 2010թ. պեղումների նախնական արդյունքները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIII, Եր., 2010, էջ 123:



9




10









5



0 2 4

Այս մեծ եռանկյունիների ավելի պարզունակ զարդանախշերով նմանօրինակները հայտնի են վաղ երկաթի դարով (Ք.ա. XI դ. վերջ -X դ.) թվագրվող Հաղպատի և Ստեփանավանի դամբարաններից հայտնի բրոնզե գոտիների մոտիվներում³⁸: Առասպելական գայլերի մոտիվի նմանօրինակներից երկրորդը վերջերս հայտնաբերվել է Շիրակավանի դամբարանադաշտից մեկ այլ գոտու վրա³⁹ և թվագրվում է Ք.ա. IX-VIII դդ., սակայն այս գայլերի պոչերը տարբերվում են մեր գոտու գայլերի պոչերից, դրանք առյուծապոչ են: Հայաստանում և Այսրկովկասում գտնված բրոնզե գոտիների վրա երբեմն լինում են միջանցիկ փոքրիկ անցքեր, որոնք ծառայել են գոտին կապելու կամ ամրացնելու համար: Սակայն Շիրակավանի թիվ 10 և 11 դամբարանների գոտիները և Սպանդարյանի գոտին այդպիսի անցքեր չունեն և հավանաբար օգտագործվել են բնիկներին հայտնի հատուկ եղանակներով: Ինչ վերաբերում է առասպելական գայլերի պաշտամունքին, ապա Շիրակում գայլի պաշտամունքի արմատները ավելի խորն են և հասնում են մինչև վաղբրոնզիդարյան մշակույթ: Այդ է վկայում Մեծ Սեպասար հուշարձանում պեղված գայլի պաշտամունքային տաճարը, որը թվագրվում է Ք.ա. XXVIII-XXVI դդ.⁴⁰:

О МОТИВАХ УРАРТСКИХ ПОЯСОВ, РАСКОПАННЫХ В ШИРАКЕ

___ Резюме ___

___ И. Авагян ___

Во время раскопок на территории исторического Ширака были раскопаны разновременные бронзовые пояса, среди которых важное значение имеют урартские и датируются VIII-VI вв. до Р.Х. Урартские пояса делятся на пять групп. Ширакские пояса относятся к первой-с геометрическим орнаментом, ко второй-с ромбовидными ячейками и к третьей группе-с культовыми мотивами. К первой группе относятся два пояса из Ленинакана.

В четвертую группу с культовыми сценами можно включить фрагмент пояса с крылатым грифоном, деревом жизни и солнечным диском-ном, 11 из коллекции Ленинакан 22 (МИ). К четвертой группе можно отнести обломки пояса (VIII-VI вв. до Р.Х.) из погребения, раскопанного в селе Спандарян (МИ, 49а), которые украшены гравированным геометрическим орнаментом и фантастическими животными.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Ինգա Էդուարդի – ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, E-mail: inga.avagyan.76@mail.ru

³⁸ Մարտիրոսյան Հ., նշվ. աշխ., աղ. XXXVIII, նկ. 1,4, 184, էջ 137, նկ. 2, էջ 161, նկ. 65:

³⁹ Նյութերը պահվում են ՇԵԹ-ում և հրատարակվել են «Շիրակը մշակույթի օրրան» կատալոգում, Խաչատրյան Հ., Եզանյան Ե., Եր., 2013, թիվ 165, էջ 68-69:

⁴⁰ Տե՛ս Եզանյան Լ., Մեծ Սեպասարի վրա սրբարանի կառուցման դիցարանական հեկոր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIII, Եր., 2010, էջ 5-11:

«ԻԾԱԳՐԵՐ» - ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՔԱՐԱՅԾԻ ԵՎ ԴԻՑԱՅԾԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայ ժողովրդական հանելուկների մի մասը գալիս է վաղնջական ժամանակներից: Դրանցից մի քանիսը վերաբերում են Հայոց բարձր լեռների ժայռերին փորագրված «իծագրեր»-ին («այծագրեր»)՝ մ.թ.ա VII-II հազարամյակներում ստեղծված ժայռապատկերներին:¹ Ահա այդ հանելուկներից մեկը. «Միվտակ կող, /Մն իծան մեջ կարածան»:² Թեպետև այս հանելուկն ակնկալում է «թուղթ և գիր» պատասխանը, բայց շատ ավելի ուշ երևան եկած թղթի համարժեքը հանելուկի բանաձևում, ինչպես տեսնում ենք, կող-ն է՝ լեռան կողը, իսկ նույնաբնույթ մյուս հանելուկներում՝ լեռներ-ը, պայիր-ը («գառիվայր»), դար-ը («բլուր»), փլեր-ը («բլրակներ»): Այս բառերը կասկածի տեղ չեն թողնում, որ հանելուկներում հիշված «իծան»-ը՝ «գրեր»-ը, վերաբերում են ժայռապատկերներին: Ընդ որում, այդպիսի հանելուկների համահայկական բնույթի վկան դրանց գրառման վայրերի



Նկ. 1

աշխարհագրությունն է՝ Ալաշկերտ, Արցախ, Ջեթուն, Խարբերդ, Խոտրջուր, Կեսարիա, Պարսպատունիք (Ղարադաղ), Վաղարշապատ, Վան:³ Ինչպես վերոբերյալ հանելուկը, այնպես էլ ներքոբերյալ ուրիշ մի շարք տվյալներ ցույց են տալիս, որ հանելուկներում տառերն՝ «իծան» («այծեր»), իսկ ժայռապատկերներն՝ «իծագրեր» կոչվելու պատճառը մեր հեռավոր նախնիների մտածելակերպում «այծ» և «գիր» հասկացությունների սերտաձած լինելու մեջ է: Իսկ թե ինչու են առաջին հայացքից անհարիր այդ հասկացությունները կապի մեջ դրվել ու սերտաձել, կփորձենք ցույց տալ եղած տվյալների վերլուծության

միջոցով՝ սկսելով այծի (քարայծի) առասպելաբանական կերպարից:
Այծի առասպելաբանական կերպարը ձևավորվել է վաղ նախնադարում: Մայր այծերը սովորաբար երկվորյակ ուլիկներ են ծնում: Այս հանգամանքը պատ-

¹ Կարախանյան Գ., Ժայռապատկերներ, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. IV, Եր., 1978, էջ 277: Դրանք տարածված են «մինչև Հայկական Տավրոսի լանջերը, մինչև Ասորիք-Պաղեստինի ու Բրաքի սահմանները» (Մարտիրոսյան Հ., Գիտությունը սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 9): «Իծագրերին» ծնունդ տված այս տարածքը հնդեվրոպական ցեղերի նախահայրենիքն է. այն նույն տարածքը՝ «Փոքր Ասիայից մինչև Միջագետք և պատմական Բրան», որտեղ մ.թ.ա. IX-VIII հազարամյակներում տեղի է ունեցել վայրի այծի ընտելացումը (Гамкрелидзе Т., Иванов В. Индоевропейский язык и индоевропейцы, այսուհետև՝ ИЯИ, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 588):
² Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 178:
³ Նույնը:

ճառ է դարձել, որ հակադրամիասնության մեջ ըմբռնված բնական երևույթները առասպելաբանական մարմնավորում ստանան նաև ի դեմս սպիտակ և սև այծերի: Այսպիսով, նրանք դարձել են խորհրդանիշները լույսի և խավարի, ցերեկվա և գիշերվա, Լույս (Այս՝ Կենդանի էակների) աշխարհի և Մութ (Այն՝ Անդրշիրիմյան) աշխարհի, արևային և ամպրոպային երևույթների և այլն (նկ. 1):⁴ Արցախյան հեքիաթներից մեկում հանդիպում ենք Լույս և Մութ աշխարհները խորհրդանշող այծերի վաղազույն կերպարներին: Խոր հորում հայտնված հեքիաթային հերոսին խորհուրդ են տալիս. «տու կըքլինասս էսինն տընդը մին ախպուր կա, մին սև էծ, մինգլել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ախպըրան ճուր խմում, լոք կըտաս եր ինիս էտ սիպտակ էծին մաշկեն նստես, քեզ տուս ա ուննական լուս ախշարքը, իսկ վըեր շիլ ինգլիր սև էծին մաշկեն նստեցեր, տուս ա ուննական ավելի մթեն ախշարք»:⁵ Հիշատակված աղբյուրը համապատասխանում է առասպելաբանական այն գետին, որը միմյանցից սահմանագատում էր Լույս (Կենդանի էակների) և Մութ (Մեռյալների, Անդրշիրիմյան) աշխարհները, իսկ սպիտակ և սև այծերը խորհրդանիշներն են այդ հակադիր աշխարհների:

Այժի առասպելաբանական կերպարի լուսավոր և խավար երևույթների խորհրդանշաններ ծառայելու երևույթն արդեն առկա է ժայռապատկերներում: Ինչպես Հ. Մարտիրոսյանն է նշում, դրանցում այծապատկերները փոխարինում են արևապատկերներին և արևի խորհրդանշաններին:⁶ Որ այդ երևույթը հնդեվրոպական ժողովուրդների նախնիներին բնորոշ է եղել ի սկզբանե, կարելի է կռահել հետևյալից: Վաղ հ.-ե. DY արմատից են ծագում հայ. *տիկ* «տիկ, տկճոր, պարկապուկ» < *«այծ» և *տի* «ցերեկ, օրվա լույս մասը» բառերը:⁷ Մրանցից առաջինի արմատակիցներից և իմաստակիցներից են հուն. *լակոն*. *δίζα* «այծ», հին բարձր գերմ. *ziga* «այծ», *zickī* «ուլ», անգլ. *sawp ticcen* «այծիկ» բառերը,⁸ որոնց շարքը պետք է դասել նաև հայ բարբառային *տրլնգալ* բառի **տիր* արմատը (*տիկ* < DY +g աճական, **տիր* < DY+r աճական): *Տրլնգալ* < **տիր-լնգալ* նշանակում է

⁴ Մարտիրոսյան Հ., Բարայեյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. 6, Ժայռապատկերներ, պրակ II, Եր., 1971, աղ. 330: Պետրոսյան Ս., Երկգույն-երկհարկ տիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թիվ 2, էջ 126-127: Նույնի, Հնագույն Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հանդես» թիվ 2, Եր., 2003, էջ 125-133:

⁵ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VII, Եր., 1979, էջ 13: Արցախյան ուրիշ երկու հեքիաթներում գույգ այծերի փոխարեն գույգ հակամարտ խոյեր կամ ոչխարներ են (Նույն տեղում, հ. V, Եր., 1966, էջ 21, 271-272), բայց նախնականը այծերն էին լինելու:

⁶ Մարտիրոսյան Հ., Բարայեյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, աղ. 298, 302:

⁷ *Андреев Н.*, Раннеиндоевропейский праязык, М., 1986, стр. 87.

⁸ *Աճառյան Հ.*, Հայերեն արմատական բարբառան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 405:

«ոստոստել, ցատկոստել»⁹ և որպես երկրորդ բաղադրիչ ունի *լնգալ/լնգլնգալ* «խախտուտ դրված լինելով շարժվել, խթխթալ, այս ու այն կողմ խաղալ» բառը:¹⁰

Վաղ հ.-ե. *DY* արմատից ծագած հայ. *տիւ* բառի արմատակիցներից և իմաստակիցներից են հին հնդկ. *divasa-* «օր, ցերեկ» հուն. *ε'ύ-δῖος* «լավ ու պայծառ օր», լատին. *dies* «օր», բայց նաև հին հնդկ. *dyāuś* «օր, երկինք», *dēvá* «աստված», հուն. *Ζεύς, Διός* «Ջևս, աստված», լատին. *Deus* «Աստված» և այլն բառերը:¹¹

Այծի առասպելաբանական կերպարն է, որ հազարամյակների ճանապարհ անցնելով և սրբազան գրերի հետ ունեցած իր կապը պահպանելով՝ տեղ է գտել Վանի Ազգեստան թաղամասի հարևանությամբ գտնված եկեղեցու *Քոշահան Մբ Աստվածածին* անունը բացատրող ավանդազրույցում: Ըստ դրա՝ եկեղեցում պահպանվող Մբ գիրքը թաղված տեղից հայտնաբերել էր քոշը՝ արու այծը:¹²

Ժայռապատկերներում այծը հանդես է գալիս նաև ամպրոպային երևույթների խորհրդանիշի դերում¹³ և Մեռյալների աշխարհի հետ ունեցած կապի մեջ: Ինչպես Ա. Աբրահամյանն է նշում, այս դեպքում այծն «ունեցել է նաև մոգական նշանակություն, նրա պաշտամունքը կապված է եղել անդրժիրիմյան կյանքի պատկերացումների հետ»:¹⁴ Պատահական չէ, որ հետագա հայկական հավատալիքներում այծին՝ սև այծին առնչված (անգամ նույնացված) ենք տեսնում սատանային: Այդպես է, օրինակ, «այծ» պատասխանն ակնկալող «սատանեն գնաց, թամբը մնաց» հանելուկում¹⁵, մի շարք առածներում (գրի առնված Աշտարակում, Թիֆլիսում, Շիրակում, Վանում)¹⁶, ժողովրդական հեքիաթներում և «Մասնա ծոեր» դյուցազնավեպում:

Ժայռապատկերների այծերի բազմաթիվ ու բազմազան լինելը պայմանավորված է լինելու ոչ միայն նրանց տնտեսական նշանակությամբ ու պաշտամունքով, այլև վերջինս իրականացնող, նախնադարյան քրմի մասին գոյություն ունեցած առասպելաբանական պատկերացումներով: Գոնե ծիսական արարողություններում քուրմը ուղղակի այծ կամ այծամարդ էր ըմբռնվելու: Ըստ այսմ, քրիստոնյա հայի պատկերացումներում անգամ նոր ժամանակների հոգևորականի (մահմեդական, թե քրիստոնյա) կերպարը համադրված էր մնում այծի առասպելաբանական կերպարին: Դրա արտացոլումներն են առկա հազվագյուտ *տրվան* բառում և ժողովրդական հանելուկներում: *Տրվան* նշանակում է «մուլայի կար-

⁹ *Մայխասյանց Ս.*, *Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ)*, հ. IV, Եր., 1945, էջ 448: Հմմտ. Նույն *տիր «այծ» արմատը պարունակող տրտիկ, տրտինկ «չորքոտանիների ուրախ-ուրախ ցատկոստելը, խաղալը, խայտալը» բառերը: (Նույն տեղում հ. IV, էջ 449):

¹⁰ ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 205:

¹¹ ՀԱԲ, հ. IV, էջ 410:

¹² *Ղանալանյան Ա.*, *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 245:

¹³ Եղջերավոր խոտակեր կենդանիների և ամպրոպային երևույթների միջև ստեղծված առասպելաբանական կապի վերաբերյալ տե՛ս *Մ. Աբեղյան*, *Երկեր*, հ. VII, Եր., 1975, էջ 66:

¹⁴ *Աբրահամյան Ա.*, *Նախնադարյան հայ գիր և գրչություն*, Եր., 1982, էջ 32:

¹⁵ *Հարությունյան Ս.*, նշվ. աշխ., էջ 57:

¹⁶ *Ղանալանյան Ա.*, *Առածանի*, Եր., 1960, էջ 291, 295:

դացած առավոտյան աղոթքը՝ մզկիթի աշտարակից»¹⁷: Հավաստի ստուգաբանությունն չունեցող հայերեն այս բառը կարելի է կազմված համարել *տիր-վան* բաղադրիչներից, որոնցից առաջինը **տիր* «այծ» բառն է, իսկ երկրորդը ըստ երևույթին առնչվում է *վանկ/վանգ* «հնչյուն, ձայն» բառին, հմմտ. միջ. պարս. vāng «ձայն, աղաղակ», մանավանդ նրան հանգող քրդ. vank, զազա. veng «ձայն աղաղակ, մուեզզիների կոչը»¹⁸: «Քահանա և բեմ» պատասխանն էլ ակնկալող հանելուկում ասվում է. «Սարին վրա ածը (այծ) կը մըկըկա»¹⁹: «Սարին վերեն մարդ մը կայնի, /Կը գրուցի՝ մարդ չի/Կը քարոզի՝ վարդապետ չի» հանելուկը թեև ակնկալում է «գրքակալ» պատասխանը,²⁰ բայց սա, ինչպես ցույց է տալիս *սար* բառը, վերիմաստավորված պատասխան է: Նախապես հանելուկը վերաբերել է քարայծին: Հանելուկներում սարը համարժեքն է բարձրադիր խորանի և բեմի (հմմտ. մզկիթի աշտարակը), Սբ գիրքն ընթերցող ու քարոզող հոգևորականը՝ սարի վրա մըկըկացող այծի (հմմտ. տրվան կարդացող մոլլան), իսկ բարձրադիր Սբ գիրքն էլ՝ հնագույն սուրբ գրերի՝ «իծագրեր»-ի: Հեթանոս հայերի *Տիր* կամ *Տիր* կոչված աստվածության անուններն ստուգաբանած Է. Աղայանը դրանք համարում է արմատակիցները հին հնդկ. dyāus «օր, երկինք», dēvá «աստված», հուն. Ζεὺς, Διὸς «Ջևս աստված», լատին. Deus «Աստված» բառերի,²¹ իսկ դրանք հանգում են վաղհնդեվրոպական DY արմատին, որից են ծագում հայ. *տիւ* «օրվա լույս մասը, ցերեկ» **տիր* «այծ» և *տիկ* «տիկ, տկճոր», «պարկապզուկ» («այծ») բառերը: Մեր խորին համոզմամբ, սպիտակ և սև առասպելաբանական հակոտնյա երկվորյակ այծերի նախատիպերի վրա են ձևավորվել *Տիր/Տիր* և *Տորք* կոչված աստվածությունները: Վաղհնդեվրոպական DY արմատից ծագած *Տիր* և *Տիր* դիցանուններում առկա է միևնույն *ր* աճականը (հմմտ. *բարձ-ր*, *թանձ-ր*, *ման-ր*, *մեղ-ր*, *փոք-ր*), բայց առաջինն ունի «լուսավոր (աստված)», երկրորդը՝ «այծ (աստված)» իմաստները: Տյուր/Տիր դիցայծին պիտի առանձնացնել հետագայում նրան համադրված իրանական Տիր (<ավեստ. Tištrya) աստվածությունից, որը Tištrya աստղի (Միրիուս, Շնիկ) անձնավորում աստվածությունն էր: Սրա անունն էր կրում հին իրանցիների տոմարի չորրորդ ամիսը (հմմտ. պարսից արեգակնային տոմարի չորրորդ ամսի *Թիր* և հայոց հին տոմարի չորրորդ ամսի *Տրէ* անունները):²²

Ըստ Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը, իբրև թե, հայոց հեթանոսական մեհյանները կործանելիս Երազամույն վայրում էին «դիպեալ ի ճանապարհի երազացոյց, երազահան Տրի դից, դպրի գիտութեան

¹⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 439-440:

¹⁸ Նույն տեղում, էջ 304:

¹⁹ **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 88: Հմմտ. նաև «Մազը թե գորություն ունենա, էծը մարգարե կը լինի» առածը (**Ղանալանյան Ս.**, Առածանի, էջ 191): Ըստ երևույթին, ժամանակին գոյություն են ունեցել սպիտակ այծ/հայ հոգևորական և սև այծ/օտար հոգևորական (>մոլլա) համադրումները:

²⁰ **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 181:

²¹ **Աղայան Է.**, Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 148-150:

²² ՀԱԲ, հ. IV, էջ 435:

քրմաց անուանեալ դիւան գրչի Որմզդի...»²³: *Երագահան* և *Երագացոյց* բառերը Տիրին բնութագրում են որպէս քնի և երագների աստծու (հմմտ. Նոր Նախիջևանում *այծերը գալ* բառակապակցության «քունը տանել» նշանակությունը)²⁴ Տիրի կրած *Գրիչ* մակդիրը համարժեքն է *Գրող*՝ «գիր անող» մակդիրի: Դրանք առնչվում են նաև ոգիների աշխարհի հետ կապված այնպիսի մի երևույթի, ինչպիսին է գրբացությունը («թուղթ ու գիր» անելը): Առասպելաբանական այծը նախատիպ ունեցած Տիրի *Գրող* մակդիրը այսօր էլ գործածական է «չարք» նշանակությամբ (հմմտ. «Գրողի բաժին դառնաս», «Գնա՛ գրողի ծոցը» և նույնաբնույթ ուրիշ մի շարք անեծքներ):

Տիրի՝ հոգեառ գործառույթը քրիստոնյա հայերի ժողովրդական հավատալիքներում հատկացվել է աստվածաշնչային Գաբրիել հրեշտակին:²⁵ Ժողովրդական հեքիաթներից մեկում ասվում է. «Տղեն էր *իծու չոստ* քաշեց վրեն, քառսուն հատ զանգուլակ կախեց վզեն, էղավ Գաբրել հրեշտակ»:²⁶ Թե ինչու ժողովրդական հավատալիքներում աստվածաշնչային կերպարներից հոգեհանության հետ կապ չունեցող Գաբրիել հրեշտակապետին է հատկացվել հոգեառի պաշտոնը, թերևս պետք է բացատրել սրա անվան հետ մեր հեթանոսական հոգեառ աստվածության՝ Տիրի կրած և «այծ» նշանակող մակդիրի հնչունական նմանությամբ (հմմտ. մեր *Տիր* և *Տիր* դիցանունների իրանական *Տիր* դիցանվան հետ ունեցած նմանության պատճառով դրանք կրած աստվածությունների նույնացման երևույթը): Այս դեպքում մենք ի նկատի ենք առել հնդեվրոպական լեզուներում «արու այծ» նշանակող այնպիսի բառերի գոյությունը, ինչպիսիք են լատին. *caper*, հին իռլ. *gabor*, վալ. *gafir*, հին իսլ. *hafir*, հին անգլ. *hæfer* արմատակից բառերը:²⁷ Կարծում ենք, թե նույն հնդեվրոպական արմատն է առկա միջնադարյան Սյունիքի Վասակ իշխանի *Գաբրու* մականվան (վերջածանցի համար հմմտ. *ծակ-ուռ*, *ճասպ-ուռ*, *մամ-ուռ*, *ջաջ-ուռ*), Մեծ Հայքի *Գաբառու դաշտ* (<**Գաբ-առ*. հմմտ. *գաւ-առ*, *խոչ-առ*, *կոթ-առ*, *պայծ-առ*) տեղանվան մեջ և *Գաբիթեան* (<**Գաբ-իթ-եան*) ու *Գաբեղեանք* (<**Գաբ-եղ-եան-ք*) գավառանուններում:²⁸

Ագաթանգեղոսի վերոհիշյալ հաղորդման մեջ առկա *դայրի գիտութեան քրմաց* բառակապակցությունը չի կարող վերաբերել միայն սև այծը նախատիպ ունեցած աստվածությանը, այլ նաև առասպելաբանական սպիտակ այծը նախատիպ ունեցած աստվածությանը, որովհետև դպրությունն ու գիտությունը նաև մտավոր *լուսավորությունն* են: Իսկ *դիւան գրչի Որմզդի* բառակապակցության մեջ առկա *Որմիզդ* դիցանունը, որը հին իրանական Ահուրամազդա աստծու անվան միջին պարսկերենից (պահլավերեն) եկած մի ձև է, վկայում է Երագամույնի մեհ-

²³ Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, Եր., 1983, ՃԸ, 778:

²⁴ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 170:

²⁵ *Արեղյան Մ.*, նշվ. աշխ., հ. VII, էջ 22:

²⁶ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. IX, Եր., 1968, էջ 106: *Տե՛ս նաև* հ. I, Եր., 1959, էջ 500, 512-513 և այլն:

²⁷ *ИЯИ*, т. II, стр., 515, стр. 2, стр. 586.

²⁸ *Երեմյան Մ.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 46, 51, 109, 110:

յանում նաև իրանական Տիր աստվածության պաշտամունքի գոյության և կրոնական սինկրետիզմի ևս մեկ դրսևորման մասին:

Առասպելաբանական սպիտակ և սև երկվորյակ այծերի մարդատիպ ժառանգորդները՝ Տյուր/Տիր և Տորք հակոտնյա աստվածությունները, այդուհանդերձ, համագործակցել էին «իծագրեր»-ժայռապատկերներն ստեղծելիս: Այդպիսի համագործակցության դեպքեր կան նաև այլ երկվորյակ եղբայրների դեպքում: Իրանական լուսավոր Ահուրամազդան (Ռամիզդ) և խավարամած Ահրիմանը (Ահրմն) միասին էին ստեղծել արևը, հռոմեական Հռոմուլոսն ու Հռեմոսը միասին էին հիմնադրել Հռոմը, մեր Մանասարն ու Բաղդասարը միասին էին հիմնադրել Մասնա բերդը: Գիրը՝ այս դեպքում «իծագրեր»-ը, ըմբռնվում էր Այս՝ Կենդանի էակների աշխարհը, Այն՝ Մեռյալների աշխարհին, անցյալը ներկային կամրջող երևույթ, ուստի նրա ստեղծման գործում մեր նախնիները մասնակից են դարձրել այդ հակոտնյա աշխարհներն ու երևույթները խորհրդանշող սպիտակ և սև այծերի առասպելաբանական փոխանորդ դիցայծերին միաժամանակ, համատեղ:

«Այծ» (սև այծ) և «գիր» հասկացությունների առասպելաբանական-իմաստաբանական կապն արտացոլված ենք տեսնում Անգեղյա Տորքի մասին առասպելում: Այն, Մովսես Խորենացու համաձայն, Տորքն էր՝ «այր խոժոռագեղ եւ բարձր եւ կոպտարանձն եւ տափակաքիթ, խորակն եւ դժնահայեաց», «վիթխարի հասակաւ եւ ուժով», նա կարող էր «բուռն հարկանել գորձաքար վիմաց, ուր ոչ գոյր գեզութիւն, եւ ճեղքել ըստ կամաց... եւ քերել եղնգամբքն եւ կազմել որպէս տախտակ եւ գրել նոյնպէս եղնգամբք իւրով արծուիս եւ այլ այսպիսիս»: ²⁹ Տորքի կապը ժայռապատկերների հետ նկատած Ա. Ղանալանյանը գրում է. «...ժայռապատկերները, մեր կարծիքով, ավանդական Տորքին վերագրված քարարվեստի այդօրինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների մոտ»: ³⁰ Կարծում ենք՝ այս դեպքում պատճառը «այծ» և «փորագրություն, գիր» հասկացությունները առասպելական հսկա այծամարդու կամ դիցայծի կերպարում համատեղված լինելու մեջ է: Եթե վիպական հսկա Տորքի առասպելաբանական նախատիպը այդպիսին ըմբռնված չլիներ, ապա Տորքը օժտված չէր լինի այնպիսի պինդ եղունգներով, որոնցով ժայռաբեկորներ էր հղկում և դրանց վրա տարբեր պատկերներ փորագրում: Ուրեմն նրա ամենավաղ և բնական նախատիպը եղել է պինդ կճղակներ (*կճղակ* կոչվում է «չորքոտանիների ոտքի եղունգը») ³¹ ունեցող ժայռաբնակ քարայծը՝ սև արու այծը: «Փորագրություն, գիր» և «այծ» հասկացությունների առասպելաբանական-իմաստաբանական կապի մասին են խոսում և մատ ու

²⁹ Մովսեսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլ. ք: Քեր արմատը նշանակում է «քերած կամ գրած բան» (քեր <h.-ե. *sger-, qer- «կտրել, ճեղքել»), որից՝ քերել բայի նաև «փորագրել, քանդակել» նշանակությունները: Նույն արմատից ունենք քերական «քերականագետ, քերթող», «քերածո, քանդակագործ» բառը (ՀԱԲ, հ. IV, էջ 570-571): Հմմտ. «Քերոթ-նկարակերպ, կամ նախշ» և «Քերդա-գրագիր» («Բառգիրք հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 333):

³⁰ Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ ՃԽԹ:

³¹ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 604:

եղունգի միջնորդական դերը դրանում բացահայտում հետևյալ տվյալները: «Մատներ» պատասխանն ակնկալող հնագույն հանելուկներից մեկում ասվում է. «Իմ հորանք տասը էծ ունին, տասի ճակատն էլ պեծիկ (պիսակավոր) ա»:³² Այստեղ առկա են ինչպես «մատներ» և «այծեր», այնպես էլ «մատի եղունգ» և «այծի պիսակավոր ճակատ» առասպելաբանական համադրումները, իսկ հայերեն *եղունգն* բառը գործածվել է նաև փորագրող գործիքի համար՝ «քանդակագործի գրիչ» նշանակությամբ:³³ Քանի որ կճղակը «չորքոտանիների ոտքի եղունգն» էր, իսկ այծը առասպելաբանորեն կարող էր համադրվել սատանային (հմմտ. *սև այծ* և *սև սատանա*), ապա հասկանալի է, որ այծի կճղակը կարող էր ընկալվել ինչպես այծի, այնպես էլ սատանայի եղունգ: Որ հենց այդպես էլ եղել է, ցույց է տալիս օբսիդիանի (վանակատ) ժողովրդական *սատանի եղունգ* անվանումը:

Ս. Սալխասյանցի «Բացատրական բառարան»-ում կարդում ենք. «Մատանի եղունգ: 1. Սև գալյախազ (որով իբր թե Կայենը սպանել է Աբելին): 2. Մի տեսակ սև քար, որից շիշեր են պատրաստում: 3. Սև շիշի կտոր, որի վրա թքելով դեն են ձգում (իբրև սատանի քար)»:³⁴ Հրաբխային ծագումով վանակատի խոշոր կուտակումներ կան Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում: Դրանցից մեկը Արագածի լանջի Արտին լեռան հանքավայրն է: Վանակատը, հին քարի դարից սկսած, մարդու կողմից կիրառվել է կտրող և հատող աշխատանքային գործիքներ, իսկ հետագայում նաև նիզակների և նետերի ծայրակալներ պատրաստելու համար: Արագածոտնի մարզի Ներքին և Վերին Նավեր հնավայրերից պեղվել են «հիանալի մշակված վանակատե նետալաքներ», որոնք «գարմանալի սուր են»:³⁵ Ուրեմն, դրանցից կարելի էր նաև գրոցների ծայրակալներ պատրաստել և դրանցով Հայոց լեռների ժայռաբեկորներին փորագրել առաջին ժայռապատկերները, ինչպես և վարվել են մեր հեռավոր նախնիները: Ինչպես նշվեց, գրոցը՝ «քանդակագործի գրիչ»-ը, նաև *եղունգն* («եղունգ») է կոչվել: Սրանով ուղղակի իմաստաբանական կապի մեջ են հայտնվում «սատանի եղունգ»-ը՝ առասպելաբանորեն համադրված «չորքոտանիների ոտքի եղունգ»-ի և ժայռաբնակ արու քարայծը (սև այծը) նախատիպ ունեցած վիպական հսկա Տորքի փորագրող եղունգները:

Տորքի վիպական կերպարի առասպելաբանական-տոտեմական նախատիպը սև այծ լինելու մասին է խոսում ինչպես նրա մռայլ արտաքինի խորենացիական նկարագրությունը, այնպես էլ անվան ստուգաբանությունը: *Տորք*-ը արմա-

³² Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 103:

³³ ՀԱԲ, հ. II, էջ 22:

³⁴ ՀԲԲ, հ. IV, էջ 189: Համաձայն հայ ժողովրդական ավանդությունների՝ սատանի եղունգ կոչված քարով է աստվածաշնչային Կայենը սպանել իր եղբայր Աբելին (Ղանալանյան Ա., Ավանդապատում էջ 77, 337-338): Այստեղ գործ ունենք հակամարտ երկվորյակների մասին հայկական (հնդեվրոպական ծագումով) ավանդությունը աստվածաշնչային թեմային հարմարեցնելու հետ (Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 206, էջ 85-86):

³⁵ Մխնեղյան Հ., «Հայկ և Բել»՝ առասպել լ, ա՞նք, թե՞ իրապատում, «Հայկագունիներ.

Նվիրվում է Հայոց ձորի ճակատամարտի 4500-ամյակին», Եր., 2013, էջ 100-101:

տակիցն է հուն. *δορκός* «այծքաղ» բառի, որի հետ միասին ծագում է հ.-ե. **dor-k-* նախաձևից:³⁶ Վերջինիս **dor-* արմատը միջին ձայնդարձն է հ.-ե. **der-* «վազել» արմատի, որին են հանգում նաև թրակացիների *Δρενις* արական անձնանունը և նրա իմաստակիցը՝ այբաներեն *drēni* «եղջերու» բառը:³⁷ Նշենք նաև, որ գոյություն ունեցող կարծիքը *Տորք*՝ դիցանունը խեթալուվիական *Tarhuna*, *Tarhund*, *Tarku* կոչված ամպրոպի աստծու անունից ծագելու վերաբերյալ չի հաստատվում: Բայց նրանք հուն *δορκός*-ի հետ միասին ծագում են հ.-ե. **dor-k-* նախաձևից, որովհետև հ.-ե. **d->* հայ. *m*, հուն. *δ*, խեթ. *t*, հ.-ե. **o->* հայ. *n* (o), հուն. *ο*, խեթ. *a*, հ.-ե. **k->* հայ. *ք*, հուն. *κ*, խեթ. *k*, *h*:³⁸

«Այծ» և «փորագրություն, գիր» հասկացությունները դիցայծի առասպելաբանական կերպարում համատեղված է եղել նաև մուծածիրյան ծագումով ուրարտական *Խալդի* աստծու և սեպագիր գրության դեպքում: Վանա ժայռաբլուրին փորագրված «Մեերի դռան» սեպագիր արձանագրությունը բովանդակում է ուրարտական նոր՝ պաշտոնական դիցարանը *Խալդի*ի գլխավորությամբ: Ընդ որում, ուրարտական սեպագիրը երկիր է ներմուծվել (կամ տեղում ստեղծվել) մուծածիրյան քրմերի կողմից՝ որպես իրենց հարագատ աստծու պաշտամունքի բաղադրիչ: Այդպիսի բաղադրիչ էր նաև սպիտակ այծի պաշտամունքը: *Խալդի* աստծու տոտեմական նախատիպի արու քարայծը լինելու վերաբերյալ խոսում են ինչպես նրան (միա՛յն նրան) ուլեր գոհաբերելու հանգամանքը,³⁹ այնպես էլ նրա կրած *Խալդի* անունը: *Hal-di* բաղադրիչներից բաղկացած այս դիցանվան առաջին բաղադրիչը նույնական է հայերեն *խաղախ* (<*խաղ-ախ) «կաշի, մորթի» բառի **խաղ* «այծ» արմատին, իսկ երկրորդը՝ հայերեն *դի-ք* «աստված, կուռք» բառն է:⁴⁰

«Փորագրություն, գիր» և «այծ» հասկացությունների սերտաձած լինելու փաստն է արձանագրել հայ **կուտ* արմատը, որից ունենք բարբառային *կտի* (<*կուտ-ի) «գառ, ուլ, ոչխար, այծ», «հատկապես՝ այծ» և *կտիկ* (<*կուտ-իկ) «այծ, պստիկ այծ» բառերը⁴¹ (վերջածանցի համար հմմտ. *արտի*, *արտիկ* «վայրի ոչխար»): Ըստ երևույթին, **կուտ* արմատը նշել է արու այծերի մենամարտելիս իրար հրմշտելու, պոզահարելու հատկությունը, որովհետև այն առկա է նաև հետևյալ բարբառային բառերում. *կտել* (<*կուտ-ել), *կտկտել* (<*կուտ-կուտ-ել), *կտստել* (<*կուտ-ուտ-ել), «հրել, մշտել, մխտել, հրմշտակել»,⁴² «հրել, մխտել, բոթել», «այս ու այն կողմ հրմշտակել, բոթբոթել», «առաջ քշել»:⁴³

³⁶ Պետրոսյան Ս., Հնագույն Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, էջ 127-128, Նույնի, Ամպրոպի աստծու մակդիրները գահանուններում, «ՎՊՄԻ միջազգային գիտա-ժողովի նյութեր՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին», Վանաձոր, 2012, էջ 7, ծան. 5:

³⁷ Георгиев В. Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 120.

³⁸ Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 85, 135:

³⁹ Меликишвили Г. Урартские клинообразные надписи, М., 1960, надп. N 27.

⁴⁰ Պետրոսյան Ս., Խալդի դիցայծի և գինու պաշտամունքի շուրջ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1997, թիվ 1-12: Հմմտ. ՀԱԲ, հ. IV, էջ 405:

⁴¹ Մրվանձոյանց Գ., Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 340, ՀԲԲ, հ. II, էջ 497:

⁴² ՀԱԲ, հ. II, էջ 664:

⁴³ ՀԲԲ, հ. II, էջ 497:

Հայ *կուտ արմատը, մեր կարծիքով, հանգում է հ.-ե. *g^uōd- նախաձևին և իր զուգահեռներն ունի ի դեմս հայ. կով և շումեր. ցւս «ցուլ» բառերի: Ճիշտ է, վերջինս համարվում է հնդեվրոպական լեզուներում «կով» նշանակող բառերի արմատակիցը,⁴⁴ բայց հնչյունաբանորեն ավելի մոտ է ոչ թե դրանց *g^uou նախաձևին, այլ հայ *կուտ g^uōd- արմատին, որովհետև հ.-ե. *g^u->հայ. կ, հ.-ե. *d-> հայերեն տ: Ի դեպ, շումեր. ցւս «ցուլ» բառը կարող էր նախապես նաև «այծ» նշանակել,⁴⁵ նրան փոխանցված իր մատողաշի միջնորդությամբ: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ հայերեն ցուլ «խառնր եղջերավոր անասունի արուն» բառի հունարեն արմատակիցները տարբեր «անասունների ձագ» են նշանակում, իսկ յաւանակ բառը, որ հին հայերենում նշանակում էր «ձագ չորքոտանիների, հատկապես իշու, ձիու, նաև եղնիկի», բարբառներում և արդի գրականում ստացել է «ավանակ», «էշ, մեծ էշ» իմաստները:⁴⁶

*Կուտ (>կտի, կտիկ «այծ, ուլ») արմատի «փորագրություն, գիր» հասկացությանը ևս հատկացված լինելու փաստն են արձանագրել հետևյալ հայերեն բառերը. կուտ «սպի, մարմնի վրա ցտած նշան», որից՝ գիր կտեալ «մահտեսիների ձեռքի վրա բանված պատկեր»,⁴⁷ «մահտեսիների կռների վրա դաճած նկար, հաջի արած», կտել «կետ-կետ կամ կուտ-կուտ նշաններ դնել, մարմնի վրա գանազան նշաններ կամ նկարներ դաճել»,⁴⁸ մանավանդ՝ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «Կտեալ-զծեալ, կամ գրեալ» բառը:⁴⁹

Քարայծի սերտ կապը «փորագրություն, գիր» հասկացության հետ հաստատվում է նաև քաղ «արու այծ» և «Քաղակ-քանդակում»⁵⁰ բառերի արմատակիցներ լինելու միջոցով. քաղակ<*քաղ-ակ (հմմտ. բոն-ակ, ձոր-ակ, տն-ակ և այլն): Հայերեն նույնարմատ քաղ «ընտրելով պոկել, հավաքել» և ցել «ճեղք, պատռվածք» բառերը ծագած են համարվում հ.-ե. *q- և *sqel-/*sk'el- նախաձևերից: Դրանցից առաջինն, ըստ Հ. Աճառյանի, ծագում է նույն արմատի s-ից զուրկ, իսկ երկրորդը՝ s-ով ձևից:⁵¹ Քաղ և քաղակ բառերը՝ «արու այծ» և «քանդակում» նշանակություններով, իմաստով հարում են նախաձայն s-ն պահպանած հնդեվրո-

⁴⁴ ИЯИ, т. II, стр. 575, ЗУФ, h. II, էջ 639:

⁴⁵ Ուշագրավ է, որ փյունիկյան այբուբենում «ա» հնչյած **V** և **A** տառանշանները (նաև սրանց կողքի դրված տեսակները) ալեֆ «ցուլ» էին կոչվում, բայց ավելի նման էին այծագլխի, քան ցլագլխի: Ըստ երևույթին, գործ ունենք արաղական ալպու «եզ, ցուլ» կոչված սեպախմբի ազդեցության հետ՝ ծագած շումերական գուղ «կով, ցուլ» մեհենագրից (**Khosro Khazai**, նշվ.աշխ., էջ 24): Հունական A-ն, լինելով իր փյունիկյան նախատիպի գլխիվայր շրջված տեսակը, դարձյալ այծագլուխ է հիշեցնում և գլխավորում է տառաշարքն այնպես, ինչպես առաջնորդ այծն իր հոտը: Իսկ այդ տառանշանը արտահայտում է ինչպես առաջին հնչյունը փյուն. ալեֆ «ցուլ» (<հուն. ալֆա) բառի, այնպես էլ հուն. α'ξ «այծ» և հայ այծ հնդեվրոպական ծագումով արմատակից բառերի (ЗУФ, h. I, էջ 169):

⁴⁶ ЗУФ, h. III, էջ 390-391, 591, h. IV, էջ 462:

⁴⁷ ЗУФ, h. II, էջ 664:

⁴⁸ ЗУФ, h. II, էջ 496-497:

⁴⁹ «Բառգիրք հայոց», էջ 171:

⁵⁰ Նույն տեղում, էջ 329:

⁵¹ ЗУФ, h. II, էջ 541-542:

պական ազգակից լեզուների հետևյալ բառերին. հուն. σάλλω «փորել», «քաղհանել», σκαλίζ «բրիչ», թրակ. σάλλμη «դանակ, թուր», խեթ. iškallāi «պատռել, ճեղքել, խորտակել», լատին. scalpo «քանդակել», լիտվ. skėlti «ճեղքել», հին իսլ. skalm «թուր, դանակ» և այլն:⁵²

*Քաղ արմատի «ճեղքող, խորտակող, պատռող» իմաստի զարգացումով ունենք ինչպես հեթանոս հայերի ռազմի աստծու՝ Վահագնի վիշապաքաղ մակդիրը (լայնաբարձ՝ «վիշապասպան» իմաստով), այնպես էլ քաղ «արու այծ» բառը: Այս վերջինի զարգացման աստիճանի վրա է հունարեն (պելասգերենի՞ ց) ἰξάλος «կրտած այծ, քաղ» բառը, որը Գ. Ջահուկյանը հակված է համարելու մեր քաղեմ/քեղի և ցելում բառերի (վերջինիս հ.-ե. *sk- նախաձայնով ձևից) արմատակիցը:⁵³ Թե՛ հայերեն, թե՛ հունարեն բառերի դեպքում ի նկատի է առնվել պոզահարող արու այծը: Եթե հայերեն քաղ և հունարեն ἰξάλος բառերը ի ցույց են հանում արու այծի «ճեղքող խորտակող» լինելու իրողությունը, ապա հայ. քաղակ «քանդակումն» և լատին. scalpo «քանդակել» նրանց արմատակից բառերը բացահայտում են մեկ ուրիշ իրողություն՝ այծին, ապա՝ դիցայծին, վերագրված քարեղեն նյութը փորագրելու, քանդակելու կարողությունը:


Հունարեն ἰξάλος բառը մեզ տանում է դեպի հունա-էտրուսկյան ծագումով լատինական այբուբենի X տառանշանը, որի հքս անունը կրկնում է հունարեն բառի առաջին մասը (այբուբենների հիմք դարձած մեհենագրություններում ձայնավորումը ակրոֆոնիկ՝ առաջնավանկային, առաջնաձայնային էր), իսկ տեսքը՝ Հայաստանի ժայռապատկերներից հայտնի և դրանցում այծապատկերներին ուղեկցող \times նշանը (նկ. 2):⁵⁴ Հին գերմանների մեհենագրային ծագումով ռունական այբուբենում (նկ. 3) կար X նշանագիրը՝ g (q) հնչումով: Ուշագրավ է, որ գերմանական լեզուներում կան «ուլ, այծիկ» և «էգ այծ» նշանակող, նույնպես g (q) հնչում ունեցող մի շարք բառեր. Հմմտ. գոթ. gaits, հին անգլ. gāt, անգլ. goat, հին իսլ. geit, հին բարձր գերմ. geiz, որոնց հ.-ե. *g^(h)it՝ նախաձևը համարվում է նախասեմական լեզվից կատարված փոխառություն:⁵⁵ Թեպետև նշվել է գերմանական լեզուների հիշյալ բառերի և լատին. haedus «այծիկ, ուլ» բառերի ազգակիցներ լինելու իրողությունը, բայց հաշվի չի առնվել, որ դրանք իրենց արմատակիցներն ունեն հայերենում՝ ընդ որում արմատի ավելի նախնական նշանակությամբ:

⁵² ՀԱԲ, հ. II, էջ 541-542: Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 59, Դեորգիև Բ., նշվ. աշխ. էջ 114:



⁵³ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 114, ծան. 33:

⁵⁴ Մարտիրոսյան Հ., Բարայեյան Հ., նշվ. աշխ., նկ. 150, Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Եր., 1981, աղ. I: Նույնի, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 23, աղ. V: Կարախանյան Գ., Մաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Եր., 1970, աղ. 246, նկ. 1, աղ. 122, նկ. 2, աղ. 114, նկ. 4:

⁵⁵ ИЯИ, т. II, стр. 586.



Խոսքը հայերեն *կայթ* բառի և նրա տարբերակ **կայտ* (*կայտառ* և *կայտիռ* բառերում) արմատի մասին է, որոնք համարվում են հավաստի ստուգաբանություն չունեցող արմատներ:⁵⁶ *Կայթ* նշանակում է «ցատկոտնելը, ոտքի թփրոտոց, ուրախության՝ ցնծության պար», որից՝ *կայթել* «ուրախանալ, ցատկոտել, խաղալ»՝ այծերին և հատկապես ուլերին բնորոշող իմաստներ (հմմտ. Հիշյալ *ΐξαλος* բառը՝ «ցատկող, աշխույժ») իմաստով գործածված հենց այծի համար:⁵⁷ *Կայթել* նշանակում է նաև «ծափ գարնել», իսկ *կայթս հարկանել* «բաժակին ուժգին խփելով հնչեցնել»:⁵⁸ Վերջիններս ևս առնչվում են այծերին, երբ ի նկատի ենք առնում արու այծերի մենամարտը կրկնող ռազմական *ծափ պարերի* համապատասխան ավազանները և նախնական բաժակները այծի պոզերից լինելու հանգամանքը: *Կայտառ* բառը բաղկացած է *կայտ* արմատից, *-առ* վերջածանցից (հմմտ. *խոչառ*, *հաւ-առ*, *պայծ-առ*, *վրտ-առ* և այլն) և նշանակում է «աշխույժ, առույգ, եռանդուն»: Ըստ Հ. Աճառյանի՝ սրա երկրորդ ձևն է *կայտիռ* «ուրախություն, ուրախությունից խաղալ ցատկոտելը», որից՝ *կայտալ* «ուրախ ուրախ վազվոտել, եռալ-զեռալ»:⁵⁹ *Կայտ* արմատի **կայծ* տարբերակի երբեմնի գոյության ընդունումը (*տ/ծ* հնչյունական համապատասխանության տեսանկյունից հմմտ. *բոււտ/բուծել*, *մոււտ/մուծել*, *պիղտ/պիղտոր/պիղծ*, *տատանել/ծածանել* արմատակից գույգերը) մեզ նորից տանում են «այծ» և «գիր» հասկացությունների իմաստաբանական միասնական դաշտ. հմմտ. «Կայծել-դրաշմել, կամ գրել»:⁶⁰

Հայերենի և գերմանական լեզուների հիշյալ բառերի ազգակցության փաստը հնարավոր է դարձնում ուղղակի կապի բացահայտումը նաև հին գերմանների ռունական այբուբենում *d* (դ) հնչյած  նշանի և Հայկ (Օրիոն) համաստեղության գծապատկերը ներկայացնող  նշանների միջև: Ժայռապատկերներից սկսած՝ սա համարվել է խորհրդանշանը հայոց աստվածային նախահայր Հայկի, որովհետև այս համաստեղությունը նրան էր ձուլված և նրա անունով էլ կոչվում էր *Հայկ/Հայկն*: Ժայռապատկերներում այս նշանը հաճախ է պատկերված Հայկին խորհրդանշող առաջնորդ քարայծի հետ միասին՝ անգամ վերջինիս մարմնի փոխարեն:⁶¹ Վերևում նշվեց, որ վաղ հ.-ե. *DY* արմատը ժառանգ լեզուներում ունի ինչպես «այծ», այնպես էլ «լույս» և «աստված» նշանակող հետնորդներ (հմմտ. հայ. *տիկ*, *տիւ*, *Տիւր*): Այս *DY* արմատն էլ պայմանավորել է գերմանական ռունների

⁵⁶ ՀԱԲ, հ. II, էջ 505-506, 510:
⁵⁷ *Ջահուկյան Գ.*, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 86:
⁵⁸ ՀԱԲ, հ., II, էջ 505:
⁵⁹ Նույն տեղում, էջ 509-510:
⁶⁰ «Բարգիթը հայոց», էջ 157:
⁶¹ *Պետրոսյան Ս.*, Հայոց մեհենագրության ակունքներում, Եր., 2008, էջ 7-8, 14-15, նկ. 2 գ:

✠ նշանի d (η) արտասանությունն այնպես, ինչպես Հայկ (Օրիոն) համաստեղությունը պայմանավորել է նրա տեսքը:

Գերմական լեզուներն ունեն «տառ, գիր, գիրք, գրություն» և այլն նշանակող հետևյալ բառերը. գոթ. bōka, հին իալ. bók, հին անգլ. bōc, հին բարձր գերմ. buoh և այլն, իսկ սլավոնական լեզուները՝ հին սլավ. bukъ «տառ», հին ռուս. бyкы, бyкьвь «տառեր, գրեր, գիր, գրություն, նամակ» և այլն:⁶² Գերմանական և սլավոնական լեզուների այս բառերը համարվում են ծագած հաճարենու, կաղնու հնդեվրոպական անուններից, ընդ որում, սլավոնական լեզուների բառերը իրենց k-երի պատճառով համարվում են փոխառյալ գերմանականից: Այսուհանդերձ, հայկական տվյալների լույսի ներքո այդ երևույթը հնարավոր է, որ այլ բացատրություն ունենա: Ապացուցված է, որ հայ. բուծ (<h.-ե. *bhug'o-) «ուլ, գառ» բառը արմատակիցն է հին հնդկ. bukkā «այծ», պարս. buz «ուլ, այծ», հին իռլ. bocc «արու այծ», հին իալ. bukk, հին անգլ. bucca, հբգ. boc և այլն բառերի:⁶³ Վանա լճի ավազանում գտնված հին հայկական *Բզնունիք* (<*Բուզ-ն-ունի-ք), *Բուծունիք* (<*Բուծ-ունի-ք) և *Բոզունիք* (<*Բոզ-ունի-ք)⁶⁴ գավառների անուններում բուծ բառի հնչյունական տարբերակների գոյությունը հին հնդկերեն bukkā բառի հետ կարող են վկայել հոգուտ այն բանի, որ նրանց հիմք հնդեվրոպական արմատը ժառանգ լեզուներում (թաբուի, նաև *bhug'o-ի զուգահեռ *bhugo- ձևի պատճառով) կարող էր և այլ կերպ արտահայտվել:⁶⁵

Եթե այդպես է, ապա «գիր, գրություն» նշանակող սլավոնական լեզուների վերոհիշյալ բառերը ևս կարող են փոխառյալ չլինել և արմատակիցները լինել «այծ» նշանակող ազգակից լեզուների բառերին: Այս դեպքում ի նկատի առնենք, որ գերմանական ու սլավոնական ցեղերի հնդեվրոպական լեզվակիր նախնիները ևս հայերի նախնիների հետ հնդեվրոպական միասնության դարաշրջանում բնակվել են Հայկական լեռնաշխարհում և մերձակա տարածքներում: Քիչ հավանական է, որ քարիդարյան մարդը ավելի վաղ սկսեր ծառերին նշաններ դնելը, քան դրանք քարերին ու ժայռերին փորագրելը: Ծառերին փորագրելը հաջորդելու էր քարերին նշանագրելուն՝ լեռնային նախահայրենիքից անտառապատ տարածք կատարված բնակչության արտագաղթի հետևանքով:⁶⁶

⁶² ИЯИ, т. II, стр., 622-623.

⁶³ ՀԱԲ, հ. I, էջ 482:

⁶⁴ Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 45, 108-109:

⁶⁵ Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 18-20:

⁶⁶ Նույնպիսի մի պատճառով հյուսիսային լեռներից միջագետքյան հարթավայր տեղափոխված բնակիչները քարին նշանագրելը անհրաժեշտաբար փոխարինել էին կավե սալիկներին նշանագրելով: Ըստ այդմ հասկանալի է, թե ինչպես է Հայկ (Օրիոն) համաստեղության գծապատկերը ներկայացնող ✠, ✨ նշանը «աստված» նշանակող * և «կին» նշանակող ▼ նշանների հետ միասին հայտնվել վաղ շումերական կավե սալիկներից մեկի վրա (նկարները տե՛ս Mallowan M.E., *L'aurore de la Mésootamie et de l'Iran*, Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, p. 65, fig. 59-61; "Le berseau de l'humanité", *La présente édition de L'encyclopédie de la civilisation est publiée sous la direction de Marcel Brion de l'Académie française*, Londres, Genève, 1976, p. 87, fig. 111):

Այս տեսանկյունից ուշագրավ է հայ. *գիր* բառը, որի «տառ, գրություն» նշանակությունից ավելի հին է «փորագրել, քանդակել» նշանակությունը, ինչը գալիս է դեռևս հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից: Նրա հիմք հ.-ե. **uer-* արմատից են ծագում նաև ժառանգ լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. *vrana* «վերք, պատվածք», հուն⁶⁷ *ρίνη* «խարտոց», ալբ. *vore* «վերք», հին սլավ. *rana* «վերք», անգլ. սաքս. *wrōtan* «փորել» և այլն:⁶⁷ Ըստ Հ. Աճառյանի՝ «մեր բառի հետ ճիշտ համեմատելի են գոթ. *writs* «գիծ», անգլսաքս. *writ* «գիր», *wroett* «փորագրություն, զարդարանք», *writan*, մագ. *written*, որոնք բխում են նույն *wer-* արմատից՝ աճած *t* աճակնով և նշանակում են «վիրավորել, պատռել, փորագրել, նկարել, գրել», իսկ նշանակության զարգացման համար հմնտ. հուն. *γράφω* «ճանկռել, փորագրել, գրել, նկարել», որի համար էլ՝ հայ. *քերել* և *քերականություն*:⁶⁸ «Գրել»// «քարին փորագրել» նշանակությունը պահպանվել է հետագա դարերում ևս: Մովսես Խորենացին հետևյալ կերպ է նկարագրում մեսրոպյան այբուբենի արարումը: Մեսրոպ Մաշտոցն աղոթելիս «տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյ աչաց թաթ ձեռին աջոյ *գրելով ի վերայ վիմի*, զի որպէս ի ձեան վերջջ գծին՝ *կուտեալ ունէր քարն...* եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր...»: ⁶⁹

Ինչպէս **կուտ* «այծ» (որից՝ *կտի*, *կտիկ* «այծ, ուլ») և «*Կտեալ*-գծեալ, կամ գրեալ»,⁷⁰ այնպէս էլ *քաղ* «արու այծ» և «*Քաղակ*-քանդակումն»⁷¹ արմատակից գույզերը վկայում են, որ դարեր ու հազարամյակներ շարունակ հայի լեզվամտածողության մեջ պահպանված են եղել հայոց հնագույն գրության ժայռապատկերային փորագրություն լինելու վերհուշը և դրա «իծագրեր» կոչվելու պատճառների գիտակցումը: Դրանցից գլխավորները լինելու էին. 1. քարայծերի բնակեցրած ժայռոտ բարձունքներում ժայռապատկերների գտնվելու իրողությունը, 2. Ժայռապատկերն ստեղծողների այծամարդ կամ դիցայծ լինելու մասին պատկերացումը, 3. առասպելաբանական այծի կճղակ (եղունգ) ըմբռնված օբսիդիանի (սատանի եղունգ) միջոցով ժայռապատկերների փորագրված-գրված լինելու դարեր փոխանցված հուշը: Դրանց «իծագրեր» կոչվելու առիթով կարելի է նշել նաև, որ օբսիդիանե ծայրակալով գրոցին փոխարինած մետաղե գրոցի պատճառով հետագա փորագիր գրերը կոչվել են նաև *երկաթագրեր*՝ այնպէս, ինչպէս նույն պատճառով *երկաթագիր* էր կոչվում մեսրոպյան այբուբենը:

Բերված նյութը և դրա վերլուծությունը մղում են հետևյալ եզրակացության: Հնդեվրոպական հնագույն գրությունը եղել է ժայռափոր պատկերագրությունը: Հայկական լեռնաշխարհի ժայերին հնդեվրոպական տեղաբնիկ ցեղերի կողմից նախ օբսիդիանե, ապա՝ մետաղե ծայրակալով գրոցի միջոցով արված

⁶⁷ ՀՄԲ, հ. I, էջ 561:

⁶⁸ Նույնը:

⁶⁹ *Խորենացի*, Գ, ծգ:

⁷⁰ «*Քաղգիրք հայոց*», էջ 171:

⁷¹ Նույն տեղում, էջ 329:

փորագիր «իծագրեր»-ժայռապատկերներն են դարձել հիմքը հայկական, թերևս մյուս հնդեվրոպական ժողովուրդների ևս, մեհենագիր գրությունների:

“ИЦАГРЕР”- НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ КУЛЬТА ГОРНОГО КОЗЛА И КОЗЛИНОГО БОЖЕСТВА

___ Резюме ___

___ С. Петросян ___

В наскальных изображениях “ицагрер” (“козлиное писание”) Армении зафиксированы и символические сцены. Некоторые петроглифические знаки этих сцен являются иероглифами. Мовсес Хоренаци в своем труде “История Армении” пишет об исполине Торке, который, руками хватая скалы, мог сглаживать их шереховатости ногтями и вырезать на них орлов и тому подобное (Хоренци, II, 8). Без сомнения, речь идет о наскальных изображениях армянских гор. Значит, Торку было приписано изобретение петроглифических знаков – древнейшего иероглифического письма Армении. Из этого письма позднее возникло иероглифическое письмо языческих армян, помещенных в средневековых армянских манускриптах. Однако известно, что в пантеоне языческих армян богом письменности считался Тир. Он-писец верховного бога Арамазда, толкователь снов и гадальщик, его эпитеты գրիչ, գրող (“писец, пишущий”). Последнее слово значит также “черт, злой дух”. Интересно, что Мовсес Хоренаци описал внешность Торка как мрачного, безобразного человека со сплюснутым носом и свирепым взглядом глубоко посаженных глаз. Дело в том, что мифологические образы Торка и Тира происходят от одного тотемического прототипа: это горный козел. Ср. и.-е. *dor-k-> арм. Տորք, греч. δорκάς “серна, косуля”, и.-е. *dig- “коза, козел” <ранн. и.-е. DY> Տիր, տիկ “бурдюк, волынка” (<“коза”). Фактически, налицо мифологическое представление и.-е. предков армян о двух божественных близнецах, действующих сообща в деле создания наскальных изображений армянских гор, значит и иероглифического письма языческих армян.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Մարգի Գարեգինի - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն,
E-mail: Vahe1996@mail.ru

Եփրատի վերին հոսանքի շրջանից հյուսիս Ք.ա. 12-րդ դարից մինչև Ք.ա. 7-րդ դարը վկայված է ասորեստանյան Դայանեի՝ ուրարտական Դիաուխի երկիրը, որն իր կազմի մեջ էր առնում մի շարք առանձին ցեղային երկրներ: Այն Հայկական լեռնաշխարհի ամենաուժեղ ցեղային միություններից մեկն էր: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ այս ցեղային միության կամ երկրի անունը պահպանվել է հայկական Տայք նահանգի անվան մեջ:¹ Մեծ Հայքի 14-րդ նահանգը և Տայքը տարածվել են Ճորոխ գետի միջին հոսանքի շրջանում՝ Կուրի վերնագավառում: Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոց»-ի՝ Տայքը վարչականորեն բաժանվել է 8 գավառի՝ Կոդ, Բերդաց Փոք, Պարտիզաց Փոք, Ճակք, Բողխա, Ոքաղե, Ագորդաց Փոք և Արսեաց Փոք²:

Առաջին գրավոր տեղեկությունները Տայքի մասին հաղորդում են ասորեստանյան սեպագիր արձանագրությունները (Ք.ա. 12-9-րդ դդ), որտեղ վերջինս հիշատակված է Դայանի/Դայանեի անվանումով: Ասորեստանի Թիզլաթփալասար I թագավորի (Ք.ա. 1115-1077թթ.) արձանագրություններում պահպանված տեղեկությունների համաձայն՝ Դայանեի-Տայքը եղել է վաղ պետական կազմավորում և կարևոր դեր խաղացել Հայկական լեռնաշխարհում ձևավորված հակասորեստանյան ռազմաքաղաքական խմբավորման՝ Նաիրի 23 «երկրների» մեջ: Թիզլաթփալասար I-ի տարեգրությունների համաձայն՝ Ք.ա. 12-րդ դարի վերջին Դայանեի թագավոր Սենին առաջատար տեղ էր գրավում լեռնաշխարհի իշխողների շարքում³:

Դեպի հյուսիս՝ Նաիրի երկրները, Տիգրիսի ակունքներից սկսած մինչև Ճորոխ գետի ավազանում գտնվող Դայանեի երկիրը ասորեստանցիների կատարած արշավանքի մանրամասն նկարագրությունը պահպանվել է Թիզլաթփալասար I-ի տարեգրության մեջ: Արշավանքն ուղղված էր ոչ թե Վանա լճից հարավարևելք ընկած շրջանները, ինչպես Սալմանասար I-ի ժամանակ⁴ կամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մաս՝ հարավից հյուսիս, այլ Արածանիի հոսանքն ի վեր: Ասորեստանյան բանակը շրջանցել էր Հայկական պարը, ապա Արարատյան դաշտ-Շիրակ-Վանանդ-Բասեն ուղղությամբ հասել էր Դայանեի⁵:

Թիզլաթփալասար I-ի Ք.ա. 1114թ. արշավանքն ուղղված էր Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների դեմ: Դրանց ամբողջությունը նա կոչում է Նաիրի երկրներ: Իր այն արձանագրության մեջ, որը հայտնաբերվել է

¹ *Арутюнян Н. Топонимика Урарту, "Хурриты и урарты", I, Ер., 1985, стр. 70-71, 73.*

² *Երևնյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոց»-ի, Եր., 1963, էջ 110:*

³ *Дьяконов И. Ассиро-вавилонские источники об истории Урарту, "Вестник древней истории", 1951, NN 2-4, надп. N 10.*

⁴ *Նույն տեղում, надп. N 27.*

⁵ *Պետրոսյան Ս., «Արարատյան դրախտը» սեպագիր աղբյուրներում, «Պատմա-բանասիրական հանդես», 2009, թիվ 2-3, էջ 249-261:*

Աշխուր քաղաքի ավերակները պեղելիս (այժմ Լոնդոնի Բրիտանական թանգարանում է) նա պատմում է Նաիրի երկրների նախ՝ 23, ապա 60 «արքաների» (բնագրում «թագավորների») դեմ տարած հաղթանակների մասին⁶: Այդ ընթացքում Թիզլաթփալասար I-ը, եթե հավատ ընծայենք նրա արձանագրության հաղորդումներին, գերի է վերցրել Նաիրիի բոլոր «արքաներին», բայց մեծահոգաբար բաց էր թողել՝ բավարարվելով նրանց որդիներին պատանդ վերցնելով և նրանց վրա հարկ դնելով (1200 ձի և 2000 տավար):⁷ Միակ բացառությունը եղել էր Դայաենի երկրի արքան, որին Ասորեստանի թագավորը բաց չէր թողել, այլ իր հետ տարել էր Ասորեստան: Թիզլաթփալասար I-ն այսպես է նկարագրում այդ իրադարձությունը. «Դայաենի երկրի թագավորին՝ Մենիին, որը չէր հնազանդվել իմ տիրոջը՝ Աշխուր աստծուն, գերեվարված և կապանքների մեջ բերի իմ քաղաքը՝ Աշխուր, բայց հետո նրան ներում շնորհեցի և իմ Աշխուր քաղաքից նրան կենդանի թողեցի՝ մեծ աստվածների փառքը փառաբանելու համար: Ընդարձակ Նաիրի երկրին իր ողջ սահմաններով ես տիրեցի և նրանց բոլոր թագավորներին՝ խոնարհեցրի»⁸:

Ինչպես տեսնում ենք, Նաիրի միության ներսում Դայաենին մյուս երկրների համեմատությամբ ունեցել է ավելի բարձր կարգավիճակ, որն էլ նրա արքա Մենիին դրդել էր չհնազանդվել Ասորեստանի թագավորին: Դրա համար էլ նա գերվել և տարվել էր Ասորեստանի մայրաքաղաք Աշխուր: Հետաքրքիր է, որ Թիզլաթփալասար I-ը նրան ազատ էր արձակել, առանց նրա որդիներին պատանդ վերցնելու և առանց նրա վրա հարկ դնելու: Այս հանգամանքները խիստ կասկածելի են դարձնում «մեծահոգի» Թիզլաթփալասար I-ի հաղորդումները: Բացառված չէ, որ ոչ թե նա ինքն էր ազատ արձակել Մենիին, այլ վերջինիս հաջողվել էր փախուստի դիմել:

Թիզլաթփալասար I-ի ոչ բոլոր հաղորդումներն են արժանի վստահության: Ինչպես Ն. Ադոնցն է նկատում. «Չափազանցնելու նրա ճաշակն արտահայտվում է նաև այլուր: Այսպես, նա ուզում է հավատացնել, թե երբ Խառանում իր սխրագործություններից հետո անձնատուր է լինում որսորդության հաճույքին, իբր թե մեկը մյուսի հետևից սպանել է չորս վայրի ցուլ, տասը հզոր արու փիղ, իսկ կենդանի է բռնել չորսին: Նա ռոնատակ է արել 120 առյուծ, իսկ մարտակառքով՝ ևս 800-ը: Բացի դրանից, նա կոտորել է շրջակա դաշտերի բոլոր անասուններին և երկնքի բոլոր թռչուններին»⁹:

Թիզլաթփալասար I-ի հաջորդ Ասորեստանի թագավորների ավերածություններից, կողոպուտից և «դարավոր հարկի ու տուրքի» տակ ընկնելուց հետո Նաիրի ցեղամիության մեջ մտնող թագավորություններից շատերը թողել են պատմության ասպարեզը: Դրանցից շատ քչերին է հաջողվել մնալ կանգուն: Դրանցից է եղել Դայաենի թագավորությունը: Եթե հավատանք Ասորեստանի

⁶ Дьяконов И., նշվ. աշխ., надп. N 10.

⁷ Ըստ Ն. Ադոնցի, 120 ձի և 2000 տավար (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 59):

⁸ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Եր., 1981, էջ 20:

⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 64:

թագավորների արձանագրություններին, կանգուն մնացած թագավորություններն առանց ապստամբելու վճարել են Ասորեստանի «դարավոր հարկն ու տուրքը» մինչև Ք.ա. IX դարի կեսերը, երբ Ասորեստանի դեմ ապստամբել են նրան հարկատու երկրները, այդ թվում՝ Դայաննի թագավորությունը:¹⁰

Ասորեստանի վերջին թագավորը, որը բախում է ունեցել Դայաննիի հետ, եղել է Սալմանասար III-ը (Ք.ա. 858-824թթ), որն այսպես է նկարագրում դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը ձեռնարկած իր արշավանքներին. «Իմ իշխանության երրորդ տարին ...Ալզիի (Աղձնիք) լեռնանցքները մտա: Ալզի երկրից մինչև Սուխամե երկիրը, Սուխամե երկրից մինչև Դայաննի երկիրը, Դայաննի երկրից մինչև ուրարտացի Արամուի Արծաշքու թագավորական քաղաքը (գնացի): ...Արծաշքու թագավորական նրա քաղաքը, շրջակայքի քաղաքների հետ նվաճեցի: Նրա անչափ ունեցվածքը և հարստությունը դուրս բերի: Քաղաքները քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի...»:¹¹

Ակնհայտ է, որ ասորեստանյան զենքի հարվածների թիրախ այս անգամ դարձել էր Ուրարտուն: Դայաննին կա՛մ հարձակման օբյեկտ չէր դարձել, կա՛մ էլ նրա որոշ ծայրամասեր էին ենթարկվել ավերածությունների: Մինևույն ժամանակ պարզվում է, որ Թիզլաթփալասար I-ի նշանավոր արշավանքից շուրջ 250 տարի անց Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների փոխհարաբերություններում տեղի էին ունեցել նկատելի փոփոխություններ: Դայաննին այլևս լեռնաշխարհի կյանքում առաջատար դեր չէր կատարում: Այդ դերը այժմ ստանձնել էր Ուրարտուն, որի պատճառով էլ Սալմանասար III-ը իր հարվածն ուղղում է հենց նրա դեմ:¹²

Սյուսիանդերձ, Դայաննին շարունակում էր մնալ լեռնաշխարհի ուժեղ ցեղային երկրներից մեկը: Եթե Ասորեստանի թագավորը ձգտում էր իր գերիշխանության տակ առնել ամբողջ Հայկական լեռնաշխարհը, ապա նա չէր կարող այքաթող անել Դայաննին: Դարձյալ խոսքը տանք Ասորեստանի թագավորին. «Իմ իշխանության 15-րդ տարում դեպի Նաիրի երկիրը գնացի: Տիզրիս գետի ակունքում՝ գետաբերանում, լեռների քարափի վրա իմ թագավորական կոթողը սարքեցի: Իմ հզորության փառքը, իմ խիզախ արշավանքները նրա վրա արձանագրեցի: Ուրարտացի Արամուի քաղաքները մինչև Եփրատի ակունքները քանդեցի, ոչնչացրի, կրակով այրեցի... Դայաննի երկրի թագավոր Ասիան իմ ոտքերը գրկեց, հարկն ու տուրքը, ինչպես և ձիերը վերցրի, իմ թագավորական կոթողը կառուցեցի, նրա քաղաքի մեջտեղը կանգնեցրի»:¹³

Ինչպես տեսնում ենք, Սալմանասար III-ը դարձյալ խոսում է Ուրարտունում (այս անգամ նրա ծայրամասերում) կատարած ավերածությունների մասին, բայց նման բան չի ասում Դայաննիի կապակցությամբ: Նշանակում է Դայան-

¹⁰ Սարգսյան Դ., Դայաննի-Դիաուխի պետության գրաված տարածքը և բնակչության հայկական ծագումը, *ԼՀԳ*, 2003-2, էջ 170:

¹¹ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, *հ. 1*, էջ 22-23:

¹² Արոնց Ն., *նշվ. աշխ.*, էջ 76-77:

¹³ Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա, *հ. 1*, էջ 23:

նին ավերածությունների չէր ենթարկվել, որովհետև նրա ցեղապետ-արքան կամովին ենթարկվել էր Ասորեստանի թագավորին՝ հարկ ու տուրք վճարելով ու ձիեր հանձնելով: Դրանք հավանաբար աննշան են եղել, հակառակ դեպքում, Սալմանասար III-ը պարտադիր կտեղեկացներ դրանց թվի մասին: Հայկական լեռնաշխարհի ցեղերի դեմ Սալմանասար III-ի ձեռնարկած արշավանքները հոգուտ Ասորեստանի որևէ արմատական փոփոխության չհանգեցրին: Այս տեսանկյունից նրա ձեռնարկումները բավականին հիշեցնում էին իր նախորդներից Թիզլաթիալասար I-ի ձեռնարկումներին, որոնց վերաբերյալ Ն. Ադոնցը գրում էր. «Համենայն դեպս, նրա հաջողությունները վաղանցուկ էին՝ օրվա հաղթանակ, առանց վաղվա շարունակության»:¹⁴

Միննույն ժամանակ Ն. Ադոնցի ուսումնասիրություններից պարզվում է, որ Դայաենին դուրս էր եկել բուն ցեղային երկրի (հետագա Տայքի տարածքը) սահմաններից և վերածվել էր հարևան ցեղային երկրներից մի քանիսն ընդգրկող ցեղամիության: Ընդ որում, Սալմանասար III-ը իր արձանագրություններից մեկում Դայաենին հիշատակում է իբրև խոշոր քաղաքական միավոր, ինչպիսին էր Ուրարտուն:

Դիաուխի-Դայաենի-Տայքն ասորեստանյան արշավանքներից ձերբագատվել է միայն Ուրարտուի՝ Վանի թագավորության հզորացումից հետո (Ք. ա. IX դ. վերջ):

Ք.ա. 8-րդ դարի մոտերքը Դայաենին լեռնաշխարհի ամենահարուստ թագավորություններից մեկն էր: Վերին Եփրատի հովտով ու Բոնակապան լեռնանցքով (որը տանում է դեպի Ճորոխի ու Գայլ գետի հովիտները) անցնում էր Միջագետքից Հայկական լեռնաշխարհի վրայով դեպի մերձսևծովյան մարզ տանող հիմնական առևտրական ճանապարհը: Այդ ճանապարհն առանձնահատուկ նշանակություն է ստանում Ք. ա. 8-րդ դարից սկսած, երբ Արևմտյան Եփրատով կապվել էր Եփրատի հոսանքն ի վայր Ասորիք և Ասորեստան հասցնող «Երկաթի ճանապարհի» հետ: Ուշագրավ է, որ ուրարտական աղբյուրները միայն այս ճանապարհի վրա ընկած երկրներից (Կումմուխ, Մելիտեա, Դիաուխի) ստացած տուրքի մեջ են ոսկի հիշատակում:¹⁵

Հարավում և հարավ-արևելքում Վանի թագավորությունը գործ ուներ Առաջավոր Ասիայի հզորագույն պետության՝ Ասորեստանի հետ, ուստի Մենուա թագավորը (Ք. ա. 810-786թթ.) իր թագավորության սկզբնական շրջանում հայացքն ուղղեց դեպի հյուսիս: Էրիկուախի էթիուսյան երկիրը նվաճելուց հետո Վանի թագավորությունը բախվում է մեկ ուրիշ հզոր հակառակորդի հետ հյուսիս-արևմուտքում՝ Կարնո շրջանից մինչև Ճորոխի ավազանը ձգված տարածքում: Այստեղ նա իր ուժերը չափում է Դիաուխի (Դայաենի-Տայք) հզոր պետական կազմավորման հետ:

Դիաուխիի թագավոր Ուտուպուրշին պարտություն է կրում և անձնատուր լինում Մենուային: Վերջինս Ուտուպուրշին ներում է շնորհում՝ հարկ վճարելու պայմանով: Դիաուխիի հանդեպ տարած հաղթանակի վերաբերյալ բավականին

¹⁴ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 64:

¹⁵ Նույն տեղում, էջ 156, 170, 179:

տեղեկություններ է պարունակում Մենուայի արձանագրությունը, որի բովանդակությունը հետևյալն էր. «Խալդի աստվածը զինված շարժվեց Դիաուխի դեմ... գրավեցի Դիաուխի երկիրը, Շաշիլու քաղաքը, ճակատամարտով վերցրի արքայական քաղաքը: Երկիրը այրեցի, ամրոցները ավերեցի: Հասա մինչև Շեշե լեռը, Ջուանի և Ուտուխա քաղաքները... Դիաուխի թագավոր Ուտուպուրշին հայտնվեց իմ առջև, գրկեց ոտքերս, և ես նրան մոտեցա ներողամտաբար՝ գցելով հարկի տակ: Նա ինձ տվեց արծաթ, ոսկի, հարկ և այն գերիներին, որոնք ապաստանել էին իր մոտ, նա վերադարձրեց ամբողջովին»:¹⁶

Ինչպես երևում է Մենուայի վերը բերված արձանագրությունից, Դիաուխի դեմ կատարած արշավանքը հատուկ տեղ է զբաղեցրել Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության մեջ: Այդ մասին են խոսում նախ՝ բավականին մեծ թվով ուժերը, որոնք անհրաժեշտ էին Մենուային Դիաուխին հաղթելու համար, ապա՝ Դիաուխի երկրի՝ Ուրարտական պետության լուրջ հակառակորդների շարքը դասվելը, քանի որ Մենուան նրան «հզոր երկիր» է կոչում:¹⁷ Մենուայի արշավանքի ժամանակ Դիաուխին իրենից ներկայացնում էր ցեղային միություն, որի կազմում հանդես էին գալիս Բալտուլիսի երկիրը և Խալդիիսիուլիսի քաղաքը: Բացի սրանցից, Դիաուխի տարածքում գտնվում էր Շաշիլու քաղաքը, Դիաուխի արքայանիստը, Ջուանին, Ուտուխան և քաղաք-ամրոցների մի ամբողջ շարք:

Մենուայի արշավանքի վերջնակետն է հանդիսացել Ջուանի քաղաքը, որի մասին իմանում ենք նրա թողած թերի արձանագրությունից: Պահպանված հատվածում տեղեկություն կա Դիաուխի ցեղամիության արքայանիստ Շաշիլուի գրավման մասին: Այսպիսով, Մենուայի թողած արձանագրության մեջ խոսվել է ոչ միայն Շաշիլուի նվաճման մասին, այլև Դիաուխի մյուս մարզերի, այդ թվում նաև Ջուանի քաղաքի նվաճման մասին, որը արշավանքի վերջնակետն էր:¹⁸

Արձանագրության մի քանի հատվածներ վկայում են Ուրարտուի և Դիաուխի երկրների միջև տեղի ունեցած կատաղի պայքարի մասին: Արքայանիստ Շաշիլուն գրավված էր, երկիրն իր ամրոցներով՝ հրդեհված: Մենուայի և Դիաուխի թագավոր Ուտուպուրշիի միջև հաշտությունը կայացել էր միայն Դիաուխի ջախջախումից հետո: Արդյունքում՝ Մենուան Ուտուպուրշից ստացել էր ոսկի, արծաթ և այլ հարստություն, որոնց մեջ եղել են նաև ձիեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Արձանագրության մեջ ուշադրության արժանի ևս մի հատված կա, որտեղ ասվում է, թե հաշտությունից հետո Դիաուխի թագավոր Ուտուպուրշին ստիպված է եղել Մենուային վերադարձնել ինչ-որ գերիների: Ուրեմն, Դիաուխին եղել է յուրատեսակ Շուրբիա հյուսիսում, որտեղ, ինչպես և հետագայում Շուրբիայում, ապաստան էին գտնում ուրարտական փախստականներն ու ստրուկները:

¹⁶ *Арутюнян Н. Бианили (Урарту), Военно-политическая история и вопросы топонимики, Ер., 1970, стр. 214.*

¹⁷ *Արնոց Ն., նշվ. աշխ., էջ 205:*

¹⁸ *Меликишвили Г. Урартские клинообразные надписи, М., 1960, надп. N 36; Арутюнян Н. Бианили (Урарту), стр. 416-417.*

Թե ինչքան մեծ նշանակություն է տվել Մենուան Դիաուխիի նվաճմանը, երևում է Ուրարտուի տարածքում գտնված երկու արձանագրություններից, որոնք ավարտվում են անեծքով: Մակայն ակներև է, որ Դիաուխիին հնագանդեցնելն այդքան էլ հեշտ գործ չէր և Մենուան չէր կարողացել վերջնականապես հաստատվել այնտեղ: Այդ մասին է խոսում այն հանգամանքը, որ իր թագավորության սկզբին՝ Ք.ա.785-784թթ., Արգիշտի I թագավորը (Ք.ա.786-764թթ.) արշավանքներ է ձեռնարկում դեպի հյուսիս, այդ թվում նաև Մենուայի՝ նախկինում ասպատակված երկրները: Արգիշտին իր գահակալման սկզբում մի խոշոր արշավանք է կազմակերպում Դիաուխի երկրի վրա, որը, հավանաբար, Մենուայի մահվան հանգամանքից օգտվելով, դուրս էր եկել Ուրարտուի գերիշխանությունից և հրաժարվել նրան հարկ վճարելուց: Ուրարտական զորքը, իր ճանապարհին ընկած ամրոցները, բնակավայրերը կողոպտելով ու ավերելով, հասել էր մինչև Չըլդր լճի ափերը: Դիաուխի երկրի Ուտուպուրշի թագավորն ստիպված է լինում կրկին ընդունել Ուրարտուի գերիշխանությունը և Արգիշտի I-ին «նվիրել» 41 մինա ոսկի, 37 մինա արծաթ, 10 հազար մինա պղինձ, 300 խոշոր գլուխ և 10000 գլուխ մանր եղջերավոր անասուն:¹⁹ Բացի դրանից, Դիաուխին պարտավորվում էր հետագայում ամեն տարի Վանի թագավորությանը իբրև տուրք վճարել հարյուրավոր ձիեր, ցուլեր, կովեր, ոչխարներ:

Այսպիսով, հիմնվելով Ք.ա. 12-8-րդ դդ. արձանագրությունների հաղորդած տեղեկությունների վրա, կարելի է ասել, որ Դայանի-Դիաուխի-Տայքը եղել է Հայկական լեռնաշխարհի ընդարձակ, հզոր, հարուստ, աշխարհներից մեկը, որը Հայկական լեռնաշխարհում ձևավորված հակաստրեստանյան ռազմաքաղաքական խմբավորման՝ Նաիրի 23 «երկրների» կազմի մեջ առանձնահատուկ տեղ է գրավել: Հզորացած Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության մեջ ևս Դիաուխին կարևոր դեր է ունեցել, որովհետև գտնվել է Միջագետքից Հայկական լեռնաշխարհի վրայով դեպի մերձսևծովյան մարզը տանող հիմնական առևտրական ճանապարհի վրա: Դիաուխին ունեցել է զարգացած հողագործական և անասնապահական ավանդույթներ, բարձր մակարդակի հասած մետաղամշակություն և յուրատեսակ ապաստան է հանդիսացել ուրարտական փախստականների ու ստրուկների համար: Դայանի-Դիաուխի-Տայքն իր շրջակայքով անհիշելի ժամանակներից սկսած ունեցել է հնդեվրոպական, ապա՝ հնդեվրոպական-հայկական բնակչություն,²⁰ Երվանդունյաց միասնական թագավորության կազմում նրա բնակիչները՝ տայեցիները, դարձել են կազմավորվող հայ ժողովրդի բաղադրատարրերից մեկը:²¹

¹⁹ Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 382:

²⁰ Պետրոսյան Մ, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, 2, էջ 237-255:

²¹ Աղուպով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի առաջին երեսնամյակը, Եր., 2013, էջ 22:

ДАЯЕНИ-ДИАУХИ-ТАЙК В XII-VIII вв. до н.э.*Резюме**А. Минасян*

Ассирийские и урартийские надписи XII-VIII вв. до н. э. свидетельствуют о существовании страны Даяени-Диаухи-Тайк. Основываясь на эти данные, можно сделать выводы о том, что она представляла раннее государственное образование и сыграла важную роль в формировании в Армянском нагорье антиассирийского военно-политического союза “Страны Наири”. Находящиеся внутри этого союза многие страны под разрушительного влияния Ассирии оставили политическую арену, чего нельзя сказать о Даяени. Ассирийские нашествия на Даяени-Диаухи были приостановлены после укрепления Ванского царства (Урарту) IX век до н. э.

В экспансионистской политике этого государства особое место занимает покорение Диаухи. В VIII веке до н. э. Диаухи стал центром пересечения торговых путей от Месопотамии и Средиземноморья до Черноморского побережья. Интересно, что урартийские источники упоминают о подате золотом только со стран, находящихся на этом пути (Куммух, Мелитеа, Диаухи).

После завоевания непокорного Диаухи, цари Урарту в качестве дани получили сотни лошадей, золото, серебро, быков, мелкий и крупный рогатый скот, а также вернули сбежавших из Урарту и работающих в лучших условиях в Диаухи беженцев и рабов.

Տեղեկություններ հեղինակի մասին*Մինասյան (Պետրոսյան) Աշխեն Լևոնի – Գրուսրու**«Տոսոն» վարժարան, E-mail:ashmin1977@mail.ru*

Arkadi AKOPOV

***THE PRINCIPALITY OF TAYK IN THE GEOPOLITICAL PROCESSES
IN SOUTH CAUCASUS***

(The second part of the X century)

XIV ashkharh (region) of Great Armenia - Tayk, after the Anti-Arab uprising of 774-775 years, acquired new owners in the face of Bagratids, who had family relations with the former owners of Tayk - Mamikonians. In the beginning of the IX century Ashot meat-eater Bagratid settled in Chakq - one of the provinces of Tayk, not far from the village Ishhanats, and built a fortress Kaghamakhi.

The northern part of Tayk covered the dynasty of the Bagratids in Kgharjq, which emerged in the beginning of the IX century¹. In IX-X centuries this principality enlarges its areas to some extent. In the X century the principality of Tayk Bagratids bordered on the Kaysiks (Marwanids) emirates and Vanand province of Ayrarat to the south and south - east, to the north - east Georgia and the Byzantium empire to the north-west. Besides Gugarq and Tayk provinces some Georgian provinces (Meskheti, etc.) were included in this power, as a result of it principality became a state with mixed population².

Anyhow, in the X century good relations and close cooperation were established between Armenian and Georgian kingdoms and Tayk's principality. Tayk gets great importance for Byzantium and South Caucasian countries as for its position as well as due to its considerable local authority which was at its zenith under David Kuropalates (960 - 1001). David Kuropalates deserves great appreciation by Armenian historians Asoghik, Aristakes of Lastiver, Matthew of Edessa as well as by Georgian chroniclers.

Aristakes of Lastiver considered him to be a person with powerful, world making manner, generous and poor supplier, a real peace definier³, Matthew of Edessa considered him a saint person of God and God lover⁴, the Georgian chronicler - as a kind, peaceful person who also patronized monks and builded churches, and was philanthropic⁵. It was just David Kuropalates according to Georgian chronicler, who was one of the apologists of "the united Georgian kingdom", though in Georgian historiography there exists another kind of point of view according to which for chroniclers the role of Tayk in the affair of establishing united Georgian state is overestimated⁶.

According to Georgian sources, in 975 Kartli's eristavi (head of the nation) Ivane Maroushis-dze (Ivane, the son of Maroushi) being oppressed by Kakheti lords, sends his ambassador to David Kuropalates and offers him to come out with his troop and seize Kartli in order to rule there or yield it to Bagrat, the son of Tayk's northern part manager Gurgen

¹ *The founder of The Tayk's principality was Ashot Bagratid - the grandson of Ashot "blind" Bagratid's son Vasak Bagratid.*

² See: **Տաշեան Հ.**, Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 70:

³ See: Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 3:

⁴ See: **Մատթէոս Ուռնայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 36:

⁵ See: *Летопись Картли, перевод, введение и примечание Г. В. Цулая, Тбилиси, 1982, стр. 57.*

⁶ See: **მელიქიშვილი გ.**, ფეოდალური საქართველოს პოლიტიკური გაერთიანება და საქართველოში ფეოდალურ ურთიერთობათა განვითარების ზოგიერთი საკითხი, თბ., 1973.

and Abkhazian George king's daughter Gurandukht⁷. Complying with Ivane Marushis-dze's offer David reigned Kartli's center Uplistsikhe. As he was heirless he adopted Bagrat then he called Kartli's "frees" and forced them to obey Bagrat as "the heir of Tao, Kartli and Abkhazia"⁸. These events were the basis of the establishment of the united Georgian state, the author of which was I. Javakhishvili⁹.

At the end of 970-s the state of [Byzantine Empire](#) became difficult. At the beginning of Basil (Barsegh) II's reign (976–1025) mighty revolt rose against him by the head of Bardas Skleros, one of the powerful representatives of Minor Asian nobility. Skleros bent a great part of empire's troop as well as nearly all Minor Asia. For suppressing the revolt imperial power uses all its means. Arabian emirates enjoyed the hard times of the empire. [Marwanid](#) emir Bat occupied Manazkert. At that decisive instant Basil II with the help of Tornik Tornikyan¹⁰ resorted to the help of Tayk's lord asking auxiliary troop for the empire's eastern army. As a consideration he promised to give him new earthen areas "until death": Khaldoyarich, Kghesurq, Chormayri, Karin, Phasiane, the province of Mardali (or Sevuk castle), Hark and Apahuniq¹¹. David accepted the offer and in 979 by the guidance of lord Jojik and Tornik Tornikyan sent a 12.000 military unit as a help for the imperial army¹². This military unit is striking for the battle occurring on the bank of the Halis in Saravane field where Skleros's army suffered a defeat.

As a consequence of Skleros's revolt Basil II who had been in serious condition took a subtle diplomatic step. In fact, such areas were given to David that at that instant Byzantium could not transfer to Tayk even in case of great desires as Hark and Apahuniq did not belong to him but Khaldoyarich and Chormayri were the possessions of the Tornikyans. David could mostly get the neighbouring areas lying from south to Tayk, i. e. Karin and Basen¹³, Basil II's policy meant that in the near future [Byzantine Empire](#) could get those lands back. David Kuropalates who had not thoroughly taken into account so-called Byzantium positive and negative sides of "compensation" when he tried to settle in his "rewarded" areas, then he immediately realized that in exchange for his services he did not have definite areas but simply the right to occupy them.

If Karin and Phasiane united to Tayk principality, then Hark and Apahuniq passed to David Kuropalates only in 990, when "Armenian Kuropalates David besieged Manazkert"¹⁴, occupied it resettling them with Georgians and Armenians.

With new strength the struggle of opposed forces restarted in Byzantium in 980-s. At that time David joined Bardas Phokas who was against the empire and was another representative of Minor Asian nobility. Kuropalates's help to Phokas was conditioned by the fact that the latter was in close relationship when Phokas was "Khaldian (Khaghtiq)

⁷ See: *Летопись Картли*, стр. 57.

⁸ See: *ქართლის ცხოვრება*, ტ. 1, თბ., 1955, გვ. 274.

⁹ See: *ჯავახიშვილი ი., ქართველი ერის ისტორია*, წ. 2, თბ., 1960, გვ. 123–124.

¹⁰ See: *Ստեփաննուի Տարոնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Մանկտ-Պետեր-բուրգ, 1885, էջ 192:*

¹¹ In the same place.

¹² *Tayk was a small country to have 12000 troops. But David Kuropalates had diplomatic abilities and charisma, so due to the Armenian and Georgian troops David helped the empire.*

¹³ See: *Степаненко В. Апахуник в византийско-таоских отношениях в период мятежа Варды Склира (976–979)*, *Античная древность и средние века*, вып. 10, 1973, стр. 221.

¹⁴ See *Ստեփաննուի Տարոնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, էջ 266:*

duke¹⁵. But not only these close relations were the case that had made Tayk's ruler join Phokas. David felt fraudulent as he had not got the compensation promised by Basil II for about ten years and now the time was convenient for taking a revenge, all the more his ancient relative had weakened Tayk's lord ability of judging sensibly.

At that time the relations of Davit Kuropalates and Bagrat III (975- 1014) became worse. According to Georgian chronicler its reason was the disobedience of Rat Baghvash (one of the eristavs of Kartli) to Bagrat, "the king of united Georgia". Georgian king enters Kartli pursuing the aim of charming, taking him prisoner.

The latter turns to David Kuropalates for help adding that the real goal of Bagrat III is to kill Tayk's ruler¹⁶. According to M. Lordkipmaindze, Rati Baghvashi did not tell a lie and that invasion was directed to David Kuropalates. In 988 obvious collision occurred and David who was in serious state asked king Smbat for help and also "all the kings of Armenia" - from the kings of Kars, Vaspurakan, Syunik and the ruler of Albania.

David Kuropalates joined this great troop with his non - numerous forces in Javaghq's Dlivek village. The troops of David and Gourgen (the father of Bagrat III) collided with each other in the place called Gardatkhrili (on the boundaries of Tayk and Shavshat) where Gurgen's troop suffered a severe defeat.

After Gourgen's defeat Bagrat III seeing the real correlation, comes to David and announce that his real goal has been to punish Rati and these annoyance between "father" and "son" are only a case of misunderstanding. It is not known whether David believed or not, however, hearing his explanations he set his force free, but till that time he made Bagrat yield Sakureti castle in Javaghq for the sake of Armenian king Smbat¹⁷.

Bagrat III's plan to invade on David Kuropalates seems strange. For a long time David was not a young person, and Bagrat in any case would inherit David's areas. Making war against kuropalates Bagrat cherished hopes for his surprising undertaking and the weakness of David conditioned by the latter's participation of Phokas revolt¹⁸. But there is a circumstance that is not mentioned in the early sources but in our opinion it is the only logical explanation of Bagrat's adventurous steps. It is possible that Bagrat's performance against David Kuropalates was organized by Basil II. Being in serious state, asking for help from Russia, Basil could also turn to Bagrat with such kind of request¹⁹. This hypothesis gives some assurance on Bagrat's and his father Gourgen's presence to Basil II after the death of David Kuropalates in 1001 and the great honours addressed to them for their previous services.

Basil II managed to defeat Phokas. It made David Kuropalates fall into a difficult situation. David had to address Basil II with asking pardon, promising obedience and submission. In this case Basil II displayed his diplomatic abilities. The emperor gives David Kuropalates the right to occupy Hark and Apahuniq and enlarge the borders of principality. Basil II was only demanding from David Kuropalates to leave Tayk by will for the empire as David Kuropalates was heirless but his relation with the probable heir Bagrat

¹⁵ See *Հովհաննես Սկիլիցես, Օտար արքայուները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական արքայուներ, Գ (թարգմանությունը բնագրից, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Եր., 1979, էջ 64:*

¹⁶ See: *Летопись Картали, стр. 59:*

¹⁷ See: *Մերձդնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. 1-ին քառորդին, էջ 50:*

¹⁸ See: *Лордкипанидзе М. История Грузии XI – начало XIII века (научно-популярный очерк). - Тбилиси, 1974, стр. 50:*

¹⁹ *Ibd.*

III were far being good. In fact, if the collusion between Bagrat and David was “taged” by the Byzantium, with that step the empire got rid of real pretender Bagrat on the one hand and fixed his rights towards Tayk on the other hand.

After Armenian king Smbat II's death in 990 close inter-allied relations were quickly formed between the ruler of Tayk and new king of Armenia - Gagik I, who was appointed a king in Ani that were manifested in close correlation of their common enemy - Arabian emirates.

In 990 the Arabs who were deported from Manazkert, became discontented with the occupation of Manazkert by David Kuropalates. It gives Atropatena's emir Mamlan a chance to stand from the protection position of Arabian element in Armenia and coming against David. Mamlan comes to the province of Tsaghkotn with his army. Mamlan's power seeing the numeral dominance of allies leave their positions at night and withdraw from Armenia²⁰.

David Kuropalates was fully aware that after his death Byzantium without a drop of blood could own all which he had got as a result of many long-term wars. But he did not lose his hope that he could change some terms of the forced peace treaty agreement, which obligated him after the defeat of Phokas.

The fact that Bagrat and Gourgen would not be the heirs of David were obvious. In 987-988 after the above-mentioned events the contacts between David and his ex-heirs were on minimum level. In this created diplomatic situation Gagik I could also be considered as a heir of David's areas if we take into account the allied bonds between them and Tayks principality's exceptionally consisting of Armenian lands.

On the other hand, realizing the whole seriousness of formed army political situation, or maybe by commanding by Basil II, Bagrat III displays willingness to join David's and Gagik's undertakings. It can to some senses be profitable for Bagrat: a) he could become a direct participant of the undertakings of Tayk's ruler and Armenian king, b) his international authority could become larger, c) Georgian king could be closer to the “inner cuisine” of Armenian and Tayk's rulers, d) Bagrat could get an opportunity to improve his relations with the ruler of Tayk and get a theoretical chance to be his direct heir once again, e) In case of need Bagrat could prevent any kind of undertaking made by Gagik I and David Kuropalates.

Carrying on his active military policy in winter 997 David send forces to invade Khlat, but he was defeated, Arab emirates took that advantage and tried to give back the areas taken from the Marwanids, Apahuniq was in the first place. But this attack headed by Atropatena's emir Mamlan in 998 was defeated near Tsumb village by the joint forces of Tayk, Armenian and Georgian powers.

According to Asoghik, David Kuropalates died in the Easter of Armenian year 449 - in the 31 of March, 1001. According to Aristakes of Lastiver and Matthew of Edessa, Georgian archbishop Illarion mixed the death-poison in the liturgy eucharist, had drunken David it, but seeing its inefficiency strangled him on the day of Holy Thursday²¹. Illarion in his turn was punished by Basil II²².

In fact for whom was profitable David Kuropalates's death. According to the early sources Kuropalates was already aged thus there was a serious reason of getting rid of him. Unfortunately, the early sources convey information only on the death of the Great

²⁰ See: *ԼԷՆ, Հայոց պատմություն, հ. 2, Եր., 1947, էջ 626-627.*

²¹ See: *Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերցուն, էջ 3:*

²² See: *Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 38:*

Kuropolates and pass the cases of his death by in silence. What could be a suitable occasion of getting rid of him if not the great political game that was played by Basil II in 70-s in the course of Bard Skleros' revolt. The events especially the close relations of Armenian king and David Kuropolates had spoiled all plans concerning Tayk. After the death of Tayk's ruler the emperor had to get his areas with "legal" way, thus the emperor would insure him from unnecessary long drawn-out proceedings. Under such circumstances Georgian archbishop Ilarion was just a tool for those who eaged David's death or a witness who was neglected for covering the committment²³.

After David Kuropolates' death Basil II arrived in Armenia, took walks around the new areas visiting Hark, Apahuniq, then Tayk, took the possession of numerous provinces, fortresses and towns. In Ekegheyats province the "frees" met him, Bagrat III and his father Gourgen introduced themselves. Basil II awarded Gourgen with magistres rank and Bagrat with a title of kuropolates²⁴.

A part of David Kuropolates's areas was given to Bagrat "for using until death". In winter 1001–1002, Gourgen being discontented with the unjust share of Kuropolates's heritage, took an attempt to snatch the other parts of Tayk from Byzantium. With his troop he began his military actions in Tayk but the town Ughtiğ made strong resistance. Nikephoras Kanikles was sent against Gourgen by Basil II. The fighting sides began to silve the issue. The Byzantium side agreed Gourgen's areal demands. His areas were enlarged on the account of David's former areas, but as it is not easy to separate the areas of David, thus it is impossible to determine the yielded areas²⁵. It is common knowledge that after Gougen's death they had to pass Bagrat and after the latter's death they were giving back to Byzantium. According to N. Adonc Gourgen got a great part of Tayk²⁶ which in 1008 after his death had passed to Bagrat III as a land gift.

According to the early sources, during the division of David Kuropolates's areas Gagik I did not present himself. The Armenian king considered his introduction to the ermpereor as faint- heartedness. But what was humiliating is not known: going to Basil II or the glorification of "kuropolates" or "magistres" which was accepted by Bagrat III, Gourgen and several Armenians. It is also known that in 1001 Armenian king was engaged in the pressure of performance of David Anhoghin (landless) - the king of Tashir-Dzoraget kingdom. The requisition of Tayk Principality's areas had a great influence on the fate of South Caucasus as the alliance of David Principality and Gagik I was the only viable power that could struggle against South-Western Armenia and Atropatena's emirates as well as resist the expansionary policy of Byzantium.

²³ *According to H. Bartikyan David Kuropolates's death was accelerated by the Byzantians that long for invading Tayk. See: Բարթիկյան Հ., Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, ՊԲՀ, 1970, № 2, էջ 81–92:*

²⁴ *See: Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечание М. Лордкипанидзе, Тбилиси, 1979, с. 57, Ըստղիկ, էջ 270:*

²⁵ *See: Такайшвили Е. Археологическая экспедиция в южные провинции Грузии 1917 г., Тбилиси, 1952, стр. 63.*

²⁶ *See: Արնից Ն., Դավիթ Շիրակացի, ՊԲՀ, 2002, թ. 3, էջ 24:*

ՏԱՅՔԻ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (X դարի II կես)

— *Ամփոփում* —

— *Ա. Ակոպով* —

IX դարում առաջացած Տայքի իշխանությունն իր հզորության գագաթնակետին է հասնում Դավիթ Կյուրապաղատ Բագրատունու օրոք (960-ականներ – 1001 թթ.): 977-979 թթ. Տայքի տիրակալն օգնություն է ցուցաբերում Բյուզանդիայի Վասիլ II կայսրին Վարդ Սկլերոսի ապստամբության ճնշման ժամանակ, ինչի ղիմաց բյուզանդական կայսրից ցմահ օգտագործման է ստանում պատմական հայկական մի շարք տարածքներ՝ Բասենը, Կարինը, Հարքը, Ապահունիքը և այլն: Ձգտելով փոխել այդ հողերի կարգավիճակը՝ 989 թ. Դավիթ Կյուրապաղատը մասնակցում է կայսեր դեմ Վարդ Փոկասի ապստամբությանը, սակայն պարտություն կրելով, ստիպված է լինում իր տիրույթները կտակել Վասիլ II-ին: Տայքի տիրակալի և Հայոց շահնշահ Գագիկ I-ի արգասաբեր համագործակցության խորացումից անհանգստացած՝ վրացի արքեպիսկոպոս Բլլարիոնի ձեռքով Դավիթ Կյուրապաղատին 1001 թ. թունավորում և սպանում են, ինչից հետո Տայքի «օրինական» ժառանգորդ Վասիլ II-ը երկրամասը ցմահ օգտագործման է հանձնում միավորված Վրաստանի առաջին թագավոր Բագրատ III-ին:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ակոպով Արկադի Արտյոմի – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
E-mail: arkadone@mail.ru

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմը դարձավ հայ ժողովրդի պատմության ամենահակասական էջերից մեկը: Կոչված լինելով իրագործելու վերջինիս ամենաբաղձալի երազանքները՝ այն իրականում մարդկային, նյութական ու տարածքային անդառնալի կորուստներ պատճառեց հայությանը. թուրքական յաթաղանին զոհ գնաց 1.5 միլիոն մարդ, մի ողջ ժողովուրդ հայրենագրվեց: Փրկվածների մի մասը Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ձևավորեց հայկական սփյուռքը, ևս 300000 մարդ անցավ Արևելյան Հայաստան և Անդրկովկասի տարբեր շրջաններ:

Հայոց Մեծ եղեռնի պատմությունը հայ պատմագիտության թերևս ամենաուսումնասիրված ոլորտներից մեկն է: Անցած հարյուրամյակի ընթացքում Մայր հայրենիքում և սփյուռքում հրատարակվել են հարյուրավոր հուշագրություններ և գիտական մենագրություններ: Հրապարակի վրա առկա է փաստավավերագրական բնույթի հսկայածավալ տպագիր նյութ: Այդուհանդերձ որոշ հիմնահարցեր, ինչպես, օրինակ, Երևանի նահանգի տարբեր գավառներում հաստատված փախստական-գաղթականների թիվը, էթնոկոնֆեսիոնալ կազմը, ըստ բնակության նոր վայրերի նորեկների տեղաբաշխումը, կամ թե տեղի բնակչության վիճակագրական պատկերի վրա ներգաղթի թողած ազդեցությունը, կարոտ են առավել հիմնավոր ուսումնասիրության¹:

Այս հարցում մեծ դերակատարություն կարող են ունենալ պարբերական մամուլը և հատկապես թերթերը: «Գաւառի ձայն»-ը, «Աշխատանք»-ը, «Հորիզոն»-ը, «Համբաւաբեր»-ը կամ «Մշակ»-ը, ի տարբերություն արխիվային չոր փաստական նյութի, իրենց պաշտոնական տեղեկատվությամբ ու անհամեմատ կենդանի թղթակցություններով ուղղակի վերածվում են ժամանակի պատմաքաղաքական անցուղարձը լուսաբանող գրավոր սկզբնաղբյուրների՝ ուսումնասիրողին ընձեռելով համեմատություններ ու վերլուծություններ կատարելու լայն հնարավորություն:

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914թ. նոյեմբերի 2-ին: Հաշված օրերի ընթացքում ռուսական զորքերը գրավեցին Խոյը, Թավրիզը, Ջևինը, Ղարաքիլիսան, Խորասանը, Բայազետը, Դիաղին, Ալաշկերտը,

¹ Անցած հարյուրամյակի ընթացքում նույնիսկ փորձ չի արվել հստակ տարբերակել գաղթականությունն ըստ կատեգորիաների՝ արևմտահայ, արևելահայ և պարսկահայ, կամ թե՛ փախստականներ ու գաղթականներ: Մինչդեռ 1914-1915թթ. մենք գործ ունենք միանգամից երեք կատեգորիաների հետ, 1916-1917թթ.՝ միայն պարսկահայերի և արևմտահայերի հետ, իսկ 1918թ.՝ գերազանցապես արևելահայերի հետ:

սակայն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին երկու անգամ նահանջեցին, ինչը մեծ խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում՝ ստիպելով տասնյակ հազարավոր մարդկանց շարժվել դեպի Արևելյան Հայաստան: Առաջինը գաղթի ճամփան բռնեցին պարսկահայերը՝ նոյեմբերի կեսերին, ապա՝ սահմանամերձ շրջանների (Կարս, Սարիղամիշ, Օլթի, Արդահան) ռուսահպատակ քրիստոնյաները, իսկ այնուհետև՝ արևմտահայերը:

Այս կապակցությամբ Ալեքսանդրապոլում հրապարակվող «Գաւառի ձայն»-ը գրում է. «Ռուս-թուրքական պատերազմը իւր սոսկալի հետևանքներով արդեն բացել է հայ ազգի մահացու վերքերից մեկը՝ գաղթականությունը: Մարսափահար հայ ժողովուրդը ստիպված է այս ցուրտ եղանակին թողնել դառն ապրուստի միջոցները և աշխատում է որոնել մի անկյուն, իր ընտանիքն ազատելու արից ու մահից»²:

Պատերազմի արհավիրքներից մազապուրծ գաղթականներին ընդունելու, տեղավորելու, սնունդով ու հագուստով ապահովելու նպատակով Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ Անդրկովկասի հայաշատ գավառներում ու բնակավայրերում ստեղծվեցին «Եղբայրական օգնության» կոմիտեներ: 1914թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ կոմիտե ստեղծվեց նաև այստեղ³: Նոյեմբերի 2-ից իր աշխատանքներն սկսեց նաև «Ազգային կենտրոնական հանձնաժողովը»⁴, որի ծավալելիք գործունեության մասին «Գաւառի ձայն»-ի Քաղաքացի ստորագրությամբ թղթակիցը գրում է. «Աղեքսանդրապոլի հայ ժողովուրդը, որը իւր չքաւոր դրութեան մեջ էլ միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին, այս անգամ էլ, անշուշտ, անտարբեր չէ մնալու...: Քաղաքիս հայ հասարակութիւնը արդեն կազմել է մի պաշտոնական բիւրօ, որը... պարտաւոր է օգնել վիրաւոր և հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին և խնամել հայ գաղթականներին»⁵: Եվ իրոք, հաշված օրերի ընթացքում հանձնաժողովը միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 հանրակացարան կահավորեց փախստական-գաղթականների առաջին խմբերն ընդունելու համար: Ի դեպ, նորեկները տեղաբաշխվելու էին գյուղից՝ գյուղ, քաղաքից՝ քաղաք տարբերակով և առայժմ՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում ու Արևելյան Շիրակի գյուղերում⁶:

Հետագայում, գաղթականների թվի աճին զուգահեռ, երևան եկան նաև հասարակական այլ կազմակերպություններ, որոնց ունեցած ներդրումը գաղթական-

² Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

³ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24:

⁴ Նույն հեղում, գործ 1242, թ. 1-3:

⁵ Գաւառի ձայն, Աղեքսանդրապոլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

⁶ Գաղթականության զանգվածային ներհուպը Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակ սկսվեց միայն ռուսական զորքերի երրորդ նահանջից հետո՝ 1915թ. հուլիսին (մանրամասն տե՛ս Հայրապետյան Ա., Արևմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1914-1918թթ., «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. պատմություն և արդիական խնդիրներ», միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2015):

ների համար հիվանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու ուղղությամբ մեծապես լուսաբանվել է արևելահայ մամուլի էջերում:

Ալեքսանդրապոլի գավառում հաստատված փախստական-գաղթականների թրվաքանակի մասին առաջին վիճակագրական տեղեկությունները արևելահայ մամուլում հայտնվեցին 1914թ. դեկտեմբերին և վերաբերում էին ռուսահայատակ հույներին: Նկարագրելով իրադրությունը ռազմաճակատում և ռուսական զորքերի 1914թ. դեկտեմբերյան նահանջի արդյունքում սահմանամերձ գոտու քրիստոնյա ազգաբնակչության շրջանում առաջացած խուճապը՝ «Մշակ»-ի թղթակից Ադելբեգը գրում է. «Երբ թուրքերը մտան Սոդակլուի անտառը, նրանք հարձակվեցին մօտակա յոյն գիւղերի վրա: Այդ գիւղերից շատերը յանկարծակի եկան և իսպառ կործանվեցին, ոմանք կիսով չափ, իսկ շատերը փախան դեպի Կարս և Արևելյան Շիրակ: Նույն կերպ Ալեքսանդրապոլի գավառում հաստատվեցին նաև Արդահան-Գեօլայից գաղթած յոյները»⁷: Ըստ հոդվածագրի՝ նշված ժամանակահատվածում միայն Արդահանի գավառից Ալեքսանդրապոլի գավառ էին տեղափոխվել 1030 հույներ, որոնցից 186-ը հաստատվել էին գավառակենտրոնում, իսկ 48-ը՝ Մեծ Ղարաքիլիսայում: Եվս 500 ընտանիք (մոտ 2500 մարդ) հույներ Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի գավառակ էին տեղափոխվել Սարիղամիշի գավառից: «Սրանցից մօտաւորապես 200 տունը,-գրում է Ադելբեգը,-ապաստանել էր Բայինդուր հայախառն յոյն գիւղում, ուր յոյների հետ հայերը հաւասարապես հիւրընկալել և խնամում էին նրանց»⁸: Մինչև 1914թ. դեկտեմբերի վերջ 4000 հույներ էլ Արևելյան Շիրակ տեղափոխվեցին Օլթիի շրջանի գյուղերից: Սրանցից 234-ը «Մշակ»-ին թղթակցած Ատրպետի հավաստմամբ հաստատվեցին Ալեքսանդրապոլում⁹:

Այն հարցին, թե ինչու «Եղբայրական օգնության», «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կամ հասարակական այլ կազմակերպությունների Ալեքսանդրապոլի կոմիտեների ծավալած բուռն գործունեության պայմաններում (գաղթականների ընդունում, ցուցակագրում, տեղավորում, վիճակագրական տվյալների հրապարակում, սնունդով ու ապրուստի տարրական միջոցներով ապահովում) նույն ժամանակահատվածում այստեղ հայ և ասորի գաղթականների հաստատվելու փաստին մամուլը չի անդրադարձել, մեզ պատասխան գտնել չհաջողվեց: Մինչդեռ Հայաստանի ազգային արխիվի թիվ 50՝ «Երևանի հայոց հոգևոր թեմական կառավարչությանը կից Եղբայրական օգնության կոմիտե» ֆոնդում պահվող փաստաթղթերի համաձայն՝ առաջին 868 հայերը գավառ էին հասել դեռևս 1914թ. նոյեմբերի կեսերին՝ հույներից մեկ ամիս առաջ, Պարսկաստանից (281 մարդ¹⁰) և Կարսից (587 մարդ¹¹): Հաջորդ երկու շաբաթների ընթացքում ևս 792

⁷ Մշակ, Թիֆլիս, 1915, N 4, 9 յունւարի, էջ 3:

⁸ Մշակ, Թիֆլիս, 1915, N 4, 9 յունւարի, էջ 3:

⁹ Մշակ, Թիֆլիս, 1915, N 54, 13 մարտի, էջ 2:

¹⁰ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, գործ 21, թթ. 141-165:

¹¹ Նույն տեղում, թթ. 151-158:

փախստականներ եկել էին Կաղզվանից և Կարսի Խոշգելի ու Կալկոս գյուղերից¹², իսկ 603-ն էլ՝ Սարիղամիշից¹³:

Ասորիներն անհամեմատ ավելի փոքրաթիվ էին: «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի հաշվումներով՝ մինչև 1914թ. դեկտեմբեր Ալեքսանդրապոլի գավառում հաստատվել էր 64 ասորի. մի մասը Մալմաստի գավառի Խոսրովա, Փաթավուր և Ուլլա, մյուս մասը՝ Վանի նահանգի Բաշկալեի գավառի Արջ և Մաբա գյուղերից¹⁴: Դեկտեմբերին Արդահանի գավառից Արևելյան Շիրակի և Ջավախքի գյուղեր էին տեղափոխվել ևս 360 ասորիներ¹⁵:

Ռազմական գործողությունների առաջին երկու ամիսների ընթացքում Երևանի նահանգի տարբեր գավառներ անցած փախստական-գաղթականների թվաքանակի և էթնոկոնֆեսիոնալ կազմի մասին առաջին ամփոփ տեղեկությունները մամուլի էջերում հայտնվեցին միայն 1915թ. հունվարի սկզբներին: Համաձայն Ալեքսանդրապոլի ազգային կենտրոնական հանձնաժողովի գաղթականական բաժնի՝ «Գաւառի ձայն» թերթի 1915թ. անդրանիկ համարում հրատարակած «Համառօտ տեղեկագրի»՝ Թուրքիայից, Պարսկաստանից, ինչպես նաև Սարիղամիշի, Արդահանի, Օլթիի և Արդվինի շրջաններից մինչև Ծննդյան տոները միայն Ալեքսանդրապոլ էր անցել 3250 փախստական-գաղթական (2310 հայ, 900 հույն, 20 ասորի և 20 ռուս): Սրանցից 400-ն անմիջապես տեղավորվել էր քաղաքամերձ գյուղերում¹⁶: Ծննդյան տոներից հետո գավառ էին հասել ևս 1200 փախստական-գաղթականներ: Սրանցից 400-ը, ըստ տեղեկագրի, Երևանից եկած պարսկահայեր էին, իսկ 800-ը՝ Օլթիից և Կարսի Թախտա գյուղից մագապուրծ եղած, կիսամերկ ու ռտաբոբիկ փախստականներ, որոնք, ըստ «Մշակ»-ի թղթակցի, հաստատվել էին Արևելյան Շիրակի գյուղերում¹⁷:

Մարտի առաջին տասնօրյակում մամուլում հայտնվեցին գաղթականների թվաքանակի մասին նոր ամփոփ տեղեկություններ:

«Եղբայրական օգնության» Էջմիածնի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Իգդիրի, Հին Նախիջևանի կոմիտեների, Թիֆլիսի «Հայկական Կենտրոնական Կոմիտեի», «Ծխական Միության», «Հայ Նպաստամատույց Ընկերության», Բաքվի «Հայկական Բյուրոյի», ինչպես նաև գաղթականների ընդունմամբ ու խնամքով զբաղվող այլ հասարակական կազմակերպությունների քառամսյա գործունեությունն ու գաղթականների շրջանում անցկացված մեկօրյա ցուցակագրման արդյունքներն ամփոփելու համար 1915թ. մարտի 1-ին իր աշխատանքներն սկսեց Էջմիածնի համագումարը: Արևելահայ մամուլն իր էջերում լայնորեն լուսաբանել է համագումարի աշխատանքերը, ներկայացրել ձեռքբերումները, մատնանշել բացթողումներն ու թերացումները:

¹² ՀԱՍ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 149-252:

¹³ Նույն տեղում, թթ. 164-165:

¹⁴ Նույն տեղում, գործ 21, թթ. 251-258:

¹⁵ Նույն տեղում, թթ. 267-280:

¹⁶ Գաւառի ձայն, Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունւարի, էջ 3:

¹⁷ Մշակ, Թիֆլիս, 1915, N 9, 16 յունւարի, էջ 3-4:

Այսպես, մարտի 10-ի իր համարում «Մշակ»-ը հրապարակեց «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի զեկույցը: «Ալեքսանդրապոլի Յանձնաժողովի կողմից զեկուցանող պ. Թաբախչեանը յայտնեց, -գրում է «Մշակ»-ի «Հ.Ա.» ստորագրությամբ թղթակիցը, -որ գաւառում գաղթականների թիւը, չը հաշւած Ղարաքիլիսէն, 6500 է»: Ըստ հողվածագրի՝ կոմիտեն հաշվել էր, որ յուրաքանչյուր գաղթական ընտանիքի իր բնակության նախկին վայրը վերադարձնելու և նրա կորցրած տնտեսությունը վերականգնելու համար պահանջվում է 500 ռուբլի¹⁸:

Իրականում, Էջմիածնի համագումարն ամփոփել էր մեկամսյա վաղեմության վիճակագրական տվյալներ, իսկ մամուլում գոնե Ալեքսանդրապոլի գավառի համար հրապարակվել էին, մեղմ ասած, թերի տվյալներ: Յուցակագրումն անցկացվել էր Երևանի Վիճակագրական հանձնախմբի կողմից 1915թ. հունվարի 30-ին՝ Երևանի նահանգի յոթ գավառներում, Կարսի մարզի չորս շրջաններում և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառում¹⁹ ու նպատակ ուներ սպառիչ տեղեկություններ հավաքելու ռազմական գործողությունների առաջին եռամսյակում նշված շրջաններ գաղթածների թվաքանակի մասին:

Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության ցուցակագրումն անցկացրած «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն²⁰ արձանագրել էր հետևյալ ցուցանիշները. ոչ լրիվ երեք ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառի 63 գյուղերում հաստատվել էր 6909 մարդ, որից 4468-ը հայեր էին, 2270-ը՝ հույներ, 109-ը՝ ասորիներ, իսկ մնացած 62-ը՝ ռուսներ, վրացիներ, լեհեր, հրեաներ ու օսեր: Նույն ցուցակագրման համաձայն՝ Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական-գաղթականների թիվը կազմում էր 3652 մարդ, իսկ գավառի 63 գյուղերում՝ 3257 մարդ²¹:

Հաջորդ ամիսների ընթացքում նորեկների թիվը գավառում անշեղորեն աճեց և 1915թ. ապրիլի վերջերին հասավ 8000-ի (այդ թվում՝ 6000 հայ, 1400 հույն, 570 ասորի և 30 ռուս): «Մշակ»-ին թղթակցած Գևորգ ք. Մկրտումյանի հաշվումներով ապրիլի 24-ի դրությամբ սրանցից 3300-ը տեղավորվել էր Ալեքսանդրապոլի 15 հանրակացարաններում և 200 մասնավոր տներում, իսկ 4700-ը՝ Արևելյան Շիրակի 80 գյուղերում²²:

1915թ. հուլիսը նշանավորվեց գաղթականության նոր ալիքով: Թավրիզը, Ուրմիան, Ալաշկերտը, Բաշկալեն, Մանազկերտը, Շատախը, Արճեշն ու Վանը գրաված ռուսական զորքերը հուլիսի կեսերին երկու շաբաթով նորից նահան-

¹⁸ Մշակ, Թիֆլիս, 1915, N 51, 10 մարտի, էջ 2-3:

¹⁹ Փախստական-գաղթականների մեկօրյա ցուցակագրումը միակ հնարավոր միջոցն էր անընդհատ շարժման մեջ գտնվող բազմահազարանոց այս զանգվածի վերաբերյալ փոքրիշատե ստույգ վիճակագրական տվյալներ հավաքելու:

²⁰ Մանրամասն տե՛ս Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ. - XXդ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի, Եր., 2011, էջ 232-235:

²¹ Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эривань, 1915, стр. 26-31.

²² Մշակ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

ջեցին: Թվով երրորդ անբացատրելի նահանջը նոր խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում՝ առիթ տալով անկազմակերպ ու քառասային գաղթի: Արևմտահայության այս տեղաշարժը հնարավորինս մանրամասն ներկայացվել է Բ. Իշխանյանի կողմից «Մշակ»-ում հրատարակված «Աղետի և տառապանքի աշխարհից» խորագրով հոդվածաշարում: Ըստ հեղինակի՝ Վանից, Մանազկերտից, Մուշից և Բուլանըղից միայն Ալեքսանդրապոլի գավառ հուլիսի 26-ից օգոստոսի վերջն ընկած ժամանակահատվածում գաղթել էր 20000 մարդ²³, որից 5653-ն այստեղ հաստատվել էր հուլիսի վերջին հնգօրյակում (1688-ը՝ Ալեքսանդրապոլ քաղաքում, 993-ը՝ Արևելյան Շիրակում, իսկ 2972-ն էլ՝ Փամբակում)²⁴:

Ռուսական զորքերի հուլիսյան նահանջի վերջնական արդյունքներն ամփոփվել են Ալ. Խատիսյանի կողմից Համառուսաստանյան քաղաքների միության (Քաղաքների միություն) կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրում, համաձայն որի՝ 1915թ. օգոստոսի վերջին գավառում գաղթականների թիվը կազմել է 31000 մարդ (7000-ը՝ գավառակենտրոնում, իսկ 24000-ը՝ գյուղերում)²⁵:

Ի դեպ, 1915թ. հուլիսից գաղթականության առաջին մեծ խմբաքանակներն սկսեցին հաստատվել նաև Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակում: Օգոստոսի 22-ին այստեղ այցելած «Մշակ»-ի «Մ.» ստորագրությամբ թղթակիցը գրում էր, թե շրջանի հազարավոր փախստականների անմիջական խնամքի ու հոգատարության սահագին ծանրությունը բացառապես ընկած է տեղի «Եղբայրական օգնության» կոմիտեի ուսերին: «Երկու շաբաթվայ ընթացքում,-գրում է հոդվածագիրը,-կօմիտեի լիազորները, հազար ու մի նեղութիւններով, հազիւ կարողացան տեղաւորել գաղթականներին 18 (իրականում՝ 17-Ա.Հ.) գիւղերում, ցուցակագրել և բաժանել առաջին նպաստը: ... Գաղթականները տեղաւորվել են գիւղերում մի տեղ շատ, միւս տեղը՝ քիչ...»²⁶:

1915թ. հուլիսին Փամբակում հաստատված գաղթականության ցուցակ²⁷

| N | գյուղը | Ընտանիք | մարդ | N | գյուղը | Ընտանիք | մարդ |
|----|-------------|---------|------|-----|----------|---------|------|
| 1. | Ղշլաղ | 31 | 135 | 10. | Ղալթախչի | 39 | 234 |
| 2. | Սարմուսախլի | 8 | 53 | 11. | Ավդիբեկ | 36 | 217 |
| 3. | Հաջիդարա | 6 | 56 | 12. | Աղբուլաղ | 21 | 160 |

²³ Մշակ, Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2:

²⁴ Նույն տեղում, N 204, 18 սեպտեմբերի, էջ 2-3:

²⁵ Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 26.

²⁶ Մշակ, Թիֆլիս, 1915, N 187, 26 օգոստոսի, էջ 3:

²⁷ «Մշակ»-ում հրատարակված այս աղյուսակը կազմվել է «Եղբայրական օգնության» Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեի տրամադրած վիճակագրական տվյալների հիման վրա (մանրամասն տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1915, N 187, 26 օգոստոսի, էջ 3:)

| | | | | | | | |
|----|----------|----|-----|-----|----------------|-----|------|
| 4. | Ղարբազ | 9 | 87 | 13. | Ղարբալ | 37 | 217 |
| 5. | Բզովդալ | 6 | 52 | 14. | Ղարաբոյա | 13 | 61 |
| 6. | Յադուբլի | 17 | 95 | 15. | Գյուլյոյիսուշ | 7 | 63 |
| 7. | Համամլու | 76 | 401 | 16. | Մեծ Պարնի | 62 | 433 |
| 8. | Նալբանդ | 19 | 129 | 17. | Մեծ Ղարաքիլիսա | 104 | 597 |
| 9. | Թափանլու | 15 | 122 | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 506 | 2972 |

Մինչև օգոստոսի վերջ Բուլանդղից Փամբակ անցան ևս 858 գաղթականներ: Հոկտեմբերի 1-ին այստեղ այցելած «Համբաւաբեր»-ի «Գաղթական» ստորագրությամբ թղթակցի հաշվումներով՝ սրանցից 370-ը հաստատվել էր Համամլուում, 180-ը՝ Վարդնովում, 91-ը՝ Ղաչաղանում, 98-ը՝ Չոտուրում, 53-ը՝ Սախտակում, իսկ 62-ը՝ Չիկդամալում²⁸:

1915թ. օգոստոսին ռուսական զորամասերը վերագրավեցին հուլիսյան նահանջի հետևանքով կորցրած տարածքները, ինչը հնարավորություն տվեց տասնյակ հազարավոր արևմտահայերի վերադառնալու հայրենի օջախներ: Այս նոր տեղաշարժը, ըստ Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի, պիտի հնարավորություն տար ձմռան նախաշեմին զգալիորեն բեռնաթափելու գավառը գաղթականներից: Եվ իրոք, «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի անցկացրած նոր ցուցակագրման համաձայն, Ալեքսանդրապոլում և գավառի 139 գյուղերում 1915թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գաղթականների թիվը նվազել էր մինչև 22815 մարդ²⁹:

Սակայն, բեռնաթափումը կրեց միայն ժամանակավոր բնույթ: Երևանում և Էջմիածնում տեղավորված արևմտահայության շրջանում դեռևս հուլիսի վերջերից ծայր առած համաճարակային հիվանդությունների և դրանցով պայմանավորված մահացության ահեղի մասշտաբների դեմ պայքարելու համար տեղի «Եղբայրական օգնության» կոմիտեի առաջարկությամբ որոշվեց գաղթականներին տեղափոխել նահանգի մյուս գավառներ: Որպես հետևանք՝ 1915թ. հոկտեմբերի 11-ին Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառի 139 գյուղերում գաղթականների թիվը կրկին հասավ 26000-ի³⁰, ինչը, ըստ «Մշակ»-ի թղթակցի հաշվումների, կազմում

²⁸ Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:

²⁹ Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում հաստատված արևմտահայ գաղթականության ցուցակը կազմվել է Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի կողմից՝ համաձայն Ամենայն Հայոց հայրապետ Գևորգ Ե-ի 24.11.1915թ. կարգադրության (տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5): Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության» կոմիտեի տարեկան զեկույցը հրապարակվել է նաև մամուլում (տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 8, 14 յունիսի, էջ 5):

³⁰ Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, 1915, стр. 12.

էր Երևանի նահանգում հաստատվածների ընդհանուր թվի 28%-ը³¹: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Երևան քաղաքում և համանուն գավառում գաղթականների թիվը կազմում էր 19800 մարդ, Էջմիածնի գավառում՝ 16000 մարդ³²:

Հաջորդ երկու տասնօրյակների ընթացքում Երևանից Ալեքսանդրապոլի գավառի Մահմուդջուղ, Տաշղալա, Մասլուխի, Ղըրխ, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ և Քյաֆթառլի գյուղեր տեղափոխվեցին Բուլանդից, Մանազկերտից, Ալաշկերտից և Բասենից գաղթած ևս 1261 արևմտահայեր³³: Իսկ արդեն դեկտեմբերին, համաձայն իշխան Ա.Ս. Արղության-Երկայնաբազուկի, Քաղաքների միության կովկասյան բաժանմունք ներկայացրած զեկուցագրի, գաղթականներով բնակեցվեցին Ալեքսանդրապոլի գավառի բոլոր 186 գյուղերը: Միայն Փամբակի 26 գյուղերում, ըստ «Մշակ»-ի թղթակցի, տեղավորվել էր 4000 արևմտահայ³⁴:

Ցավոք, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականությանը վերաբերող վիճակագրական նյութի առատությունն արևելահայ մամուլի էջերում առկա է միայն 1915թ.: 1916թ. սկսած՝ հաղորդումները դառնում են խիստ հազվադեպ ու կրցկտուր, ինչն էլ ավելի է բարդացնում նորեկների թվաքանակի և տեղաշարժի ուսումնասիրությունը: Օրինակ, 1916թ. փետրվարի 14-ին «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կողմից անցկացվեց ցուցակագրում, որի համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառում կար 32000 գաղթական³⁵: Չորս ամիս անց՝ հունիսի 20-ին, ըստ տեղի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի՝ կաթողիկոսին ներկայացրած հաշվետվության, սրանցից մնացել էր 19799-ը³⁶: Թե ո՞րն էր գաղթականների թվի նվազման պատճառը, և ի՞նչ ուղղությամբ էին նրանք հեռացել, այսօր հայտնի չէ: Ընդ որում այս անբացատրելի ու անտրամաբանական վիճակը հատուկ է միայն Ալեքսանդրապոլի գավառին³⁷: Նույն «Մշակ», «Հորիզոն», «Աշխատանք» կամ «Համբաւաբեր» պարբերականներում կարելի է հանդիպել 1916-1917թթ. թվագրված տասնյակ հաղորդումների Երևանի նահանգի և Կարսի մարզի գավառներում հաստատված փախստական-գաղթականների թվի, էթնոկոնֆեսիոնալ կազմի կամ սոցիալական դրության մասին: Ավելին, 1916թ.-ից 1917թ. ընկած շրջանում «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն»-ը և «Շղթայրական օգնության» կոմիտեն մամուլում հրապարակեցին ամփոփ վիճակագրություն պատերազմի սկսվելուց ի վեր Հայաստանի Արևելյան ու Արևմտյան հատվածներում ըստ առանձին գավառների ժողովրդագրական գործընթացների մասին:

³¹ Մշակ, Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

³² Մշակ, Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

³³ Նույն տեղում, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:

³⁴ Նույն տեղում, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

³⁵ ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7:

³⁶ ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 10:

³⁷ Նույնն է իրավիճակը նաև Հայաստանի ազգային արխիվում: Որբանոցների, գաղթականական հիվանդանոցների ու դպրոցների մասին հարյուրավոր փաստաթղթերի կողքին մեկ-երկու կցկտուր հաղորդման կարելի է հանդիպել Ալեքսանդրապոլի գավառում 1916-1917թթ. գաղթականության տեղաշարժի մասին:

1916թ. հուլիսին ռուսական զորքերը չորրորդ անգամ նահանջեցին:

Դեպի Ալեքսանդրապոլի գավառ շարժվող արևմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատվեցին Փամբակում: Եթե 1916թ. հունիսի 25-ի դրությամբ շրջանի 26 գյուղերում կար 3884 արևմտահայ (1133 կին, 941 տղամարդ, 1810 երեխա), ապա օգոստոսի 9-ին, ըստ «Աշխատանք»-ի թղթակցի, այդ թիվը հասավ 4475-ի³⁸: «Մշակ»-ի «Ականատես» ստորագրությամբ թղթակցի վկայությամբ «...եկողները Բուլանրկի Համգաշէխ, Կողակ, Փռկաշեն գիւղերից և Վան քաղաքից էին, ... ամենքն էլ տանջված ու թալանված. գլխաւորապէս պառաւ կանայք, զառամեալ ծերեր և վտիտ մանուկներ, մինչդեռ տղամարդկանց թիւը հազիւ հասնում էր 10 %-ի»³⁹:

Օգոստոսին Ալեքսանդրապոլ և շրջակա գյուղեր հասան նաև 8000 սասունցիներ⁴⁰: «Մշակ»-ն իր 1916թ. նոյեմբերի 1-ի համարում հրապարակել է տեղի թեմակալ առաջնորդ և «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահ Արտակ վարդապետի կոչը՝ ուղղված անհատ բարեգործներին ու հասարակական կազմակերպություններին. «Վկայում ենք,- նշված է ուղերձում,- որ օգոստոս ամսից Ալեքսանդրապոլի գաւառը եկած փախստականները, գլխաւորապէս սասունցիներ... առանց չափազանցութեան բոլորովին մերկ են: ... Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի իսկզ գոհերին և թոյլ չը տալ, որ գազանութիւններից ազատված՝ նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»⁴¹:

Սասունցիների ներգաղթը շարունակվեց մինչև տարեվերջ: Վերջին 1370 սասունցիները, ըստ «Մշակ»-ի, Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին դեկտեմբերին⁴²:

Արևելահայ մամուլը որևէ կերպ չի անդրադարձել ժողովրդագրական այն գործընթացներին, որոնք տեղի են ունեցել Ալեքսանդրապոլի գավառում 1917թ. ընթացքում: Բացառություն կարելի է համարել թերևս Մոսկվայում հրապարակվող «Армянский вестник» պարբերականը, որն իր մարտի 12-ի համարում, հղելով Բաքվի «Արեւ» օրաթերթին, հաղորդում է այստեղ 30000 գաղթականների գոյության մասին⁴³: Մեր խորին համոզմամբ՝ հաղորդումը թեև մոտ է իրականությանը⁴⁴, սակայն վերաբերում է 1916թ.-ին: «Արեւ»-ի 1917թ. հունվարի 1-ից մարտի

³⁸ Աշխատանք, Եր., 1916, N 17, 29 յունիսի, էջ 4:

³⁹ Մշակ, Թիֆլիս, 1916, N 172, 7 օգոստոսի, էջ 2: Նույնը տե՛ս նաև Մշակ, Թիֆլիս, 1916, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

⁴⁰ Մշակ, Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

⁴¹ Նույնը:

⁴² Նույն տեղում, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:

⁴³ Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N 10-11, 12 марта, стр. 27-28. Պարբերականը թեև հղում է «Արեւ» օրաթերթին, սակայն չի նշում, թե որ համարից է վերցվել վիճակագրական տվյալը:

⁴⁴ Հայաստանի ազգային արխիվի «Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան» ֆոնդում մեզ հաջողվեց գտնել Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող հաստատությունների կողմից ընտրված պատգամավորներ Ս. Տեր-Գրիգորյանի և Սմբատ Բորոյանի

12-ի համարներում մենք Ալեքսանդրապոլի գավառից որևէ վիճակագրական տեղեկության չհանդիպեցինք:

1918թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի ամրոթալի պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից: Անդրկովկասյան Մեյմը, չճանաչելով հաշտության պայմանները, փորձեց Թուրքիայի հետ Տրապիզոնում առանձին բանակցություններ վարել, սակայն հաջողության չհասավ, իսկ ապրիլի 1-ին սկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը հաշված օրերի ընթացքում վերածվեց թուրքական զորքերի հաղթարշավի: Թուրքական հարձակումը հայության շրջանում կրկին խուճապ առաջացրեց՝ առիթ տալով նոր տեղաշարժի:

Փախստականների առաջին խմբերը Կարսի և Բաթումի շրջաններից Ալեքսանդրապոլ հասան մարտին⁴⁵, սակայն զանգվածային բնույթ գաղթն ընդունեց ապրիլի 12-ից հետո, երբ Մեյմի ապաշնորհության պատճառով Կարսը հանձնվեց թուրքերին: Տեղի շրջանային կոմիսար Չամոյանի՝ Անդրկովկասյան Մեյմ ուղարկած հեռագրի համաձայն՝ մինչև 1918թ. մայիսի 1-ը Կարս քաղաքից և համանուն շրջանից Ալեքսանդրապոլի գավառ կարող էին անցնել մոտ 200000 փախստականներ⁴⁶:

1918թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրամասում ստեղծված քառսային իրավիճակը հնարավորինս մանրամասն նկարագրվել է «Մշակ»-ում՝ շնորհիվ մշտական թղթակիցներ Շարաֆյանի, Պապիկյանի, Մանդինյանի, Ղազարյանի, Ատրպետի և այլոց քրտնաջան ու անձնուրաց աշխատանքի: «Փախստականների մի մասը, ով փրկել է իւր ունեցւածքն ու անասունները, գրում էր թերթը, շարունակում է ճանապարհը դէպի Ղարաքիլիսա, Լօռի և նոյն իսկ Հիւս. Կովկաս: Մյուս մասը ցրվել է Ալեքսանդրապոլի գաւառի գիւղերը»⁴⁷: Անհատ բարեգործներին ու պետական հաստատություններին «Մշակ»-ը կոչ էր անում շտապ միջոցներ ձեռք առնելու գաղթականների այդ լավան ընդունելու, սնունդով ապահովելու և տեղավորելու համար, որովհետև հասարակական այն կազմակերպությունները, որոնք վերջին տարիներին զբաղվել էին նմանօրինակ խնդիրներով, գաղթականների այսպիսի քանակին օգնել ի գորու չէին⁴⁸:

Թե ապրիլյան այս օրերին քանի՞ փախստական ընտանիք տեղավորվեց Ալեքսանդրապոլի գավառ, և քանիսը՞ հետագայում այստեղ մնաց, հայտնի չէ: 1918թ. մայիսի 15-ին գավառի մեծ մասը զինակալվեց թուրքերի կողմից, որից

Գևորգ Ե կաթողիկոսին ներկայացրած հաշվետվությունը, ըստ որի՝ 1917թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ գավառում, բացի որբանոցների սաներից, կար 25754 արևմտահայ, այդ թվում՝ 1-14 տարեկան 4231 երեխա և 963 ծեր (տե՛ս ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24):

⁴⁵ Մշակ, Թիֆլիս, 1918, N 69, 1 ապրիլի, էջ 2:

⁴⁶ Նույն տեղում, N 81, 17 ապրիլի, էջ 2:

⁴⁷ Նույն տեղում, N 82, 1 մայիսի, էջ 3:

⁴⁸ Նույնը:

հետո արևելահայ մամուլի էջերից իսպառ վերացան տեղեկություններն այստեղ հաստատված գաղթականության տեղաշարժի մասին:

Ամփոփելով աշխարհամարտի տարիներին արևելահայ մամուլում գաղթականության տեղաշարժի խնդրի լուսաբանման համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. Ալեքսանդրապոլի գավառի կտրվածքով՝ վիճակագրական նյութի առատությունը հաստուկ է 1915թ.: 1916թ. ընթացքում հաղորդումները դառնում են հազվադեպ, իսկ 1917թ՝ իսպառ վերանում: Կասկած տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխության հետ՝ վիճակագրական նյութի առատությամբ կարող էր աչքի ընկնել 1918թ., եթե մայիսին գավառի մեծ մասը չզինակալվեր թուրքերի կողմից:

ВОСТОЧНОАРМЯНСКАЯ ПРЕССА О БЕЖЕНЦАХ ОСНОВАВШИХСЯ В АЛЕКСАНДРОПОЛЬКОМ УЕЗДЕ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

Официальная информация и доклады публикуемые в восточноармянской Периодической печати (пресса) являются бесценным источником для глубокого анализа численности беженцев, их движения, этноконфессионального состава и социальной ситуации в годы Первой мировой войны. Но освещение проблемы на страницах прессы в разные годы имело разные масштабы. Например, для Александропольского уезда, обилие статистического материала характерно только для 1915г.. Начиная с 1916г. сообщения становятся редкими, а с 1917г. они окончательно исчезают. В связи с резкой переменой стратегической ситуации в регионе, обилием статистической информации мог бы отличаться 1918г., но 15 мая 1918г. большая часть уезда была захвачена турками, и после этого со страниц восточноармянской прессы полностью исчезла информация о движении поселившихся здесь беженцев.

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայրապետյան Արմեն Մերգոյի – պ. գ. թ., դոցենտ, ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, Email: armenani@mail.ru

Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱՏՕ-Ի ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԱՌՈՂԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՎԱՐԳՈՒՄ (1989-1992թթ.)

1980-ական թվականների վերջին և 90-ականների սկզբներին միջազգային հարաբերությունների ասպարեզում տեղի ունեցան մեծ տեղաշարժեր. Խորհրդային իշխանությունները պատրաստակամություն դրսևորեցին կրճատելու ռազմական պոտենցիալը «խելամիտ բավարարության» հիմունքներով և հրաժարվեցին «Բրեժնևյան դոկտրինայից», որն արդարացնում էր ուղղակի միջամտությունը (այդ թվում և ռազմական) ԽՍՀՄ-ի ազդեցության տակ գտնվող պետությունների ներքին գործերին: Մրան զուգահեռ 1980-ականների սկզբին ԱՄՆ-ում իշխանության եկած Ռ. Ռեյգանի վարչակազմում, որը ԽՍՀՄ-ի նկատմամբ ամբողջական առավելության հասնելու նպատակով մշակել էր գլոբալ և տարածաշրջանային հարթություններում «ուղղակի առճակատման» ռազմավարությունը¹, տեղի ունեցավ Կրեմլի նկատմամբ մոտեցման դրական փոփոխություն²: Միաժամանակ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում խորացող տնտեսական ճգնաժամը, ազգամիջյան խմորումները և լճացումը, «Բրեժնևյան դոկտրինայից» հրաժարումը, ինչպես նաև բազմակուսակցական ընտրությունների անցկացումը Արևմուտքի համար նախահիմք հանդիսացան այդ երկրներում դեմոկրատական հեղափոխություն և քաղաքական ռեժիմների «խաղաղ եվոլյուցիա» իրականացնելու համար³: Արևմուտքը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում տեղի ունեցող այս գործընթացներին ընդառաջ գնաց, և 1989թ. ԱՄՆ նախագահ Ջ. Բուշ Ավագը Բրյուսելում հայտարարեց, թե հրաժարվում է Սառը պատերազմի տարիներին իր քաղաքականության հիմքը հանդիսացող «զսպման» դոկտրինայից:

Սոցիալիստական ճամբարի թուլացման և փլուզման պայմաններում հատկապես կարևորվեց 1989թ. մայիսի 28-30-ը ՆԱՏՕ-ի Բրյուսելյան գագաթնաժողովը: Բացի Դաշինքի 40-ամյակին նվիրված հռչակագրից, ընդունվեց նաև Սպառազինության վերահսկման և զինաթափման համապարփակ հայեցակարգը: Հավանության արժանացավ Ջ. Բուշ Ավագի նախաձեռնությունը՝ կապված ԵԱՀԿ շրջանակներում Վիեննայում անցկացվող բանակցությունների արագացման հետ, որով նախատեսվում էր ԱՄՆ և ԽՍՀՄ սահմաններից դուրս գտնվող զինձառայող-

¹ **Штоль В.** НАТО: Динамика эволюции, www.observer.materik.ru/RAU_book/NATO/index.htm, Раздел III, Այստեղ հիմնականում շեշտը դրվում էր երկարատև միջուկային պատերազմին պատրաստվելու վրա, իսկ սա իրականացնելու համար մշակվում էին ևս 2 հայեցակարգեր՝ «ակտիվ հակազդեցության» և «աշխարհագրական շիկացման»:

² **Штоль В.** Роль и место НАТО в системе европейской и международной безопасности в условиях глобализации. Москва, 2005, стр. 95.

³ **Штоль В.**, նշվ. աշխ., էջ 96: Մրանը նախահիմք հանդիսացան դեմոկրատական հեղափոխություն իրականացնելու այդ երկրներում (Հունգարիա, Լեհաստան, ԳԴՀ, Չեխոսլովակիա, Ռումինիա, Բուլղարիա, Ալբանիա) առանց դիմակայության պետական համակարգի փոփոխության համար:

ների թվի և զինված ուժերի կրճատում: Որպես հետեւանք՝ ԽՍՀՄ-ն էապես կրճատեց ռազմական ներկայությունը իր սահմաններից դուրս և ԳՂՀ-ից դուրս բերեց իր զինված ուժերի արևմտյան հատվածը: Այս պայմաններում նվազում էր ՆԱՏՕ-ի՝ իր սահմաններից դուրս մեծաքանակ զինուժ և ռազմական տեխնիկա պահելու անհրաժեշտությունը⁴:

Ինչ վերաբերում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետություններին, ապա 1989թ. հեղափոխության առանցքային գաղափարներից մեկը, խորհրդային ազդեցությունը թոթափելուց բացի, նաև Արևմուտքի հետ միավորվելն էր: Սկզբնապես, այս խնդիրները լուծելու համար նրանք իրենց հայացքն ուղղեցին ԵԱՀԽ-ին և Եվրոպական ընկերակցություններին: Վերոնշյալ երկրներն արդեն իսկ ԵԱՀԽ անդամ էին, և նրանց շրջանում ԵԱՀԽ ընկալումը նաև բարոյական էր, քանի որ Հելսինկիի Եզրափակիչ ակտը որոշակի դերակատարում էր ունեցել մարդու իրավունքների պաշտպանության և կոմունիզմի ընդդիմախոսների ոգեշնչման գործում⁵: Մակայն ակնհայտ էր, որ անհնար է միայն բարոյական ազդեցությամբ և ոչ մեծ ռազմական պոտենցիալ ունեցող հաստատություններից ակնկալել Եվրոպայի արևելքում անվտանգության խնդիրների և կամ Մառը պատերազմի ջրբաժանի հաղթահարումը: Եթե ԵԱՀԽ-ն թույլ էր այս առումով, ապա Եվրոպական ընկերակցություններն էլ բավական դանդաղաշարժ էին, և շուտով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շրջանում վերջինիս շարքերը համալրելու հույսերն ի չիք դարձան: Բանն այն է, որ 1990-ական թվականները փոխակերպման շրջան էր նաև եվրոպական ինտեգրացիոն միավորումների համար: Եվրոպական ընկերակցությունների շրջանակներում ընթանում էին ինտեգրացիոն գործընթացների խորացմանն ուղղված բանակցություններ՝ նոր եվրոպական պայմանագրերի շուրջ, որոնք էլ իրենց սահմանած չափանիշներով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին տրամադրում էին սահմանափակ մուտք դեպի իրենց շուկաները և քաղաքական խորհրդատվության մեխանիզմները՝ շրջանցելով նրանց շուտափույթ անդամակցության հարցը: Եվրոպական ընկերակցությունների ներսում էլ կար լուրջ տարակարծություն՝ արդյոք նախապես կենտրոնանալ Արևմտյան Եվրոպայի ներսում ինտեգրացիայի խորացման վրա, թե ընդլայնվել դեպի Արևելք և ներառել նոր պետություններ: Առաջին դիրքորոշմանը կողմնակից էր հատկապես Ֆրանսիան: Ըստ նախագահ Միտերանի՝ այդ պետությունների ինտեգրացումը ապագա ԵՄ կառույցներում կարող էր տևել տասնամյակներ: Ակնհայտ էր՝ Արևմտյան Եվրոպան իր պետություններով և ին-

⁴ *Захаров В., Арешев А. Расширение НАТО в государства Закавказья: этапы, намерения, результаты, Москва, «МГИМО-Университет», 2008, стр. 16.*

⁵ *Ասմուս Ռ., Բացելով ՆԱՏՕ-ի դուռը: Ինչպես վերակառուցվեց Դաշինքը նոր դարաշրջանի նախաշեմին, Եր., 2008, էջ 39: Եվրոպական ընկերակցությունները երեք միջազգային կազմակերպությունների համակցությունն էր՝ ընդհանուր դեկավարման մարմիններով և ինստիտուտներով: Դրանք էին Աժխի և պողպատի եվրոպական ընկերակցությունը, Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցությունը՝ Եվրատոմը, և Եվրոպական տնտեսական ընկերակցությունը, որը 1993թ. ուժի մեջ մտած Մասստրիխտի պայմանագրով վերանվանվեց Եվրոպական ընկերակցություն՝ հիմք հանդիսանալով Եվրոպական միության ձևավորման համար:*

տեգրացիոն միավորներով չէր կարող ապահովել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անվտանգությունը: Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին, ապա Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները ձգտում էին դեպի ՆԱՏՕ հետևյալ պատճառներով՝

1. համագործակցությունը գրավական էր բացառելու համար ԽՍՀՄ, իսկ 1991թ. հետո ՌԴ ազդեցության հնարավոր վերահաստատումը,
2. տարածաշրջանի պետությունների համար այն զսպում և հակակշիռ էր եվրոպական տերությունների և արդեն իսկ միավորված Գերմանիայի պարագայում,
3. տարածաշրջանի պետությունների համար կարևոր էր ունենալ պատմականորեն բարդ աշխարհաքաղաքական անվտանգության ուժ⁶, ինչն էլ իր հերթին բխում էր ԱՄՆ շահերից ևս՝ տեղում արևմտամետ ուժեր ապահովելու նկատառումով:

ՎՊԿ-ն⁷ 1991թ. մարտից դադարեց գոյություն ունենալուց, և ԽՍՀՄ-ը մնաց առանց դաշնակիցների: Սա անհանգստությունների տեղիք էր տալիս, նամանավանդ որ Արևմուտքը չտապեց լուծարել ՆԱՏՕ-ն: Ընդհակառակը՝ ԱՄՆ-ն և դաշնակիցները համառորեն պնդում էին պահպանել ՆԱՏՕ-ն՝ որպես համաշխարհային անվտանգության և կայունության պահպանման միակ երաշխավոր: Մինչև ժամանակ Փարիզյան խարտիայի պայմաններում վիճահարույց էր արդեն համարվում լուծարված ՎՊԿ-ին հակադիր ՆԱՏՕ-ի և Եվրոպայում ամերիկյան զինված ուժերի գոյությունը: Եվ չնայած առկա տարակարծությանը՝ ՆԱՏՕ-ի դեկլարությունը հաստատակամորեն պաշտպանում էր Դաշինքի պահպանման տեսակետը՝ մոտեցումը հիմնավորելով հետևյալ կերպ՝

- այն ապահովում է պաշտպանությունը սպառնացող վտանգից. թեև այլևս չկար խորհրդային հարձակման վտանգը, այնուամենայնիվ Եվրոպայում դեռևս չէր հաստատվել երկարաժամկետ քաղաքական կարգ,
- կառույցի գործունեության միջոցով լեզվատիմացվում էր ԱՄՆ մասնակցությունը Եվրոպայի անվտանգության ապահովման գործընթացին՝ հավաքական պաշտպանության պարտավորությունների հիմունքով,
- ԵԱՀԽ (1994թ.-ից ԵԱՀԿ) միջնորդությունը և հակամարտությունների կարգավորումը զգում էին ՆԱՏՕ-ի ինտեգրված պաշտպանական կառույցների կարիքը՝ ձգնաժամերի խաղաղ և հաջող լուծման համար⁸:

Սառը պատերազմի ավարտից հետո պարզ դարձավ, որ ՆԱՏՕ-ի՝ ի սկզբանե հռչակած «բարի մտադրությունները» պարզապես արտաքին քողարկում էին: Նույնիսկ ԽՍՀՄ փլուզումից հետո ՆԱՏՕ-ն հակառակորդ էր տեսնում ձգնաժամի մեջ գտնվող ՌԴ-ին՝ նրա կողմից եկող վտանգը ներկայացնելով ՌԴ-ում առկա խառը դրության լույսի ներքո: Արևմուտքին ձեռնտու չէր ՆԱՏՕ-ի վերացումը ՎՊԿ-ի կազմալուծումից հետո, և բռնկի պահպանման ջատագովները ներկայացրին բոլոր հնարավոր փաստարկները՝ վերջինիս գոյությունը վերախմաս-

⁶ *Ասմուս Ռ.*, նշվ. աշխ., էջ 40:
⁷ *Վարշավյան պայմանագրի կազմակերպություն:*
⁸ *Шголь В.*, նշվ. աշխ., էջ 117:

տավորելու համար արդեն իսկ փաստացի միաբնեռ աշխարհակարգի և գլոբալիզացիայի պայմաններում: ՎՊԿ կազմավորումը ՆԱՏՕ-ի գոյության պահպանման պայմաններում հսկայական վնաս էր ԽՍՀՄ անվտանգությանը, քանի որ դարձրեց առավել խոցելի հակառակորդի համար⁹:

ԽՍՀՄ և սոցիալիստական ճամբարի մոտալուտ փլուզման շրջանում Արևմուտքի համար հրամայական էին դառնում ստեղծված իրադրությանը ՆԱՏՕ-ի հարմարեցումը և փոխակերպումը: 1990-1991թթ. սկսվեց Հյուսիսատլանտյան դաշինքի վերաձևակերպման քաղաքականության և ռազմավարության հարմարեցման գործընթացը, որի հիմնական ուղղությունները սահմանվեցին Լոնդոնյան հռչակագրով¹⁰: ՆԱՏՕ-ի Խորհրդի լոնդոնյան գագաթաժողովն ընթացավ (1990թ. հուլիս) Դաշինքի առջև ծառայած հետևյալ մարտահրավերների և խնդիրների համատեքստում՝

1. ռազմաքաղաքական իրադրության փոփոխությունը. Արևմուտքի և Արևելքի միջև լայնամասշտաբ զինված հակամարտության հնարավոր վտանգի վերացմամբ առաջին պլան էր մղվել ներպետական և միջպետական հակամարտությունների խնդիրը, որ, չնայած անմիջականորեն չէր շոշափում ՆԱՏՕ-ի և նրա անդամների անվտանգության հարցը, այնուամենայնիվ առաջ էր քաշում ՆԱՏՕ-ի ռազմավարության վերանայման և անդամների ռազմական ծախսերը, ինչպես նաև զինված ուժերը կրճատելու հարցը,
2. ԱԵՄ (Արևմտաեվրոպական միության) 90-ականների սկզբից սկսած՝ պաշտպանական համագործակցության ակտիվացման միտումները նպաստեցին դաշինքի ներսում շերտավորմանը,
3. դեռևս 1990-ականների սկզբից անվտանգությանը սպառնացող ավանդական և հարաբերականորեն նոր մարտահրավերների և սպառնալիքների առաջացումը, որոնք ՆԱՏՕ-ի՝ որպես ռազմական կառույցի ապագան դրեցին հարցականի տակ¹¹:

Լոնդոնյան հռչակագրում անհրաժեշտ համարվեց Դաշինքի և նրա գործունեության բարեփոխումը, սակայն չնշվեց դրան հասնելու միջոցները և ուղիները: Արևմտյան քաղաքագետների կարծիքով, այն աշխարհը, որ նախատեսում էր այդ փաստաթուղթը, հնարավոր էր միայն ԽՍՀՄ-ի մշտապես թույլ լինելու դեպքում: Իսկ ՆԱՏՕ-ում չկար միասնական կարծիք, թե ինչ մեթոդներով էր պետք իրականացնել ճնշում ԽՍՀՄ-ի վրա: Հռչակագիրն ընդգրկում էր ՎՊԿ պետությունների հետ քաղաքական, ռազմական և անվտանգության ոլորտներում համագործակցություն հաստատելու մասին դրույթ (համագործակցությունը լավագույնս կազմակերպվելու համար առաջարկվում էր ՆԱՏՕ-ում հիմնել նախկին ՎՊԿ պետությունների դիվանագիտական առաքելություններ): Լոնդոնյան գագաթաժողովում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մ. Վերները հայտարարեց, որ իրենք ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի երկրները դիտարկում են որպես իրենց ապագա գործըն-

⁹ *Захаров В., Арешев А.,* նշվ. աշխ., էջ 19:

¹⁰ *Штоль В.,* նշվ. աշխ., էջ 116:

¹¹ *Նույնը:*

կերներ և հնարավոր ընկերներ¹²: Նույնը հաստատվեց նաև ՆԱՏՕ-ի անդամների արտգործնախարարների Կոպենհագենյան հանդիպման ժամանակ (1991թ. հուլիսի 6-7): 1990թ. նոյեմբերի 19-21-ը Փարիզում կայացավ ԵԱՀԽ 34 պետությունների և կառավարությունների ղեկավարների խորհրդակցությունը: Նախօրեին տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի և ՎՊԿ 22 պետությունների ղեկավարների մակարդակով հանդիպում, որի ժամանակ էլ ընդունվեց Նոր Եվրոպայի համար Փարիզի Խարտիան: Խարտիան ամրագրում էր Եվրոպայի բաժանման և առճակատման դարաշրջանի ավարտը: ՆԱՏՕ-ն և ՎՊԿ անդամ պետությունները համատեղ հռչակագրով հայտարարեցին Եվրոպական հարաբերություններում նոր բացված էջի և համագործակցության պատրաստակամության մասին: Փարիզի Խարտիան արտահայտում էր նոր, ժողովրդավարական և միասնական Եվրոպայի տեսլականը, քայլեր ձեռնարկվեցին ԵԱՀԽ-ն՝ որպես Եվրոպայի երկու հատվածների միջև երկխոսության ֆորում օրինականացնելու ուղղությամբ: Խարտիան հիմնվում էր Եզրափակիչ ակտի 10 սկզբունքների վրա: Իրողություններից մեկն էլ այն էր, որ գլոբալ հակամարտության վերացումը հնարավորություն էր տալու Եվրոպային իր զարգացման քաղաքականությունը հիմնելու տնտեսական և արժեքային առավելությունների վրա¹³: Փաստաթղթում ասվում էր, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները ՆԱՏՕ-ի կենսունակությունը համարում էին Եվրոպական անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչ: Նշվում էր, որ Հյուսիսատլանտյան դաշինքը շահագրգռված է Եվրոպական միասնությամբ, սակայն սրան հասնելու և Եվրոպայի առջև ծառայած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է սերտ համագործակցություն Հյուսիսային Ամերիկայի հետ: Նշվում էր, որ Դաշինքի առաջնային խնդիրն էր լինելու նոր ռազմավարական հայեցակարգի մշակումը. ակնհայտ էր, որ ձևավորվող նոր աշխարհակարգի պայմաններում, երբ չկար արդեն Արևելքից արտաքին հարձակման վտանգը, Եվրոպայում զինված ուժերը անհրաժեշտ են ավելի շատ ստեղծված ճգնաժամերը կարգավորելու և անվտանգության սպառնալիքների հակազդելու համար (ներառյալ ահաբեկչությունը և զանգվածային ոչնչացման զենքի տարածումը):

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի՝ ՆԱՏՕ-ի լիակատար անդամակցություն պահանջելու, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետսառըպատերազմյան գործունեության և ռազմավարության հիմնական ուղղությունները որոշակիացնելու հարցում կարևոր եղան 1991թ. երկրորդ կեսին տեղի ունեցող գործընթացները.¹⁴

1. 1991թ. ամռանը պատերազմ սկսվեց Բոսնիայում: Հարավսլավիան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մանրակերտն էր, որտեղ առավել խտացված էին արտահայտվում տարածաշրջանում առկա խնդիրները, հատկապես ազգայնականությունը: Վերոնշյալ տարածաշրջանում էլ առկա էին նման սառը պատերազմին բնորոշ ազգամիջյան հակասությունների երևույթներ, և որպեսզի հնարավոր լիներ խուսափել իրավիճակի հետագա սրումից, կարևորվեց ժողո-

¹² *Захаров В., Арешев А.*, նշվ. աշխ., էջ 24:

¹³ *Парижская хартия для Новой Европы*, www.osce.org/ru/mc/39520?download=true.

¹⁴ *Մամուլ Ռ.*, նշվ. աշխ., էջ 40:

վրդավարական ինստիտուտների կազմակերպումը և Դաշինքի հետ սերտ համագործակցությունը՝ որպես անվտանգության երաշխիք:

2. 1991թ. ամռանը ԽՍՀՄ-ում տապալվեց հետադիմական կոշտ գծի ուժերի հեղաշրջման փորձը, որն իր ազդեցությունը ունեցավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վրա. նախ՝ ակնհայտ դարձավ, որ իրենք էլ ապահովագրված չեն հեղաշրջման նման փորձերից, և երկրորդ՝ ԽՍՀՄ փլուզումը 1991թ. երկրաշարժ առաջացրեց աշխարհաքաղաքական ծրագրերում, դադարեցրին իրենց գոյությունը արտաքին ու ներքին խորհրդային կայսրությունները (խոսքը այստեղ ՎՊԿ և ԽՍՀՄ-ի մասին է): Արդյունքը եղավ այն, որ ՆԱՏՕ-ի և ԽՍՀՄ միջուկը հանդիսացող Ռուսաստանի միջև առաջացան նորանկախ մի շարք պետություններ¹⁵: ՎՊԿ լուծարումն ազդեց (1991թ. մարտի 31) Եվրոպայում ընթացող քաղաքական գործընթացների, մասնավորապես Վիեննայում ընթացող բանակցությունների և 1990թ. նոյեմբերի 19-ին Փարիզում ՆԱՏՕ-ի և ՎՊԿ 6 անդամների միջև ստորագրված ԵՍՁՌԻ պայմանագրի հետագա ճակատագրի վրա¹⁶:

1991թ. նոյեմբերի 7-8-ը Հռոմում ընդունվեց ՆԱՏՕ-ի նոր ռազմավարության հայեցակարգը (Հայեցակարգ-91)՝ որպես ստեղծված նոր քաղաքական իրողությունների հարմարվելու հիմնական սկզբունքների ամբողջություն, որի համաձայն Արևելքից լայնամասշտաբ հարձակմանը պատասխանելու նախապատրաստությունը այլևս չէր համարվում Դաշինքի առաջնային նպատակներից: Դրան հակառակ առաջին պլան են մղվում ազգամիջյան և տարածքային հակամարտությունները: Այժմ արդեն Դաշինքի գլխավոր խնդիրներն են համարվում ճգնաժամային իրավիճակների կառավարումը, երկխոսության ընդլայնումը ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող պետությունների հետ և անվտանգության խնդիրների լուծման համատեղ որոշումների ու քայլերի ձեռնարկումը համագործակցության հիմքերի վրա:

Փաստաթղթի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հիմքում ընկած է «ճկուն արձագանքման» ռազմավարությունը: Դաշինքի գործունեության հիմնաքարային սկզբունքներին՝ կոլեկտիվ պաշտպանություն (ենթադրում էր ռազմական ներուժի մշտական աճ), երկխոսությունը (ենթադրում էր Եվրոպայում լար-

¹⁵ *Ասմուս Ռ.*, նշվ. աշխ., էջ 45:

¹⁶ *Минасян С.* Мораторий на ДОВСЕ и Южный Кавказ, "Россия в глобальной политике". № 3, Май- Июнь 2008, www.globalaffairs.ru/number/n_10949; ՎՊԿ, իսկ հետո ԽՍՀՄ կազմալուծումից բլոկների միջև առճակատման վերացումը Եվրոպայում և հետագայում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների մուտքը ՆԱՏՕ ստիպեցին վերանայել ԵՍՁՌԻ՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագրի մի շարք դրույթներ: Նախկին ՎՊԿ պետությունները մտան ՆԱՏՕ-ի կազմ իրենց զինված ուժերով և սպառազինությունով, սակայն նրանց դեպքում էլ շարունակում էր գործել բլոկային սահմանափակումները «հին ԵՍՁՌԻ-ով»: Դժգոհ էր նաև ՌԴ-ն՝ սահմանային զինված ուժերի և սպառազինության կրճատումից և ՆԱՏՕ մտած, սակայն ԵՍՁՌԻ պայմանագրին չմիացած հարևան պետություններում «գորշ տարածքների» առաջացումից:

վածության թուլացմանն ուղղված կուրս՝ երբեմն նույնիսկ ուժի կիրառմամբ)¹⁷, այսինքն՝ բազմակողմ կապերի զարգացում Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային պետությունների հետ, որը, սակայն, չէր բացառում ՆԱՏՕ-ի կողմից ուժի կիրառումը այս պետությունների նկատմամբ: Համաձայն այս հայեցակարգի՝ Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրները Դաշինքի կողմից ներառվեցին կենսական շահերի գոտի: Նրանց հետ հարաբերությունները ՆԱՏՕ-ն սկսեց կառուցել երկկողմ հարաբերությունների և 1994թ. ընդունված «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Համագործակցության սկզբունքը ենթադրում էր նաև փոխգործակցություն ԵԱՀԽ, ԵԽ և ԱԵՄ շրջանակներում¹⁸:

Հայեցակարգը նոր ճգնաժամային իրավիճակների առաջացման աղբյուր էր դիտարկում տարածքային պահանջները, ազգային և կրոնական հակասությունները, միջազգային սահմանախախտումները, ԶՈՁ տարածումը և երկակի նշանակության տեխնոլոգիաների կիրառումը, ներպետական իրադրության կտրուկ սրումը՝ կապված անցկացվող սոցիալ-տնտեսական ռեֆորմների հետ, առանձին երկրների կազմալուծումը, միջազգային բեռնատար հոսքերի, կենսական ռեսուրսների, հեռահաղորդակցության և տեղեկատվական հոսքերի խախտումը: Հայեցակարգ – 91-ում ՆԱՏՕ-ի գործունեության հիմնական ուղղություններից էր համարվում ռազմաքաղաքական ճգնաժամերի առաջացման և զարգացմանն ուղղված կանխարգելիչ քաղաքականությունը: Ուստի և մշակվեց «ճգնաժամերի կառավարման» կոնցեպցիան, որն առաջարկում էր ճգնաժամերի սկզբնավորման և առաջացման նախնական փուլերում կիրառել վերջիններիս կառավարման նոր մեթոդ՝ կանխարգելիչ դիվանագիտությունը (preventive diplomacy): Սրա շնորհիվ հնարավորություն էր ստեղծվում հակամարտող կողմերի միջև թուլացնելու լարվածությունը, իսկ խաղաղ միջոցներով կարգավորելու անհնարինության դեպքում նախատեսվում էր Դաշինքի Միացյալ զինված ուժերի համապատասխան զորքերի կիրառում, ինչպես ՆԱՏՕ-ի սահմաններում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ վերջինիս կազմի մեջ չմտնող, ԳՀԽ ծրագրում մասնակցող պետությունների զորախմբերի հետ:

Այսպիսով, Հայեցակարգ – 91-ում տեղ գտան ՆԱՏՕ-ի քաղաքականության հետևյալ սկզբունքային փոփոխությունները՝

1. հայեցակարգը հիմնվում էր անվտանգության առավել լայն հասկացության վրա՝ կարևորելով հավաքական բնույթի պաշտպանության անհրաժեշտությունը,
2. շեշտադրվում են ՆԱՏՕ-ի գործունեության քաղաքական, տնտեսական, մշա-

¹⁷ *Штоль В.*, նշվ. աշխ., էջ 127: Հայեցակարգ – 91-ի դոկտրինալ պարամետրերը զարգացան ՆԱՏՕ-ի գործունեության այս երկու սկզբունքների վրա հիմնված «Հարմելի դոկտրինի» շրջանակներում: Նշենք, որ «Հարմելի դոկտրինը» ՆԱՏՕ-ի կողմից պաշտոնապես չէր ընդունվել, այլ 1967թ. ՆԱՏՕ-ի Խորհրդի կողմից ընդունված և դաշինքի ղեկավար շրջանակների մոտ մտածողության և մոտեցումների փոփոխությունը արտահայտող մի փաստաթուղթ էր, որ կրում էր «Միության ապագա խնդիրները» և ներկայացվել էր Բելգիայի արտգործնախարար Հարմելի կողմից:

¹⁸ *Ասմուս Ռ.*, նշվ. աշխ., էջ 39:

կուսային, սոցիալական բաղադրիչները, այսինքն՝ միայն ռազմականը չէ, որ համարվում է «ընդհանուր անվտանգության» բաղադրիչ,

3. այն համապատասխանում էր Դաշինքի՝ առճակատումից համագործակցության անցնելու իրականությանը՝ որպես երաշխավորված խաղաղության բաղադրիչ¹⁹:

Ընդգծելով հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքների նկատմամբ՝ Հայեցակարգ-91-ը պահպանեց դաշինքի նախկին քաղաքական նպատակները՝ կանխելով դրանց բաժանումը Եվրոպայում անվտանգության այլ կառույցների միջև (ԵՄ, ԵԱՀԽ, ԱԵՄ):

Հայեցակարգ-91-ը որոշում էր անվտանգության ապահովման հիմնական նոր մոտեցումները՝ հիմնվելով երկխոսության, համագործակցության և հավաքական պաշտպանության վրա: Նրանում ակնհայտ էին հետևյալ առաջնային դրույթները՝

1. Եվրոպայում կայունության և անվտանգության անհրաժեշտ հիմքերի ստեղծումը, դեմոկրատական ինստիտուտների կայացումը, վեճերի խաղաղ լուծումը, պայքար ուժի սպառնալիքի կամ վերջինիս կիրառման դեմ,
2. ՆԱՏՕ-ի՝ դաշնակիցների համար կենսական կարևորություն ներկայացնող հարցերի քննարկման համար տրանսատլանտյան ֆորում հանդես գալը,
3. դաշինքի անդամ պետությունների պաշտպանությունը և դրանց նկատմամբ ագրեսիայի զսպումը,
4. Եվրոպայում ռազմավարական բալանսի պաշտպանությունը:²⁰

Իրավամբ, ինչպես նշել էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Օքսմանը, Լոնդոնի (1990թ.) և Հոմի (1991թ.) գագաթաժողովներում առաջադրվեցին ՆԱՏՕ-ի հետագա գործունեության հիմնական գծերը.

1. ՆԱՏՕ-ն ընդունեց սպառազինության նոր ռազմական ստրատեգիա՝ վերակառուցելով հրամանատարական կառույցները և սեփական ուժերը, հաշվի առնելով Սառը պատերազմի ավարտից հետո առաջացած անվտանգության սպառնալիքները: Այն հրաժարվեց ծանր սպառազինությունից և կրճատելով Եվրոպայում առկա միջուկային զենքը՝ հրաժարվեց նաև առաջնային տեղակայման ուժերի օգտագործումից: Սրա փոխարեն ոչ միջուկային ուժերն ընդլայնեցին իրենց ճկունությունը և շարժունակությունը, ինչը հնարավորություն կտար արագորեն արձագանքել ճգնաժամերին և դրանց կարգավորմանը՝ զուգահեռաբար աջակցելով ՆԱՏՕ-ի որևէ անդամի վրա հարձակման անդրադարձմանը:
2. ՆԱՏՕ-ն հիմնեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը՝ անվտանգության բնագավառում ՎՊԿ երկրների հետ խորհրդակցությունների անց-

¹⁹ *Кузнецов Д. Хрестоматия, Современные международные отношения, Книга 1, Благовещенск, 2014, стр. 77.*

²⁰ *Захаров В., Арешев А., նշվ. աշխ., էջ 47: Հայեցակարգ – 91-ը ներառում էր նաև այլ կարևոր դրույթներ՝ յուրաքանչյուր երկրի՝ սեփական անվտանգությունը ապահովելու իրավունքի ճանաչում, զինված ուժերի՝ որպես ծայրահեղ միջոցի կիրառման փաստի միանման ընկալում, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների զինվորական ռազմավարության փոխկապակցված բնույթի ճանաչում: Հայեցակարգը հաստատեց նաև «միջուկային զսպման» դրույթը՝ որպես պատերազմ կանխարգելող և կայունացնող բաղադրիչ:*

կացման, գործողությունների կոորդինացման և փոխադարձ վստահության համար,

3. ՆԱՏՕ-ն հայտարարեց, որ անվտանգության նոր սպառնալիքները գալիս են այն երկրներից, որոնք դուրս են գտնվում ՆԱՏՕ-ի ստեղծման հիմքը հանդիսացող 1949թ. ապրիլի 4-ին ստորագրված Վաշինգտոնյան պայմանագրով նախատեսված Դաշինքի պատասխանատվության գոտուց²¹: Այս կերպ լուծված կարելի է համարել կազմակերպության գործունեության աշխարհագրության հետագա հարցը: Բացի այդ, ՆԱՏՕ-ն խաղաղության պահպանության համար առաջարկությամբ հանդես եկավ ԵԱՀԽ-ի հետ համատեղ գործելու: Ճգնաժամերի կարգավորման համար ենթադրվում է համագործակցություն ծավալել ՄԱԿ-ի, ԵԱՀԽԺ-ի, ԵՄ-ի, ԱԵՄ-ի և ԵԽ-ի հետ: ՆԱՏՕ-ի դերը այստեղ կարևորվում է նրանով, որ ունի զինված ուժեր՝ քաղաքական և ռազմական համագործակցության հմտություններով՝ անվտանգության սպառնալիքներին ճկուն արձագանքելու համար:

4. ԱՄՆ-ն, չնայած իր բյուջետային աճող խնդիրներին, շարունակելու էր պահպանել իր անդամակցությունը²²:

1990-ական թվականներին ընդունված Ռազմավարության հայեցակարգերը, ի տարբերություն նախկինում ընդունվածների, չէին վերաբերում որոշակի ռազմաքաղաքական ասպեկտների, այլ հռչակում են նոր հայեցակարգային մոտեցում հետսառըպատերազմյան Եվրոպայում և ամբողջ աշխարհում: Եթե Արևմտյան բլոկը չէր կարող նույնիսկ պատկերացնել Սառը պատերազմի նման հանգուցալուծումը, ապա տեսականորեն ՆԱՏՕ-ի ղեկավարները կազմակերպության ստեղծման օրից ձգտել են հասնել սրան՝ սկզբնապես լրացնելով և ընդլայնելով իրենց ռազմավարական դոկտրինաները, ապա և օգտագործելով ՎՊԿ կազմալուծման (1991թ. մարտ) և Բելովեժյան համաձայնության (1991թ. դեկտեմբեր) միջև ընկած ժամանակահատվածը՝ հաստատելու համար Նոր ռազմավարության հայեցակարգը 1991թ. նոյեմբերին: Հայեցակարգ – 91-ը ուղղորդված էր նախկին ՎՊԿ պետությունների շրջանում նոր կառույցների և գաղափարախոսության ամրապնդմանը: Այս երկրները չպետք է ժամանակ ունենային ստեղծելու իրենցը: ՆԱՏՕ-ի ղեկավարությունը, սա քաջ գիտակցելով, նախ պատրաստում էր ՎՊԿ պետություններին իրենց զարգացման վեկտորի փոփոխությանը՝ ժամանակ չկորցնելով փաստացիորեն օրինականացնելու այս գործընթացը:

1991թ. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ ՆԱՏՕ-ին դիմեցին իրենց ասոցացված անդամի կարգավիճակ տալու համար: Ի պատասխան 1991թ. դեկտեմբերի 20-ին՝ ՆԱՏՕ-ն արևելաեվրոպական 9 պետությունների հետ հիմնադրեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը (ՀԱՀԽ)

²¹ *Североатлантический договор, Вашингтон, Федеральный округ Колумбия, 4 апреля 1949 г.; 1949թ. ապրիլի 4-ին պայմանավորվող կողմերը իրենց նպատակն էին համարում կայունության ամրապնդումը և բարեկեցության բարձրացումը Հյուսիսատլանտյան տարածաշրջանում (այն ներառում էր ԱՄՆ, Կանադան և արևմտյան համարվող Եվրոպան՝ մինչև ԽՍՀՄ և ՎՊԿ կազմալուծումը), www.nato.int/cps/ru/natolive/official_texts_17120.htm:*

²² *Шголь В., նշվ. աշխ., էջ 122:*

բազմակողմ խորհրդատվական մարմին, որի շրջանակներում էլ մշակվելու էր համագործակցությունը ՆԱՏՕ-ի և նախկին ՎՊԿ պետությունների միջև: ԽՍՀՄ փլուզումից հետո նրանց շարքերը համալրեցին նախկին խորհրդային պետությունները, ինչպես նաև Ալբանիան: ՀԱՀԽ գործունեության մեջ գլխավոր ուշադրությունը դարձվում էր բազմակողմ քաղաքական երկխոսությանը՝ հիմնված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների և ՆԱՏՕ-ի միջև անդամակցության աստիճանին չհասնող, սակայն և առավել սերտ համագործակցության վրա²³:

Սառը պատերազմի ավարտը հանգեցրեց որակական մի շարք փոփոխությունների, որոնցից էին Յալթա-Պոտսդամյան համակարգի վերացումը, ԽՍՀՄ անկումը և երկրներ աշխարհակարգից անցումը միաբնեռի, Եվրասիայի կենտրոնում խորը ֆրագմենտացիայի և մայրցամաքում նոր պետությունների առաջացումը՝ աշխարհաքաղաքական պոտենցիալով: Շտրիխիվ Ս. Գորբաչովի վարած քաղաքականության և ԽՍՀՄ-ի փլուզման մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների՝ Արևմուտքը իր համար բավական անսպասելիորեն հաղթող դուրս եկավ Սառը պատերազմում: ԽՍՀՄ և սոցիալիստական ճամբարի փլուզումից, ինչպես նաև Չմիացման շարժման հեղինակության սպառումից հետո մնաց մեկ ուժային կենտրոն՝ ԱՄՆ, որն էլ իր ազգային շահերի պաշտպանության համար հիմնվում էր արդեն գլոբալ դաշինքների և կոալիցիաների վրա, որոնցից մեկն էլ հենց ՆԱՏՕ-ն է:

1991թ. նոյեմբերին ՆԱՏՕ-ի՝ Հռոմում կայացած գագաթնաժողովի շրջանակներում Դաշինքը բացահայտեց իր հետսառըպատերազմյան նոր տեսակը՝ հաստատելով Նոր ռազմավարական հայեցակարգ և հիմնելով ՀԱՀԽ-ն նախկին խորհրդային բլոկի պետությունների հետ կապ հաստատելու համար: ԽՍՀՄ փլուզումը առաջացրեց նորանոր փոփոխությունների կարիք: 1991թ. Հայեցակարգն ստեղծվեց այնպիսի աշխարհի համար, որտեղ դեռ գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, և ՆԱՏՕ-ի գործողությունների նպատակներից մեկն էլ հենց հնարավոր վտանգի զսպումն էր, որ տեղ էր գտել հայեցակարգում առավել մեղմ ձևակերպումներով: Այս ռազմավարական հայեցակարգը ամրագրեց անցումը առճակատման ռազմական ստրատեգիայից՝ լայնածավալ անվտանգության ապահովմանը: Մա ռազմավարություն էր առանց հակառակորդի, քանի որ այլևս չկար ԽՍՀՄ առաջնորդությամբ գործող ՎՊԿ-ն: Հայեցակարգ-91-ը հրապարակվեց ցույց տալու համար ՆԱՏՕ-ի գործողությունների թափանցիկությունը, արժանահավատությունը և համագործակցելու պատրաստականությունը: Չնայած ընդլայնումը Դաշինքի հայեցակարգում առաջնային խնդիր չէր, այնուամենայնիվ չէր կարելի բացառել նմանօրինակ զարգացումները ապագայում:

²³ *Штоль В. Армия «Нового мирового порядка», Москва, 2010, стр. 482; 1997թ. ՀԱՀԽ վերաձևակերպվեց որպես Եվրասիայի գործընկերության խորհուրդ (ԵԱԳԽ):*

СТРАТЕГИЯ НАТО ПО НОВОМУ МИРОВОМУ ПОРЯДКУ ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ В 1989-1992 гг.

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

В статье рассматривается стратегия НАТО по новому мировому порядку после холодной войны в 1989-1992 гг. Особенно подчеркиваются начало урегулирования отношений между СССР и США, состоявшиеся встречи и переговоры между стран ОВД в последнее время их существования и НАТО, а также в рамках НАТО и впоследствии представление Новой стратегической концепции альянса, содержащая стоящие перед НАТО приоритеты и вызовы. В статье обосновываются определяющие факторы и причины стремления полноправного членства НАТО стран Центральной и Восточной Европы и направления деятельности стратегии НАТО после холодной войны. В статье делается вывод, что Концепция-91, выдвинутая усилиями руководителей НАТО, должна была подготовить почву для трансформации и адаптации НАТО в новом мировом порядке. Такой акцент дал возможность расширить круг возможных угроз для демонстрации возможного применения сил в традиционной зоне ответственности, в дальнейшем дающие возможность для мешательств во внутренние дела других стран.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Հայրապետյան Աստղիկ Մերգոյի – ՀՀ Քննչական
կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժին,
E-mail: astghhayrapetyan@gmail.com*

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայոց առաջնային արտադրության մշակույթում առանձնահատուկ տեղ են զբաղում տնայնագործությունն ու արհեստները: Չնայած նրան, որ համաձայն դասակարգման՝ դրանք դիտվում են որպես օժանդակ տնտեսական զբաղմունքներ, սակայն արհեստները միշտ բարձր դիրք են զբաղել ու կարևոր դեր խաղացել հայ ժողովրդի կյանքում: Ծագելով դեռևս նեոլիթյան դարաշրջանում, երկրագործության ու անասնապահության հետ զուգընթաց զարգանալով ու կատարելագործվելով՝ արհեստները հասել են ընդհուպ մինչև մեր օրերը:

Արհեստները, կենտրոնանալով քաղաքներում, բարձր զարգացման հասան արդեն միջնադարում, իսկ XVII դարում առավել կատարելագործվեցին մասնագիտանալով ու ճյուղավորվելով: Պատմականորեն քաղաքների թիվը ավելի մեծ էր Արևմտյան Հայաստանում, ուստի պատահական չէ, որ արհեստներն էլ առավել զարգացած էին այս տարածաշրջանում:

Հայագրի արհեստավորները զգալի դեր են կատարել նաև Փոքր Ասիայի արհեստների զարգացման գործում: Դեռևս սելջուկների ժամանակ հայերի ձեռքում էր գտնվում մետաղամշակությունը, և առհասարակ տեղական արդյունաբերության մեջ մեծ էր նրանց տեսակարար կշիռը: Հենց այս պատճառով էլ, սկսած սուլթան Սուհամնադ II-ի ժամանակներից, թուրք ղեկավարող շրջանները Արևմտյան Հայաստանի զանազան մասերից պարբերաբար հայ արհեստավորներին դեպի Կ. Պոլիս էին քշում:¹

XVI –XVII դարերում Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները վերածվել էին ռազմական ամրոցների ու քաղաքացիական վարչության կենտրոնների: Արհեստագործական արտադրությունը, որը կարգավորվում ու տնօրինվում էր պետության կողմից, պետք է նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները: Արևմտյան Հայաստանում նշված դարերում առավելապես զարգացած էին արհեստագործության հետևյալ ճյուղերը՝ մետաղամշակման հետ կապված արհեստները, գործվածքների արտադրությունը, գորգագործությունը, կաշվի արդյունագործությունը, բրուտագործությունը և քարակոփությունը:

Հայ արհեստավորները բազմաթիվ բնագավառներում չունեին իրենց մրցակիցները. առաջին հերթին պետք է հիշատակել ճարտարապետներին, շինարար վարպետներին, քարակոփներին և որմնադիրներին, ովքեր դարեր շարունակ

¹ 1473 թ. Դերջանում Ուզուն-Հասանին հաղթելուց հետո սուլթան Սուհամնադ Ֆաթիհը Էրզրումի, Երզնկայի, Տիվրիկի, Սեֆաստիայի, Դիարբեքիի և այլ վայրերի հայ արհեստավորներին հավաքագրեց ու բռնությամբ տեղափոխեց Ստամբուլ: Հետագայում՝ 1479, 1514, 1534 թվականներին, տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներ՝ մայրաքաղաքում վերաբնակեցնելու նպատակով: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳՍ հրատ., հ. 4, Եր., 1972, էջ 288-289:

մեծապես մասնակցել են օսմանյան երկրի շինարարական ձեռնարկներին: Նրանք կառուցել են հանրային շենքեր, պալատներ, մզկիթներ:

Հայերի կողմից է կառուցվել Հայդար Փաշա-Բաղդադ երկաթուղու կարևոր մասը: Պետական շինարարությունը՝ արքունի ճարտարապետությունը, սերնդեսերունդ գտնվում էր Պալյան գերդաստանի պատասխանատվության տակ: Այս բացառիկ ընտանիքի 9 անդամները, շուրջ 2 դար իրար հաջորդելով, վարեցին արքունի ճարտարապետի պաշտոնը և Կոստանդնուպոլիսը զարդարելով հրաշակերտներով՝ իրենց բարձր արվեստի կնիքը թողեցին սուլթանների մայրաքաղաքի վրա:

Գորգագործությունը ևս զարգացել է հայերի միջոցով: Կայսրության գանազան քաղաքներում՝ Սեբաստիայում, Կեսարիայում և այլուր, հայերի գործած գորգերը մեծ համբավ ունեին համաշխարհային շուկայում: 19-րդ դարից սկսած՝ նրանք զարկ տվեցին գորգի արտադրությանը:

Երկրում մեծ հռչակ ունեին հայ զինագործ վարպետները: Կարնեցի զինագործները դարեր շարունակ զենք են մատակարարել օսմանյան բանակին: Կարինում մեծ հռչակ ունեւր զինագործների Վեմյան գերդաստանը: Քիչ չեն եղել արքունի հայ զինագործները, ովքեր զենքեր էին պատրաստում սուլթանների համար: Նրանցից շատերի գործերն այսօր պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում:

Կային արհեստներ, որոնք կարծես թե բացառապես հայերին էին վերապահված: Դրանցից մեկը, օրինակ, աստղձագործությունն էր և, մանավանդ, կահույքագործությունը: XIX դարի 60-ական թվականներին նշանավոր էր կահույքագործների Քեմհաճյան գերդաստանը: Գալուստ Քեմհաճյանն առաջինն էր կայսրությունում, ով Կոստանդնուպոլսում հիմնեց կահույքի գործարան: Այստեղ արտադրված որակյալ, նրբաձաշակ կահույքը զարդարում էր կայսերական պալատները: Կահույքագործության մեջ Քեմհաճյան ընտանիքը բացառություն չէր: Հետագայում այդ գործին զարկ տվեցին ուրիշ հայ վարպետներ՝ հիմնելով փայտամշակման և կահույքի տարբեր գործարաններ:

Խեցեգործությունը կայսրություն մուտք է գործել XV դարում Քյութահիայում հաստատված հայերի կողմից: Պարսկաստանից գաղթած հայ արհեստավորները զարգացման նոր որակ էին տվել հախճապակու արտադրությանը: Հայ վարպետները հետամուտ եղան և կարողացան յուրացնել եվրոպական, առանձնապես ֆրանսիական կիրառական այս արվեստի նորությունները՝ իրենց արտադրանքը մրցունակ դարձնելով եվրոպական շուկայում: 1914 թ. Քյութահիայում գործող հախճապակու երեք արտադրություններն աշխատում էին Լոնդոնի և Փարիզի շուկաների համար:

Հին ժամանակներից ի վեր հայերի նախընտրած արհեստներից էր ոսկերչությունը: Ոսկերչության կարևոր կենտրոններից էին Կոստանդնուպոլիսը, Վանը և Կարինը, որոնք հայտնի էին դարձել իրենց ոսկերիչներով: XVIII և XIX դարերում Կոստանդնուպոլսի ոսկերիչների դասը գրեթե ամբողջովին բաղկացած էր հայերից: 1806 թվականի սուլթանական մի հրովարտակում հիշատակվող

տասնյոթ լավագույն վարպետ ոսկերիչներից միայն մեկն էր հույն: Հայ արծաթագործների, ոսկերիչների և ակնագործների արտադրանքն իր որակով գերազանցում էր եվրոպականին: Հայ ոսկերիչները միաժամանակ թանկարժեք քարեր, հատկապես ադամանդ մշակող լավագույն արհեստավորներն էին: Հայերն այս արհեստի սկզբնավորողներն էին երկրում: Ադամանդ մշակող հայ վարպետները չէին զիջում Հոլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի իրենց արհեստակիցներին:

Ժամագործության մեջ հայերը նույնպես առաջնակարգ դիրքում էին: Հայ ժամագործների մեջ նշանավոր էր մեծանուն երգահան Տիգրան Չուխաճյանի հայրը՝ Գեորգ Չուխաճյանը, ով սուլթան Մեջիդի արքունի ժամագործապետն էր: Նա հնարել է երգող ժամացույց: Իր վարպետությամբ հայտնի էր նաև ժամագործ Մկրտիչ Գալֆայանը, ում հնարած մեծ ժամացույցը լարվում էր տասը տարին մեկ անգամ: Նա մեծ հռչակ է ունեցել նաև որպես ոսկերիչ, պատրաստել է օսմանյան զինանշանը: Եղել է սուլթան Մահմուդ Բ-ի ոսկերիչը:

Զիլճյան գերդաստանի անդամները շուրջ 3 դար բարձրորակ ծնծղաներ են պատրաստել և հռչակվել ամբողջ աշխարհում: XIX դարում Քերովբե Զիլճյանը Անգլիայում ներկայացրել է իր ծնծղաները: Ավստրիացի երգահան և խմբավար Յոհան Շտրաուսը պատվիրել է այդ ծնծղաներից՝ նշելով, որ դրանց երևան գալով՝ լրացրել է իր նվագախմբի հարվածային գործիքների ակնհայտ պակասը: Զիլճյանները 1914թ. ունեին ծնծղայագործության երկու գործարան: Նրանց պատրաստած ծնծղաներն իրենց որակով գերազանցել են եվրոպականին թե՛ իրենց հնչողությամբ և թե՛ դիմացկունությամբ: «Զիլճյան» փորագրությունը կրող ծնծղաներն այսօր գործածվում են աշխարհի բազմաթիվ սիմֆոնիկ, փողային և էստրադային նվագախմբերում:

Կոշկակարությունը և դերձակությունը նույնպես հայերի նախասիրած արհեստներից էին, որոնք զարգացած էին Կ.Պոլսում, Երզնկայում և երկրի այլ քաղաքներում: Կարևոր հայ դերձակներն առաջնակարգ էին Թուրքիայում: Նրանք էին կատարում օտար վաճառականների և նույնիսկ կառավարության պատվերները: Եվրոպական հագուստները երկրի քաղաքներ մուտք են գործել հայերի և հույների միջոցով: XX դ. սկզբին հայերն էին անգլիական նորաձևության տարածող վարպետները:

Հայ կինը ևս իր բաժինն է բերել կայսրության մեջ արհեստների զարգացման գործին: Հայ կնոջ ճաշակն ու ստեղծագործելու ձիրքն ի հայտ են եկել ասեղնագործության և ժանյակագործության մեջ: Եվրոպան այս աշխատանքները ճանաչում է հայկական ժանյակ՝ «տանթել արմենիեն» անվանումով: Այդ ժանյակները զարդարում էին սուլթանական հարեմի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կանանց հագուստները:

Գեորգ, Ստեփան և Վիչեն Աբդուլլահ եղբայրները եղել են օսմանյան լուսանկարչության հիմնադիրները: Նրանք արքունի լուսանկարիչներն էին, որոնց վարկը շատ բարձր էր սուլթանի մոտ: Աբդուլլահների մոտ էին լուսանկարվում Կոստանդնուպոլիս ժամանած եվրոպական երկրների մեծանուն այրերը:

Թե՛ մայրաքաղաքում և թե՛ երկրի կենտրոնական քաղաքներում գրեթե ամբողջովին հայերն էին լուսանկարիչները, բժիշկները, դեղագործները, փաստաբանները և ազատ մասնագիտության այլ ներկայացուցիչները: Ինչպես ռուս պատմաբան Գոլոբորոտկոն է վկայում, քաղաքներում առանց հայերի չէր կարող գոյություն ունենալ տեխնիկայի, արվեստի, գիտության, արհեստագործության որևէ ճյուղ:

Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում հայերի գրաված դիրքի մասին վկայում է հայերի 1915թ. տեղահանության և կոտորածների ակնաստես Յոհաննես Լեփսիուսի մի նկարագրություն. «Հայերի տեղահանությունից հետո դատարկված բնակավայրերում արդեն, մի քանի բացառություններից բացի, ո՛չ որմնադիր էր մնացել, ո՛չ երկաթագործ, ո՛չ հյուսն, ո՛չ ատաղձագործ, ո՛չ բրուտ, ո՛չ դերձակ, ո՛չ կոշկակար, ո՛չ ոսկերիչ, ո՛չ դեղագործ, ո՛չ փաստաբան: Չկար այլևս մեկ անձ, որ զբաղվում էր ազատ մասնագիտություններով և արհեստով»²:

Այսպիսով, արհեստները, այլ զբաղմունքներն ու ազատ մասնագիտությունները քաղաքային հայ բնակչության հիմնական միջոցն էին: Մակայն, բացի կենսապահովման առաջնային գործառույթից, արհեստներն ունեն նաև էթնիկ ինքնության պահպանման գործառույթ, որի դերն ու նշանակությունը հատկապես վառ դրսևորվեց հայոց Մեծ եղեռնի տարիներին ու հատկապես դրանից հետո, երբ աշխարհասփյուռ հայ ժողովուրդն իր գոյությունը կարողացավ պահել ու մեջքը շտկել հենց արհեստներին տիրապետելու շնորհիվ: Ցեղասպանության համատեքստում արհեստների դերն ու նշանակությունը դիտարկելիս հստակ տարանջատվում է երկու իրողություն. արհեստը՝ որպես ֆիզիկական բնաջնջումից փրկվելու միջոց զանգվածային կոտորածների ժամանակ և որպես գոյությունը պահպանելու եղանակ՝ Մեծ եղեռնից հետո:

Նախ անդրադառնանք առաջին իրողությանը: Ինչպես նշվեց, դեռ դարեր առաջ աշխատող ձեռքերի, հատկապես արհեստավորների նկատմամբ եղած պահանջարկը մեղմացրել է տեղացի թուրքերի հայաջինջ մոլուցքը: Այս երևույթը հայտնի է դեռ Օսմանյան Թուրքիայի ձևավորման ու կայացման տարիներից, ինչի մասին խոսվեց վերևում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ երիտթուրքերն իրականացնում էին իրենց հայաջինջ քաղաքականությունը, ողջ մնացած տղամարդկանց մի փոքր մասը կարողացավ փրկվել շնորհիվ իր արհեստավարժությանը: Բերենք մի քանի օրինակներ ականատեսների վկայություններից: Գևորգ Զուլայանն իր «Գրվածք սփյուռքում արևմտահայերու զբաղեցրած արհեստներու մասին» ձեռագիր աշխատության մեջ հիշում է. «1915 թվին մեր հարազատներից հորեղբորս, մորեղբորս ընտանիքներով մեր քարավանից բաժանեցին և նրանց քշեցին դեպի Միսիա: Դամասկոսի մոտերքը կարավանը կանգ կառնե: Այդ ժամանակ այսպիսի մի բարեհոգություն, որ թուրք և գերմանացիներից հրաշք պետք էր սեպել, և կամ թե շատ խիստ կարիք ունեին արհեստավոր մարդկանց համար, և մի հրաման կուգա, որ այդ կարավանում արհեստավոր

² Չերքեզյան Գ., Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը, Եր., 1986, էջ 21:

մարդկանց իրենց ընտանիքներով բերվի Շամ՝ Սուրիո մայրաքաղաք և արհեստավոր ընտանիքները կջոկվեն ոչ արհեստավոր ընտանիքներուց: Անշուշտ իրենք ալ չգիտեին, թե լավ են անում, թե ոչ, բայց և այնպես այդ արհեստավորները իրենց ընտանիքներով ողջ մնացին մինչև պատերազմի վերջը, շնորհիվ իրենց արհեստին, և ողջ ալ վերադարձան պատերազմից հետո, իսկ արհեստավոր չեղողներին քշեցին դեպի Ռաքքա և այնտեղից էլ ուրիշ քարավաններով տարան մինչև Տերզորի անապատները: Ահա արհեստ գիտենալը ինչպես օգնեց այդ մարդկանց»³:

Այնուհետև նա մանրամասն ներկայացնում է նաև իր դերձակ հոր փրկության պատմությունը, որը շնորհիվ իր արհեստավարժության ազատվում է տաժանակիր աշխատանքներից ու մինչև պատերազմի վերջ մնում հայրենի Դարդանեղ քաղաքում:

Նույնպիսի վկայություն ունենք նաև Այնթապից: «Այնթապի հայերը քարտվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Սիրիայի հարավային մասերը, Պաղեստին և դեպի Դեր Զոր: Տեղահանության չենթարկվեցին այն փոքրաթիվ հայերն ու նրանց ընտանիքները, որոնք՝ որպես արհեստավոր, բժիշկ և այլն, օգտակար էին բանակին կամ աշխատում էին ամերիկյան հաստատություններում»⁴:

Արհեստների՝ որպես սպանդից փրկվելու գործոնի մասին վկայում է նաև Կարապետ Չերքեզյանն իր «Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը» գրքում: Խոսելով 1919-20 թթ. հույն-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրադրության մասին՝ նա գրում է. «Մինչ այդ տեղական թուրքական իշխանությունը ենթադրելով, որ հայերը կարող են անցնել հույների կողմը և օգնել հունական զորքին, քաղաքի 18-50 տարեկան բոլոր հայ տղամարդկանց արքայազն Փոքր Ասիայի արևելքում գտնվող Կոչիսար կոչված սակավաբնակ, անբերրի, աղի լճերի շրջանը: Աքսոբյալ հայ աֆիոնցիներն իրենց գոյությունը քարշ էին տալիս սոսկալի պայմաններում: Միայն արհեստավորները մոտակա գյուղերում ու ավաններում ծանր աշխատանքով կարողանում են պահպանել իրենց գոյությունը՝ ապշեցնելով տեղական բնակիչներին»⁵:

Եթե արհեստի շնորհիվ բնաջնջումից փրկվեց հայ բնակչության մեկ տոկոսը, ապա մնացած մասն իր ձեռքի աշխատանքն ու արհեստավարժ հմտություններն օգտագործեց գոյությունը պահելու և մեջքը շտկելու համար: Ահա ինչպես է արհեստի դերը կարևորում Գ. Զուլայանը. «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սաստիկ տուժած, ամեն ինչ կորցրած ողջ մնացած հայերը շրջանում մոլորված ցրվեցին ասթիս, անթիս, տեր ու տիրական չունենալով իրենց կորցրածից, կողոպտվածից ոչ մի հատուցում չստանալով թուրք կողոպտիչ կառավարությունից, ի՞նչ պետք է ընեին, ինչո՞վ պետք է ապրեին այդ տուժյալ մարդիկ, և ոչ ոք չհոգաց այդ մարդկանց մասին: Հատուկ կոմիտե կազմվեց, որ իբր թե թուրք կառավարությունից պիտի գանձեր բոլոր տուժած հայերու նյութական

³ *Զուլայան Գ.*, *Գրվածք սիյունիզմում արևմտահայերու գրադեցրած արհեստներու մասին*, 1979, ձեռագիր, ԳԱԱ ՀԱԻ, ԱԲԱ 5/89, էջ 3-4:

⁴ *Թորմաճևան Հ.*, *Այնթապի ասեղնագործություն, հ. Ա.*, Հայկեպ, 2015:

⁵ *Չերքեզյան Գ.*, *Աֆիոն-Կարահիսարի հայ գաղթօջախը*, էջ 122:

կորուստներու արժեքը և պիտի բաժաներ ողջ մնացած հայերուն: Տուցակ կազմվեց երկու հատ, մեկը հանձնվեց, իսկ մյուսը մնաց մարդկանց մոտ, և այդպես մինակ ցուցակը մնաց մարդկանց մոտ, և ոչ մի հատուցում չստացավ տուժող հայր: Բայց հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց և սկսավ իր գլխուն ճարը տեսնել:

Մրանից վաթսուն տարի առաջ, որ արդեն պատերազմը վերջանալու վրա էր, և ողջ մնացող հայերը ցրված էին թուրքիո և արաբական երկրներում, այն ժամանակ այդ երկրներում ոչ գործարան կար, ոչ ալ աշխատանոց, ինչպե՞ս ապրեցին այդ մարդիկ, ինչպե՞ս պիտի պահեին իրենց գոյությունը, եթե շատ շատերը արհեստավոր չըլլային»⁶:

Այս իրողությունը կարևոր էր հատկապես կանանց ու որբ երեխաների գոյության հիմնախնդիրը կարգավորելու առումով, քանի որ փրկվածներից շատերը հենց նրանք էին: Հայտնի են բազմաթիվ օրինակներ այն մասին, թե ինչպես հայ կանայք և աղջիկներն իրենց ձեռագործով կարողացան գոյություն պահպանել, երեխաներին կերակրել ու ոտքի կանգնեցնել: Ասեղնագործությունն ու ժանեկագործությունն այն արհեստներն են, որոնք, ի տարբերություն գորգագործության, որն է բարդ գործիքի կամ հաստոցի կարիք չունեն, ուստի հենց դրանցով էին շատերը զբաղվում օտարության մեջ:

Դեռ 1895-96 թթ. համիդյան կոտորածներից հետո ամերիկյան, գերմանական և Եվրոպայի այլ երկրների միսիոներական կազմակերպությունները, ճիշտ գնահատելով հիշյալ արհեստների արտադրանքի պահանջարկը, օգնության եկան Արևմտյան Հայաստանի աղետոյալ բնակչությանը՝ տեղերում բացելով որբանոցներ ու արհեստանոցներ: Դրանց թիվը բազմապատկվեց Մեծ եղեռնից հետո բոլոր այն բնակավայրերում, որտեղ տեղակայված էին կոտորածներից փրկվածները: Այդ կազմակերպություններն ու անհատներն զբաղվում էին նաև պատրաստի արտադրանքի իրացման հարցով, ինչը ևս կարևոր էր, քանի որ հայ կանայք չէին տիրապետում լեզուների և ավանդաբար դուրս էին շուկայական հարաբերություններից:

Արհեստներին տիրապետելը կարևորվում էր նաև երեխաների ու պատանիների աշխատանքային դաստիարակության գործընթացում: Հայ որբուկներին նոր կյանքի պատրաստելու համար անհրաժեշտ էին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ՝ իրենց ապրուստը վաստակելու համար: Ուստի որբանոցներում հատուկ ուշադրություն էր տրվում արհեստների ուսուցմանը, որոնց հատկացված դասաժամերը գերազանցում էին մյուս առարկաների ժամերին: Այս դեպքում ևս դպրոցների ու որբանոցների ղեկավարները կազմակերպում էին իրենց սաների աշխատանքների վաճառք՝ ստացված գումարն օգտագործելով նրանց իսկ խնդիրները լուծելու համար:

Այսպիսով՝ բարեգործական, միսիոներական կազմակերպությունների ու անհատների միջոցով Եղեռնի տարիներին ու դրանից հետո հայ գաղթականների հետ հայկական արհեստներն ու հատկապես գեղարվեստական ստեղծագործու-

⁶ *Ձուլայան Գ.*, նշվ. աշխ., էջ 3:

թյան նմուշները դուրս եկան իրենց բնօրրանից և սփռվեցին աշխարհով մեկ՝ ամենուր ներկայացնելով ազգային արվեստը՝ որպես հայ ժողովրդի դարավոր մշակույթի բարձրարժեք վկայություն, լայն ճանաչում բերելով նրա: Այդ տարիների մամուլում, ակնաստեսների հիշողություններում, արխիվային փաստաթղթերում բազմաթիվ տվյալներ են պահպանվել, որոնք վերաբերում են որբանոցների սաների, դպրոցների աշակերտուհիների բարձրարժեք ձեռքի աշխատանքներին, դրանց ցուցադրմանը և վաճառքին՝ կարևորելով դրանց վաճառքից ստացված հասույթը՝ որպես ստեղծված դրությունից դուրս գալու և մեծաթիվ գաղթականությանն օգնելու այլընտրանքային տարբերակ:

РЕМЕСЛА В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДА АРМЯН

___ *Резюме* ___

___ *К. Базеян* ___

Ремесла были основным средством существования городского армянского населения Западной Армении и Турции. Кроме основной функции жизнеобеспечения, ремесла исполняли также функцию сохранения этнической идентичности, роль и значение которой особенно ярко выявились и в годы Геноцида армян, а позже, когда разбросанный по всему миру армянский народ благодаря владению ремёслами, смог сохранить своё существование. В статье представлены на обсуждение вопросы роли и значения ремёсел в контексте Геноцида в двух ракурсах: ремесло как средство спасения от физического уничтожения во время массовой резни и как средство выживания после Геноцида.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բազեյան Կարինե Ռազմիկի - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային արժեքների պահպանման և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, E-mail: bazeyan60@mail.ru

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԱՐԴԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Պատմական, աշխարհաքաղաքական իրողությունների բերումով XIXդ. կեսին – XXդ. սկզբին Շիրակը դարձավ ազգային վատ դիմագիծ կրող արևմտահայության մի զգալի հատվածի նոր հանգրվանը, որտեղ հնարավոր եղավ անդառնալի կորստից փրկել և պահպանել էթնիկ մշակույթի՝ ազգագրության և բանահյուսության հարուստ ժառանգությունը: Վերջինիս ուսումնասիրությունը խորհրդային տարիներից հայ գիտական մտքի տիրույթում է և այսօր էլ որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ արևմտահայության հոսքը դեպի Շիրակի տարածաշրջան իր հետ բերել է մշակութային յուրահատուկ վատ գծեր:

Հայրենագրկված արևմտահայության էթնիկ ինքնության կարևորագույն տարրերը դարերի հոլովույթում ձևավորվել և զարգացել էին նաև ժողովրդական երգերի մեջ: Արտահայտչական անսահմանափակ հնարավորություններ ունեցող և ժանրային որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը հատկապես գյուղական միջավայրում նաև տեղային ավանդույթի բացառիկ կրողն է: Բանավոր ավանդված ժողովրդական երգը համարվում է հոգևոր ժառանգություն, պատմական հիշողություն, ինչպես նաև գեղարվեստական մտածողության տեսակ, որը ցանկացած պահի կարող է նորովի կերպավորվել:

Ըստ Կոմիտասի՝ «Երգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնատուր պարզն է, ամենքն էլ լավ կամ վատ, խաղ կապել և երգել գիտեն: ... Շինականի համար իր անօրյա ստեղծագործությունն արժեք չունի, հացի ու ջրի պես մի ակամա պահանջ է: Գյուղացին իր երգերի շատ տեսակներն արհամարհում է, ծիծաղում է ուսում առածների վրա, որ խնամքով գրի են առնում, ժողովում են այդ «ճեռոջ բաներն ու աղջկա խաղերը»»:¹

Ժողովրդական ստեղծագործության գլխավոր նպատակները վեր են գեղարվեստական ոլորտներից, թեև իրականացվում են նախևառաջ գեղարվեստական ճանապարհներով, ինչը կասկածից դուրս է: Ի մի բերելով ժողովրդական երաժշտական ստեղծագործության բազմաթիվ մասնավոր կոչումները՝ ֆոլկլորագետները եզրակացրել են, որ նրա գերագույն գործառույթը «մարդկայության վերարտադրությունն է մարդու մեջ: Ոչ թե առհասարակ վերացական մարդկայությունը, այլ բավական կոնկրետ, պատմականորեն տվյալ մշակութային ավանդույթով նախորոշվածը, որին այսպես թե այնպես պետք է հաղորդակցվի յուրաքանչյուր ձևավորվող անհատականություն»:²

Այսպիսով, կարելի է պնդել, որ ժողովրդական երգը, ինչպես առհասարակ ժողովրդական ստեղծագործությունը, ապրում և գործառվում է գրեթե օրգանական բնության օրենքներով: Ուրեմն, որպես «կենդանի օրգանիզմ», ժողովրդական

¹ Կոմիտաս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 15:
² Алексеев Э. Фольклор в контексте современной культуры, М., 1988, стр. 170.

երգը գոյակցում է արտաքին երևույթների որոշ տարրերի հետ, դրանց յուրացման շնորհիվ պահպանելով ստեղծագործության հորինվածքի ողնուցը կամ հենքը:³

Ժամանակը շատ բարդ ու ազդու գործոն է ավանդական, ոչ նյութական մշակույթի ցանկացած դրսևորման, առավել ևս ժողովրդական երգի գոյատևման և պահպանման գործում: Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութային էկոլոգիային սպառնացող որոշ հիմնախնդիրների համատեքստում փորձել ենք դիտարկել Շիրակի մի շարք գյուղական համայնքներում «ապրող» երգային բանահյուսության առանձնահատուկ դրսևորումներին: Հիմնվել ենք 2010-2015թթ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի երաժշտագիտական խմբի /Հ.Հարությունյան, Ե.Վարոսյան/ կողմից իրականացրած ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա:⁴

XXIդ. սկզբին, չնայած համաշխարհայնացման արդի գործընթացների ներգործությանը /հեռուստացույց, համացանց, կապի այլ միջոցներ/, Շիրակի տարածաշրջանի ցանկացած գյուղում հնչում են ժողովրդական երգեր՝ տեղային նմուշների գերակայությամբ: Երգի կրողներն ու կատարողները հիմնականում տարեց և ծեր անձինք են, որոնք սուրբ մասունքների նման են վերաբերվում ավագ սերնդից իրենց ժառանգած երգային նմուշներին:

Այսպիսով, մեզ հետաքրքրող երգերի մի մեծ խումբը պետք է դիտել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, այս երգերը մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը:

Այստեղ տեղին է մեջբերել երաժշտագետ Ա.Փահլևանյանի կողմից կատարված դիտարկումները խնդրո առարկայի շուրջ. «Ժամանակի ստիպմունքով որոշ ժանրեր դուրս են մղվում ժողովրդի երաժշտական կենցաղից: Բանահյուսական ժանրը ժամանակի համեմատ վրիպում է մի քանի պատճառով.

- ա) կորցնում է իր ստեղծագործական հողը, այն պարտադիր պայմանները, որոնց մեջ ծնվում է այն, զարգանում, փոխանցվում, այսինքն՝ կտրվում է իր պատմա-աշխարհագրական, սոցիալ-հոգեբանական հիմքերից /վիպերգեր, պատմական երգեր, պանդխտության երգեր/»,
- բ) կորցնում է իր ֆունկցիան /հոգևոր, ծիսական, աշխատանքային երգեր/,
- գ) սոցիալ-հոգեբանական գործոնների փոփոխության հետ դուրս է գալիս մարդու արվեստընկալման համակարգից, որպես ժանր դադարում է հոգևոր պահանջ լինելուց /օրորոցային, մանկախաղաց, առտնին-աշխատանքային կենցաղային երգեր/,
- դ) երաժշտական-բանաստեղծական բարդ կառուցվածքը պահանջում է կատարողական բարձր մակարդակ, գրեթե մասնագիտական-ավանդական փոխանցում

³ Алексеев Э., նշվ աշխ., էջ 170:

⁴ Հարությունյան Հ., ՂԱՆ, 2011-2015:

և բացառում է պատահական կրող ու կատարում, ավանդի հեշտ փոխանցում /հայրեն, վիպերգային, աշխատանքային, ծիսական, աշուղական/»:⁵

Իր ժանրային կենսունակությամբ բացառիկ տեղ է գրավում *պարերգի* ժանրը: Հայ բազմադարյա մշակույթում մեծ է եղել ժողովրդական գեղջկական պարերգերի երաժշտական, պարային ու բանաստեղծական արվեստի նշանակությունը՝ որպես ժողովրդի արվեստի ամենահարագատ, ամենահուսալի ու կենարար ելակետային ակունք:

Շիրակի տարբեր համայնքներում այն այսօր էլ հանդիպում է *խաղ, խանա, թաղալո, մանի* անվանումներով:

«Առնեմ օյ մեկ է»⁶

The image shows a musical score for the song "Aramen oi mek e". It consists of four staves of music in a single system, all in treble clef and 2/4 time. The lyrics are written below the notes. The first staff has the lyrics "ար - նեմ օյ մեկ է,". The second staff has "չար - նեմ օյ մեկ է,". The third staff has "ասղ գեղն էլ գի - տե,". The fourth staff has "իմ յա - ռը շեկ է:".

Տարածված են ինչպես կրկնատողերով և կրկնակներով, այնպես էլ առանց կրկնությունների խաղիկները՝ պարզ մեղեդային հորինվածքներով: Դրանց որոշ նմուշներ առանձնացել են տարբեր ծիսակարգերից և ապրում են ինքնուրույն կյանքով: Կարևոր արտահայտչականություն ունեն շեշտված վանկերի համաչափ և ոչ համաչափ հարաբերակցությունները:

Ժանրի կենսունակությունը պայմանավորված է նախ՝ կրկնակների ու կրկնատողերի բանաձևված բաղադրիչների առկայությամբ, ապա նաև բովանդակային բազմազանությամբ: Այս է պատճառը, որ պարերգի ժանրին են միահյուսվել նաև ծիսական և կենցաղային տարբեր իրավիճակների երգեր:

Փոքրիկ խաղիկների կողքին պահպանվել են նաև ծանր պարերգերի՝ գովընդների եզակի նմուշներ.

⁵ «Թային. Հայկական ժողովրդական երգեր և նվագներ», կազմողներ՝ Ա.Ս.Փահլևանյան, Ա.Սահակյան, Եր., 1983, էջ18:

⁶ *Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Բարեղամ Գեղամի Մովսիսյան: Ծնվել է 1938թ. Լանջիկ գյուղում: Ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Մոլեսման գյուղից 19-րդ դարի կեսերին: Հակոբյան Գ., Հայրենի եզերք. Բասենի պարերգերը, Եր., 1978, էջ 20:*

«Ասմար աման»⁷.

Աս - մար է - կե կեր - թա բախ - ջեն,
 Աս - մար ա - ման, ա - ման, ա - ման,
 կը - շնգ - շնգ - գա սո - լի նալ - ղեն,
 դիլ - բար է, դա - լալ է յա - ման:

Բազմազան են նաև ծիսական երգերը: Դրանց մեջ գերակշռում են հարսանեկան և Համբարձման տոնի երգերը.

Ալ առնելու եմ էկե,
 Շալ առնելու եմ էկե,
 Ես թագվորի քուրըն եմ,
 Հարս տանելու եմ էկե: ⁸

Համբարձման տոնի երգերի բազմատեսակությամբ և կենսականությամբ է պայմանավորված նաև դրանց նորովի ծիսականացումը հատկապես հարսանեկան ծիսակարգում.

«Ջան գյուղում»⁹

Համ - բարձ - ման ի - - ղան օ - - ղը,
 ջան գյու - լում, ջան, ջան
 դը - դըր - դունն ըն - կավ ծո - - - ղը,
 ջան ծա - դիկ ջան, ջան:

⁷ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Ծաղիկ Միսակի Մովսիսյան-Աբաջյան: Ծնվել է 1941թ. Լանջիկ գյուղում, ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Ալաշկերտի գավառակի Խաստուր գյուղից 19-րդ դ. կեսերին:

⁸ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015: Երգը ձայնագրվել է Լուսակերտ գյուղում, երգասաց՝ Ջեմա Բազրատի Կարապետյան: Ծնվել է 1936թ. Լուսակերտում: Տառաճանաչ է: Նախնիները գաղթել են Մուշից 19-րդ դարի կեսերին:

⁹ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Աստղիկ Արտաշի Առաքելյան: Ծնվել է 1925թ. Լանջիկ գյուղում: Ունի տարրական կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

Վիպական երգերի շրջանակը սահմանափակվում է աշուղական սիրավեպերի, ինչպես նաև առանձին անհատ աշուղների երգերի շրջանակով.

«Կռունկ»¹⁰

Կը - ռունկ - նե - թը շա - րան, շա - րան
 ե - կան ան - ցան գը - նա - ցին
 Կը - ռունկ - ներ ջան մեկ մեկ բա - րև տա - թեք
 իմ բա - - - - լե - քին,
 նա - մակ - նե - թս հասց - թեք տա - թեք
 իմ օ - տար բա - լե - - - քին:
 Հան - կարծ նա - մա - կըս ջու - թը չը - գը - - - ցեք.
 տա - թեք հասց - թեք իմ օ - տար բա - լե - քին:

Այս նմուշները հատուկ վերլուծության կարիք ունեն, քանի որ դրանցից շատերի մեղեդիները տիպականացվել և յուրօրինակ ինքնություն կյանքով են ապրում՝ հարմարեցվելով նոր անհատ հեղինակի բանաստեղծությանը: Երգերի բանաստեղծական տեքստերում գերակշռում է գրական հայերենը, ինչը վկայում է դրանց նախնական տարբերակների փոխակերպումների մասին: Կարծում ենք, որ այս երևույթը ոչ միայն ժամանակի և նոր միջավայրի արդյունք է, այլև՝ աշուղական երգերից ազդվելու հանգամանք:

¹⁰ *Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Քարաբերդ գյուղում, երգասաց՝ Հասմիկ Մնացականի Բաղդասարյան: Ծնվել է 1936թ. Քարաբերդ գյուղում: Ունի միջնակարգ կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:*

«Երգ Անդրանիկի մասին»¹¹

Քաջ գո-րավար Անդ - րա - նի - կը Կյան - քը գո-հեց ազ - գի հա - մար,
 գե - ղեզ - մա - նը օ - տար աշ - խարի,
 հայ - կա - կան պար - ծանքն եմ փըն - տրում:

Սա պատմական երգի փայլուն նմուշ է, որը երգասացը լսել է ծնողներից՝ ի երախտագիտություն շուրջ 30000 արևմտահայ գաղթականներին իր հովանավորությամբ նոր ու ապահով հանգրվանի ուղեկցող գորավար Անդրանիկի:

Ազգաերաժշտաբանական տարբեր հետազոտություններում առանձնահատուկ տեղ են գրավում բանավոր ավանդույթի ստեղծագործությունների կենսական գոյաբանության խնդիրներն ու դրանց ուսումնասիրության մեթոդաբանական յուրահատկությունները:

Ժողովրդական ստեղծագործության մեջ դասական ժառանգություն է համարվում ոչ թե երգերի ընտրանին, այլ յուրահատուկ երաժշտաարտահայտչական գենետիկ ֆոնդը, որը բնագործն պաշտպանվում է՝ ազգամիջյան հետաքրքրությունների ու փոխազդեցությունների ակտիվության պայմաններում:¹² Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում:

Շիրակի արդի բանահյուսության մեջ թեև սակավաթիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն է: Կարևոր է այն, որ այդ երգերը, արարվելով համայնքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական դասական նմուշներ:

Այս առումով բացառիկ տեղ են գրավում օրորներն ու ողբերգերը, որոնց ժանրային առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ասացողին ազատորեն ստեղծագործելու և անկաշկանդ շարադրելու երաժշտաբանաստեղծական հորինվածքը՝ ըստ տվյալ պահին ունեցած ապրումների և զգայական վիճակի: Թեև ասացողներից շատերը հղում են կատարում իրենց մեծերից լսած նմուշներին, սակայն պարզ վերլուծությունից անգամ ակնառու է դրանց հանկարծաստեղծ անհատական բնույթը, ինչը նաև լավագույնս վկայում է երգա-

¹¹ *Հարությունյան Հ., ԴԱՆ 2015: Երգը ձայնագրվել է Լանջիկ գյուղում, երգասաց՝ Աստղիկ Արտաշի Առաքելյան: Ծնվել է 1925թ. Լանջիկ գյուղում: Ունի տարրական կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:*

¹² *Фомин В. Способ существования музыкального произведения и методология сравнительного анализа, // Музыкальное искусство и наука. М., 1973, вып. 2. Wiora Walter. Ergebnisse und Musikforschung. Darmstadt, 1975.*

ստեղծության ավանդույթի կենսականության ու ինքնատիպ դրսևորումների մասին: «Օրորցային երգ»¹³

**СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ
МУЗЫКАЛЬНОГО ФОЛЬКЛОРА ШИРАКА**

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

В разных сельских общинах Ширака и ныне проживают представители поколений армян –переселенцев /1850-1915 гг./ из Западной Армении, которые продолжают сохранять уникальные образцы музыкального фольклора своих предков. Это разные жанры песенной и инструментальной музыки.

В статье представлены жанровые и типологические особенности образцов современного песенного фольклора Ширака, присущие живой музыкальной традиции выходцев из Муша и Алашкерта. Благодаря сохранению этого уникального наследства, продолжают развиваться живительные традиции песнетворчества фольклорной классики.

Տեղեկություններ հեղինակի մասին
 Հարությունյան Հասմիկ Հայկի – արվ. գ. թ., ՀՀ ԳԱԱ
 Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
 E-mail: hasmik.har@mail.ru

¹³ Հարությունյան Հ., ԴԱՆ, 2015: Երգը ձայնագրվել է Քարաբերդ գյուղում, երգասաց՝ Լիզա Գուրգենի Մարգարյան Մնվել է 1935թ. Քարաբերդ գյուղում: Ունի ութնամյա կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից՝ 1915թ.:

*ԱՂԵՏՆԵՐԻ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ*

Մարդկային հասարակության զարգացումը երբեք չի եղել ոչ կոնֆլիկտային և ոչ հակասական գործընթաց: Հասարակություն-բնություն փոխհարաբերության մշտական խնդիրներից մեկը մարդու գործունեության, մարդկային հասարակության զարգացման և բնական միջավայրի միջև հակասությունն է: Դրա հետ մեկտեղ, բնությունը միայն արտաքին միջավայր կամ կաղապար չէ, որտեղ հասարակությունը զարգանում է: Հասարակությունը բնության օրգանական մասն է, իսկ մարդկության պատմությունը՝ բնական միջավայրի պատմության մի մասը: Այս տեսանկյունից է կարևորվում աղետների ազդաբանական ուսումնասիրությունը:

Տարատեսակ ծագում ունեցող աղետները ֆիզիկական իրադարձություններ են՝ հասարակական համատեքստում: Ինչպես ցույց են տալիս ՄԱԿ-ի տվյալները, բոլոր տեսակի աղետների շարքում զոհերի թվով առաջին տեղում ջրաօդերևութաբանական աղետներն են (ջրհեղեղներ, ցունամիներ և այլն), երկրորդում՝ երկրաբանականը (երկրաշարժեր, հրաբուխներ և այլն), իսկ երրորդ տեղում՝ տեխնածին աղետները: Բնական և տեխնածին աղետների նշված բաժանումն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի գործունեության կազմակերպման Համաձայնագրում, որը ստորագրվել է 1997 թ. Սևիլիայում:¹

Ինչպես բնական, այնպես էլ տեխնածին աղետները թողնում են սոցիալական խորը հետևանքներ: Նույնիսկ այնպիսի բնական աղետներ, ինչպիսիք են հրաբուխները, ցունամիները, թայֆունները, ջրհեղեղները, անտառային հրդեհները և այլն, տարբեր հետևանքներ են թողնում՝ կախված այն բանից, թե հասարակությունը ինչպես է նախապատրաստված և նախազգուշական ինչպիսի միջոցների է դիմում դրանց սկսվելուց առաջ: Բնականաբար նման արհավիրքները մարդկային զոհերի պատճառ են, այս ամենից անմասն չեն մնում փրկվածները: Վերապրելով այդ ամենը, նրանք երկար ժամանակ գտնվում են հոգեկան, ֆիզիկական և սոցիալական ծանր վիճակում: Արհավիրքը վերապրած մարդը հայտնվում է հոգեկան ցնցման վիճակում, և հարցը միայն այն չէ, որ անձը զգայաբար է վերապրում տեղի ունեցածը: Ցնցումը և՛ միաժամանակյա իրադարձություն է, և՛ գործընթաց, որն ազդում է մարդու հետագա կյանքի վրա: Հաճախ այդ ամենը անդրադառնում է ոչ միայն մարդ անհատի, այլև մարդկային մեծ խմբերի վրա:

Մեզանում աղետների սոցիալական հետևանքների, դրանց հաղթահարման մեխանիզմների, աղետը վերապրածների հարմարվողականության եղանակների և աղետի հետ կապված այլ հիմնախնդիրների ուսումնասիրությունը դեռևս

¹ www.icrc.org/rus/resources/documents/misc/sevilleagreement-cooperation-261197.htm.

գտնվում է սաղմնային վիճակում: Այդ ուղղությամբ որոշ հետազոտություններ են կատարվել սոցիոլոգների կողմից: Հետազոտական տարբեր խմբերի կողմից աղետների սոցիալական հետևանքների համեմատական վերլուծության իրականացմանը խանգարում է միասնական մեթոդաբանության բացակայությունը: Ընդ որում, բաց է թողնվում նշված հետևանքների համալիր գնահատումն իրականացնելու հնարավորությունը, իհարկե, ներառելով տեղական առանձնահատկությունները:

Աղետների ուսումնասիրության մեջ հատուկ նշանակություն է ստացել աղետը վերապրածների հարմարվողականության ռազմավարության վերլուծությունը, քանի որ անկախ մարդկանց կամքից, կտրուկ փոխվում է նրանց ապրելակերպը, ինչը խոչընդոտում է բնականոն կյանք վարելուն, ապագայի ծրագրեր կազմելուն, երեխաների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելուն և այլն: Խզվում է կապը ժամանակների միջև, խաթարվում է սովորական դարձած սոցիալական միջավայրը, փոխվում է նաև շրջակա միջավայրը՝ անհնար դարձնելով ավանդական տնտեսավարությունը, ինչը երբեմն առաջ է բերում մասնագիտությունը փոխելու խնդիր:

Աղետների զոհերի կամ իրենց աղետի զոհ համարողների շրջանում ձևավորվում են կյանքի յուրահատուկ նորմեր, որոնք կարելի է անվանել *ռենտային*: Մարդիկ, գիտակցելով, որ իրենք զոհ են, կարծում են, թե իրենց պետք է օգնեն, շատ հաճախ օգնության են սպասում նույնիսկ նրանք, ովքեր աղետի հետ ոչ մի կապ չունեն: Կորսվածի փոխհատուցման սպասումները բավական նվազեցնում են մարդու ակտիվությունը, և նրանք իրենց կյանքը բարելավելու նպատակով դադարում են անհրաժեշտ քայլերից՝ սպասելով, որ ամեն ինչ կլուծվի «վերևում»: Իսկ երբ առաջարկված օգնությունը պակաս է լինում կանխատեսածից, որոշ մարդկանց մեջ առաջանում է անձնական վիրավորանքի շարունակական զգացում կամ ավելի հաճախ՝ ագրեսիվ պահվածք: Պահվածքի նման մոդելներն առաջանում են որպես հոգեբանական հետևանք յուրաքանչյուր աղետից հետո:

Աղետների հետևանքներին վերաբերող հետազոտությունների մեծ մասում ուշադրությունը կենտրոնացված է բնական միջավայրի ի և էկոհամակարգի վրա մարդկային գործոնին և մարդու ազդեցության վերլուծությանը, ուսումնասիրվում են մարդու և բնության փոխհարաբերությունները և դրանց բժշկականաբանական խնդիրները: Չթերագնահատելով այս ուսումնասիրությունների նշանակությունը՝ պետք է ընդգծել, որ բավականաչափ ուշադրություն չի դարձվում աղետների և արհավիրքների սոցիալ-մշակութային հետևանքներին, այսինքն՝ այն իրողությամբ, թե ինչպես են առանձին մարդիկ վերապրում սոցիալ-մշակութային դրամատիկ փոփոխությունները, որոնց մասնակիցն ու ականատեսն են իրենք, և թե ինչպես է դա դրսևորվում նրանց ավանդական կենցաղավարման մշակույթի վրա:

Ժորժ Կյուվեյի կողմից է ստեղծվել բնական աղետների տեսությունը, որը հետազայում ունեցել է զարգացման տարբեր ուղղություններ: Թեմայի նկատմամբ հետաքրքրությունն այն դարձրեց սոցիոլոգիական հետազոտության առարկա, որի առաջին լուրջ ուսումնասիրություններն իրականացվել են Է. Կարանտելիի, Հ.

Տրիտցի, Ա. Բարտոնի, Ռ. Դայնսոնի կողմից 20-րդ դարի 60-70-ական թվականներին ԱՄՆ-ում, ապա տարածվել Գերմանիայում (Վ.Դոմբովսկի), Իտալիայում (Ջ.Պելլանդի), Անգլիայում (Բ. Ռաֆայել), Նիդերլանդներում (Բ. Ռեզենտալ) և ԽՍՀՄ-ում (Ա.Ի Պրիգոժին, Բ.Ն Պորֆիրև, Ե.Ն Բաբոսով, Վ.Ի Օսիպով):²

Այսօր աղետների մասին գրող և այդ թեմայով ուսումնասիրություններ կատարող մասնագետների քանակը սահմանափակ է: Նրանց մեծամասնությունը հետաքրքրված է հետադետային իրավիճակների խնդիրներով: Հիմնականում ուսումնասիրվում են հասարակության, կազմակերպությունների, առանձին խմբերի ռեակցիան տեխնոստիկայի կամ բնապահպանական աղետների նկատմամբ, ինչպես նաև ազգաբնակչության հարմարվողականությունն աղետների նկատմամբ՝ ընդհանրապես:³

Սոցիալական լարվածության՝ որպես սոցիալ-կարգավորող գործոնի հիմնախնդիրը դեռևս պատշաճ չի լուսաբանվել, չնայած արտասահմանյան սոցիոլոգների ձեռնարկած փորձերին՝ որոշելու սոցիալական հիմնական կողմնորոշիչների տեղն ու դերը անհատի և հասարակության կյանքում: Նույնը կարելի է ասել սոցիալական ինքնազգացողության տարածքային առանձնահատկությունների և հարմարվողականության մոդելների ձևավորման վրա դրանց ազդեցության ուսումնասիրության մասին:

Հասարակության և բնական միջավայրի փոխազդեցության հետ կապված խնդիրների մեծ մասը միավորված է *բնապահպանական հիմնախնդիրներ* ընդհանուր անվան տակ: Այժմ կարևորվում են գիտական երեք հիմնական ուղղություններ, որոնց ուսումնասիրության առարկան մարդու և բնական միջավայրի փոխհարաբերություններն են:

Սոցիալական էկոլոգիան առաջացել է սոցիոլոգիայի, էկոլոգիայի, փիլիսոփայության ու գիտության այլ ճյուղերի հանգուցակետում, որոնցից յուրաքանչյուրի հետ սերտորեն փոխհարաբերվում է: Սոցիալական էկոլոգիայի առարկան հանրության և բնության փոխհարաբերություններն են, իսկ խնդիրը՝ այդ հարաբերությունները բերել ներդաշնակության՝ հիմնվելով մարդկության բնակարանության վրա:

Մարդու էկոլոգիան ուսումնասիրում է մարդու՝ որպես անձի փոխհարաբերությունների համակարգը բնական միջավայրի հետ: Մարդու էկոլոգիան համակարգային գիտություն է, որ բաղկացած է իրար փոխկապակցված երկու՝ կենսաբանական և սոցիալ-մշակութային մասերից: Մարդու էկոլոգիայի հիմնական խնդիրը կոնկրետ բնական պայմաններում մարդկային խմբերի կենսապահովման գործոնների և այդ ընթացքում հանրության ու բնության միջև առաջացած փոխադարձ կապի ուսումնասիրումն է:

² Մանրիանիսի տե՛ս և **Բաբոսով Ե.** Катастрофа как объект социологического анализа // Социс. 1998. № 9; **Осипов В.** Мегалополисы под угрозой природных катастроф // Вестник РАН. 1996. № 9; **Осипов В.** Природные катастрофы в центре внимания ученых // Вестник РАН. 1995. № 6.

³ *Катастрофическое сознание в современном мире в конце XX века./*Ред. В. Шляпятох, В. Ядов, Московский общественный научный фонд, Издательский центр научных и учебных программ, М., 2002.

Էկոլոգիական գիտությունների համակարգում յուրահատուկ տեղ է գրավում *Էթնոէկոլոգիան* կամ *Էթնիկական էկոլոգիան*: Այս գիտաճյուղի առավել ամբողջական բնութագիրը տվել է ռուս ազգագրագետ Վ. Բ. Կոզլովը. «Էթնիկական էկոլոգիան գիտական ենթադիսցիպլին է՝ փոխկապակցված էթնիկական մարդաբանության, էթնիկական աշխարհագրության, էթնիկական ժողովրդագրության, էթնիկական հոգեբանության, բժշկական աշխարհագրության և այլ գիտաճյուղերի հետ: Ուշադրության կենտրոնում դնելով անձերի, հանրայինների ու միջավայրի փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ուսումնասիրությունը՝ էթնիկական էկոլոգիան հաշվի է առնում մարդու՝ որպես սոցիալ-կենսաբանական էակի յուրատեսակությունը, սոցիալ-տնտեսական գործոնների առաջնային դերը նրա զարգացման մեջ, մշակույթի՝ որպես միջավայրին հարմարվելու հիմնական արտակենսաբանական միջոցի կարևորությունը, բնությունը վերափոխելու՝ մարդկանց տնտեսական գործունեության աճող ազդեցությունը»:⁴

Էթնիկական էկոլոգիայի ոլորտի առաջին ուսումնասիրությունները կատարել է ամերիկացի մարդաբան Ջ.Ստյուարտը, որը մշակել է նաև «մշակութային էկոլոգիա»-ի հայեցակարգը: Գիտության այս ուղղությունը նրա կողմից մեթոդաբանորեն հիմնավորվել է 1955թ., թեև բուն հայեցակարգը ձևավորվել էր դեռևս 1930-ականներին: Ջ. Ստյուարտը գտնում է, որ «մշակութային էկոլոգիան շրջակա միջավայրում մարդկային հասարակության համարվողականության գործընթացի ուսումնասիրությունն է: Դրա գլխավոր խնդիրն է պարզաբանել, թե արդյոք հարմարվողական այս գործընթացներն առաջ են բերում էվոլյուցիոն բնույթ ունեցող ներքին սոցիալական փոփոխություններ»: Իր ուսումնասիրությունների մեջ նա կարևոր տեղ էր հատկացնում նաև մշակույթի տեխնոլոգիական հիմքի փոփոխություններին:⁵

Ջ. Ստյուարտի գաղափարների հիման վրա հետագայում առաջ եկան մի շարք գիտական ուղղություններ, որոնց մեջ ամենահայտնին «էկոհամակարգային մարդաբանության» դպրոցն է, որը ձևավորվեց 1960-ական թթ. Ռ. Ռասպպայորտի և Է. Վայդայի ուսումնասիրությունների շնորհիվ: Դպրոցի առաջատար է. Վայդան հակադրում էր իր մեթոդը մշակութային-էկոլոգիականին, նա առաջարկում էր բնական և սոցիալական երևույթները դիտարկել ընդհանուր համալիրի մեջ՝ որպես ամբողջական ֆունկցիոնալ համակարգ: Հետևելով դասական ֆունկցիոնալիզմին, սակայն զարգացնելով այն համակարգային-կառուցողական մոտեցումներով՝ «էկոհամակարգային մարդաբանության» դպրոցի ներկայացուցիչները առաջնորդվում են նրանով, որ յուրաքանչյուր համակարգ ձգտում է *հոմեոստազի* (ինքնակարգավորման, դինամիկ հավասարակշռության պահպանման): Եթե ինչ-որ պատճառով այն կորցնում է հավասարակշռությունը, ապա անհրաժեշտ է հատուկ մեխանիզմ՝ դրան իր նախկին վիճակին վերադարձնելու:⁶

⁴ *Козлов В. Методологические основы этнической экологии и вопросы их практического применения // Методы этноэкологической экспертизы. М., 1999, стр. 17.*

⁵ *Steward J., Theory of cultures change// The Methodology of multilineal evolution. Urbana, 1955.*

⁶ *Белик А., Культурология. Антропологические теории культур, М., 1999.*

1970-ական թթ. կեսերին ձևավորվեց էթնիկական էկոլոգիայի ևս մեկ՝ «սյրոցեսուալ/գործընթացային բնամարդաբանության» դպրոցը, որի կողմնակիցներն ուշադրությունը կենտրոնացնում էին մարդկանց վարքի անհատական մոդելների ձևավորման վրա՝ բնական միջավայրի ազդեցության խնդրին: Վ.Ի Կոլլովը և Ա.Ն Յամսկովը այս դպրոցի ձևավորման պատճառներից են համարում «ուսումնասիրողներից շատերի հիասթափությունը «բնահամակարգային մարդաբանության» ծայրահեղ ֆունկցիոնալիզմից, ինչպես նաև *բնահամակարգ* (էկոսիստեմ) հասկացողության բացատրության մեջ կատարված փոփոխությունների ու դրա զարգացման վերաբերյալ էկոլոգիայի մասնագետների մոտեցումներից»⁷:

Ինչպես վերը նշվեց, մարդու էկոլոգիայի՝ որպես կոմպլեքսային գիտության գլխավոր խնդիրը կոնկրետ բնական միջավայրի պայմաններում մարդկանց կենսապահովման գործոնների և այդ ընթացքում հասարակության ու բնության մեջ առաջացող փոխհարաբերությունների ուսումնասիրությունն է: Այս գիտության ներկայացուցիչները ելնում են նրանից, որ կենսապահովումն իրականանում է բնական և անտրոպոգեն/մարդածին միջավայրին կոլեկտիվ հարմարողականության շնորհիվ: Ընդ որում, առանձնացվում է *կենսաբանական* (ֆիզիոլոգիական և մարդաբանական) հարմարվողականությունը, որը պայմանավորված է մարդու օրգանիզմի և կոնկրետ մարդկային հանրության կենսաբանական յուրահատկություններով և *սոցիալ-մշակութային* հարմարվողականությամբ: Հենց էթնիկական էկոլոգիայում է կարևորվում մշակույթի (և դրա ավանդական համակարգերի)՝ որպես բնական միջավայրին մարդկանց համատեղ հարմարվելու միջոցի ուսումնասիրությունը:

Մարդկային տեսակի համար (*Homo sapiens*) մշակույթը և՛ բնական միջավայրին հարմարվելու միջոց է, և՛ այդ միջավայրի առաջընթաց յուրացումից բխող սոցիալական հետևանք:⁸ Մշակույթն, այդպիսով, դիտվում է որպես մարդկային հանրություններին յուրահաստուկ ու բազմակողմանի հարմարվողական մեխանիզմ: Էթնիկ հանրությունների մշակույթները, որոնք արտահայտում են տվյալ էկոլոգիական և սոցիալ-մշակութային միջավայրի յուրացման ընթացքում մշակված գոյության ու գործունեության կոնկրետ եղանակների առանձնահատկությունները, ևս դառնում են հարմարվողականության մեխանիզմներ:

Այսպիսով, էթնիկական խմբերի գործառության էթնոէկոլոգիական բացատրության հիմքում երկու հիմնական հասկացություններ են՝ կենսապահովումն ու հարմարվողականությունը: Հենց այս եզրույթներն են սահմանում այս գիտական ոլորտի ժամանակակից հայեցակարգերի հիմքերը:

Կենսապահովման մշակույթ հասկացությունը ազգաբանների կողմից այս ոլորտում առաջադրված գիտահետազոտական նորամուծություններից մեկն է:

⁷ *Козлов В., Ямсков А. Этническая экология // Этнология в США и Канаде. Отв. ред.: Веселкин Е., Тишков В. М., 1989, стр. 86-107; http://geomgpu.edu.ru/ld/3/347_1989.pdf; Козлов В. Этническая экология: становление дисциплины и история проблем. М., 1994.*

⁸ *Арутюнов С. Этнографическая наука и изучение культурной динамики// исследования по общей этнографии. М., 1979, стр. 31.*

Կենսապահովման մշակույթը՝ որպես էթնիկական մշակույթի առավել դիմացկուն բաղկացուցիչ, սահմանում է էթնիկական խմբի հարմարվողականության հնարավորության մակարդակը և փոխհարաբերությունները շրջապատող բնության ու սոցիալ-մշակութային միջավայրի հետ: Այն հանդես է գալիս որպես էթնո-ծագումնաբանական խնդիրների ուսումնասիրության ու էթնիկական երևույթների մշակութային-պատմական վերակառուցման կարևոր մաս և պարունակում է նյութական (մասամբ՝ նաև հոգևոր) մշակույթի բոլոր այն տարրերը, «որոնք անմիջականորեն ուղղված են մարդկանց կենսագործունեության ապահովմանը»:⁹ *Կենսապահովման մշակույթ* հասկացությունն անհրաժեշտ է այս կամ այն էթնոսի զարգացման օրինաչափություններն ուսումնասիրելու համար, քանի որ այն հնարավորություն է տալիս տարբեր չափանիշներից ելնելով, համեմատաբար ամբողջական և կառուցվածքաբանորեն նկարագրել մշակութային համալիրի առանձնահատկությունները: Այս պարագայում, կենսապահովման մշակույթը դառնում է ուսումնասիրության առարկա:

Ս.Ա. Հարությունովը կենսապահովման մշակույթը համարում է էթնոսի մշակույթի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որը պետք է լինի նրա ուսումնասիրության հիմքում: Ըստ նրա՝ կենսապահովման մշակույթը «մշակույթի այն մասն է, որն անմիջականորեն ուղղված է իր կրողների կենսագործունեությունը պահպանելուն և նախնառաջ գործում է սպառման ոլորտում»¹⁰: Դրա հետ մեկտեղ այն ներառում է նաև սոցիալական կյանքի և հոգևոր մշակույթի կարևոր առումներ, քանի որ մարդկանց ապահովելով կյանքի համար անհրաժեշտ միջոցներով՝ կենսապահովման մշակույթը կոչված է բավարարելու նաև սոցիալական և հոգևոր կարիքները, որոնք, այդպիսով, հանդես են գալիս մեկ անբաժան համալիրում:

Աղետի ազգաբանական հետազոտության առանցքում, այսպիսով, պետք է լինեն էթնիկական մշակույթի այն բաղկացուցիչ մասերը, որոնք ընդգրկված են Ս.Ա. Հարությունովի, Է.Ս Մարգարյանի և Յու. Ի. Մկրտումյանի կողմից առաջադրված «կենսապահովման մշակույթ» հասկացության մեջ:¹¹ Նրանց կարծիքով, «բնական միջավայրին հասարակության էկոլոգիական հարմարվողականության գործընթացը տեղի է ունենում համապատասխան տարածքի սոցիալապես կազմակերպված յուրացմամբ, որն արտահայտվում է առօրյա կյանքի համար անհրաժեշտ բնակելի կացարանների և մշտական բնակավայրերի կառուցմամբ, սննդամթերքի, կահկարասու, հագուստի և այլ անհրաժեշտ առարկաների կազմակերպված արտադրությամբ»:¹²

⁹ Арутюнов С., Мкртумян Ю. Проблемы типологического исследования механизмов жизнеобеспечения в этнической культуре // Типология основных элементов традиционной культуры. М., 1984, стр. 27.

¹⁰ Арутюнов С. Народы и культуры: развитие и взаимодействие. М., 1989. стр. 201-203.

¹¹ Арутюнов С., Маркарян Э., Мкртумян Ю. Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса // СЭ, 1983, № 2, стр. 22-31; Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры), Ер., 1983.

¹² Арутюнов С., Маркарян Э., Мкртумян Ю. Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса // СЭ, 1983, № 2, стр. 24.

Էթնիկ հանրությունների կենսապահովումն ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է ֆիզիկականից (կյութականից) բացի, հաշվի առնել նաև հարմարվողականության հոգեբանական կողմը: Առաջինը, ինչպես նշվեց, ներառում է ն՛ մարդկանց կենսաբանական հարմարումը բնական միջավայրին, ն՛ տնտեսավարման գործունեության հետ կապված սոցիալ-մշակութային հարմարվողականությունը, որը կյութական մշակույթի մեջ դրսևորվում է որոշակի առանձնահատկություններով: Երկրորդը վերաբերում է մարդկանց հոգեբանական հարմարվողականությանը անձնական և խմբային մակարդակներում՝ շրջակա բնական ու այլէթնիկ սոցիալ-մշակութային միջավայրի նկատմամբ, ինչպես նաև սթրեսային իրավիճակների կանխարգելման կամ թուլացման ավանդական եղանակներին: Իսկապես, շրջակա միջավայրը ազդում է ոչ միայն մարդու օրգանիզմի, այլ նաև հոգեկան վիճակի վրա, դրանով՝ նաև ֆիզիոլոգիայի: Անբարենպաստ ազդեցության դեպքում դա հանգեցնում է ոչ միայն հոգեկան, այլև, այսպես կոչված, հոգեսոմատիկ հիվանդությունների:

Եթե *կենսապահովում* եզրույթը ցույց է տալիս էթնոսի բացարձակ կապը բնության հետ, ապա մյուսը՝ հարմարվողականությունը կամ հարմարվելը, արտահայտում է էթնիկական մշակույթի դինամիզմը (հարատև շարժընթացը): Մարդու հարմարվողականությունը հումանիտար գիտությունների կարևորագույն հիմնախնդիրներից է: Սակայն բուն եզրույթը գիտնականների կողմից օգտագործվում է տարբեր իմաստներով, ինչը հանգեցնում է վերջինիս ընկալման դժվարությունների: Այն հաճախ օգտագործվում է հարմարվողականության վիճակը նկարագրելու համար կամ նշելու այն գործընթացը, որի ժամանակ մարդու օրգանիզմը որոշակի փոփոխության է ենթարկվում և հարմարվում շրջակա միջավայրին: Հարմարվողականությունը դիտվում է ն՛ որպես մի քանի սերունդների կենսագործունեության ընթացքում բնական ընտրության արդյունք, ն՛ որպես պատասխան հակազդեցություն, որը ձեռք է բերվել կամ յուրացվել կարճ ժամանակահատվածում: Եզրույթն օգտագործվում է նաև այն դեպքում, երբ ցանկանում են արտահայտել մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի համապատասխանությունը:

Թեմայի իրականացման համար կարևոր ենք համարում Վ.Բ. Կոզլովի կարծիքն այն մասին, որ «բնակության նոր միջավայրի նկատմամբ էթնոմշակութային հարմարվողության գործընթացներն ունեն համակարգային և բազմամակարդակ բնույթ: Ըստ էության, շոշափելով հանրության մշակույթի և կենցաղի բոլոր ոլորտները, դրանք արտահայտվում են նաև խմբի հոգեբանական, ժողովրդագրական և բժշկականսաբանական առանձնահատկություններում, սակայն տարբեր ինտենսիվությամբ և ոչ միաժամանակ: Ավելին, հարմարվողականության գործընթացները կյանքի տարբեր ոլորտներում աչքի են ընկնում հարաբերական ինքնուրույնությամբ: Սրանից հետևում է, որ աննպատակահարմար է բնակելի միջավայրի նկատմամբ էթնոմշակութային խմբերի հարմարվումը գնահատել որևէ մեկ միասնական ցուցանիշով»:¹³ Իրապես, բնակչության սոցիալ-մշակու-

¹³ *Козлов В. Методологические основы этнической экологии и вопросы их практического применения // Методы этноэкологической экспертизы. М., 1999, стр. 26.*

թային, ժողովրդագրական և բժշկականաբանական բնութագրերը, դրանց համալիր վերլուծությունները հստակ պատկերացում են տալիս հարմարվողականության գործընթացի հաջող իրականացման մասին, ուստի աղետի ազգաբանական հետազոտության ժամանակ առանձնահատուկ տեղ են գրավում բնակչության առողջության և ժողովրդագրական խնդիրները:

Ամփոփելով կարող ենք նշել, որ հիմնվելով վերը բերված տեսական և մեթոդական ձեռքբերումների վրա՝ հնարավորություն է ստեղծվում ազգաբանական տեսանկյունից ուսումնասիրելու Սպիտակի երկրաշարժի սոցիալ-մշակութային հետևանքները և հետադեպյան շրջանում սոցիումի (հանրության) հարմարվողականության դրսևորումները: Մինևույն ժամանակ աղետի ազգաբանական ուսումնասիրության առկա տեսական ձեռքբերումները, հետազոտողի կողմից խորացված ազգաբանական հարցումներ իրականացնելու համար, համապատասխան հարցաթերթեր կազմելու առավել ընդգրկուն մեթոդաբանական հնարավորություններ են ընձեռում:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЭТНОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ КАТАСТРОФ

___ Резюме ___

___ Т. Аганян ___

В статье сделана попытка обобщения социологических, этносоциологических и этнологических исследований по изучению последствий катастроф, опубликованных в конце XX- начале XXI вв. Систематизированы и представлены основные теоретические положения по изучению последствий техногенных и природных катастроф.

Вышеуказанные теоретические и методологические подходы дают возможность всесторонне изучить социально-культурные последствия Спитакского землетрясения, и, в частности, рассмотреть в этнологическом аспекте проявления адаптации социума в посткатастрофном времени. В тоже время теоретические достижения могут стать методологической основой для составления анкет при осуществлении специализированных этнологических опросов.

Տեղեկություններ հեղինակի մասին

Աղանյան Թորգոմ Գրիգորի – ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտ, E-mail: bazeyan60@mail.ru

ԱՐԱԳԻԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՅՆԵՐՈՒՄ

Թռչուններն ու դրանց խորհրդանիշ-կերպարները ուղեկցել են մարդուն դարերի խորքից և իրենց ուրույն տեղն են գտել նրա ամենատարբեր պատկերացումներում, կրոնաառասպելական հայացքներում և որպես արդյունք այս ամենի՝ ժողովրդական բանավոր ստեղծագործության մեջ: Համաշխարհային բանահյուսության և առասպելական մտածողության մեջ թռչունները հանդես են գալիս իբրև այդ համակարգերի անբաժան ու անփոխարինելի միավորներ:

Գերակշռող դեպքերում առաջին պլան է մղվում նրանց՝ վերնի, բարձրի հետ առնչվելու հատկանիշը, և իբրև այդպիսին՝ նրանք խորհրդանշում են վերին, աստվածային էությունը: Միայն այդ հատկանիշն էլ բավական է, որ թռչունները դարեր ի վեր մնային մարդու հայեցողության կենտրոնում և իրենց ուրույն տեղը գտնեին նրա աշխարհընկալման բոլոր փուլերում (տոտեմիզմ, անիմիզմ և այլն): Սակայն կան որոշ թռչուններ, որոնք պաշտամունքի են արժանացել իրենց մեկ այլ հատկանիշով ևս: Դրանք այն չվող թռչուններն են, որոնք իրենց վերադարձով ավետել են գարնան գալուստը:

Հայ շինականի համար տարվա ամենաբաղձալի եղանակը ավետող թռչունների (արագիլ, ծիծեռնակ, սարյակ, կռունկ, սոխակ) պաշտամունքի հիմքերը պետք է փնտրել մեր երկրի կլիմայական առանձնահատկությունների մեջ: Հայաստանի կլիման, ինչպես գիտենք, առանձնանում է երկարատև ձմեռով և կարճատև տաք եղանակներով: Գարունը՝ որպես երկրագործական աշխատանքներն սկսելու եղանակ, նաև բնության ու կյանքի զարթոնքի ժամանակն է: Ուշագրավ մի հայրենում հայ գյուղացին իր սերն ու հրճվանքն է արտահայտում «Գարնան հավքերի» նկատմամբ՝ առանց նրանց առանձնացնելու: Եթե թռչունը գարունն է ավետում, ուրեմն նրա «Չայնն անուշ է, քանց ամենուն».

Ան առաւոտուն լուսուն
Չայնըն գայ գարնան ձագերուն.
Ա՛յ իմ փոքրիկ ձագեր,
Չայն անուշ է քանձ ամենուն:¹¹

Այնուամենայնիվ, չափազանցրած չենք լինի, եթե նշենք, որ հայի համար գարնան պատգամաբերների շարքում առավել մեծ սիրո և պաշտամունքի առարկա է եղել հատկապես արագիլը: Գր. Ղափանցյանն Արա Գեղեցիկի պաշտամունքին նվիրված աշխատության մեջ հայտնել է այն տեսակետը, որ թռչնի անվան առաջին հատվածը ժողովրդական կեղծ ստուգաբանությամբ կարող էր կապված լինել Արայի անվան հետ: Նա համամիտ է Սազգյանի և Քարստի տեսակետին, ովքեր բառը կապակցում են շումերական *azik-gilim* բառի հետ, որ նշանակում է

¹ Մնացականյան Աս., *Հայրեններ, Եր., 1995, էջ 156:*

«բարձրասրունք մի թռչուն»²: Ղափանցյանը գտնում է, որ «Արայի մեծ ժողովրդականության պատճառով շումերական այդ փոխառությունը (arigil) ձևով կարող էր Volksetymologie –ի ենթարկվել՝ կապվելով Արայի հետ, ինչպես արել են Արարատյան դաշտի հետ»³: Գիտնականը բերում է իր տեսակետը ապացուցող մի շարք ծանրակշիռ հիմնավորումներ: Դրանցից է արագիլին «գարնան ախպեր» անվանելը:

Համաշխարհային առասպելաբանության մեջ կարելի է առանձնացնել բազմաթիվ թռչուններ, որոնք հանդես են գալիս իբրև տարբեր աստվածությունների ուղեկիցներ կամ խորհրդանիշներ: Հունական դիցաշխարհում Ապոլոնի ուղեկիցներն էին կարապն ու ագռավը, Ափրոդիտեինը՝ աղավնիները:

Արագիլը Հերայի՝ հին հունական դիցարանի պտղաբերության հովանավոր դիցուհու ուղեկիցն է, իսկ հռոմեական դիցարանում՝ Յունոնայի՝ ընտանեկան օջախի և մայրության հովանավոր աստվածուհու խորհրդանիշը: Հայոց դիցարանում Արայի (իսմ՝ գարնան) ուղեկիցը, «ախպերը» արագիլն է, որը եվրոպացիների, ինչպես և հայերի մոտ սերունդների բազմացման սիմվոլիզացիան է, ինչպես շումերների մոտ՝ ձուկը: Եվրոպացիների հավատալիքների համաձայն՝ արագիլը նպաստում է, որ ջուրը նորածին երեխաներ բերի, կամ ինքն է կտցով բերում⁴:

Մեր կարծիքով, արագիլը պտղաբերություն է խորհրդանշում հենց ձկնեղջյուրով սնվելու, ջրի հետ առնչվելու հատկանիշի շնորհիվ: Բացի այդ, ինչպես մեծ քիթ կամ կտուց ունեցող ցանկացած կենդանի կամ թռչուն, արագիլը ինքնաբերաբար կապվում է առնական մեծ ուժի և պտղաբերության հետ: Եվրոպական հոգեվերլուծաբանությունը արագիլի կտուցը դիտում է իբրև ֆալոսի խորհրդանիշ, իբրև սերունդների աղբյուր: Այս առումով ուշագրավ է հայոց Արա և սլավոնական Яр(Яръ) աստվածությունների զուգադրումը: Սլավոնների մոտ նա (Արան) Яръն էր, այսինքն՝ կատաղի, մինչև իսկ առնական սեռական զծերով⁵: Իբրև պտղաբերության հովանավոր աստծո ուղեկից և կյանքի հարատևության նախանձախնդիր՝ արագիլը հայ ժողովրդական առակներից մեկում հակադրվում է տատրակին, որը զուգընկերոջ մահից հետո հրաժարվում է նոր կապերից: Արագիլի խորհրդանիշկերպարի միջոցով առակը խրատում է. «Մարդի՛կ, սիրե՛ք մաքրությունն ու ողջամտությունը և ամուսնացե՛ք որդեճության և ոչ թե անառակության նպատակով»⁶:

Կարծում ենք՝ այս առումով հաստուկ հիշատակության է արժանի «արագիլ» բառի ստուգաբանություններից մեկը, որը, զիտական որևէ հիմքից զուրկ լինելով, այնուամենայնիվ ճշգրտորեն բնութագրում է այս թռչնին՝ իբրև պարկեշտության և հավատարմության խորհրդանիշի: Խոսքը Հյունքյարպեյենտյանի

² Աճառյան Հր., Արևատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 292:

³ Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1945, էջ 141:

⁴ Նույնը:

⁵ Նույն տեղում, էջ 143:

⁶ Март Н. Сборники притч Вардана, т. 1, стр. 415.

ստուգաբանության մասին է, որի համաձայն՝ «արագիլ» բառը կապվում է առաքինի արմատի հետ⁷:

Արագիլների առաքինության վկայություններ կան ժողովրդական զրույցներում: Ահա դրանցից մեկը. «Եղև ի վանքն ի Խլաթայ ծովուն եզերն, ուր արագիլ բոյն եղիր: Չարդ ի ներս ձու էրած յայն ժամն որ արագիլն չէր ի մօտ. նա զհետ իւրոյն թխսեաց և ձագ եհան. արու ետես և խռովեցաւ. գնաց և եբեր 200 սպիտակ արագիլ և մին սև և որպէս թէ ասել. Ջայս ինչ ես արարեալ. ապա ի վերայ եկեալ սպանին, և ծայր-ծայր ցրուեցին զինքն և զբոյն իւր, և զարուն առեալ գնացին»⁸:

Վանական վարդապետի՝ 13-րդ դարում գրի առած այս զրույցում թե՛ անմեղ սպանված արագիլը, թե՛ նրանցից վրեժ լուծողները դառնում են իրենց իսկ առաքինության գոհերը:

Եվրոպական քրիստոնեական ավանդությունները մեկում ևս արագիլը դիտվել է իբրև անարատության, զգաստության ու առաքինության խորհրդանիշ՝ հակառակ նրան, որ Աստվածաշունչը բոլոր քայլող թռչուններին դասել է անմաքուր էակների շարքը:

Այիշանի հավաստմամբ՝ արագիլի ձուն իսլամական մզկիթներում իբրև զարդ է կախվել: Օձերով սնվելու իր հատկության շնորհիվ արագիլը քրիստոնեական հավատքում ընդունվել է իբրև օձ-սատանային հաղթող Քրիստոսի խորհրդանիշ:

Արագիլի և օձի հակամարտության մոտիվը լայն տարածում է գտել հայ ժողովրդական բանահյուսության մեջ: Ասացվածքներում («Օձի գերեզմանը լազլազի փորն է»⁹, «Օձի փուշը լազլազը կմարսի»)¹⁰, անեծքներում («Օձ ու լազլազ դառնակ, իրար խեղդիկ»¹¹), հեքիաթներում¹², քնարական երգերում օձն ու լազլազը իրար ոխերիմ թշնամիներ են, որոնց պայքարը երկնքի ու ստորերկրյայքի, կյանքի ու մահվան հավերժական գոտեմարտն է, որտեղ հաղթողը մշտապես կյանքն է:

Վանական վարդապետը անմեղ սպանված արագիլի զրույցը այսպես է եզրափակում. «Թէ որ թռչնոց ալ հարություն ըլլար, վարձք կառնուր այս անպարտ մեռածն ալ Չարին խարդախությամբ»¹³:

Գր. Ղափանցյանը փորձում է ապացուցել, որ վերոհիշյալ զրույցում կարող էր լինել նաև սպանված արագիլի հարություն առնելու մոտիվը, որը, ըստ գիտնականի, չի պահպանվել: Մեր կարծիքով, այդ մոտիվը կարող էր կրճատել ինքը՝ Վանական վարդապետը՝ նույն միտումով, ինչով Խորենացին Արայի

⁷ Աճառյան Հր., Արմատական բառարան, Եր., 1971:

⁸ Այիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 211:

⁹ Ղանալանյան Ա., Առածանի, Եր., 1960, էջ 206:

¹⁰ Նույն տեղում, էջ 219:

¹¹ Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ ժողովրդական բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 218:

¹² Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. XI, Եր., 1980, էջ 318:

¹³ Այիշան Ղ., Հին հավատք, էջ 212:

հարության մոտիվը անվանում էր առասպել, այսինքն՝ հորինվածք: Ղափանցյանը նույնիսկ հույս է հայտնում, որ այդ կորսված մոտիվը երբևիցե կգտնվի¹⁴:

Մեր ունեցած տվյալների համաձայն՝ վերջինս դեռ չի գտնվել, սակայն կան այլ առասպելներ, որոնք արագիլի հարության ուղղակի վկայություններ են: Դրանց համաձայն՝ արագիլներն իրենց երկրում մարդ են: Երբ մոտենում է չվելու ժամանակը, նրանք գալիս են գետի մոտ, լողանում ջրերում, թռչնի փետուրներ հագնում և ճանապարհ ընկնում դեպի մեր երկիրը:

Վերադարձի ժամանակ նրանք հավաքվում են մի բարձր սարի մոտ, մատաղ անում Աստծուն, լողանում գետում և նորից մարդ դառնալով՝ գնում իրենց երկիրը: Արագիլն ամեն տարի խեղդում է իր ձագերից մեկին՝ Աստծուն մատաղ անելու համար¹⁵:

Հաջորդ առասպելում, որն ըստ էության նախորդի շարունակությունն է, ներկայացվում է, թե ինչպես մի կին լվացվելիս ապարանջանը թողնում է աղբյուրի մոտ, վերադառնում է լվացվելու, բայց ապարանջանը այլևս չի գտնում: Ընկնում է երկրեերկիր, հանդիպում է հերկ անող մի գյուղացու: Մա մտերմաբար խոսում է կնոջ հետ: Պարզվում է, որ նա կնոջ բակի ծառին բույն ունեցող արագիլն է, որ, հասնելով արագիլների երկիրը, նորից հողագործ է դարձել, ապարանջանն էլ ինքն է վերցրել, որ ուրիշները չգողանան, և թաքցրել է բնի տակ¹⁶:

Բսպանացի հեղինակները խոսում են կրկնակի ցեղասպանության մասին՝ ֆիզիկական և մոռացության: Եթե Գուռիարանի մոտ ցեղասպանության մոռացությունն առաջին պլանում է, և այն արտահայտվում է գրքի վերնագրից սկսած, ապա մյուսների գործերում մոռացումը ևս դատապարտելի է ու առկա գեղարվեստական ստեղծագործության ենթատեքստում, կամ հենց ստեղծագործության մտահղացման պատճառն է: Ընդ որում, իսպանական գրականության մեջ կրկնակի ցեղասպանությունը ներկայացվում է նաև պատմական հայեցակարգում, բացի 1915թ.-ից ցեղասպանություն որակել նաև 1894-96թթ. համիդյան կոտորածները:

Այսպիսով, իսպանացի գրողները ցեղասպանությունը քննում են 20-րդ դարին բնորոշ գոյաբանական՝ աշխարհի ու մարդու ամբողջականության քայքայման, մարդու գոյության կեցության ռոնտումների հայեցակերպով, որտեղ ցեղասպանությունը դիտարկվում է վերը թվարկված երևույթների դրդապատճառ, ընդ որում որպես համամարդկային հիմնախնդիր:

ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ИСПАНСКОЙ ПРОЗЕ

___ Резюме ___

___ С. Карапетян ___

В статье анализируются восемь романов испанских писателей, посвященных теме армянского Геноцида, в которых для испаноязычного читателя раскрывается история Османской Империи и армянского Геноцида, эпоха и атмосфера, которые родили Геноцид. Тема раскрывается разными испанскими прозаиками. В данной статье представлена разработка темы, использование художественных принципов и критериев, аспекты рассмотрения Геноцида, характеристика армянского и турецкого народов, мотивы Геноцида, круг выдвинутых вопросов

Писатели исследуют тему одиночества человека, которое исходит из жизненной пустоты, в контексте первого Геноцида 20-го века. Целевая задача писателей: представить историческую правду, а некоторые из них постарались изобразить Геноцид в рамках отношений человека и войны. Главная тема романов - отношение жертвы и палача. Это история сохранения человеческого в страданиях и труднейших ситуациях. Проблематика романов-человек и его проблема, когда она увеличивается при ослабленных жизненных ориентациях.

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարապետյան Միրանուշ Անդրանիկի- ԳՊՄԻ հայ գրականության և

ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոններ, Email: siranushk@inbox.ru

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴ

/Ա. Արսլանի վեպերի հիման վրա/

*Հորաքոյրս միշտ կրկնում էր.
«Երբ չարութիւն անէք եւ ինձ հոգնեցնէք,
Կգնամ Բեյրութ՝ Արուսեակի մօտ,
Հայէպ՝ Ջարեհ հօրեղբօր մօտ, Բօստոն՝ Ֆիլիպպի եւ
Միլդրիթի, Ֆրեզնո՝ քրոջս՝ Նուարդի կամ
Նիւ Եորք՝ Անիի, կամ էլ Կոպակաբանա՝
գարմիկիս՝ Միշելի մօտ:
Բայց նրա մօտ՝ ամենավերջում,
Քանի որ ասորու հետ է ամուսնացել »:*

«Զմյուռնիայի ճանապարհը» գրքի դարձերեսին սևով կարմրի վրա գրված է այս պատմությունը, որը աշխարհով մեկ սփռված հայերի ճակատագրի խտացումն է, վավերագիրը: Վերապրող սերունդը արյան հիշողությամբ անվերջ պատմում է իր տոհմի պատմությունը՝ շարունակ վերադառնալով իր արմատներին:

Մեր ներքին արթնացման համար կարևոր է, թե ով ենք մենք և ուր ենք գնում: Հայի մտքի վերջին հեքիաթը չի ավարտվում այսօր էլ:

Զմյուռնիայի ճանապարհը Գողգոթայի ճանապարհ է եղել, և հայերն անցել են այդ ամենի միջով՝ Հիսուսի խաչը շալակած: «Փոքր երեխաները ապաստանում էին մեծերի հետևում, իսկ մեծերը խղճուկ դեռահասներ էին՝ խուզած գլուխներով, թերսնված, կոլովված ինչ-որ ընդարձակ հագուստի, ինչ-որ թշվառ բաճկոնի մեջ, լայն բացած խոշոր հայկական աչքերով, որտեղ, ինչպես ծանծաղ ջրում արտացոլված էին անհետացած դեմքեր, տներ, ընտանիքներ»¹:

Եվ հիմա հարկավոր է դիմակայել՝ հիշելով ջրերից հառնած ու երկինք հասած լեռները...

Եթե մեռած հայերի վերջին մտքերը շարունակ մրմնջան՝ Հայաստան, նրանց մրմունջը կարող է երկրի սահմաններից դուրս թափանցել և ամենուրեք լսելի դառնալ, մեծագույն մրմունջ կբարձրանա, եթե բոլոր նրանք, ովքեր զոհ են եղել այս աշխարհում, հանկարծ սկսեն իրենց մրմնջացող գանգատները հաղորդել, ամբողջ աշխարհը կխելագարվի այդ մրմնջոցից: «Բայց այդ էր նրանց երկիրը, կողոպտված ու քանդված տներ, հրաշագործ եկեղեցիներ, ամենուր մահվան ստվերներ, լքված այգիներ, ախոռների վերածված պարտեզներ ու քրտնաջան աշխատանք, ու թուրքեր, որոնց այլևս չէր կարելի վստահել: Բայց այդ էր նրանց երկիրը,

¹ Տե՛ս *Անտոնիա Արսլան*, *Արտոյտների ազարակը*, Գիրք 2, *Զմյուռնիայի ճանապարհը*, Եր., 2012, էջ 141:

կորուսյալ հայրենիքը, այնտեղ էին նրանց ակունքները, արևալից օրերի լույսը, հոգու հացն ու գինին»²:

Անտոնիա Արսլանը «Զմյուռնիայի ճանապարհը» վավերագիր մատյանում գրում է. «Երբեմն մեռնելն այնքան պարզ բան է...»³: Մինչդեռ անհրաժեշտ էր «մի որևէ բան անել, որը հաղթական վախճանի կհասցներ բռնությամբ տեղահան արված մարդկանց աղետալի արկածային վերադարձը, որը հետք կթողներ նրանց հիշողության, պատմության մեջ, ովքեր այժմ ժառանգելու էին արքայությունը, ոսկյա հարթավայրերը, ովքեր ճիշտ ցեղից էին ու կրոնից»:

Վեպի կիզակետը գաղթականների օրորն է՝ աքսորի ժամանակ գրված և վերապրածների կողմից հաճախ տարբերակներով փոխանցված երգերից մեկը.

Տեր Զօր կերթանք լալագին,

Ցավերուն մեջ կրակին,

Չկա լույս ճաճանչի,

Ցավրուկս, նանիկ կկանչեմ⁴:

Զմյուռնիայի ճանապարհը բռնած մարդկանց ճակատագիրն առնչվում է մեզանից յուրաքանչյուրին: Թողնելով իր շեն օջախը՝ հայր իրականում հոգին թողնում է այնտեղ, իսկ գաղթի ճամփեքին ընդամենը նրա բզկտված մարմինն է: Եվ յուրաքանչյուր հայ մյուսի մեջ տեսնում է մի խորհրդավոր գեղեցկություն, այն կորած աշխարհի կախարդանքը, որ միայն ինքը գիտի...

«Կարծես նախնիները անընդհատ իրենց ետ էին կանչում, նրանց տները քանդված էին, իսկ ամենագեղեցիկները տարիների ընթացքում զբաղեցրել էին թուրքերը, որոնք քաջ գիտեին ճշմարտությունը, բայց իրականում միտք չունեին հեռանալու, սակայն վերադարձող հայերը վարժված էին կիսատ-պռատ ապրելու, հեզ ու խոնարհ, ամեն օր շնորհակալություն էին հայտնում, որ դեռևս ողջ են, այնպես որ լռում էին և գլխի ճարը տեսնում, առաջարկում էին իրենց որպես ինամակալ կամ օգնական՝ փոխարենը գոհանալով գլուխը դնելու մի անկյունում մահճակալի վրա՝ այն տան տանիքի տակ, որը ժամանակին իրեն էր պատկանել»⁵:

Այս ամենից հետո պարզ է, թե՞ պատիժ էր վերապրողների կյանքը, ինչպես գաղթի ճամփան քրքրված ոտքերով անցած Վարդուհու հավերժական հարցը՝ «Որդիս քեզ մո՞տ է: Իսկնեն երբեք չէր պատասխանում: Առնում էր նրա դողացող ձեռքերը իր ձեռքերի մեջ, մոտեցնում դեմքին՝ փոխանցելով խեղճ խենթին խաղաղություն և համբերություն: Ապա գրկում էր աղջկան և ողբասացների հնամենի դեմքով անեծքներ թափում, հրամաններ արձակում այնքան ժամանակ, մինչև որ արցունքի լճի մեջ ուժասպառ Վարդուհին քուն էր մտնում: Բոլորը սիրում էին այլալված դեմքով, լլկված ու լքված այս կնոջը, որը կարծես կրում էր իր մեջ Մայր Հայաստանի տառապանքը»⁶:

² *Անտոնիա Արսլան, նշվ. աշխ., էջ 159:*

³ *Նույն տեղում, էջ 169:*

⁴ *Նույն տեղում, էջ 130:*

⁵ *Նույն տեղում, էջ 147:*

⁶ *Նույն տեղում, էջ 132:*

Բոլոր դեպքերում այս վեպի առանցքային գաղափարը հայ մարդու ճակատագրի ֆենոմենն է ու պատմությունը: Ճակատագրի և լինելության այս մատյանում վավերագրերը սովոր մաս են գրավում, գեղարվեստականությունը, ըստ էության, դառնում է մասնավոր խնդիր: Տասնյակ հազարավոր գերեզմանաթմբերի փոխարեն մնացել են վավերագրերով լեցուն արկղեր:

«Արտությունների ագարակում» Անտոնիա Արսլանն ընդգծում է զոջման բացակայությունը, կատարյալ ստոնասրտությունը այդ հարցի անդրադարձներում նաև հետագայում. հենց սա է վեպի կիզակետը: Ասել է թե՛ մարդ էակն է՛լ ավելի է հեռացել դեպի ապամարդկայնացման խորխորատները, յուրաքանչյուր չբացահայտված ու չդատապարտված ոճիր շարունակելի է: Վեպի այսպիսի «բաց» տարածքը թույլ է տալիս ժամանակային տարբեր կտրվածքների ու տոհմաձառի տարբեր սերունդների գերակայություն: Վեպում կարևոր է հանդուրժելու անհրաժեշտությունը, մինչև որ կարողանաս հարվածին հարվածով պատասխանել, ներել, բայց չմոռանալ երբեք: Սա պատգամ է և ուղերձ՝ ուղղված սերունդներին: Պատահական չէ, որ ցեղասպանությունը որակվել է որպես մարդկային անհատականության փլուզում:

Բռնության հիշողությունը երբեք չի լքում վերապրողների սերնդին: Շատերն անկարող եղան դիմանալու հիշողության ցավին ու կտտանքներին, թանկագին կորուստների և բռնության սերմը կրելու ահավոր գիտակցությանը: «...Զարեհը այդ օրերին հաճախ էր մեկուսանում ավագ եղբոր հետ, սակայն ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը որևէ բան չէին խոսում անցած-գնացածի մասին, մտախոհ դեմքով ավարտում էին իրենց մշակված քաղաքավարի գրույցները, թեև Թերեզան պատրաստի պատճառաբանությունը միշտ գրպանը դրած շարունակ հետ ու առաջ էր անում ամուսնու աշխատասենյակի փակ դռան առջև, բայց նրան երբեք չհաջողվեց ինչ-որ խոսակցության պատառիկ որսալ. փոքր-ինչ ավելի բարձր ձայն, վճռական կամ հաստատուն կամ լսելի երկխոսություն»⁷: Դեպքերի դժբախտ բերումով ու ճակատագրի քմայքով շարունակ առնչվում ենք բռնությունների՝ տարիների ընթացքում կորցնելով տոհմաձառի սաղարթախիտ ու բեղուն ճյուղերը:

Աշխարհը պարտավոր է իմանալ, թե ինչ է կատարվել 1915 թ.-ին Արևմտյան Հայաստանում, այլապես այդ հրեշավոր եղեռնագործությունը ենթակա է կրկնվելու, ինչը տեսնում ենք մեր օրերում ևս: Պատմական հիշողությունը շարունակ շաղափում է գիտակցության խորքերը նույն սարսափները վերապրելու իմաստով, քանի որ, ինչպես Անտոնիա Արսլանն է ասում, «Մեծ պատմությունը ևս մեկ անգամ ոչնչացրեց սովորական մահկանացուների պատմությունները»:

Երբ մեծ աշխարհում ինչ-որ տեղ հայեր էին հանդիպում, գրույցի թեման ավարտվում էր ողջերով, քիչ ողջերով ու զոհերով, շատ զոհերով: Բոլորը պատմում էին իրենց ողբերգությունն ու ողբում ուրիշներինը: Կարծես երբևէ հայերը չէին հոգնում մահվան ու գոյատևման պատմություններից, երբեք չէին հոգնում կրկնվող սարսափներից, կարծես կիսված վիշտը շատ ավելի տանելի էր,

⁷ *Անտոնիա Արսլան, էջ 215:*

երբ դառնում էր պատմություն, առասպել՝ շաղախված նահատակված ժողովրդի կյանքով, որն իր հանգուցյալների դյուցազներգության մեջ էր գտնում փրկագինը⁸:

Այս տխուր պատմության զոհերը սհա այստեղ են՝ մեր մեջ: Նրանք միայն մոխիր ու փոշի չեն, ինչպես պնդում են շատերը. նրանց շունչը շարունակում է մեզ մղել առաջ...

ГЕНОЦИД: ТРЕТЬЕ ПОКОЛЕНИЕ

(на основе романов А.Арслан)

___ *Резюме* ___

___ *К. Саакян* ___

Статья посвящена социально-психологическим последствиям геноцида, которые проявились в умственно-психической характеристике и формах поведения третьего поколения, пережившего геноцид. Исследование проведено на основе книг А.Арслан “Ферма жаворонок” и “На дороге Змюрнии”, которые являются сгустками судьбы рассеянного по всему миру армянского народа. Стержневая идея романов – феномен судьбы и истории армянина, а целевая задача - чтобы весь мир узнал о содеянном в 1915 г. в Западной Армении, иначе это чудовищное преступление может повториться, что мы наблюдаем и в наши дни.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Մահակյան Գարինե Արամի – հ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ԳՊՄԻ հոգեբանության ամբիոն, E-mail: sahakyanani@mail.ru*

⁸ *Անտոնիա Արսլան, նշվ. աշխ., էջ 170:*

Тамара МЕЛИКЯН

ФИЛОСОФСКИЙ ПОДТЕКСТ “МОРСКОЙ” ПОЭЗИИ БОРИСА ПАСТЕРНАКА

Для русской литературы и русской читающей публики многие места черноморского побережья и Крыма впервые были открыты А.С. Пушкиным. Когда писатели и поэты первой половины XX в. писали о Крыме, они невольно поддавались магии пушкинских описаний Тавриды. Новые впечатления, рожденные новой эпохой, полноправно входили в их творчество, но рядом с этими впечатлениями, темами и мотивами присутствовали и образы пушкинской поэзии.

Исследователь творчества Б.Л. Пастернака М. Поливанов считает, что цикл Пастернака, названный «Тема с вариациями», непосредственно связан с многочисленными живописными опытами Айвазовского, который на протяжении нескольких десятилетий обращался к теме «Пушкин у Черного моря».¹ Первым таким опытом было изображение А.С. Пушкина на скале моря, в плаще и со шляпой в руках (1868). Это полотно называлось «Пушкин на берегу Черного моря». В 1887г., к 50-летию гибели А.С. Пушкина, Айвазовский пишет картину в соавторстве с Репиным, и еще одну, под названием - «Пушкин на берегу Черного моря», где Пушкин полулежит, откинувшись на спину, а рядом с ним – шляпа и трость.

В 1897г. появляется полотно с таким же названием, где Пушкин стоит лицом к волнам, а в руке держит шляпу и трость. Интересно, что образ трости появляется в поэзии Б.Л. Пастернака при описании А.С. Пушкина во второй «Подражательной» вариации - «... Полынь и дрок / За набалдашник цеплялись...»².

Существует еще несколько полотен, в которых Айвазовский обращался к изображению поэта (А. С. Пушкина) и моря, и, по крайней мере, два из них могут быть одновременно связаны с поэзией Б.Л. Пастернака. В 1880г. Айвазовский создал полотно «Пушкин в Крыму у Гурзуфских скал», где поэт изображен в профиль, полулежащим на скале, рядом лежит его шляпа. Поза Пушкина (одной рукой поэт подпирает подбородок, а другая лежит на скале перед ним), напоминает позу, в которой изображали лежащих сфинксов, что позволяет объяснить причины появления образа сфинкса в «Теме» Пастернака. Картина Айвазовского «Пушкин и Раевская в Гурзуфе» соотносится с воспоминаниями Раевской и строками из «Евгения Онегина»: «... Я помню море пред грозою... как я желал тогда с волнами коснуться милых ног устами»³.

¹ Поливанов К. Канонические тексты Пушкина в лирике и романе Б. Пастернака. М.: Издательство РГГУ, 2006, стр. 199.

² Пастернак Б. Тема с вариациями // Пастернак Б.Л. Собрание сочинений в пяти томах. М.: Художественная литература, 1989. Т.1, стр. 182.

³ Пушкин А. Евгений Онегин // Пушкин А.С. Собрание сочинений в 10 томах. М.: Художественная литература, 1977. Т.5, стр. 20.

Можно предположить, что таким образом не только с Пушкиным, но и с Айвазовским связаны в цикле «Темы и вариации» Б.Л. Пастернака строки, в которых присутствуют образы поцелуя и прибора: «... Песок кругом заляпан/ Сырыми поцелуями медуз», «С их чашечек коленных ... пил отблеск...»⁴.

Б.Л. Пастернак впервые обращается к морской, крымской теме в 1918г. Тем не менее, письменных указаний на то, что летом 1918г. поэт был на Черноморском побережье или в Крыму, - нет. Естественно, берег Черного моря Б.Л. Пастернаку был знаком с детства, первые тринадцать лет своей жизни будущий поэт регулярно проводил лето в Одессе, на родине отца. Тем не менее, именно в 1918г. впервые появляется пушкинская тема в лирике Б.Л. Пастернака, причем, это тема – морская, крымская. В сборнике «Темы и вариации» она обозначена просто: «Тема». Во всем сборнике (и, прежде всего, в первом его стихотворении «Тема») бросается в глаза присутствие достаточно явных зрительных образов, как-то: фигура на скале, берег, штормовой прибор и луна:

«Скала и шторм. Скала и плащ и шляпа.

Скала и – Пушкин. Тот, кто и сейчас,

Закрыв глаза, стоит и видит в сфинксе

Не нашу дичь: не домыслы в тупик

Поставленного грека, не загадку,

Но предка: плоскогубого хамита,

Как оспу, перенесшего пески,

Изрытого, как оспю, пустыней,

И больше ничего. Скала и шторм».

Судя по описанию морского пейзажа, фигуры поэта и берега, Б. Пастернак писал свою «Тему», опираясь на зрительный образ полотна И. Айвазовского «Прощание А.С. Пушкина с морем» (1887г.). Предыстория создания этого полотна И. Айвазовского такова: на одной из академических выставок в Санкт-Петербурге (1836) встретились два художника – пера и кисти. Знакомство с А.С. Пушкиным произвело неизгладимое впечатление на молодого Айвазовского. «С тех пор и без того любимый мною поэт сделался предметом моих дум, вдохновения и длинных бесед и рассказов о нем»⁵, - вспоминал художник. Пушкин с большим одобрением отзывался о работах талантливого студента Академии художеств.

Айвазовский всю жизнь преклонялся перед талантом величайшего русского поэта, посвятив ему позже (около 1880г.) целый цикл картин. В них художник соединил поэзию моря с образом поэта. Картина «Пушкин на берегу Черного моря» была создана в год пятидесятилетия со дня гибели А.С. Пушкина. В том же году была написана и другая – одна из лучших картин на пушкинскую тему - «Прощание Пушкина с морем», над которой И.К. Айвазовский работал в содружестве с И.Е. Ре-

⁴ Пастернак Б. Тема с вариациями // Пастернак Б., Собрание сочинений в пяти томах. М.:

Художественная литература, 1989. Т.1, стр. 182.

⁵ Кузьмин Н. Воспоминания об Айвазовском.

Киев: Энергия плюс, 2009.

пиным. (Репин писал в этой картине фигуру Пушкина, Айвазовский – пейзажный фон).

Полотно И. Айвазовского словно иллюстрирует пушкинские строки:

«Прощай же, море! Не забуду
Твоей торжественной красы
И долго, долго слышать буду
Твой гул в вечерние часы.
В леса, в пустыни молчаливы
Перенесу, тобою полн,
Твои скалы, твои заливы,
И блеск, и тень, и говор волн»⁶.

Стихотворение начинается с антитезы «скала и шторм». Скала в данном случае - не только символ твердости, во многих религиях она ассоциируется с жилищем Бога. Шторм связывали в большинстве культур с Божьим гневом и наказанием, поэтому большинство богов моря изображались с копьями или молниями и несли двойственный символизм разрушения и созидания. Интересно, что «Темы и вариации» Пастернак начинает писать как раз в первую революционную зиму. Если обратиться к датам написания стихотворений, вошедших впоследствии в сборник «Темы и вариации», то можно увидеть, что первые стихи (в частности, цикл из пяти стихотворений «Тема с вариациями») помечены именно 1918г.. Таким образом под «штормом» можно подразумевать как революцию, так и любовь, страсть. Влюбившись, поэт «пропустил» революционные битвы зимы 1918г.

В этот период Пастернак был влюблен в Елену Виноград. Любовь вспыхнула зимой. Обычным местом летних ночных свиданий поэта и его возлюбленной стал самый зеленый район Москвы, близкий к центру, и при этом как будто совсем не городской, из иного пространства - Воробьевы горы, а далее - пространство Нескучного сада и берег Москвы-реки. Когда же влюбленность прошла и наступил разрыв, разрушилась, погибла и привычная для Пастернака дореволюционная жизнь. Поэтому и любовь, и революция ассоциировались у Пастернака со штормом, с разгулом необузданной стихии. В то время Россию действительно «штормило».

Стихотворение «Тема» отсылает нас к пушкинскому стихотворению «К морю» («Прощай, свободная стихия»), в частности, к таким строкам:

«Судьба людей повсюду та же:
Где капля блага, там на страже.
Уж просвещение иль тиран»⁷.

Но пушкинское прощание происходит с морем спокойным, а в стихотворении Б. Пастернака, равно как и на картине И. Айвазовского, море штормовое, гроз-

⁶ Цит. по: Пушкин А. К морю // Пушкин А.С. Собр. Соч. в 10 томах. М.: Художественная литература, 1979. Т.1, стр. 188.

⁷ Пушкин А. Прощай, свободная стихия // Пушкин А.С. Собрание сочинений в 10 томах. М.: Художественная литература, 1977. Т.1, стр.232.

ное, более подходящее к пушкинскому определению моря - свободная стихия. Стихия у Б.Л. Пастернака непредсказуема, как шторм.

Плащ в «Теме» Пастернака - это знак высокого достоинства и в то же время - завеса, отделяющая человека от окружающего мира, а также - маска, второе «я» человека. Именно в это время у М. Цветаевой рождается цикл стихотворений, объединенных названием «Плащ»:

«Век коронованной Интриги, /Век проходимцев, век плаща!/ Век, коронованный Голгофой», - именно так вступает в диалог со временем Марина Цветаева. «Плащ - для всех, кто строен и высок, /Плащ - для всех, кто смотрит на Восток»⁸, - обозначила символ плаща поэтесса как эпиграф, потому что век плаща «цвета времени и снов» ушел безвозвратно, сменившись веком Голгофы. Словосочетание «плащ и шляпа» можно рассматривать как трансформацию фразеологизма «перо и шпага». Это и знак рыцарства и поэзии и, одновременно, эмблема юридической службы в Российской империи.

Юридическая эмблема Российской империи выглядела следующим образом: на фоне лаврового венка изображены перекрещивающиеся перо и шпага. Б.Л. Пастернак, обучавшийся на юридическом отделении историко-философского факультета Московского университета, не мог не знать об этой эмблеме.

Трансформация пера в плащ, а шпаги - в шляпу, несет в данном случае особую смысловую нагрузку. Заметим, что головные уборы различного вида имеют глубокое символическое значение. Они оптически увеличивают рост человека, но всегда находятся примерно на высоте глаз смотрящего, и, следовательно, на них обращают внимание с первого взгляда.

Шляпа может быть символом того, кто ее носит, и стать его заместителем, как это произошло в легенде о Вильгельме Телле со шляпой Ландфогта Гесслера. Поэтому образ Пушкина в плаще и шляпе на картине Айвазовского усиливается и наполняется поэтической символикой, становится более емким. Отметим, что на других полотнах Айвазовского Пушкин изображен без плаща, поэт - в жилетке и белой рубашке, сливающейся по цвету с морской пеной, но контрастирующей с темной скалой. Пушкин у Пастернака - это тот, кто:

«Закрыв глаза, стоит и видит в сфинксе
Не нашу дичь: не домыслы в тупик
Поставленного грека, не загадку,
Но предка: плоскогубого хамита,
Как оспу, перенесшего пески,
Изрытого, как оспую, пустыней,
И больше ничего» («Тема»)⁹.

⁸ Цит. по: Цветаева М. Плащ // Цветаева М.И. Собрание сочинений в трех томах. М.: ПТО «Центр», 1993. Т.1, стр. 233.

⁹ Пастернак Б., Тема с вариациями. Тема // Пастернак Б.Л. Собрание сочинений в пяти томах: М.: Художественная литература, 1989. Т.1, стр. 182.

Для Пастернака сфинкс - это, прежде всего, существо, в котором древняя мудрость увидела четыре основных правила поведения: знать - благодаря разуму; желать - с силой льва; дерзать - то есть отважно воспарять на мощных орлиных крыльях; молчать - с непоколебимой силой и собранностью быка. Воплощением такого сфинкса является поэт-пророк, которым для Пастернака являлся А.С. Пушкин. Это пророк, у которого «отверзлись вещие зеницы, / Как у испуганной орлицы», который внимает «неба содроганье, / И горний ангелов полет, / И гад морских подводный ход, / И дольней лозы прозябанье»¹⁰. Пушкинский пророк, с углём, пылающим огнем, вместо сердца, может «глаголом жечь сердца людей».

В 1880 г. И.К. Айвазовский создал полотно «Пушкин в Крыму у Гурзуфских скал», где поэт изображен в профиль, полулежащим на скале, а рядом лежит его шляпа. Поза Пушкина (одной рукой поэт подпирает подбородок, другую - положил перед собой) напоминает положение, в которых изображали лежащих сфинксов, что позволяет усмотреть здесь одну из причин появления сфинкса в «Теме» Пастернака. М. Поливанов писал, что в «Теме» Пастернак выделяет в качестве едва ли не главной черты Пушкина - губы. Именно губы Пушкина становятся «мостиком», соединяющим поэта с загадочным сфинксом — «плоскогубым хамитом» («видит в сфинксе <...> предка: плоскогубого хамита»¹¹.

Фоника морского пейзажа насыщена звуками морской стихии:

«Скала и шторм.

В осатаненьи льющееся пиво

С усов обрывов, мысов скал и кос,

Мелей и миль. И гул и польханье

Окаченной луной, как из лохани,

Пучины. Шум и чад и шторм взасос.

Светло как днем. Их озаряет пена...»¹²

«С-ус-ов-обры-вов», чередование «с», «р», «в», - картина ревущего моря, моря живого, воплощенного Нептуна. Пейзаж у Пастернака реалистичен и одновременно - символичен. Поросшие травой обрывы напоминают усы, по которым течет, пенится, как пиво, вода морского прибоя.

В то же время перед нами сказочный образ, восходящий к образу Головы из пушкинского «Руслана и Людмилы», а также к неременной концовке всех сказок: «По усам текло, а в рот не попало». Подобные концовки, как считает А. Пропп, есть «внесение первого лица и их содержание - повествование рассказчика о тех или иных случившихся с ним событиях. Традиционно функция их определяется как

¹⁰ Пушкин А. Пророк // Пушкин А.С. Собрание сочинений в 10 томах. М.: Художественная литература, 1977. Т.2, стр. 132.

¹¹ Пастернак Б. Тема с вариациями. Тема // Пастернак Б.Л. Собрание сочинений в пяти томах: М.: Художественная литература, 1989. Т.1, стр. 182.

¹² Пастернак Б. Тема с вариациями. Тема // Пастернак Б.Л. Собрание сочинений в пяти томах: М.: Художественная литература, 1989. Т.1, стр. 183.

подчёркивание нереальности всего рассказанного, внесение комизма в повествование, «разряжение атмосферы»¹³.

Более того, мед-пиво представляет собой обрядовую пищу, которая соотносится со сказочным мотивом пищи мёртвых. Следовательно, можно признать, что положение лирического героя в данном стихотворении локализуется границей миров. Лирический герой «Тем с вариациями» одновременно созерцает море, Пушкина у моря, картину Айвазовского «Пушкин у моря» и море, как социальную стихию, соотносимую с революцией, бешеной ломкой старого мира и старых устоев.

Заметим, что усы - символ зрелой мужественности. Герои, цари и боги всегда представляли перед народом с бородой или с усами. Однако в Риме бритье бороды и усов было обычным делом вплоть до правления императора Адриана и вновь возобновилось при Константине Великом. Поэтому метафора «усы обрывов» очень интересна. Обрыв (пропасть) можно рассматривать, как символ хаоса.

Таким образом, морские тексты Б.Л. Пастернака, пересекающиеся с морскими текстами А. С. Пушкина, написаны человеком, видевшим Крым на картинах великого И.К. Айвазовского и своего отца – Леонида Пастернака. При этом, постоянно обращаясь к пушкинскому творчеству именно крымского периода, Пастернак боготворит море, черпает в нем силы, морская стихия для него - стихия души и силы.

ՓԻԼՍՈՓՈՒԹՅԱՎԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏԸ ԲՈՐԻՍ ՊԱՍՏԵՌՆԱՎԻ «ԾՈՎԱՅԻՆ» ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

___ Անվտիպում ___

___ Թ. Մելիքյան ___

Հոդվածում վերլուծվում է Բորիս Պաստերնակի ծովի թեմատիկայով քնարերգությունը: Նշվում է, որ Պաստերնակի «ծովային» բանաստեղծություններում զգացվում է Ալեքսանդր Պուշկինի մեծ ազդեցությունը, հատկապես այն բանաստեղծություններում, որոնցում գովերգվում է Ղրիմը: Սակայն, Պուշկինի ազդեցությունից բացի, Պաստերնակը մեծ տպավորություն է ստանում Հովհաննես Այվազովսկու կտավներից, հատկապես նրանցից, որոնցում պատկերված է Պուշկինը Սև ծովի ափին: Հովհաննես Այվազովսկու ազդեցության ներքո Պաստերնակը գրում է մի շարք բանաստեղծություններ, որտեղ գովերգում է ծովը, աստվածացնում այն՝ նրա մեջ հայտնաբերելով ուժի ակունքներ:

Сведения об авторе

*Меликян Тамара Амаяковна – к.п.н., факультет
иностранных языков ГППИ им. М. Налбандяна.
E-mail: tamara.melikyan@mail.ru*

¹³ Цит. по: *Пропп А. Исторические корни волшебной сказки. М.: Лабиринт, 2011, стр. 211.*

**ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ**

Սույն հոդվածի շրջանակներում քննել ենք հոմանիշ¹ բառերի ոճական կիրառությունը Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Միսական» երկում՝ նպատակ ունենալով հոմանիշային շարքի անդամների գործառական հաճախականության քննության միջոցով ցույց տալու, թե ո՞ր բառաշերտին է նախապատվություն տվել հեղինակը, ինչպես նաև փորձել ենք բնութագրել հոմանիշային շարքի անդամների իմաստաբանական հատկությունները (տեսակային, աստիճանական և այլն), պարզել ոճական կիրառության ոլորտները (բարբառային, ժողովրդախոսակցական և այլն) և առանձնացնել դրանք ըստ հոմանիշային շարքի անդամների քանակային կազմի:

Հոմանիշ կոչվում են տարբեր ձևեր, բայց նույնական կամ մերձավոր իմաստ ունեցող բառերը: Հոմանիշ բառերի խումբը կոչվում է հոմանիշային շարք²:

Ստ. Օրբելյանի երկի լեզվական հարստության կարևոր չափանիշներից է հոմանիշների առատությունը: Հոմանիշները լեզուն դարձնում են առավել ճկուն և սահուն, պատկերավորություն են տալիս խոսքին և հնարավորություն ընձեռում խուսափելու անհարկի կրկնությունից և ոճի միօրինակությունից:

Հոմանիշ բառերը ոճական բազմազանություն են ապահովում. դրանք ծառայում են բառերի իմաստների նրբերանգային արտահայտմանը, խոսքի արտահայտչականության ուժեղացմանը և գեղարվեստական խոսքի անթերի ու ճշգրիտ կառուցվածքին³:

Պետք է տարբերակել հոմանիշային զույգ և հոմանիշային շարք հասկացությունները: Հոմանիշային զույգը իմաստային առնչակից հարաբերություններով կապված երկանդամ հոմանիշներից է բաղկացած:

Հոմանիշային շարքը, ըստ առկա հոմանիշների քանակի, լինում է եռանդամ, քառանդամ և բազմանդամ. շարքի ելակետայինը երկանդամ ձևն է:

¹ Նկատենք, որ լեզվաբանական գրականության մեջ այս եզրույթի իմաստով տարբեր տերմիններ են գործածվել՝ հոմանիշ, համանիշ, նույնանիշ: Ժամանակակից ընկալմամբ հոմանիշ անվանվում է ընդհանուր հասկացությունը, իսկ համանիշ և նույնանիշ տերմինները դրա տարատեսակներն են. համանիշը ցույց է տալիս իմաստով մոտ բառեր, նույնանիշը՝ բացարձակ նույնություն (տե՛ս **Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.,** Հայոց լեզու, I մաս, Ա Պրակ, Եր., 1980, էջ 236): Դրանք լեզվական մեկ միավորի տարատեսակներն են և չեն դիտվում որպես լեզվական անկախ իրողություններ (տե՛ս **Սուրբհասյան Ա.,** Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 108):

² **Աղայան Էր.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 67:

³ **Մելքոնյան Ս.,** Բառական հոմանիշների ոճական կիրառությունը գեղարվեստական լեզվում, Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1978, № 4, էջ 11-23:

Հումանիզային շարքը, ըստ նրանում առկա հումանիզմների քանակի, լինում է երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ. ելակետայինը երկանդամ ձևն է:

1) Երկանդամ հումանիզմներ. այս զույգի անդամները, ունենալով մոտ իմաստներ, միաժամանակ ունեն որոշակի տարբերություններ՝ տեսակային, աստիճանական, արտահայտչական և այլն: Հումանիզային զույգի անդամներից մեկը հաճախակի կիրառություն ունի, իսկ մյուսը՝ հազվադեպ: Դա պայմանավորված է հեղինակի ոճով. բառապաշարի նկատմամբ ունեցած մոտեցումներով, նաև՝ ժամանակաշրջանի լեզվական ազդեցությամբ:

Այսպես, Ստ. Օրբելյանի երկում երբեմն հանդիպում են միջինհայերենյան բառեր, որոնք, սակայն, մեծամասնություն չեն կազմում, ինչպես՝ ժամանակ (186) – ատեն (9)⁴ - «Որ մնացեալ էին ի վաղ *ժամանակաց* յամուրս քարանձառին» (1, 49)⁵: «Մեղաց մերոց համարս տացէ յաւուր ահեղ *ատենին* Քրիստոսի» (1, 283):

Միջինհայերենյան *ատեն* տարբերակը գործածության հաճախականության առումով անհամեմատ զիջում է հինհայերենյան *ժամանակ* ձևին: Հավելենք, որ «ատեն» բառը հանդիպում է առավելապես երկում վկայված փաստաթղթերում⁶:

Ստ. Օրբելյանը հաճախ է գործածել գրաբարին հատուկ ոճական հնարներից մեկը՝ ավելադրությունը. սա արվել է ոճին զարդարանք տալու, խոսքը գունեղ և հետաքրքիր դարձնելու նպատակով, ինչպես՝ գոյժ (5)–բոթ (2) - «Ապա լուեալ Վարդանայ գդառն *գոյժ* մահարար *բոթին*» (1, 103): Վրեժ (5) – քէն (3) - «Եթէ *վրիժուց* նախանձու *քիևուս* այսորիկ յանգումն արասցես» (1, 78):

Հաճախ երկում հանդիպում են հումանիզմներ, որոնք հանդես են եկել նույն նախադասության մեջ որպես բազմակի անդամներ. սա խոսքը տպավորիչ դարձնելու և ասելիքը շեշտելու նպատակ ունի: Այդ բառերն ըստ կազմության կարելի է ներկայացնել տարբեր խմբերում.

ա) Պարզ հումանիզմներ. ողբ (13) – կոծ (2) - «Իսկ գդիակ գեղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարցն ի տեղուջէ ճակատուն անբաւ *ողբովք* եւ բարձրակասոջ աղաղակաւ՝ տարեալ եղին ընդ հօրն իւրում Աշոտոյ արարեալ *կոծ* մեծ ի վերայ նորս» (1, 240): Նժդեհ (2) – պանդուխտ (1) - «Հաստատեցին ի Վրաց աշխարհէն լինել *պանդուխտ* եւ *նժդեհ* գոլ ամենայն Սիւնեաց» (1, 89):

բ) Նույնաձևանց հումանիզմներ. նեղութիւն (20) – անձկութիւն (5) - «Եղիցին *յանձկութեան* եւ ի *նեղութեան* առաւել քան զորս ի գերութեան» (1, 190):

գ) Ածանցավոր և բարդ հումանիզմներ. անշեջ (6) – մշտավառ (1) - «Զկանթեղունս *մշտավառս* եւ *անշեջս* վառեալ լինէին» (1, 117):

Նշված պարզ, ածանցավոր և բարդ բառերը միմյանց միացել են *և* շաղկապով. որոշ դեպքերում՝ շարահարությամբ. փութամ (7) – ճեպեմ (1) - «Սակս որոյ ելեալ ի

⁴ Հումանիզային շարքերի անդամները դասավորված են ըստ բառերի գործառական հաճախականության, իսկ փակագծերում տրվում է տեքստում տվյալ բառի գործառական վիճակագրությունը:

⁵ Բնագրային օրինակները բերված են երկի առաջին՝ փարիզյան հրատարակությունից (տե՛ս Օրբելյան Ստ., Պատմութիւն նահանգին Միսական, հ.հ. 1-2, Փարիզ, 1859):

⁶ Ստ. Օրբելյանը երկում զետեղել է նաև այլ գրություններ՝ ընծայագրեր, նամակներ և այլն, որոնց հեղինակն ինքը չէ: Խոսքն այդ գրությունների մասին է:

մենարանէ անտի՝ *փութայ, ճեպի* յաղբիւրն իմաստից» (1,176): Ապալերկ (3)-ամալի (1) - «Մնաց երկիրն անիշխան, *ապալերկ, ամալի* յամենայն շինութեանց» (1, 68):

Երբեմն անհարկի կրկնություննից խուսափելու համար հեղինակը գործածում է նույնանիշ հոդակապավոր բարդություններ միմյանց հաջորդող նախադասություններում. սենեկապետ (5) - սենեկապան (1) - «Եւ երթեալ *սենեկապետին* ծանոյց զայս արքայի» (1, 91): «Հրամայեալ *զսենեկապանն* Բարկայ ի ներքս անել զՄամ Գնթունի» (1, 91): Կամ՝ նույնանիշ սերոբէասարաս (1) - սերոբէատիպ (1) բարդ բառերը երկուսն իմաստային ու գործառական տարբերություններ չեն դրսևորում. «Իմաստնոյն եւ *սերոբէասարաս* առն Աստուծոյ» (1, 174): «Գնայր...սո աստուածագգեաց եւ *սերոբէատիպ* հարանց հայր Մաղոմ» (1,175):

Երկուսն կենսունակ գործածություն ունի ժողովեմ (57) - հաւաքեմ (6) - հոմանիշային զույգից առաջինը. «Զպէսպէս մրգոց համբարս անթիւս *ժողովեցին* ի Բաղաբերդ» (1, 73)⁷: «Զոր գտաք՝ *հաւաքեցաք* ի նոցանէ ամենայն ճշդի» (1,48):

2) Շռանդամ հոմանիշային շարքեր. հաճախ միևնույն երևույթը բնութագրելու համար գործածվում է երեք մերձիմաստ բառ: Այդպիսի հոմանիշային շարքի երեք անդամներից մեկը կարող է լինել բարբառային բառ, ինչպես՝ ունայն (5) - սնտտի (4) - զուրկ⁸ (1) - «*Չուրկ և ունայն* ի ճշմարիտ գեղեցկութեանցն» (1, 56): «Հրամայեալ եմ նոցա լուծանիլ ի նոյն *սնտտի* բարբառն վերաձայնել» (1, 85):

Ընդհանուր առմամբ երկուսն առավելապես հաճախ հանդիպում են համագործածական բառեր, թեև երբեմն հեղինակը համեմել է խոսքը նաև գրաբարյան սակավ գործածություն ունեցող բառերով, օրինակ՝ յափշտակեմ (58) - կողոպտեմ (15) - կապտեմ (1) - «Թէ որ... զայս տեղիս *յափշտակել* խորհի» (2, 16): «Առեալ յաւարի զբերդն՝ *կապտեցին, կողոպտեցին* զամենայն սպասս եկեղեցւոյն» (2, 191): Գրաբարյան *կապտել* բայի մեկանգամյա կիրառությունը վկայում է, որ ժամանակի ընթացքում դասական հայերենի որոշ բառեր աստիճանաբար գործածության հաճախականության առումով տեղի էին տալիս:

Երբեմն միևնույն նախադասության մեջ հանդիպում են հոմանիշային շարքի բոլոր երեք անդամները՝ առավել սաստկացնելով միտքը. զղջումն (8) - ապաշավանք (2) - խոստովանութիւն (1) - «Զգննոյր զհայրենի զգեստն մաքրութեան մեծամեծ *զղջումբ եւ ապաշաւանք, խոստովանութեամբ*» (1, 216):

Հօտ (19) - քոլիք (4) - քոկ (1). «Ետու և *քոլիքս* եզանց և *քոկս* զուարակաց եւ անդեայս և *հօտս* ոչխարաց» (1, 224): «Զքոլիք» բառը Մտ. Օրբեյանի երկուսն գործածվում է «եզներ» բառի հետ՝ «եզների խումբ» իմաստով, հանդիպում է նաև «ձկների խումբ» իմաստով⁹:

Հոմանիշները բնութագրվում են որոշակի աստիճանականությամբ. այս դեպքում անդամներից յուրաքանչյուրը ցույց է տալիս երևույթի մի աստիճանը,

⁷ «ժողովել» բայը ժամանակակից հայերենում խոսակցական ոլորտի բառ է, գրաբարում այն գրական բառ էր և լայն տարածում ուներ:

⁸ «Չուրկ» բառը ժամանակակից հայերենում գրական բառ է, հին հայերենում բարբառային էր (գրական ձևն էր «զիրկ»):

⁹ Ըստ «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ի, թշնամիների խումբն է (Մուքիսյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 279):

ուժգնությունը. պատերազմի (12) – կռուի (3) – ճակատի (3) – «Աղաչեցին մի եւս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին Բաղաբերդի» (1, 76): «Ճակատեցան ընդ Պարսից եւ գամ մի յաղթեցին» (1, 106): «Կռուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ» (1, 121): Թվարկված բայերը ընդհանուր առմամբ նշանակում են «բախվել», սակայն դրանցից յուրաքանչյուրը «բախման» որոշակի աստիճանն է ցույց տալիս. կռուի՝ չեզոք ձևն է, ճակատելը երևույթի ավելի ուժգին լինելն է, իսկ պատերազմի՝ առավելագույն աստիճանը:

3) Քառանդամ շարքեր. Ստ. Օրբելյանը հաճախ միևնույն երևույթը բնութագրելու համար գործածել է նույն իմաստն արտահայտող չորս բառ: Գործառական այս դերով հաճախ հանդիպում են մակբայական հումանիզմներ, ինչպես՝ դարձեալ (70) – վերստին (39) – կրկին (27) – միսսանգամ (2) – «Վերստին միացոյց ի գլուխն գովելի» (2, 29): «Մինչ կրկին նորոգէր զՀայաստանեայս» (1, 96): Դեռևս հինգերորդ դարի մատենագրության մեջ մակբայական այս շարքի անդամների գործածության հաճախականությունը նույնական չէր. ակնհայտորեն ավելի շատ է կիրառվում դարձեալ մակբայը: Այն դասական հայերենում կիրառվում էր այլ մակբայի հետ ևս, ինչպես հանդիպում է սույն երկում. «դարձեալ վերստին», «դարձեալ միսսանգամ». «Եւ դարձեալ միսսանգամ գնաց սա ընդ արքային Տրդատայ» (1, 58): «Դարձեալ վերստին սասանեցան դառնապէս» (2, 78): Վերստին-ը հինգերորդ դարում կենսունակ չէր, իսկ հետագա դարերում, մասնավորապես 13-րդ դարում, այն գործածության հաճախականության առումով զիջում է միայն դարձեալ մակբային:

Փութանակի (10) – փութապէս (10) – վաղվաղակի (7) – փութով (2) – «Հայցեր տեսուչս և առաջնորդս աշխարհին, գոր փութով եւ յօժարութեամբ յանձն առնու շնորհել» (1, 59): «Փութանակի հրաւիրակս հանեալ կոչէր գամենեսեան» (1, 100): «Եւ աւերն ամենայն փութապէս յառաջին լրութիւն շինութեան հասեալ լինէր յապարանս նոցա» (1, 238): «Վասն որոյ վաղվաղակի ի խնդիր լինէին նմա» (2, 93):

Առաջին երեք բառերը կազմվել են մակբայակերտ ածանցներով (-ակի, -պէս), իսկ փութով ձևն առաջացել է փոյթ բառի գործիական հոլովի քարացումից՝ վերածվելով մակբայի:

Հումանիզմները բնութագրվում են տեսակային տարբերություններով, այսինքն՝ շարքի բոլոր անդամները ցույց են տալիս նույն առարկան, սակայն նրանցից յուրաքանչյուրը վերաբերում է առարկայի առանձին տեսակի. Ճանապարհ (23) – շաւիղ (6) – ռահ (2) – կածան (1) – «Ուղղեսցուք զընթացս բանիս ի վերայ անյայտ շաւիղ անկռի ռահիս» (1, 48): «Չճանապարհս իմ ուղիղ արա ինձ Տէր» (1, 122): «Եւ Լիպարիտն իւրայովքն գտեալ կածան մի» (2, 145):

Ճանապարհը ոճականորեն չեզոք ձևն է, ընդհանրական տարբերակը, կածանը՝ նեղ ճանապարհը, շաւիղը ուղիղ ճանապարհն է, «ռահ» բառը երբայական փոխառություն է՝ արահետ իմաստով:

Հումանիզային շարքերի անդամներին հատուկ է արտահայտչականությունը. շարքի անդամները կարող են արտահայտել խոսողի վերաբերմունքը կամ գնահատականը, սրանք ոճականորեն տարասեռ բառեր են. սպանանեմ (39) – սս-

տակեմ (31) – կոտորեմ (26) – խողխողեմ (4). *սպանանել*՝ չեզոք ձևն է, իսկ *սատակել* բայն արտահայտում է անարգական վերաբերմունք: «Հրամայե՛ սպանանել զնա» (1, 125): «Վերին օգնութեամբ հարեալ *սատակեաց* ի պատերազմի զբուրգն ահագին զԳդեհոն» (1, 104):

Մյուս հոմանիշներն ունեն տեսակային տարբերություններ. *խողխողելը* ցույց է տալիս սպանության որոշակի եղանակ, իսկ *կոտորել* բայը պահանջում է միայն հոգնակի թվով դրված ուղիղ խնդիր. «Եհար Վասակ սրով զեղբայրն, և *խողխողեաց* մերձ ի մահ» (1, 121): «Հանկած մտանէ ի վանքն յառաւօտուն, և *կոտորէ* զկրօնաւորսն» (1, 128):

Դիւահար (2) - դիւաբախ (2) - այսահար (2) - դիւապատիր (1) հոմանիշային շարքում բառերի իմաստները լիովին համընկնում են. սրանք նույնանիշներ են. «Որ էր *դիւաբախ*, և յետոյ ի դիւէն խեղդամահ եղև» (1, 104): «Լինէին... *այսահարաց* նորին աղօթիւք բժշկութիւնք» (1, 86): «Խուլք լուիցեն եւ *դիւահարք* բժշկեսցին» (1, 200): «Մի զրկեալ կողոպտեսցի յազահողաց և ի *դիւապատիր* մարդկանէ» (1, 47):

Բառերի գրեթե հավասար հաճախականութեամբ գործածությունը վկայում է, որ հեղինակը որևէ բառի նախապատվություն չի տալիս՝ լեզվում ապահովելով բառագործածության բազմազանություն:

4) *Բազմանդամ հոմանիշային շարքեր*. այսպիսի շարքերում ընդգրկված բառերը առանձին կարող են կազմել հոմանիշային զույգեր կամ եռանդամ և քառանդամ շարքեր, որոնցում եզրեր կարող են լինել բուրբ անդամները: Իմաստային առումով բազմանդամ հոմանիշային շարքերը ոճավորման առավել լայն հնարավորություններ են ընձեռում:

Հոմանիշային այս շարքում՝ *լամ (12) - արտասուեմ (2) - հառաչեմ (2) - հեծեծեմ - վայեմ (1) - կոծիմ (1) - (1) ողբամ (4)*. նկատելի է *աստիճանականություն*. *լալ*, *արտասուել* բայերը չեզոք ձևեր են, իսկ շարքի մյուս անդամները՝ *կոծել*, *ողբալ* և այլն, երևույթի առավելագույն աստիճանն են ցույց տալիս. «Համբուրէին *լալով եւ արտասուելով* զհորաքանչիւր խաչս» (1, 74): «*Լայր* սաստկագին, և աղիողորմ ողբով *հառաչէր*» (1, 121): «Անշափելի ողբովք *լայր* եւ *կոծէր* դառնապէս» (2, 57): «*Վայէր* եւ *ողբայր* զցայգ և զցերեկ» (1, 187): «Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ եւ անհնարին ողբովք *հեծեծէր*» (1, 211): Հաճախ այս շարքի մյուս բայերը հանդես են եկել *լալ* բայի հետ, ինչի հետևանքով գործառնապէս այն գերակշռել է մյուսների համեմատությամբ:

Եկեղեցու և ընդհանրապէս երկնայինի մասին խոսելիս հեղինակը գործածում է մի շարք հոմանիշներ, որոնք փոխաբերաբար ասված միտքը ոճավորում են, ինչպէս՝ *անշաղախ (1) - անխառնուրդ (1) - անբիծ (2) - անբասիր (1) - անարատ (2) - անապական (3)* - «Ողջամիտ քարոզութիւն սուրբ գրելեացս աստ մնալոց է *անապական* եւ *անխառնուրդ*» (1, 273): «Հիագօր շնորհօք Հոգւոյն պերճացեալ, սուրբ, *անբիծ*, *անարատ* եկեղեցիս Հայոց՝ *անբասիր* եւ *անշաղախ* հարսնս երկնաւոր Փետային» (2, 197): Այս բառերը ուղիղ իմաստով գործածվելու ժամանակ միշտ չէ, որ կարող են միմյանց փոխարինել:

Երկում մեծամասնություն են կազմում ածականական և բայական հումանիշային շարքերը:

Հումանիշային շարքի անդամները կարող են լինել միակազմ (արտահայտված միայն մեկ բառով) և երկկազմ (երբ շարքի անդամներից մեկը կամ մի քանիսը հարադրական բարդություններ կամ դարձվածքներ են): Վերջիններս ունեն նույն իմաստը, ինչ հումանիշային գույզի բառային անդամը: Սրանք տարաբնույթ շարքեր են, որոնք լինում են երկու տեսակ՝ բայական և անվանական:

Անվանական կապակցություն և բառ.

Անվանական հարադրությունները և հումանիշային գույզերը նույն բառերն են, որոնք միմյանցից տարբերվում են բաղադրիչների քերականական ձևավորմամբ. Մեծ Հայք (18)– Հայոց աշխարհ (37) - «Որ կոչի ի հոռում լեզուն պոռտոճրանտու Հայոց մեծաց» (1, 66): «Կամեր իբրև զքաղցկեղ ճարակել *զաշխարհ Հայոց*» (1, 143): *Հայոց աշխարհ* տարբերակն ավելի լայն գործածություն է ունեցել, որի համաբանությամբ կազմվել է նաև *Հայաստան աշխարհ* տարբերակը. Հայաստան (9)– Հայաստան աշխարհ (2) - «Էր յայն ժամանակի *Հայաստանի* դայրութիւնս նորոգ եւ շէն» (1, 143): «Ապա բաժանեալ Թորգոմայ զժառանգութիւնս որդւոյ իւրոյ՝ տայ *զՀայաստան աշխարհս* բոլոր սահմանօքն» (2,113): *Հայաստան* տեղանունը անկախ կիրառությամբ չի հանդիպում հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, հետագայի հեղինակների մոտ սակավ օրինակներ հանդիպում են (օրինակ՝ Մեբեոսի երկում *Հայաստան* բառը հանդիպում է միայն մեկ անգամ¹⁰), իսկ Ստ. Օրբելյանի երկում առավել հաճախ է գործածվել:

Հումանիշային գույզ կարող են կազմել նաև բառը և նրա շրջատությունը՝ հարադրական կապակցությամբ. Աստուած (306) – երկնաւոր թագաւոր (2) - «Սկիզբն ամենայն գոյութեանց՝ *Աստուած*» (1, 43): «Մտեալ յեկեղեցին պատրաստէին աթոռ *երկնաւոր թագաւորին*» (1, 272):

Բայական հարադրություններ. սրանք հիմնականում կազմվել են *դառնալ մատուցանել, ածել, առնել* բայերի միջոցով¹¹: Հեղինակը ոճավորման նպատակով հաճախ կազմել է նաև հարադրություններ՝ հարստացնելով ու բազմազան դարձնելով խոսքը¹²: Քննակային առումով, իհարկե, հարադրավոր ձևերը զիջում են հումանիշային գույզի համադրական ձևերին: Բայական հարադրությունների գործածությունը բնորոշ է հայերենի բոլոր շրջաններին, սակայն հարադրությունների հարստությամբ աչքի են ընկել հայերենի բարբառները. այդ պատճառով այն առավել հատուկ է ժողովրդախոսակցական ոճին¹³:

¹⁰ *Բաղդիշյան Գ.*, Մեբեոսի լեզուն և ոճը, Հայոց լեզվի պատմության հարցեր, Եր., 1981, էջ 80:

¹¹ Դասական հայերենում հարադրավոր ձևերը հիմնականում կազմվել են *առնել, լինել, նաև՝ առնուլ, տայ, դնել* բայերի միջոցով, առավել հաճախ՝ *առաջին երկուսի միջոցով* (տե՛ս *Մարգարյան Ա.*, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 83): Ինչպես երևում է, դրանց շարքը համարվել է ժամանակի ընթացքում, և երկում հանդիպում են նաև այլ բայերով առավել շատ կազմություններ:

¹² Բայական հարադրությունները *Ս.Սյտրնյանը* համարում է ոճաբանության ուսումնասիրության տիրույթ (*Սյտրնյան Ա.*, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Մասն երրորդ, Յոդուած Գ. Ոճեր, Եր., 1987, էջ 317-319):

¹³ *Աբրահամյան Ա.*, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 157:

1) Հարադիր բարդության անվանական բաղադրիչը և հոմանիշային գույզի արմատը նույնն են: Գրաբարի մի շարք հարադիր բարդություններ միջին հայերենում ձևականորեն ձուլվել էին, կամ նրանց փոխարեն կազմվել էր մի նոր բառ: Այսպիսի հարադրությունները անհամեմատ սակավ կիրառություն ունեն. աւերեմ (28) - աւեր դարձուցանեմ (3) - «Հրամայեցին *աւերեալ* յատակել» (1, 297): «Վատնեալ զամենայնն եւ *յաւեր դարձուցեալ» (1, 81): Աղօթեմ (6) - աղօթս մատուցանեմ (1) - աղօթս առնեմ (1) - «Եւ մեք *աղօթեմք* զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն խափանեցեց» (1, 137): «Առանձին *աղօթս մատուցանէր* ի նմին» (1, 87): «Տայր *աղօթս առնել* զիշերապաշտմամբ» (2, 154): Աղերսեմ (1) - աղերս մատուցանեմ (1) - «Որ ես *աղերսեմ* առ ձեզ» (2, 182): «Եւ *աղերս մատուցանեմ* հասարակաց անմոռաց յիշման» (1, 301): Կողոպտեմ (15) - կողոպուտ առնեմ (1) - «Կողոպտեցին զամենայն սպասս եկեղեցոյն» (2, 191): «Բայց նախ մտեալ ի կղզին *կողոպուտ առնէին* զամենայն» (1, 234):*

Վերը բերված օրինակներում հարադրության անվանական բաղադրիչը ինքնուրույն բառ է և կարող է հանդես գալ նաև առանձին: Իսկ մեկ այլ՝ խափանեմ (21) - խափան ածեմ (1) օրինակում հարադրության խափան արմատական ձևը գուրկ է ինքնուրույն բառական արժեքից. «Զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն *խափանեցեց*» (1, 137): «Ոչ կամեցեալ *խափան ածել* վարժարանին» (1, 157):

Որոշ դեպքերում դասական գրաբարում լայն տարածում ունեցող համադրական բայի փոխարեն Ստ. Օրբելյանի երկում հանդիպում է միայն հարադրավոր ձևը, ինչպես՝ աւետեմ համադրական բայի փոխարեն կիրառվում է աւետիս մատուցանեմ (1) հարադրավոր ձևը. «Զայս իմացեալ նորա՝ գայ առ Վասակ եւ *աւետիս մատուցանէ* նմա զխորհուրդ արքային» (1, 90):

Հարադրավոր բարդությունների անվանական բաղադրիչները գոյականներ և ածականներ են՝

2) Հարադրության անվանական բաղադրիչի և հոմանիշային գույզի արմատները տարբեր բառեր են, ըստ որում՝ հարադիր բարդության անվանական բաղադրիչները հոդակապով բարդություններ են, ինչպես՝ այրեմ (17) - հրակեզ առնեմ (1) - «Զհինն *այրեաց* հրով և այնպէս ազատեաց զամենայն եկեղեցիս» (2, 173): «*Հրակեզ առնէին* յամենայն աշխարհին Միսեաց» (1, 74): Աւերեմ (28) - հիմնախիլ առնեմ (2) - Հրամայեցին *աւերեալ* յատակել» (1, 297): «*Հիմնախիլ արարեալ* զգեղեցկայարմար աւանս շինից» (1, 81): Ամաչեմ (1) - կորագլուխ լինիմ (1) - «Զի թէ միով իւրք պարտեալ *ամաչեցաք* և *կորագլուխ եղաք*» (1, 105): Սպանանեմ (39) - ղիաթաւալ կացուցանեմ (3) - «Հրամայէ *սպանանել* զնա» (1, 125): «Վիմագլմամբք զանհուն բազմութիւն պարսկական զօրուն զամենեսին *ղիաթաւալ կացուցանէին* (1, 75):

Հարադիր բարդությունը հաճախ դարձվածքի արժեք ունի և հոմանիշային գույզ կարող է կազմել այլ բառերի հետ:

3) Որոշ դեպքերում բայական հարադրությունը և նրանից սերած համադրական բարդությունը կազմում են հոմանիշային գույզ. երկիր պագանեմ (6) -

երկրպագեմ (9) - «*Երկիր պագանե* կրակի եւ արեգական» (1, 99): «Մկսան *երկրպագեալ* եւ ասել» (2, 83):

Երբեմն համադրական բայաձևերում բաղադրության քերականական ածանցներն ընկնում են՝ *հիմն արկանեմ (2) – հիմնարկեմ (3) – «Հիմն արկին* սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի Գիւտոյ երանելոյ» (1, 112): «Զոր եւ կարծեմք նորին *հիմնարկեալ»* (2, 45):

Հազվադեպ էլ հոմանշային գույգ են կազմում հարադրական բայը և նրա համադրական տարբերակը. *ակն ածեմ (2) – ակնածեմ (1) – «Յորմէ երկուցեալ ակն ածեմք»* (2, 198): «Ոչ թողացուցին քակել զեկեղեցիսն *ակնածեալ* ի Վրաց գորացն» (2, 221):

Երբեմն հեղինակը որևէ երևույթ առավել ընդգծելու, խոսքը գեղեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով գործածում է դարձվածային կապակցություններ. «մեռնել» բայի փոխարեն նա կիրառում է *փոխեմ ի կարգս հրեշտակաց (4) – մահ ընդ կենաց փոխանակեմ (1)* կապակցությունները – «Եւ տուեալ զամենայն իշխանութիւն իւր յեղբայր իւր Տարսայիճն՝...ինքն *փոխի ի կարգս հրեշտակաց»* (2, 166): «Որք եւ նեղեալ յայնմ ժամանակի ի բռնաւոր թագաւորէն Պարսից՝ կամէին *զմահ ընդ կենաց փոխանակել»* (2, 114):

Հարադրավոր բայերի կիրառությունները երկում ոճական արժեք ունեն և պայմանավորված են ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ:

Ամփոփելով Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկում հոմանիշ բառերի քննությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ պատմագրական երկը հարուստ է հոմանիշներով, որոնք հեղինակին լայն հնարավորություն են ընձեռել երկը շարադրելու ճոխ բառապաշարով՝ գործածելով հիմնականում գրաբարյան բառեր և ոճավորման միջոցներ:

Երկում գործածված հոմանիշները ներկայանում են հոմանշային գույգով և հոմանշային շարքով, մյուս կողմից՝ թե՛ գույգերում և թե՛ շարքերում առանձնանում են համադրական և վերլուծական կազմությունները (բայի համակարգում), բառ և բառակապակցություն իմաստային գույգերը (անվանական և բայի համակարգերում):

Հոմանշային շարքերը ծառայում են իմաստի սաստկացման (աստիճանականության) ոճական հնարքի դրսևորմանը, շարքի կազմիչ անդամները վեր են հանում ժամանակագրական տարբեր շերտեր (գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային և այլն):

Հոմանիշների քննությունը Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկի ոճագիտական համակարգի բացահայտման բաղադրիչներից մեկն է միայն: Այդ համակարգի բացահայտման ամբողջական քննությունը նորանոր ծալքեր կարող է բացահայտել XIII դարի հայերենի գրական-գործառական հնարավորությունների տեսանկյունից:

**ФУНКЦИОНАЛЬНО - СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ
СИНОНИМОВ В ТРУДЕ СТ. ОРБЕЛЯНА “ИСТОРИЯ СЮНИКА”***___ Резюме ___**___ А. Аветисян ___*

Синонимы играют очень важную роль в языке, делают речь плавной и гибкой, дают возможность избежать однообразия и повтарения. Лексические синонимы обеспечивают стилистическое разнообразие, они служат для усиления выразительности, точности и изысканности художественной речи. Используемые в труде Ст. Орбеляна “История Сюника” синонимы представляются синонимичной парой и синонимичным рядом, имеющими соотносительный и аналитический состав, составляющие члены которых указывают на разные хронологические и территориальные слои /грабара, среднеармянского, диалектного/.

Տեղեկություններ հեղինակի մասին*Ավետիսյան Անի Համլետի – ք.գ.թ., ՀՀ ԿԳՆ**Արարատի պետական ​​​​քոլեջի լեզուների ամբիոն,**E-mail: aniavetis@inbox.ru*

*Հայիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հուսինե ԵՆԳՈՅԱՆ*

ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Հոլովական գուգաձևությունները պայմանավորված են լեզվի քերականական կառուցվածքի յուրահատկություններով: Սովորաբար դրանք ի հայտ են գալիս սեռական հոլովում, երբ բառը քերականական միևնույն իմաստն արտահայտելու համար կարող է ստանալ հոլովական տարբեր թեքություններ (հոլովիչներ), ինչպես՝ *Գնելայ-Գնելոյ (ա-ն), մահու-մահուան (ու-ան), բիրու-բիրոյ (ու-ն), վնասի-վնասու (ի-ու), աղանդոյ-աղանդի (ո-ի), զորաց-զորուց (ա-ու), բերդից-բերդաց (ի-ա), աստեղց – աստեղաց (թ-ա)* և այլն:

Գրաբարի հոլովական գուգաձևությունները որոշակի առանձնահատկություն են դրսևորում նաև ուղղական հոլովում, երբ բառերը՝ որպես ելակետային թեքական միավորներ, հանդես են գալիս հնչյունային-հնչյունափոխական տարբերակներով կամ հիմքի փոփոխակներով:

Այդ կարգի գուգաձևությունները հանդիպում են գոյականի թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն հոլովումներում:

Ա. Կանոնավոր հոլովումների գուգաձևությունները կարելի է խմբավորել ըստ պարզ և խառը հոլովատիպերի և ըստ արտաքին ու ներքին թեքումների:

1. Ա արտաքին հոլովման պատկանող գոյականների գուգաձևություններ:

Հին հայերենում այս հոլովմամբ թեքվում են հատուկ անունները: Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ «գրաբարի Ա պարզ հոլովումը 5–րդ դարում վերջին փուլում էր գտնվում: Ա պարզ հոլովումը լեզվի ամենահին շրջանից հայ մտածողության մեջ կենդանի է եղել, կենդանի է առ այսօր»¹:

Ա արտաքին հոլովման պատկանող բառերն ուղղական հոլովում ի հայտ են բերում հնչյունային - հնչյունափոխական տարբերակներ. Յուդա// Յուդաս, Մին// Մինա, Մասիք// Մասիք, Արամայիս// Արմայիս, Վարդան// Վարդ, Մաբայ// Մաբա:

Հնչյունափոխական տարբերակներ են ի հայտ գալիս հատկապես հունական *-աս, -էս, -ոս, -իաս, -իոս, -իս* հնչյունակապակցություններով ավարտվող հատկանունների ելակետային ձևերում (ուղղական հոլովում). Եզրաս/Եզրա/Եզր, Եսայիաս/ Եսայիա/Եսայի, Նեեմիաս/ Նեեմիա/Նեեմի, Մատաթիաս /Մաթիա/ Մատաթի, Լիսիաս/Լիսիա/Լիսի, Զաքարիաս/ Զաքարիա/ Զաքարի, Պիթագորաս/ Պիթագոր, Աբիաս/ Աբիա/ Աբիու, Հերակլէս/ Հերակլ, Սոկրատէս/ Սոկրատ, Աքիլլէս/ Աքիլլէս, Յովհաննէս/ Յովհան, Յակոբոս/ Յակոբ, Արքեղայոս/ Արքեղաոս, Մենեղաոս/ Մենեղայոս, Հովերոս/ Հովեր, Երոդոտոս/Երոդոտ, Մակարիոս/ Մակարի/ Մակար, Գեորգիոս/ Գեորգ, Դովեդիանոս/ Դովեդր և այլն:

¹ Տե՛ս Առաքելյան Վ., Գրաբարի քերականություն, հ. 1, Ձևաբանություն, Եր., 2008, էջ 21:

Այսօրինակ փոխառություններից –աս-ով ավարտվող հատկանունները (որպես կոչական) կորցնում են –ս-ն. Ագրիպասա// արքա՝յ Ագրիպաս, իսկ –ոս-ով վերջացող հատուկ անունները հնչում են է-ով. Տիմոթեոս/ ո՛վ Տիմոթեէ, Պետրոս/ ո՛վ Պետրէ, Պաղոս/ ո՛վ Պաղէ, այդպես նաև՝ Աղեքսանդրոս// Աղեքսանդրէ, Փիլիպպոս/ Փիլիպպէ, Անտիգոնոս/ Անտիգոնէ, Ղազարոս/ Ղազարէ, Կոռնելիոս/ Կոռնելիէ, Գրիգորիոս/ Գրիգորիէ և այլն:

Ըստ Ա. Բագրատունու «այլազգի հասարակ անուանք ինչ՝ իբրև յատուկ համարեալք ըստ այն իսկ և հոլովին ընդ սովին հոլովմամբ», հմմտ. կասի/ կասիա (ծառի անուշահոտ կեղև կամ խոտ), հիւղ (հիւղայ// հիւղեայ-սեռ)// հիւլէ/ հիւղէ (հիւլէի// հիւղէի- սեռ) (տարր, փոշի)²:

2. Ա ներքին հոլովման պատկանող գոյականների գուգաձևություններ:

Այս հոլովումը նույնպես կենսունակ է գրաբարում. ուղղական հոլովում կողք կողքի համագոյակցող ձևեր են առկա թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում:

Որոշ գոյականներ եզակի ուղղականում հանդես են գալիս անհնչունափոխ և հնչունափոխված (և ձայնորդի անկումով) տարբերակներով, ընդ որում դրանք միաժամանակ հիմքային տարբերակներ են. կողմն/կողմ, սերմն/սերմ, կռունկն/ կռունկ, խուփն/խուփ, կրունկն/կրունկ/ կրուկ, խորձն/ խորձ³, կոտիմն/ կոտիմ/ կոտեմ, եռանդն/եռանդ, ծունկն// նաև՝ ծունգն/ ծունկ/ նաև՝ ծունգ, սրունկն/ սրունկ/ սրուն/ նաև՝ սրունգն/ սրունգ և այլն:

Եզակի ուղղականում առկա են ձևաբանական-հնչունափոխական այլ տարբերակներ նույնպես. ջայլեամն/ջայլամն, գեղեարդն/գեղարդն, ծիծեառն/ ծիծառն (եա//ա) // ծիծեռն (ա//թ), մրջիմն/ մրջիւն, ասեղն/ ասիղն (ե//ի), թէկն/ թեկն (է//է), պաշտամն/ պաշտոն (աւ//օ), եղունգն/ եղունկն (զ//կ), ոլոռն/ ոլեռն (ո//է), Սաթենիկ// Սաթինիկ (է//ի), խուժդն / խիժդն (ու//ի), անուսումնութիւն / անուսմնութիւն (ու//ը) և այլն:

Հմմտ. նաև ձևաբանական-բառակազմական հետևյալ տարբերակները. անսիրելիութիւն/ անսիրութիւն (ել//թ), ամբարհաւաճութիւն / ամբարհաւաճումն (-ութիւն/- ումն), գարուն / գարնային / գարնայնի (-ային/ -այնի), այդպես նաև՝ ձմեռն/ ձմերային/ ձմերանի/ ձմերայնի, ամառն/ ամարայնի, աշուն/ աշնայնի/ աշնանի և այլն⁴:

Հոգնակի թվում ևս առկա են հոլովական տարբերակներ. հոգնակիի կազմավորման այդ անմիօրինակություններն իմաստային տարբերակում առաջ չեն բերում⁵: Մասնագիտական գրականության մեջ նշվում է. «Ինչպես հին

² **Բագրատունի Ա.**, *Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 15:*

³ Հին մատենագրության մեջ խորձ ձևով է հանդիպում. բացառությամբ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», որում խորձն ձևով է նշված, մյուս բոլոր բառարաններում խորձ ձևով է բերված (հմմտ. **Առաքելյան Վ.**, *նշվ. աշխ.*, էջ 29):

⁴ *Բացառությամբ գարուն, ամառն, աշուն, ձմեռն ձևերի, մյուսները պատկանում են Ո հոլովման:*

⁵ Հմմտ. ունկն գոյականի հոգնակիի հետևյալ ձևերը. ունկունք (ամանի կանթեր), ականջք (կենդանու ականջներ): Ինչպես տեսնում ենք, տարահիմք այս կազմություններում առկա են նաև իմաստային տարբերություններ, թեպետև նույն ունկն գոյականը հին գրական հայերենում եզակի ձևով կարող էր արտահայտել ոչ միայն «կենդանու ականջ» նշանակու-

գրական հայերենում, այնպես էլ ետգրաբարյան հայերենում եզակի ձևը (եզակի ուղղականի ձևը) կարող է հոգնակիակազմ հիմք դառնալ նույն տեսքով կամ ենթարկվել հնչյունաբանական, ձևաբանական (նաև հնչյունաբանական-ձևաբանական) վերակազմավորումների, հայերենում առավել շատ են հնչյունաբանական վերակազմավորումները»⁶:

Ա ներքին թեքման ենթարկվող բառերը, հոգնակի ուղղականում և ձայնորդից առաջ ստանալով ու կամ ա ձայնավորները, ունենում են –ունք կամ –անք վերջավորությունները: Հմմտ. սերմունք/սերմանք, կողմունք/կողմանք, մահունք / մահուանք:

Հանդիպում են նաև արտաքին և ներքին թեքման օրինաչափություններ դրսևորող զուգահեռ ձևեր. ռունգք// ռնգունք, եղերք/ եղերունք, ծաղիկք/ ծաղկունք, փայլակք/ փայլակունք:

Զուտ հոլովական-հնչյունափոխական տարբերակներ են՝ լիստունք/լստունք, սրունք/սրնկունք/ սրօնք, մրջմունք/ մրջինք, նոնունք// նոնունք: Վերջավորությունների տարբերակներով են հանդես գալիս սերմանք//սերմանիք զուգաձևությունները:

3. Ի արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ:

Այս հոլովման գոյականների զուգահեռ ձևերը հազվադեպ են հանդիպում գրաբարում. հմմտ. հասկանվանական հետևյալ տարբերակները. Սառուղ/ Շառուղ, Արսենիոս/ Արսէն/ նաև՝ Արսենի⁷, Հովերոս/Հովեր/Հովերոն, Անտոնիոս/Անտոն, Եսեբիոս/ Եսեբէս, Կայէն/Կային, Բարսեղ/ Բարսիղ, Ազարիա/ Ազարեայ:

Հմմտ. ձևաբանական- հնչյունափոխական տարբերակները հասարակ անունների եզակի ուղղականում. կայան/կայեան, ախոյան/ախոյեան, ընծայ/ընծայ, նշոյլ/նշոյղ, լեզոն/ լեզովն/ լեզոն⁸, թերիակե/ թիրակե, հիւղ/ հիւղեայ/ հիւղե/ հիւլե, ճաւ/ ճօշ// ջօշ (կրծքի գրահ), վաչ/ վաչէ (ծածկած սայլ), երախայ/ երեխայ, հսկայ/ սկայ, յակինթ// յակինդ// նաև՝ յակունդ// յակինթոս և այլն:

Ի հոլովման ենթարկվող բառերի դեպքում ևս գրաբարում հոգնակի ուղղականում –ք-ն հանդես է գալիս որպես հոլովակերտ և հոգնակիակերտ մասնիկ. «Ինչպես որ հնդեվրոպականում հոգնակիակազմությունը և հոլովակազմությունն արտահայտության միջոցներով համընկնում են, իբրև տիպիկ թեքական լեզուներին հասուն կերևույթ, այնպես էլ գրաբարում այդ այդպես է: Սակայն հնդեվրոպական թվակազմության – հոլովակազմության բազմաթիվ զուգորդումների հանդեպ գրաբարն ունի այդ կազմավորումների համեմատաբար պարզեցված

թյունք, այլն «ամանի կանթ» իմաստը (հմմտ. Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 86-87: Զահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 105-106):

⁶ Տե՛ս Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 15:

⁷ Վերջինս նույն ձևով և՛ ուղղական է, և՛ սեռական (տե՛ս Բազրատունի Ա., նշվ. աշխ., էջ 22):

⁸ Զուգահեռաբար հանդես է գալիս Ի// Ի-Ա (խառն) արտաքին հոլովումներով:

տիպաբանություն»⁹:

4. Ու արտաքին հոլովման պատկանող գոյականների գուգաձևություններ:

Այս հոլովման գոյականների ուղղականի տարբերակային ձևերը հազվադեպ են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում. ընդ որում եղածներն էլ հիմնականում հանդես են գալիս հոլովման փոխանցումներով. բեհեզ / բեհեզ (ոյ, ոց // ի, ազ), կազմուած / կազմած (ոյ, ոց, // ի):

Ու հոլովման է ենթարկվում *էրէ* բառը, որը եզակի այս ձևին գուգահեռ ունի ձևաբանական – հնչյունական *էրէ* տարբերակը: Հմմտ. նաև ձմերային / ձմերայնի գուգաձևերը: Դիտարկենք գուգաձևություններն այս հոլովմանը պատկանող գոյականների հոգնակի թվում. բուրք / բլբք, հայք / հայեր, մարդք / մարդիկ:

Այսօրինակ ձևերը նույնպես հատկանշվում են տարբեր հոլովիչներով թեքվելու հանգամանքով, ինչպես նաև գործածության անհամարժեքությամբ: Ընդ որում, այդ կարգի (հոգնակիակերտների) տարբերությունները գրաբարում հազվադեպ են. «երկձև-բազմաձև հոգնակիները բացի նրանից, որ գործածության հաճախականությամբ համարժեք չեն, ունեն նաև այն բնորոշ գիծը, որ յուրաքանչյուր ձև շատ հաճախ հետևում է որևէ համակարգային կառուցվածքի: Առանձին բառերի մեջ եղած հոգնակիակազմության բազմաձևությունը ենթադրում է անցումային վիճակ, վերջիվերջո դրանք նս հետևում են որևէ կայունացած կառուցատիպի»¹⁰:

5. Ու արտաքին հոլովման պատկանող գոյականների գուգաձևություններ:

Եզակի և հոգնակի ուղղականում սակավ են հանդիպում տարբերակային քերականական ձևերը: Հատուկ անուններում ի հայտ եկող գուգահեռություններ են՝ Յովհաննես / Յովհան, Յովսէփ / Յուսէփ:

Հմմտ. նաև եզակի հետևյալ երկձևությունները. աղուէս/աղուես (է/ե հնչյունափոխական տարբերակներով): Հոգնակի թվում բարք/բարոյք տարաձևությունները տարբեր հոլովումների պատկանելու ներունակություն են դրսևորում (բարք- ուց, -ուք / - իոք // բարոյք - ից, -իւք)՝ հանդես բերելով նաև իմաստային տարբերություններ:

6. Ե ներքին հոլովման պատկանող բառերի գուգաձևություններ:

Այս հոլովման բառերի ուղղականում հանդիպում են –իւր / - եր մասնիկով վերջավորվող (ձևաբանական-հնչյունական) ձևեր եզակի ուղղականում. ալիւր / ալեւր, աղբիւր / - աղբեւր, եղջիւր / եղջեւր, եղտիւր / եղտեւր // նաև ` աղտիւր / աղտեւր: Հմմտ. գուգահեռ հետևյալ ձևերը հոգնակի թվում. բանակատեղք / բանակտեղք, աղբիւրք / աղբերք:

7. Ի – Ա խառն արտաքին հոլովման գոյականների գուգաձևություններ¹¹:

Այս հոլովման բառերը մասնավորաբար եզակի ուղղականում են դրսևորում գուգաձևություններ, որոնք ձևաբանական-հնչյունափոխական բնույթի են:

⁹ Տե՛ս *Պետրոսյան Հ.*, նշվ. աշխ., էջ 118- 119:

¹⁰ Հմմտ. *Պետրոսյան Հ.*, նշվ. աշխ., էջ 146:

¹¹ Գրաբարում Ո – Ա խառն արտաքին հոլովման պատկանող բառերի ուղղական և հայցական հոլովներում գուգահեռ ձևեր մեծ մասամբ չեն հանդիպում:

Հմմտ. անդեորդ / անդետորդ / անդիորդ / անդուորդ (նախրապան), անդրավար // անդրուար / անդրուվար (1. գույզ ձի կամ ջորի՝ կառքին լծած, 2. լծված կառք, 3. խաբող օձ), գառագիղ / գառագեղ (1. մետաղե վանդակ, 2. բանտ), կինճ / կինջ (վայրի արու խոզ), մօրու / մորու (մորուք), յակինթ // յակինթոս, սալամբ / սալամ (անտառահավերի ցեղին պատկանող թռչուն), ծնօղ / ծնող, սալար / սաղար (գորագլուխ, դեկավար), սակուր / սակր և այլն:

Հանդիպում են Ի – Ա արտաքին // ներքին հոլովման օրինաչափություններ դրսևորող հոգնակի հետևյալ զուգահեռ ձևերը. քուրմք / քրմանք / քրմունք : Հմմտ. նաև հոգնակի հետևյալ տարաձևությունները. պարիսպք // պարսպունք, նապաստակք/ նապաստակունք, ճրագք / ճրագունք, սարկաւագք / -սարկաւագունք և այլն:

Ըստ Հ. Պետրոսյանի՝ գրաբարում շատ քիչ է պատահում, երբ միևնույն հիմքը տարբեր հոգնակիակերտների հետ զուգորդվի: Մակայն հանդիպում են մասնավոր կազմավորումներ, երբ երկձև հոգնակի ունենք մի դեպքում բուն հոգնակերտով, մյուս դեպքում՝ «հավաքական» հոգնակերտով, թեև դրանք գործածության հաճախականությամբ համարժեք չեն¹²: Այս իմաստով հատկանշական է հոգնակի հետևյալ եռաձևությունը. եպիսկոպոսք / եպիսկոպոսունք / եպիսկոպոսեան:

8. Ի – Ա խառը ներքին թեքման գոյականների զուգաձևություններ:

Այս դեպքում զուգաձևությունները ի հայտ են գալիս հատկապես հոգնակի ուղղականում: Հայտնի է, որ գրաբարում Ն ձայնորդով ավարտվող մեկուկեսականի բառերը հոգնակի ուղղականում բառավերջում բաղաձայնների կուտակումից խուսափելու համար ստանում են ի կամ ու ձայնավորները՝ այսպիսով, հոգնակի ուղղականում հանդես բերելով –ինք // - ունք (երբեմն՝ - անք) վերջավորությունները:

Հմմտ. եղինք/եղունք, անձինք/անձունք, քրտինք/քրտունք, գառինք/գառունք, խաշինք/խաշունք, թոռունք/թոռանք, ազինք / ազունք¹³, վեհագինք/վեհագունք, հարսինք/հարսունք: *Ձեռն* գոյականի հոգնակին է՝ ձեռք//(հազվադեպ) ձեռինք:

9. Ո – Ա խառն արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ:

Ուղղական հոլովում այսօրինակ զուգաձևություններ քիչ են հանդիպում: Մասնավորաբար հանդիպում են եզակի ուղղականում. Վարդանուհի / Վարդուհի, աստուածուրհի / աստուածուհի:

Բ. Անկանոն կամ զարտուղի հոլովման բառերը նույնպես ուղղական հոլովում ցուցաբերում են զուգաձևություններ: Այդ բառերը շեղվում են գոյականին հատուկ հոլովման կանոններից՝ ցուցաբերելով հոլովական անկանոնություն: Վերջինս դրսևորվում է նրանով, որ հոլովական ձևերում այդ բառերը ենթարկվում են հնչյունական անսովոր փոփոխությունների. նրանց «հոլովիչները» նույնանում են արմատի ձայնավորների հետ:

¹² Տե՛ս *Պետրոսյան Հ.*, նշվ. աշխ., էջ 145:

¹³ Ազն – ազինք (սերունդներ, ցեղեր) // ազունք (ազնվական մարդիկ): Հոգնակի թվում ակնհայտ են ինչպես ձևային, այնպես էլ իմաստային տարբերությունները:

Հմմտ. եզակի ուղղականում հոլովական – հնչյունական հետևյալ զուգաձևությունները. գեղ/զիղ/զեաղ/զեղ, հաւր/հօր, մաւր/մօր, եղբաւր/եղբօր, աւր/օր:

Հմմտ. հոգնակի ուղղականի քերականական զուգաձևությունները. քորք / քեռիք / քոյրք / քուերք, հայրք / հարք, մայրք / մարք, զեաւղք / զեւղք:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ *կին, տիկին* բառերի հոգնակիի պես հոլովվում են – այք, - եայք, -անք, -եանք հոգնական անուններով կազմվածները¹⁴: Հմմտ. այգեստանք / այգեստանեայք, աղախնայք / աղախնեայք, միջերկրեայք / միջերկրայք, հոխտորայք / հոետորայք (հմմտ. եգ. ուղղ. հոխտոր / հոետոր), վաներեայք / վաներայք, պուետայք / պուետեայք Ադամեանք / Ադամանք, Նոյեանք / Նոյանք, Մարիամանք / Մարեմանք¹⁵, գրեան / գրեանք, խաբկանք / խաբք:

Ուղղական հոլովում զուգաձևություն են դրսևորում հոգնակերտ այլ մասնիկներով կազմված բառերը¹⁶. արմատիք / արմտիք, գահինք / գահք, աստեղունք / աստղունք, երիցունք/երիցունիք, անուանք/անուանի, աւագանի /աւագայնի, կանայք/ կանանի, մեհենանի/մեհեանի, գահոյք / գահոյանի, վանեար / վաներ, բանեար/բաներ¹⁷, խրձներ / խրձեր, չարեր / չարիք, քարք / քարեր, ազգք / ազգեր, գայք /գայեր, արտորայ /արտորեայ, վանորայ /վանորեայ (հմմտ. նաև վանորայք /վանորեայք), զեղօրեայք / զեղօրէք, տանիք / տանեստան և այլն:

Ըստ Ա. Բագրատունու՝ հոգնակիի այսօրինակ դրսևորումները հոլովվում են «եզական ձայնի», սակայն «ձայնի եզականք, մերթ և այլք և յոգնականավերջք, լինին երբեմն և առ բուն հինսն կրկին հոգնակի»¹⁸:

Այսպիսով՝

1. Հին հայերենի ուղղական հոլովում առկա են քերականական – ձևաբանական զուգաձևություններ, որոնք բնութագրվում են բառայթի հնչյունային-հնչյունափոխական տարբերակներով կամ հիմքի փոփոխակներով:

¹⁴ Հմմտ. **Աբեղյան Մ.**, Գրաբարի քերականություն, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 774:

¹⁵ Հմմտ. նաև Աղեքսանդրացիք / Աղեքսանդրեանք, Դարեհացիք / Դարեհեանք // Դարեհիք / տե՛ս **Բագրատունի Ա.**, նշվ. աշխ., էջ 53/:

¹⁶ Հավաքականության իմաստ արտահայտող գրաբարյան հոգնակերտ մասնիկների մասին հանգամանորեն տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձևաբանություն, Եր., 1976, էջ 20: **Խաչատրյան Լ., Թոսունյան Գ.**, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 24-25, **Համբարձումյան Վ.**, Գրաբարի ինքնուսույց, Եր., 2004, էջ 44:

¹⁷ - Եր վերջավորության առումով լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ վերջինս առավել շատ տաղաչափական նկատառումով է գործածվում գրաբարում (տե՛ս **Բագրատունի Ա.**, նշվ. աշխ., էջ 48):

Ընդհանրապես ուղղականում հոգնակիակազմության այսօրինակ տարաձևությունները կարելի է դասել ձևաբանական-ռճական (գործառական) զուգաձևությունների շարքին:

¹⁸ Ա. Բագրատունին անդրադառնում է նաև հոգնակիի այլևայլ կազմություններին. հմմտ. – ութին անունով կազմված գոյականները՝ հոգնակիության իմաստով. գերութիւն /գերիք, մարդկութիւն/մարդիկ, զինուորութիւն (ք)/զինուորք, յանցաւորութիւն/յանցաւորք, ընտանութիւն/ընտանիք, գայթակղութիւն/ գայթագղեայք, աշակերտութիւն/աշակերտք, քահանայութիւն/քահանայք, թագաւորութիւն/թագաւորք, առաքելութիւն/առաքեայք, վարդապետութիւն/վարդապետք, հայրապետութիւն/հայրապետք, կուսութիւն/ կուսանք:

Երբեմն հոգնակիի իմաստ արտահայտվում է գոյականների կրկնությամբ. ազգ ազգ // ազգք և այլն (տե՛ս **Բագրատունի Ա.**, նշվ. աշխ., էջ 49):

2. Գրաբարի ուղղական հոլովում զուգաձևություններ ի հայտ են գալիս թե՛ հասարակ անունների և թե՛ հատկանունների շրջանակներում, ընդ որում, հին հայերենի գոյականի համակարգում տարբերակվում են թե՛ զուտ ձևաբանական, թե՛ ձևաբանական – հնչյունափոխական տարբերակներ: Մասնավոր դեպքերում ի հայտ են գալիս նաև ձևաբանական – բառակազմական, ձևաբանական – ռճական (գործառական), ինչպես նաև ձևաբանական- շարահյուսական տարբերակներ:
3. Գոյականի ուղղական հոլովում ձևաբանական զուգաձևություններ են դրսևորում ինչպես պարզ և խառը, ներքին և արտաքին, այնպես էլ անկանոն հոլովումների պատկանող բառերը: Զուգաձևությունների հաճախադեպության առումով առանձնանում են հատկապես Ա արտաքին և Ա ներքին հոլովումների բառերը:
4. Հոլովական զուգաձևությունների առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ հին հայերենում հոլովի և թվի քերականական կարգերը դրսևորվում են միևնույն կառուցատիպերով. Հոլովական տարբերակներում արտացոլվում են եզակի – հոգնակի հակադրության իմաստները:

ПАРАЛЛЕЛИЗМЫ В ИМЕНИТЕЛЬНОМ ПАДЕЖЕ ГРАБАРА

___ *Резюме* ___

___ *Л. Хачатрян, Л. Енгоян* ___

В статье рассматриваются параллелизмы в именительном падеже грабара, различаются их типы по регулярному и нерегулярному спряжению.

Регулярные спряжения проводятся по группам простых и смешанных видов падежа и по внешним и внутренним склонениям. Простые склонения: внешнее склонение А (Մալիք-Մալիք), внутреннее склонение А (ջալէամն-ջալամն), внешнее склонение И (Հովերոս-Հովեր), внешнее склонение ВО (ձմերային-ձմերայնոյ), внешнее склонение У (բարբ-բարոյք), внутреннее склонение Е (աղբիւր-աղբեր).

Смешанные склонения: смешанное внешнее И- А склонение (քուրք-քրմանք-քրմոնք), смешанное внутреннее склонение И-А (ազինք-ազունք), смешанное внешнее склонение ВО-А (Վարդանուհի-Վարդուհի).

В нерегулярных склонениях параллелизмы рассматриваются в единственном числе именительного падежа (գել / գիւ / գեաւ / գեօղ, հաւր / հօր, մաւր / մօր, եղբար / եղբօր, ար / օր) и во множественном числе именительного падежа (քոք / քեօիք / քոյք, գեաւք / գելք).

Տեղեկություններ հեղինակների մասին

Խաչատրյան Լայիկ Մնացականի - ք. գ. դ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ

հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

E-mail: linguala51@mail.ru

Լուսինե Աշոտի Ենգոյան - Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայոց լեզվի

և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,

E-mail: yengoyan-lusine@mail.ru

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

ՕՐՈՐԱՍԱՍՑԻ ԿԵՐՊԱՐԸ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Օրորոցային տեքստերը /lullaby texts/ ստեղծվում և ավանդվում են բանավոր, հետևաբար բանահյուսական նյութը շրջանառվում ու ծավալվում է բանասաց /ասացող¹ (narrator)-ունկնդիր/լսող (listener) հաղորդակցման շրջանակներում: Ուսումնասիրվող նյութի դեպքում բանասացը մայրն է, մեծ մայրը, դայակը, առանձնահատուկ դեպքերում՝ հայրը, իսկ ունկնդիրը՝ երեխան: Օրորոցային բանահյուսական տեքստ է, ուստի գործում է բանահյուսական տեքստի ստեղծման և ընկալման, մասնավորապես բանասացի և ունկնդրի փոխհարաբերությունների ամբողջական համակարգը:

Օրորոցայինների՝ որպես բանարվեստի ինքնատիպ տեքստերի յուրահատկությունը թելադրվում է նրանով, որ հասցեատերը երեխան է և նրա աշխարհը, իսկ հեղինակը՝ ծնողը, առավելապես երեխային ծնող, խնամող, հոգ տանող կանայք:

Օրորոցայինի՝ որպես տեքստի բնույթը, կառուցվածքը, իմաստային ընդգրկունությունը, ոճական առանձնահատկությունները և գործառույթը պայմանավորված են ունկնդրով, հաճախ էլ օրորասացի հոգեվիճակով: Հետևաբար խիստ կարևոր է օրորոցային տեքստի ուսումնասիրման գործընթաց ընդգրկել ասացող – հասցեատեր գործոնները: Օրորոցային տեքստի հասցեատերը միշտ ունկնդիր երեխան է: Առանձին դեպքերում օրորի տեքստը կարող է ընթերցվել ուսումնասիրող-հետազոտողի կողմից, այս իրադրությունում օրորը փոխում է իր գործառույթը: Այսպես, նման դեպքեր լինում են այն ժամանակ, երբ ուսումնասիրողն է օրորոցային տեքստ գրառում բանասացներից իր հետազոտական աշխատանքները կատարելու համար: Մեր ուսումնասիրության պարագայում ևս ունենք բազմաթիվ գրի առած օրինակներ՝ պատմված բանասացների կողմից:

Տեքստը շարունակ վերամշակվում է, վերստեղծվում և *օրորասաց – մանուկ ունկնդիր/մանուկ ունկնդիր - օրորասաց* փոխակերպումների շղթան անընդհատ ընդլայնվում է:

Օրորասացի կերպարը համարժեք ներկայացնելու համար հարկ ենք համարում խմբավորել և հիշատակել վերջիններիս ավանդական և ոչ ավանդական լինելը: Այսպես, առաջին և երկրորդ խմբերին կարող ենք տալ *ավանդական* բնորոշումը:

Առաջին խումբ - *մայր, մեծ մայր դայակ, քույր*

Երկրորդ խումբ – *ավագ երեխա*

Երրորդ խումբ – *հայր, մեծ հայր*

Ավանդական օրորասացների կողմից ստեղծվող տեքստը մեծ մասամբ պատմվում է առաջին դեմքով և միշտ ոճավորվում է: Եթե տեքստը պատմվում է ոչ

¹ Բանասաց անվանումից բացի, կիրարկվում են «ասացող, պատմող» եզրույթները: «Բանասաց, հեքիաթասաց»-ի նմանությամբ օրորոցային տեքստ պատմողին, ասացողին անվանենք օրորասաց:

ավանդական օրորասացի կողմից, այս դարձյալ խոսքը ոճական երանգավորում է ստանում՝ հաճախ ձուլվելով ավանդական օրորասացի խոսքին:

Յուրաքանչյուր օրորասաց կարող է երգել նույն տեքստը ուրույն մոտեցմամբ: Մակայն օրորոցային տեքստերում կան մի շարք կարևոր ցուցիչներ (deictics), որոնք տեղեկատվություն հաղորդող են և գերակա բաղադրիչներ: Օրինակ՝ ժամանակի ցուցիչը՝ այսօր, այս գիշեր, այդ, this, that, բայերի ժամանակային ձևերի ցուցիչները, անձի՝ օրորասացի/ (person deictics) – me, my և ունկնդրի ցուցիչների կիրառումը:

Մեզ համար առավել կարևոր ցուցիչներից կառանձնացնենք օրորերգի տեքստ ասացողին և տեքստ ունկնդրողին. ո՞վ է պատմում տեքստը, ո՞ւմ համար է պատմում, որտե՞ղ և ե՞րբ են այդ իրադարձությունները տեղի ունենում և ո՞ւմ հայեցակետից է պատմվում տեքստը:

Այս համատեքստում օրորոցային տեքստը կարելի է համարել որպես պատմամային /narrative text/: Պատումը ենթադրում է որոշ փոխհարաբերություններ տարբեր մարդկանց, իրադարձությունների մեջ, ինչպես նաև ինչ կապ է հաստատվում ասողի և լսողի միջև:

Ձեք Ջայփսն առաջարկում է մի շարք չափանիշներ², որոնց օգնությամբ կարելի է տարբորոշել բանահյուսական և հեղինակային տեքստերը: Մեր խնդրո առարկայի հետ կապված կառանձնացնենք այդ ցանկում նշված մի քանի չափանիշներ, որոնք կդարձնեն մեր ուսումնասիրությունը առավել ուշագրավ և նպատակային՝ ասացող – ունկնդիր տեսանկյունից.

Բանահյուսություն /folklore/ Գրականություն /literature/

Բանավոր /oral/ գրավոր /written/

Առդեմ հաղորդակցում /face –to–face communication/ անուղղակի հաղորդակցում /indirect communication/

Անցողական /ephemeral/ հարստև /permanent/

Վերստեղծում /re-creation/ ստեղծագործություն /creation/

Տարբերակ /variation/ կրկնություն /revision/

Բանահյուսական օրորոցային տեքստը ենթադրում է օրորասաց/ ունկնդիր ներկայություն:

Բանավոր տեքստը հավանաբար առաջադրում է անցողական գործընթաց, այն վերստեղծվում է՝ դառնալով տարբերակային, ինչը չենք կարող ասել հեղինակային օրորոցային տեքստերի մասին: Վերստեղծման գործընթացը իրականացնում են ավանդական օրորասացները, քանի որ նրանք ունեն առավել հուզական հոգեվիճակ երեխային օրոր երգելիս, նրբորեն են ներկայացնում իրենց ասելիքը՝ օրորոցային տեքստը ամեն անգամ համեմելով նոր բառային միավորներով: Ավելին, ավանդական օրորասացը առավել շատ բան է ուզում ասել, պատմել երեխային: Ուսումնասիրելով ավանդական օրորասացների կողմից ասվող տեքստերը՝ նկատում ենք, որ այդ տեքստերի բառապաշարը պատկանում է հատկա-

² Zipes Jack, *Breaking the Magic Spell: Radical Theories on Folk and Fairy tales*. University of Texas Press, 1979, p. 11.

պես հուզաարտահայտչական շերտին, որը պայմանավորված է վերջիններիս տրամադրության՝ զգացմունքների ընդհանուր վիճակով: Տեքստին հուզականություն և արտահայտչականություն հաղորդելու և մանուկ ունկնդրին այդ ամբողջը փոխանցելու համար մայր օրորասացն ընտրում է *փաղաքշական, նվագական*, երբեմն էլ *չափազանցական* բառային միավորներ: Նշենք այն դիմելաձևերը, որոնք ուղղված են մանուկ հասցեատիրոջը՝ քաղված անգլալեզու և հայ օրորոցային տեքստերի բառանյութից. /*My Bonnie, my own child, my lamb; գառս, ձագուկս, գանձս և այլն*/: Հայերեն օրորոցային տեքստերում բազմաթիվ են նվագափաղաքշական բառերը, հատկապես երեխայի մարմնի անդամներին տրվող փաղաքուշ անվանումները՝ *աչիկ, բղիկ, երեսիկ, թաթիկ, թաթօն, տոտիկ, փորիկ, քիթիկ*: Բազմաթիվ օրորոցային տեքստերում մայրը աստիճանավորման ոճական բանաձևման դիմում իր երեխային կոչելով մի դեպքում՝ *Իմ հոգուս հոգին, մյուս դեպքում՝ փաշա, դրոշա, բալա ջան*:

Օրորասացը իր զգացմունքային, ներքին աշխարհից լեզվաշխարհ է թափանցում նոր բառեր, բառային միավորներ, ահավասիկ՝

- Օրո՛ր, *իմ ատլաս ու խաս...*
- Օրո՛ր, *գառն իկ, օրո՛ր..*
- Նանար ասեմ *բայիկիս,*
- Քունը տանի *ջանիկիս:*

Քանի որ օրորոցային տեքստ ստեղծողը /producer/ հատկապես երեխայի մայրն է, հետևաբար հարկ ենք համարում հակիրճ ներկայացնել և բնութագրել ասացող մորը տրվող անվանումները՝ ըստ բառարանային վկայությունների.

Երեխայախնամ, երեխատած, երեխամայր, ծծմայր, ծննդկան, ծոցվոր, ճճմամ, ճճմայր, մամա, մամե, մանկաբեր, մանկագործ, մանկախնամ, մանկածու, մանկամայր, մանկապահ, մանկապահպան, մանկատած, օրորոցկան:

Հետաքրքրական է *օրորոցկան*³ բառի սահմանումը բացատրական բառարաններում: Այն ունի թե՛ օրորոցում քնած երեխայի և թե՛ օրորոցի մեջ զավակ ունեցող կնոջ իմաստները: Ենթադրաբար բառային մակարդակում մոր և մանուկի նույնացման մասին է խոսքը:

Նշենք նաև այն, որ տեքստերում առկա են երեխային ծնող, հոգ տանող մորը տրվող գեղարվեստական բազմաթիվ բնորոշումներ, որոնք տեքստը դարձնում են ավելի հուզական և լսելի (մամուլ, մամուլիկ):

Պատահական չէ, որ առաջին խմբում են գտնվում մայր օրորասացները: Օրորները մեծ մասամբ ստեղծում և կատարում են մայրերը: Կոմիտասը կանանց կատարումներին մեծ նշանակություն է տալիս. նա գտնում է, որ ընտանիքի բարքերն ու սովորույթները պահպանողները կանայք են, որ նրանց միջոցով է ազգային ոգին անցնում սերնդեսերունդ⁴:

³ Հայոց լեզուի նոր բառարան, Գնել Արքեպս. Ճերեճեան, Փարամազ Կ.Տոնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան: Կ.Տոնիկեան եւ Որդիք հրատարակչատուն, հ.2, Պէյրուք, 1992, էջ 1159:

⁴ **Բրուտյան Մ.**, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Գեղջկական երգ, Եր., 2004, էջ 202:

Օրորասաց մոր կերպարը բոլոր դեպքերում ակտիվ է, ներգործող, քանի որ որոշակի ուղղվածություն ունեն նրա թե՛ խոսքը, թե՛ դիրքորոշումը: Բնականաբար ունկնդիր երեխան գտնվում է հայեցողական, կրավորական վիճակում:

Անգլալեզու և հայ օրորների տեքստերում հաճախ ենք հանդիպում *Mother's arms, թևս դեմ բերեմ, մոր ձեռքեր կամ թևեր, մոր կուրծք* արտահայտություններին, որոնք գործողություն կատարողներն են: Հրեշտակի թևերի պես դրանք պահպանում են երեխային, ապահովում նրա անդորրը: Առանձին օրինակներում օրորասացը, ի մասնավորի մայրը, հանդես է գալիս որպես փոխանուն. երբ մասն ընկալվում է ամբողջի տեղ (*ոչ թե մայրն է, այլ մոր ձեռքը, կամ մոր կուրծքը*):

Lullaby, deep in the clover
Drone the bees softly to rest;
Close white lids your dear eyes over,
Mother's arms shall be your rest.
Lullaby, whisper and sigh,
Lullaby, lullaby⁵.

Օրոր, օրոր օրերուդ,
Թևս դեմ բերեմ չարերուդ,
Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի⁶:

Օրորասաց մոր կերպարը կարևորվում է նաև դարձվածքային մտածողության մակարդակում. *Mummy's boy (mother's boy/mama's boy, tied to your mother's apron strings)*, *մայրիկի բալա, մամայի տղա(աղջիկ), մոր փեշի տակ մեծցած, մոր պահած* արտահայտությունները:

Օրորասաց մոր կերպարը առավել ցայտուն է արտահայտվում հուշ-օրորոցային տեքստերում: Հուշ-օրորոցայիններում «կերպարային» նկատելի շեղում կա, կիզակետը մայրն է, թեև պարբերաբար կրկնվում են *օրոր, քնիք* բառերը՝ ասես հիշեցնելով, որ նպատակը երեխային քնեցնելն է: Ջավակը կարծես դառնում է այն նվիրական անձը, որին մայրը հաղորդակից է դարձնում իրեն հուզող խնդրին, պատմում է իր պատմությունը կամ դրվագներ երեխայի հոր կյանքից...

Դա շապիկն է այն քաջ մարդուն, բալա՛ ջան,
Որ քեզ հայր նա կոչվում էր, օրոր, օրոր, բալա՛ ջան:
Առավոտյան ժամը յոթին, բալա՛ ջան,
Պատերազմում հայրդ սպանվեց, օրոր, օրոր, բալա՛ ջան:
Վրե՛ժ, վրե՛ժ, չար ոսոխից, բալա՛ ջան,
*Խտնաստրը քեզ կանչում է, օրոր, օրոր բալա՛ ջան!*⁷

Մայրը վկայաբերում է ցավոտ ու վշտալի հիշողություններ, որը ինչ-որ չափով կարելի է համարել նաև տեղեկատվական գործառույթ ունեցող օրորոցային: Ստորև բերում ենք այլ օրինակներ.

⁵ <http://www.musingsbylizzytish.com/otm/LullabiesAndDreams.html>).

⁶ **Գրիգորյան Ռ.**, *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Եր., 1970, էջ 55:

⁷ *Հայ ժողովրդական ռավի և զինվորի երգեր*, Աշխատասիրությանը Ա.Ս. Ղազիյանի, Եր., 1989, էջ 127:

*Daddy shot a bear,
Daddy shot a bear,
Shot him through the keyhole-
An' never touch a hair⁸.*

Այսօրինակ օրորները նպատակ ունեն տղա երեխայի մեջ սերմանելու այրական սկիզբ՝ դժվարին իրավիճակներում դրսևորվող ուժ, խիզախություն:

Օրորոցի շուրջ ծավալվող իրավիճակը հնարավորություն է տալիս մորը պատմելու մանկիկին այն ամենի մասին, ինչը չէր կարող ասել այլ պայմաններում մեկ ուրիշին:

*Baloo, my boy, lie still and sleep
It grieves me sore to hear thee weep
If thou'lt be silent I'll be glad
Thy moaning makes my heart full sad.
Baloo, my boy, thy mother's joy
Thy father bred me great annoy
Baloo, baloo, baloo, baloo,
Baloo, baloo, lu—li-li-lu.⁹*

Հաճախ հուշ-օրորոցայինները ունեն հստակ թեմատիկ-գործառույթային տրոհում. երկու տող – բուն քնաբեր տեքստ, երկու տող հուշերգություն, որը մանկան քնելու հետ առանձնապես չի առնչվում:

Ավանդական է նաև օրորասաց մեծ մոր երգած օրորոցային տեքստը.

*Նենի ըսիմ, քնցնիմ որդի, նենի, նենի, նենի, նենի,
Անուշ քնեն, թոցնիմ որդի, նենի, նենի, նենի:
Դնիմ զավակս, օրոր անեմ
Որդի, օրոր, օրոր, օրոր, օրոր...
Պագնիմ անուշ բերանը, որդի, օրոր, օրոր,
Օրոր...*

Առանձին օրորներում որպես օրորասաց կարող է հանդես գալ հայրը:

Հետևյալ տեքստը՝ «Հոր օրորը», մորը կորցրած երեխայի համար երգում է հայրը՝ ունենալով այն գիտակցումը, որ ինքը չի կարող մոր նման լավ երգել իր զավակի համար: Նման օրինակները բավականին սուղ են, սակայն օրինակների սղությունը չի կարող պատճառ հանդիսանալ դրանք անտեսելու համար, հետևաբար մեջ ենք բերում հրեական օրորերգի անգլալեզու տարբերակը:

*Through some wild, deserted stretch
The wind is howling like a bitch,
For mother's breast a baby weeps
Until in father's arms he sleeps.
So the father lulls his babe*

⁸ *Our Singing Country, Folk Songs and Ballads Collected and Compiled by John A. Lomax and Alan Lomax, Courier Dover Publications, 1941, p.95.*

⁹ <http://www.contemplator.com/ireland/dromore.htm>

With a ballad of the grave

Other Jews around him shudder.¹⁰

Օրորների տեքստերում երբեմն կերպավորվում են նաև ընտանիքի համեմատաբար հասուն երեխաները, որոնք միջավայր են ստեղծում, լրացնում են հոգեբանական ապրում-պատկերը: Այսպես՝

Sleep like a lady(or gentleman)

You shall have milk

When the cows come home

Father is the butcher

Mother cooks the meat

Johnnie rocks the cradle

While baby goes to sleep¹¹.

Ենթադրաբար այս օրինակում ընտանիքի մեկ այլ երեխա՝ Ջոնին է համարում ներընտանեկան միջավայրը:

Այսպիսով, յուրաքանչյուր օրորասաց առանձնանում է իր պատմելաձևով, ասելիքով: Լեզվական իրականությունը (օրորոցայինների տեքստերը) համապատասխանաբար արտահայտում է այն մտացածինը, որը միշտ արտաքն կարգի է, առօրեական ռիթմից դուրս և մոտենում է օրորասացի՝ զավակի հանդեպ ունեցած զգացողության բացառիկ դրսևորմանը:

ОБРАЗ СКАЗИТЕЛЯ В АНГЛОЯЗЫЧНЫХ И АРМЯНСКИХ ФОЛЬКЛОРНЫХ КОЛЫБЕЛЬНЫХ ТЕКСТАХ

____ *Резюме* _____

____ *А. Матикян* _____

Тексты колыбельных песен создаются и передаются устно, поэтому фольклорный материал обращается и разворачивается в рамках общения сказитель-слушатель. Каждый сказитель колыбельной песни может по своему обращаться к одному и тому же тексту колыбельной песни. Для соответствующего представления сказителя колыбельной песни мы сочли необходимым группировку и упоминание традиционности и не традиционности последних.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մատիկյան Հասմիկ Համլետի – ՀՀ ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոն,

E-mail:hasvrej@mail.ru

¹⁰ *Kramer A. Lishinsky S. The Last Lullaby: Poetry from the Holocaust. Syracuse University Press, 1999, p. 46.*

¹¹ *Simpson J. and Roud St. A Dictionary of English Folklore, Oxford University Press, 2000.*

Աննա ՊԱՊՈՅԱՆ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ

Արդի սոցիալական, հոգեբանամանկավարժական հետազոտությունները հաստատում են այն փաստը, որ ներկա ժամանակներս բազմաթիվ կենսագենետիկ, սոցիոգենետիկ և հոգեգենետիկ գործոնների ազդեցության հետևանքով ավելի են շատացել զարգացման և վարքի շեղումներով երեխաները:

Մինչ վերջին ժամանակներս Հայաստանի ավանդական կրթական համակարգում այս կամ այն շեղում ունեցող երեխաներն ստանում էին կրթություն միայն հատուկ կրթական հաստատություններում, տանը կամ տուն ինտերնատներում, սակայն վերջերս Հայաստանում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. փոխվեց հասարակության վերաբերմունքը առողջական խնդիրներ ունեցող և հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: Այժմ ավելի շատ է գիտակցվում, որ հոգեֆիզիկական խանգարումները չեն բացառում մարդկային էությունը (զգալու, անհանգստանալու կարողությունները), ինչպես նաև հասարակական փորձի յուրացումը:

Ժամանակն է հասկանալու, որ յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հաշվի առնելով նրա անհատական ընդունակությունները, կարողությունները և կրթական պահանջները:

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ սահմանափակ հնարավորություններով անձանց հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Սակայն ներառական կրթության ներմուծումը ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար է բարենպաստ ազդեցություն ունենում, այլև վերջիններիս նորմալ զարգացող տարեկիցների համար:

Ուսուցման ընդհանուր պրոցեսում նորմալ զարգացման ընթացք ունեցող երեխաները, շփվելով հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, ձևավորում են հանդուրժողականություն, էմպատիա նրանց նկատմամբ, ձգտում օգնել նրանց, իսկ հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ ցածրանում է ագրեսիվության և անհանդուրժողականության ռիսկը: Համատեղ ուսուցման իրականացման փորձը վկայում է, որ այդ բարդ գործընթացը պահանջում է դպրոցի սովորական կենսաձևի վերակառուցում:

Ներառական կրթության ներմուծումը հանրակրթական դպրոցներ մեծ փոփոխության է ենթարկում նաև մանկավարժի աշխատանքը:

Հոգեբանական հարմարման տեսանկյունից անհրաժեշտ է դառնում կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված հատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտին մանկավարժների, աշակերտների և ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով սովորողի համար պայմաններ ստեղծել՝ ընդգրկվելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները:

Ներառական կրթության առաջնային խնդիրներից մեկը մասնագետների անբավարար պատրաստվածությունն է:

Այսպիսով, ներառական կրթության ներմուծման խնդիրը հակասություն է առաջացնում. մի կողմից՝ անհրաժեշտ է արագ ներդնել ներառական կրթությունը դպրոցում, իսկ մյուս կողմից՝ չունենք ներառական կրթության ինտեգրմանը պատրաստ մանկավարժներ: Գիտական գրականության մեջ «պատրաստվածություն» ասպեկտը քննարկվում է տարբեր հայեցակարգերով:

Վ. Ա. Կրուտեցկին սահմանում է «պատրաստվածությունը» ինչպես գործունեության պիտանիություն՝ արտահայտված ակտիվ և դրական վերաբերմունքով, դրանով զբաղվելու հակումով, որն անցնում է զարգացման բարձր մակարդակի՝ դառնալով տարվածություն: «Պատրաստվածություն» հասկացությունը նա դիտարկում է նաև որպես համապատասխան բնագավառում գիտելիքների, կարողությունների և հմտությունների առկայություն:¹

Լ. Վ. Կանտրաշևան գտնում է, որ պատրաստվածությունը մանկավարժական գործունեությանը ենթադրում է այնպիսի անհրաժեշտ հարաբերությունների, դիրքորոշման, անձի որակների և հասկանիչների ձևավորում, որոնք ապահովում են ապագա մասնագետին գիտակցաբար, բարեխղճորեն, անելիքն իմանալով գործի անցնել և ստեղծագործաբար կատարել իրենց մասնագիտական գործառույթները և պարտականությունները:²

Առկա մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հաճախ պատրաստվածությունը դիտարկվում է որպես գիտակցվածության որոշակի իրավիճակում պատասխանատվորեն գործելու կամ դրան նախապատրաստվելու ֆունկցիոնալ համակարգ:

Մանկավարժի մասնագիտական գործունեությանը անձի պատրաստվածությունը ենթադրում է 3 հիմնական տեսակի առանձնացում՝ ֆիզիկական, հոգեբանական և հատուկ: Ֆիզիկական պատրաստվածությանը չենք անդրադառնա, քանզի հոգեբանամանկավարժական գործունեության մեջ անձին չեն ներկայացվում հատուկ ֆիզիկական պահանջներ (բացառությամբ՝ հասարակայնորեն ընդունված նորմերը և պահանջները):

Մենք հակված ենք դիտարկելու ներառական կրթական համակարգում մասնագիտական գործունեություն ծավալելու պատրաստվածությունը՝ որպես անձնային որակ: Այս առումով մասնագիտական գործունեության իրականացման պատրաստվածությունը կախված է մանկավարժի անհատական առանձնահատկություններից:

Կախված «հոգեբանական պատրաստվածություն» հայեցակարգի սահմանման մոտեցումից՝ տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են նրա կառուցվածքը, հիմնական բաղադրիչները, կառուցվում են նրա ձևավորման ուղիները:

¹ Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Եր., 1976, 443 էջ:

² Инклюзивное образование в России и Москве. Статистика и справочные материалы// <http://www.dislife.ru/flow/theme/4696/>

Տվյալ խնդրի ուսումնասիրություններն սկսվել են 1950-ական թվականներին, երբ մասնագիտական պատրաստման անհրաժեշտություն էր առաջացել:

Պատրաստվածության ամենատարածված սահմանումը հնչում է հետևյալ կերպ. այն մասնագիտական գործունեության հաջող կատարման պայման է, որը պետք է ձևավորվի և կատարելագործվի ինչպես անձի կողմից, այնպես էլ պետության կողմից իրականացվող միջոցառումների ամբողջական համակարգով:

Ներառական կրթության զարգացման արդեն իսկ առաջին փուլից հանրակրթական դպրոցի ուսուցիչների մոտ (մասնագիտական, մեթոդական) անմատչելիության սուր խնդիր է առաջանում հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու: Ուսուցիչների մոտ բացահայտվում են ներառական միջավայրում աշխատելու մասնագիտական կոմպետենտության թերություններ, ինչպես նաև հոգեբանական արգելքներ և մանկավարժի մասնագիտական կարծրատիպերի առկայություն:

Հանրակրթական դպրոցի մասնագետներն ունեն մասնագիտացված համալիր օգնության կարիք: Նրանց կարևորագույն խնդիրն է կարողանալ աշխատել կրթական տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների հետ և հաշվի առնելով նրանց յուրահատկությունները՝ յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերել յուրահատուկ մանկավարժական մոտեցում:

Սակայն մանկավարժների համար հիմնական հոգեբանական «արգելք» են վախը անհայտի, ներառման գործընթացի մյուս մասնակիցներին վնասելու, բացասական դիրքորոշումները և նախապաշարմունքները, մանկավարժների մասնագիտական անվստահությունը, փոխվելու դժկամությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հոգեբանական անպատրաստվածությունը: Մա լուրջ խնդիր է դնում ոչ միայն կրթության ոլորտի հոգեբանական կողմի, այլ նաև մեթոդական ծառայությունների և, որ ամենակարևորն է, ներառական կրթության սկզբունքներն իրականացնող կրթական հաստատությունների ղեկավարների առջև:

Զարգացման խանգարումներով երեխաներին ընդհանուր կրթության գործընթաց ներառող ուսուցիչների գործունեության արդյունավետության վրա ազդող հիմնարար հոգեբանական գործոնը այդ երեխաներին հոգեպես ընդունունելն է:

Սակայն, ըստ հոգեբանների, մանկավարժական գործունեության մեջ էմոցիոնալ ընդունումն ունի մասնագիտական «արգելք», մանկավարժը հոգեբանորեն չի ընդունում այն երեխային, որի ուսուցման հաջողության մեջ վստահ չէ: Մանկավարժը չգիտի, թե ինչ եղանակով ստուգի գիտելիքները:

Զգայական խանգարումներով երեխաների դեպքում առաջանում է նաև «չհասկանալու» արգելքը: Առավել մեծ դժվարություն են ներկայացնում այն երեխաները, որոնք ունեն ինտելեկտի խախտում: Նրանք ակնհայտորեն չեն կարող յուրացնել հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագիրը, նրանց համար անհրաժեշտ է հատուկ ուսումնական, անհատական ծրագրի օգտագործում, որը հանրակրթական դպրոցի մանկավարժի համար չափազանց դժվար է: Նրանց հետ

աշխատանքում պետք է հաշվի առնել կրթական նպատակները, այլ ոչ թե ակադեմիական արդյունքները:

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար հարկավոր է կազմակերպել հատուկ մեթոդական աշխատանքային ուսուցում և այս երեխաների սոցիալ-մշակութային ադապտացումը հասարակությանը:

Ուսուցիչները, որոնք ունեն ներառական կրթական համակարգում աշխատելու արդյունավետ փորձ, առաջարկում են ներառելու հետևյալ եղանակները.

1. կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին ընդունել այնպես, «ինչպես մնացած բոլոր երեխաներին դասարանում»,
2. ընդգրկել նրանց նույն գործունեության մեջ, սակայն նրանց առաջ դնել տարբեր խնդիրներ,
3. ներգրավել երեխաներին խմբային աշխատանքներում,
4. օգտագործել ակտիվ ուսումնական ձևեր և խաղեր, ծրագրեր, հետազոտություններ դպրոցից դուրս:

Ներառական կրթության ներմուծումը դպրոց մեծապես փոխում է ուսուցչի դերը:

Ղ. Կ. Լիպկին և Գարթները գտնում են, որ ուսուցիչները նպաստում են սովորողների ակտիվացման ներուժին՝ համագործակցելով միջոցիսցիպլինար միջավայրում այլ մանկավարժների հետ՝ առանց արհեստականորեն առանձնացնելու հատուկ և ընդհանուր մանկավարժների: Նրանք աշակերտների հետ ներգրավվում են տարաբնույթ շփումների մեջ, ինչի շնորհիվ էլ ճանաչում են յուրաքանչյուրին անհատապես: Բացի այդ, մանկավարժները դպրոցից դուրս ներգրավված են ավելի լայն սոցիալական շփումների, որոնց թվին են պատկանում սոցիալական աջակցության ռեսուրսները և ծնողների հետ շփումը:³ Նման մասնագիտական դիրքորոշումը ուսուցիչներին թույլ է տալիս հաղթահարել իրենց մտահոգությունը և անհանգստությունը, հասնել մասնագիտական հմտության միանգամայն նոր մակարդակի՝ հասկանալով աշակերտներին և իր կոչումը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մանկավարժի պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում ունի երկու հիմնական ցուցանիշ՝ մասնագիտական պատրաստվածություն և հոգեբանական պատրաստվածություն.

«Մասնագիտական պատրաստվածություն» հասկացությունը դիտարկվում է որպես տեսական գործունեության և հասկացության կատեգորիա, մի կողմից՝ որպես գործընթացի նախապատրաստման արդյունք, իսկ մյուս կողմից՝ որպես ինչ-որ բանի դիրքորոշում:

Մասնագիտական պատրաստվածության կառուցվածքը ենթադրում է հետևյալ տարրերի առկայությունը.

- տեղեկատվական պատրաստվածություն,
- մանկավարժական համապատասխան տեխնոլոգիաների տիրապետում,
- գիտելիքներ հոգեբանության հիմունքներից և ուղղիչ մանկավարժությունից,
- գիտելիքներ երեխաների անհատական տարբերությունների մասին,

³ Ярская-Смирнова Е., Лошакова И. Инклюзивное образование детей-инвалидов. Социологические исследования, 2003, N 5, стр. 100-106.

- պատրաստակամություն վերափոխելու ուսուցման գործընթացի ողջ պրոցեսը,
- պատրաստակամություն մասնագիտական համագործակցության և ուսուցման:

Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը խնդրի հաջող լուծման հիմքն է, որը ներառում է բոլոր անհրաժեշտ և բավարար առաջիկա գործողությունների տարրերը: Հոգեբանական պատրաստվածությունը գործունեությանը պարտադիր պայման է ոչ միայն այն սկսելու, այլ նաև արդյունավետ լուծման համար:

Ուսուցման մեթոդներ: Այսօր բազմաթիվ մեթոդական նորարարությունները կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել գիտելիքների կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչներն են.

- ուսուցմանը նպաստող միջավայր, որտեղ երեխան զգում է իր մասնակցության կարևորությունը,
- աշակերտի՝ որպես անձի կարևորությունը և մտավոր կարողությունները:

Ինտերակտիվ ուսուցման էությունն է բոլոր սովորողների ընդգրկումը ճանաչողական գործընթացի մեջ: Այսինքն՝ յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է ունենում ուսուցման գործընթացում, տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում:⁴

Ինտերակտիվ ուսուցումը բացառում է որևէ մեկի (աշակերտի կամ ուսուցչի) առաջնայնությունը, գերակայությունը մյուսների նկատմամբ: Դասերի ընթացքում կազմակերպվում է անհատական կամ խմբային աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն:

Ինտերակտիվ ուսուցումը գործնականում կիրառելու համար կարևոր պայման է ուսուցչի անձնական մասնակցությունը նման ոճով ուսուցմանը կամ վերապատրաստմանը: Այսինքն՝ ուսուցչը կարող է կարդալ մեծ քանակությամբ գրականություն ուսուցման ակտիվ մեթոդների մասին, բայց դրանք հնարավոր է կիրառել միայն սեփական փորձի շնորհիվ: Ամենալավ մեթոդը որոշակի մեթոդ չունենալն է: Մեկ կամ երկու մեթոդով բավարարվելով՝ չի կարելի դասընթաց վարել: Յուրաքանչյուր դասի համար (պայմաններից կախված) անհրաժեշտ է ընտրել համապատասխան մեթոդ:

Յուրաքանչյուր ուսուցիչ ազատ է մեթոդների ընտրության հարցում: Մեթոդի ընտրությունը շատ կարևոր է, քանի որ ճիշտ ընտրված մեթոդը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնելու ուսուցման գործընթացը:

Փորձարարական հետազոտությունը: Ստորև ներկայացված է փորձարարական հետազոտություն, որի նպատակն է ներառական կրթական համակարգում աշխատող մանկավարժների հոգեբանական պատրաստվածության գնահատումը:

⁴ Салевко Г.К. Педагогические технологии на основе активизации, интенсификации и эффективного управления УВП. М., 2005.

Հետազոտության առարկան ներառական կրթական համակարգում աշխատելու մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստվածության պայմանների և միջոցների ձևավորումն է:


Աշխատանքում օգտագործել ենք հետևյալ համալիր մեթոդները և մեթոդիկաները. *տեսական մեթոդներ* - հոգեբանության գիտական և ուսումնադաստիարակչական մեթոդական գրականության տեսական վերլուծություն, *էմպիրիկ մեթոդներ* - հարցազրույց, թեստավորում, զրույց, *փորձարարական տվյալների մշակման մեթոդներ* - ուսումնասիրության արդյունքների քանակական մշակում, տվյալների գրաֆիկական պատկերում, *վիճակագրական մեթոդներ*:

Հետազոտությունն անցկացվել է Գյումրի քաղաքի ներառական կրթություն իրականացնող տարբեր դպրոցներում որին մասնակցել են 15 մանկավարժներ: Հետազոտական աշխատանքը ունեցել է երեք ամիս տևողություն:

Մեր կողմից կիրառվել է հատուկ մշակված ծրագիր, որի հիմնական նպատակն է մանկավարժների հոգեբանամանկավարժական պատրաստության մակարդակի բարձրացումը:


Հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը ծրագրի կիրառումից առաջ

Դիագրամ 1



Հոգեբանամանկավարժական պատրաստվածության մակարդակը ծրագրի կիրառումից հետո

Դիագրամ 2



Ամփոփելով վերը նշվածը՝ եզրակացնենք. մանկավարժների պատրաստվածությունը ներառական կրթական համակարգում աշխատելուն կարող է բնութագրվել դրդապատճառային, անձնային, էմոցիոնալ, ճանաչողական փոխկա-

պակցված բաղադրիչների միջոցով: Դրդապատճառային բաղադրիչի մեջ մտնում են ձգտումը մարդկանց նկատմամբ, սոցիալական դիրքորոշումներում աշխատանքի գերակայությունը: Անձնային բաղադրիչի մեջ են մտնում հանդուրժողականությունը մարդկանց և հատկապես հատուկ կարիքով երեխաների նկատմամբ, ինչպես նաև մասնագիտական անձնային որակները (հուզական կայունություն, գիտակցվածություն, ինքնուրույնություն): Էմոցիոնալ բաղադրիչի մեջ նկատի է առնվում մարդկանց նկատմամբ ցուցաբերվող ապրումակցման մակարդակը: Ճանաչողական բաղադրիչի մեջ են մտնում ոչ խոսքային լեզուն հասկանալու ունակությունը, մարդկանց մասին արագ և ճիշտ դատողություններ անելը, ուրիշների հետ հարաբերություններում հեռատեսություն ցուցաբերելը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ներառական կրթական համակարգում աշխատելու մանկավարժների պատրաստվածությունը ցածր մակարդակի է, որը դրսևորվում է ցածր սոցիալական դիրքորոշմամբ, հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի ցածր շարժառիթով, նրանց նկատմամբ անհանդուրժողականությամբ, նաև այդպիսի երեխաների հետ աշխատանքի մեթոդների մասին տեղեկատվության պակասով:

Տվյալ հանգամանքը պահանջում է ներառական կրթությունն իրականացնող մանկավարժների համար ձևավորել վերապատրաստման հատուկ մշակված համակարգ:

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ ДЕТЕЙ С ИНКЛЮЗИВНЫМ ОБРАЗОВАНИЕМ

___ *Резюме* ___

___ *А. Папоян* ___

Инклюзивное образование рассматривается как способ и средство социальной интеграции людей с ограниченными возможностями и обеспечивает их регулировку. Введение инклюзивного образования хорошо влияет не только на детей с особыми образовательными потребностями, но и на их нормально развивающихся сверстников. В процессе обучения нормально развивающиеся дети, общаясь с детьми с особыми образовательными потребностями, проявляют терпимость, сочувствие к этим ученикам и пытаются им помочь.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Պապոյան Աննա Գարլենի – ԳՊՄԻ հոգեբանության
ախփոն, E-mail: artush.papoyan@mail.ru*

**ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՊԱՂՈՒՄ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԻՆՔՆԱԳԻՏԱՆՍԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Ինտելեկտուալ զարգացման խախտումների, այդ թվում նաև դրա հապաղման ժամանակ, հոգեբանական նորակազմությունների ձևավորումը դանդաղ է տեղի ունենում: Հետազոտողներն ընդգծում են, որ հոգեկան զարգացման հապաղմամբ (ՀԶՀ) երեխաների ինքնագիտակցությունը և անձնային զարգացման մյուս ասպեկտները դրսևորվում են ավելի հազվադեպ, քան նրանց ճանաչողական զարգացումը: Մինևույն ժամանակ, հատուկ կրթության ժամանակակից միտումները նպատակաուղղված են զարգացման խախտումներով երեխաների կենսական իրազեկության, սոցիալական շարժունության ապահովման անհրաժեշտությանը¹. «Աստիճանաբար ակնհայտ է դառնում անձնային, սոցիալ-զգայական զարգացման, ինքնագիտակցության և ինքնաճանաչման զարգացման, երեխայի վարքի գիտակցականության և իրական կյանքի ամբողջ պատրաստվածության դերի ու տեղի վերաիմաստավորման անհրաժեշտությունը»²: Սրանով պայմանավորված՝ արդիական են դառնում համապատասխան ծրագրերի ու պայմանների մշակումն ու ներդրումը³: Հետևաբար, այդ գործընթացում էական է զարգացման խախտումներով երեխաների ինքնագիտակցության ձևավորման հնարավորությունների ուսումնասիրումը:

ՀԶՀ երեխաների անձնային զարգացման բավական ամբողջական բնութագրում են տալիս Ն. Բելոպոլսկայայի և Ե. Սլեպովիչի հետազոտությունները⁴:

Ն. Բելոպոլսկայան հաստատել է մի շարք էական առանձնահատկություններ ինտելեկտուալ զարգացման խանգարումներով երեխաների ինքնագնահատականի և հավակնությունների կայացման մեջ: Օգտագործելով սեռատարիքային նույնականացման գնահատման սեփական մեթոդիկան՝ հեղինակը մի շարք հետաքրքիր փաստեր է արձանագրել: Նախ, ինտելեկտուալ զարգացման խախտումներով երեխաները թեն կարող են նույնականացվել անցյալի, ներկայի և ապագայի կերպարներին, այդուհանդերձ նրանք ի գործու չեն կառուցելու լրիվ նույնականացման հաջողականություն: Երկրորդ՝ այդ երեխաների միայն մի մասն է կողմնորոշված դեպի ապագա՝ հետևելով որևէ նախընտրելի կերպարի: Ապագայի կեր-

¹ *Гончарова Е., Дмитриева Д. Фотолетопись жизни маленького человека: для него, для меня, для нас // Дошкольное воспитание. 2006. № 8. стр. 102-111.*

² *Дети с задержкой психического развития/Под ред. Т. Власовой, В. Лубовского, Н. Цыпиной. М., 1984.*

³ *Аронова Е. Взаимосвязь структур самосознания и стиля саморегуляции деятельности // М-лы III Всероссийского съезда психологов, 25-28 июня 2003. СПб, 2003. Т. 1. стр. 204 - 208.*

⁴ *Белопольская Н. Психологическое исследование половозрастной идентификации у детей со снижением интеллекта // Дефектология. 1992. № 1. стр. 5-15.*

պարը, ինչպես հայտնի է, ունի մոտիվացիոն ուժ: Նորմալ զարգացող երեխաները հիմնականում ընտրում են այդպիսի կերպարներ, իսկ ինտելեկտուալ զարգացման խանգարմամբ (ԻՋԽ) երեխաների մի մասն իր ընտրությունում կանգ է առնում միայն իր ներկա կերպարի վրա: Դպրոցական ուսուցման առաջին տարիներին ընտրության առանձնահատկությունը կանխատեսման նշանակություն ունի հասպտման փոխհատուցման հեռանկարների համար: Մոտիվացիոն պատկերացումների հատկանիշների առկայությունը չհայտնաբերած երեխաները հետագայում ցուցաբերում են զարգացման դանդաղ դինամիկա⁵:

ԻՋԽ երեխաներն ընդունակ են հասկանալու բարոյական բովանդակությամբ պատմվածքների իմաստը (անհատականացված ներկայացման պայմանով): Ն.Բելոպոլսկայայի կողմից դա գնահատվել է որպես զգայական պատկերացման պլանում գործելու և կերպարի հետ նույնականացվելու հնարավորություն:

Երեխաների ինքնագիտակցության ախտորոշման հեղինակի կողմից օգտագործված բոլոր հնարներն ունեն տարբերակախտորոշիչ նշանակություն: Մտավոր հետամնաց երեխաներն զգալիորեն ավելի վատ են կատարում ախտորոշման հանձնարարությունները: Հետազոտության նշանակալի արդյունքներից մեկը ինքնագնահատման նախադրյալների ձևավորման բնորոշ ընթացքի նկարագրման հնարավորությունն է⁶:

Ե. Սվետովիչի բազմաթիվ աշխատություններում բացահայտվել է, որ երեխաներն ավելի հաճախ փոխանցում են մեծահասակների դատողությունները: Երեխաների արժեքային կողմնորոշումները չեն վերաբերում անհատական-հոգեբանական հատկություններին, ունեն կիրառական (պրագմատիկ) ուղղվածություն:

Մեծահասակների վարքի բարոյական նորմերի հասկացումը ՀՉՀ առավել ավագ երեխաների մոտ կրում է անձնական բնույթ: Այդ երեխաների վարքի բարոյական նորմերով կարգավորումը կապված է իրավիճակի ըմբռնման հետ, միանշանակ իրավիճակներում նրանք ավելի հաճախ ղեկավարվում են նորմով: Ե.Սվետովիչը այդ փաստը կապում է զգայական երևակայության թերությունների հետ: Մեր տեսակետից դա հերթական անգամ ապացուցում է, որ երեխաների խոսքային և իրական վարքի մակարդակները ապահամաձայնեցված են:

ԻՋԽ-ների ամենամեծ փոփոխությունները իրենց և շրջապատի մասին տեղի են ունենում այն ոլորտներում, որոնք ներկայացված են նրանց գործունեության մեջ: Գործունեության կոնկրետ տեսակներում համարժեք ինքնագնահատականը հասանելի է դառնում երեխաների մեծամասնությանը, բայց սեփական անձնային հատկությունների մասին պատկերացումները մնում են անլիարժեք:

Ե. Սվետովիչը էական տարբերություն է հայտնաբերել համեմատաբար թեթև և համեմատաբար վաղ արտահայտված ԻՋԽ երեխաների մոտ: Երկրորդ խմբի երեխաները դրսևորում են ակնհայտ նմանություն մտավոր հետամնացների հետ,

⁵ Белопольская Н. Половозрастная идентификация. Методика исследования детского самосознания, М., 1998, стр. 24.

⁶ Նույնը:

նրանք բնորոշում են շրջապատող մարդկանց իրենց կողմից իրականացվող գործունեության միջոցով: Նրանց առնչումը հասակակիցների և մեծահասակների հետ գերազանցապես իրավիճակային է, վարքի կարգավորման հնարավորությունները նվազագույնն են, նրանք ղեկավարվում են միայն գործուն արժեքներով⁷:

Տ.Գորդենայի և Գ.Միշինայի ստացած տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ «Ես» կերպարի անկատարության պատճառները թաքնված են ընտանեկան փոխհարաբերությունների առանձնահատկությունների մեջ: Հեղինակները հաստատել են, որ այդ երեխաների մոտ բացակայում է բարեկամների՝ առաջին հերթին մոր հետ զգայական մտերմությունը, նրանք չգիտեն և չեն հասկանում մյուս մարդկանց զգացմունքների դրսևորումները, մեծ վախ և անվստահություն են զգում նրանց հանդեպ⁸:

Ե. Դմիտրիևայի աշխատանքներում ԻՆՁ երեխաների սոցիալ – անձնային զարգացման մեջ հաստատվել է մեծահասակների հետ առնչվելու հանգամանքի կարևորությունը: Հեղինակը «Ես» կերպարի սոցիալական բաղադրամասում առանձնացրել է այն խախտումները, որոնք իրենց արտացոլումն են գտնում անբավարար սոցիալական իրազեկության մեջ: Հասակակցի նկատմամբ կարեկցանք դրսևորելու անհրաժեշտության դեպքում նրանք ցուցաբերել են զգայական իլություն և սոցիալամետ վարքի աննշան պատրաստակամություն, վարքային ինքնակարգավորման ցածր մակարդակ: Այդ երեխաների սոցիալական իրազեկությունը ճշտվել է հաղորդակցական գործունեության զարգացման մակարդակով: Ե.Դմիտրիևան եզրակացություն է արել ՀԶՀ նախադպրոցականների «Ես» կերպարի» ոչ թե ուղղակի հասպտղված, այլ ձևափոխված լինելու մասին⁹: Այդ արդյունքները հաստատում են Ն.Բելոպոլսկայայի, Ի.Կորոբեյնիկովայի և այլ հետազոտողների կարծիքները:

Բոլոր թվարկված թերությունները հանգեցնում են այն բանին, որ ինտելեկտուալ զարգացման խանգարումներով երեխայի դպրոց գնալն ուղեկցվում է բազմաթիվ դժվարություններով և անհարմարություններով: Լ.Կուզնեցովան ցույց է տվել, որ կրտսեր դպրոցական տարիքի շեմին ՀԶՀ երեխաներն ունեն ուսուցման անբավարար անձնային (մոտիվացիոն) պատրաստակամություն, որը կապված է վարքի կամային կարգավորման անընդունակության հետ¹⁰:

Վարքի կարգավորման անբավարար հնարավորությունները կապված են նաև ուղեղի կառուցվածքի անխարժեքության հետ, ինչն ապացուցված է ֆիզիոլոգ

⁷ Слепович Е. Психологическая структура задержки психического развития в дошкольном возрасте: Автореф. дис. д-ра психол. наук: М., 1994.

⁸ Гордеева Т., Мишина Г. Роль близкого взрослого в становлении «образа Я» у ребенка с задержкой психического развития // Дефектология. 2005. № 1. стр. 47-51.

⁹ Дмитриева Е. Коммуникативно-личностное развитие детей дошкольного и младшего школьного возраста с легкими формами психического недоразвития: Дис... д-ра психол. наук: Нижний Новгород, 2005.

¹⁰ Кузнецова Л., Особенности мотивационно-волевой готовности детей с ЗПП к школьному обучению // Автореф. дис. ... канд. психол. наук. М., 1986; Кузнецова Л. Особенности мотивационно-волевой готовности детей с задержкой психического развития к школьному обучению // Дефектология. 1981. № 6, стр. 28-34.

Մ. Ֆիշմանի հետազոտություններում: Մ.Ֆիշմանը համահեղինակների հետ ցույց տվեց, որ հնարավոր են նյարդաֆիզիոլոգիական անբավարարության երկու տարբերակ, որոնք պայմանավորում են ՀՉՀ դեպքում զգայական տհասությունը և վարքային խախտումները¹¹:

Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ ցանկացած երեխայի զարգացում ենթարկվում է օրինաչափությունների, որոնք նկարագրված են Մ.Դոմիշկևիչի ֆունկցիոնալ-մակարդակային մոտեցման հայեցակարգում: Վերջինս հոգեկան զարգացումը ներկայացնում է որպես հաջորդական գալարային աստիճանների անցկացում¹²: Հեղինակի կարծիքով, բարձրագույն հոգեկան ֆունկցիաները դառնում են անկաշկանդ միայն ճանաչողական գործունեության ձևավորվածության, այսպես կոչված, երրորդ մակարդակում: Այդ մակարդակը նորմալ զարգացող երեխայի կողմից նվաճվում է վեց-յոթ տարեկանից ոչ շուտ: Սակայն, պատահում է, որ նույնիսկ նորմալ զարգացող առաջին դասարանցիների մոտ այն դեռ ամբողջապես չի ձևավորվել: Նախադպրոցականի համար «նորմատիվային» է ճանաչողական գործունեության երկրորդ մակարդակը, որում առավել ակտիվորեն ձևավորվում են սեփական գործունեության և վարքի գիտակցման հնարավորությունները:

Ինտելեկտուալ զարգացման խանգարումների դեպքում ստորին մակարդակներից յուրաքանչյուրին անցնելու ժամկետները երկարացվում են: ՀՉՀ նույնիսկ առավել «բարենպաստ» երեխաների համար 6-7 տարեկանում բնորոշ է հենց երկրորդ մակարդակը, ընդ որում, երեխան գտնվում է «գալարի» պտույտի հենց սկզբում: Դա հաստատվում է նրանով, որ երեխաներն իրենց գործունեության կազմակերպման մեջ դեռևս կախված են մեծահասակներից: Նրանք ոչ միշտ են ճիշտ գիտակցում իրենց առջև դրված խնդիրները, չեն կարող հեռավոր նպատակներ դնել և ստորադասել «մոտիվները»: Այդ պատճառով զգայական վիճակի կառավարման ընդունակությունը անհրաժեշտ է ձևավորել առանձնահատուկ, ինչը նշում է Ն. Բարկինան¹³: Այդպիսի ընդունակության ձևավորման հաջողությունը ենթադրաբար կախված է ինքնագիտակցման հնարավորության զարգացումից:

Անհրաժեշտ է հիշատակել, որ նախադպրոցական հասակի սահմաններից դուրս ՀՉՀ երեխաների ինքնագիտակցության թերությունները դրսևորվում են բավականին հստակ: Այդպիսի երեխաների բարձր ինքնագնահատականն սկսում է կրել գերփոխհատուցողական բնույթ:

Ի.Շոնևայի ուսումնասիրած ճշտվող ուսուցման պայմաններում գտնվող

¹¹ *Фишман М.* Нейрофизиологические механизмы отклонений в умственном развитии у детей: Учебное пособие. М., 2001; *Фишман М., Лукашевич И., Мачинская Р.* Особенности функционального состояния мозга детей с задержкой психического развития // Дефектология. 1998. № 1, стр. 24-29.

¹² *Домишкевич С.* Функционально-уровневый подход к психодиагностике и коррекции познавательной деятельности в норме и при отклонениях в развитии//Дефектология. 2005.№ 4, стр. 47-53.

¹³ *Бабкина Н.* Психологическая готовность к школьному обучению с задержкой психического развития у детей//Диагностика и коррекция задержки психического развития у детей. М., 2004, стр. 70-104.

ՀԶ կրտսեր պատանիների Ես-կերպարում էական տարբերություններ են հայտնաբերվել՝ համեմատած նորմալ զարգացող հասակակիցների հետ: ՀԶ դեռահասները 10-11 տարեկանից նոր միայն սկսում են վերլուծել իրենց գործողությունները և արարքները, նրանց նկարագրությունները կապված են կոնկրետ իրավիճակների հետ¹⁴: Ստացված արդյունքները քիչ են տարբերվում այն տվյալներից, որոնք բերում է Ե. Մլեպովիչը՝ չնայած տարիքային լայնույթը փորձարկվողների մեջ կազմել է 4 տարուց ոչ պակաս: Այդ պատճառով անհրաժեշտ է մտածել այն մասին, որ դա ոչ միայն սոցիալական հարաբերությունների համակարգի խախտման հետևանք է, ինչպես ենթադրում է Ի.Կոնևան, այլ նաև երեխաների անձնային զարգացման հանդեպ ուշադրության պակասի: Բացի դրանից, այդ տվյալները մի անգամ ևս հստակ ապացուցում են ՀԶ երեխաների կոնտինգենտի ոչ միատարրությունը¹⁵:

Բավականին հետաքրքիր է երեխայի՝ իր անձին դիմելու միջոցով կարգավորման որոշ հմտությունների ձևավորման փորձը: Ինքնագիտակցության տարրերի ձևավորումը նախադպրոցականների մեջ բավականին արդարացված է, քանի որ, ինչպես արդեն ասվել է, բարձրագույն հոգեկան ֆունկցիաների հիմնական բնութագրումը հենց գիտակցվածությունն է, որը դրսևորվում է այդ հասակում:

Վերջինը, որն անհրաժեշտ է դիտարկել, ՀԶ նախադպրոցականների ինքնագիտակցության տարրերի ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանների հարցն է:

Ինչպես արդեն նշվել է վերևում, ներկայումս ընդգծվում է ոչ նորմալ երեխաների ուսուցման և դաստիարակության կազմակերպման հույժ կարևորությունը, որի դեպքում նրանք ընդունակ կլինեն, ինչքան հնարավոր է, շուտ «օգտագործել իրենց նվաճումները ինտելեկտուալ զարգացման մեջ, իրենց և շրջապատող մարդկանց համար տեղի ունեցածի իմաստի սահմանման, խնդիրների, աշխարհընկալման և արժանի կենսակառուցվածքի լուծման համար»¹⁶:

ՀԶ 6 և 7 տարեկան երեխաներին դպրոցին նախապատրաստելու ընթացքում օգտագործվող ծրագրի վերլուծությունը ցույց տվեց, որ ճշտող-զարգացնող գործընթացի ձևավորվող խնդիրների շարքում առաջինը «ՀԶ երեխայի բովանդակալից գործունեություն իրականացնելու համար հնարավորության ստեղծումն է, որը կնպաստի հոգեկան զարգացման համակողմանիությանը»: Ճշտող-զարգացնող աշխատանքի բովանդակություն ներառվում են այնպիսի բաժիններ, որոնք նվիրված են շրջակա միջավայրին ծանոթացմանը, իր և իր ընտանիքի, մանկապարտեզի աշխատողների մասին պատկերացումների ձևավորմանը: Հեղինակներն առաջարկում են համապատասխան պարապմունքների վարման ձևեր, վարժություններ և դիդակտիկ խաղեր: Սակայն, ինքնագիտակցության տարրերի ձևավորման նպատակը չի ձևակերպվում: Գ.Եֆրեմովայի առաջարկված ծրագրում

¹⁴ *Конев И. Особенности образа Я младших подростков с задержкой психического развития. Автореф. дис. ... канд. психол. наук. Н.Новгород, 2002.*

¹⁵ *Слепович Е., նշվ. աշխ., էջ 45:*

¹⁶ *Конев И., նշվ. աշխ., էջ 21:*

առաջարկվում է ՀԶՀ ավագ նախադպրոցականների մոտ բարոյագիտական ինքնակարգավորման փուլային ձևավորում¹⁷:

Այսպիսով, գործող ծրագրերում, որոնց համաձայն՝ ՀԶՀ ունեցող նախադպրոցականների հետ իրականացվում է ճշտող-գարգացնող աշխատանք, չի արտացոլվում ինքնագիտակցության տարրերի ձևավորման հաջորդական համակարգը: Մինևույն ժամանակ հատուկ կրթական հաստատությունների աշխատանքի փորձից հետևում է, որ համարժեք հոգեբանական ուղղորդման դեպքում ՀԶՀ այն երեխաները, որոնք որոշակի մակարդակով գիտակցում են իրենց հնարավորությունները, տարբերվում են իրենց հասակակիցներից՝ դրսևորելով առավել ընդունելի վարքագիծ: Նրանք ազատորեն հաղորդակցության մեջ են մտնում մյուս երեխաների և մեծահասակների հետ, նրանց վարքում գերակայում են հավասարակշռվածությունը և համարժեք դրական զգացումները:

Օժանդակ կրթական հաստատությունների ծրագրերում սոցիալական զարգացմանը մեծ կարևորություն է տրվում ինտելեկտուալ խանգարումներով երեխաների հետ աշխատելիս: Ծրագրի հեղինակները՝ Ե.Եկեմովան և Ե.Ստրեբելյովան, անձի սոցիալականացումը սահմանում են որպես գործընթաց և երեխաների՝ շրջակա աշխարհի մասին պատկերացումների ձևավորման արդյունք: «Սոցիալական զարգացում» բաժնում աշխատանքի ամբողջ բովանդակությունը ներկայացված է երեք բաղադրիչներով՝ «Ես ինքս», «Ես և ուրիշները», «Ես և շրջակա աշխարհը»: Ճշտող-գարգացնող աշխատանքի ռազմավարություններից է մանկավարժական հատուկ պայմանների ստեղծումը, որոնք կապահովեն երեխայի համագործակցությունը մեծահասակների հետ: Հաջորդաբար, ուսուցման առաջին չորս տարվա ընթացքում մտավոր հետամնաց երեխաները կարողանում են լուծել իրենց և մյուսների մասին պատկերացումների, սոցիալական հավակնությունների ենթակա վարքային կանոնների, իրենց գործողությունների և արարքների գնահատման ձևավորման խնդիրները: Սոցիալական զարգացման խնդիրների իրականացման ընթացքում նախատեսված են լուսանկարների, ֆոտոալբոմների, խաղալիքների, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործությունների, ստեսայությունների, տարբեր պատկերազարդումների օգտագործումը, որոնց բովանդակությունը արտացոլում է մարդկանց հուզական վիճակը: Ծրագրային պահանջների համաձայն՝ ուսուցման չորրորդ տարվա վերջում մտավոր հետամնաց երեխաները պետք է հասնեն սոցիալական զարգացման այնպիսի մակարդակի, որն անհրաժեշտ է հատուկ ճշտող դպրոցի պայմաններին ադապտացվելու համար:

Սոցիալական զարգացման գործընթացի կազմակերպումը իրականացվում է տարբեր մասնագետների համագործակցության արդյունքում: Դեֆեկտաբան- ուսուցիչը անցկացնում է համապատասխան բովանդակության պարապմունքներ: Հոգեբան-մանկավարժը աշխատում է երեխաների, նրանց ընտանիքների հետ՝ նպաստելով երեխայի հուզական ոլորտի բարելավմանը: Հենց հոգեբանն է գնահատում նախադպրոցականների սոցիալամետ վարքի առանձնահատ-

¹⁷ *Ефремова Г. Формирование саморегуляции поведения у старших дошкольников с ЗПР. Дис. канд. психол. наук: Н.Новгород, 1997.*

կությունները և անհրաժեշտության դեպքում իրականացնում դրա ճշտումը աշխատանքային տարբեր մեթոդների, խորհրդատվությունների և ծնողների հետ մարզանքի միջոցով: Անձնային ոլորտի շտկումն իրականացվում է նաև երաժշտական պարասպորտների միջոցով: Լոգոպեդ-ուսուցչի մասնագիտական աջակցությունը երեխաների խոսքի, հաղորդակցական գործառույթների զարգացման լավագույն միջոցներից է: Այսպիսով, ծրագրի հեղինակները հատուկ տեսակի ՄՈՒՀ-ում առաջարկում են այնպիսի հոգեբանամանկավարժական պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն երեխաների՝ սոցիումի հետ փոխգործակցության ունակությունների անընդհատ և օպտիմալ ձևավորմանը:

Ե.Գոնչարովան և Օ.Կուկուշկինան հատուկ դպրոցում ուսուցման նոր բովանդակության՝ «Մարդու ներաշխարհ», դասընթացը նախագծելիս ընդգծում են ուսուցման հենքային փուլերը, որոնք նպաստում են ինքնաճանաչման, ինքնագիտակցության և վարքի գիտակցական կարգավորման սկզբնական աստիճանների զարգացմանը:¹⁸ Փուլայնությունն ապահովում է մարդու ներաշխարհի ճանաչողական վերաբերմունքի զարգացումը, որը հիմնվում է երեխայի նախ և առաջ կյանքի իրադարձությունների հետաքրքրության վրա: Անձնական սոցիալական փորձը հիմք է ծառայում ներքին կյանքի երևույթների ամփոփումների համար: Ծրագրային փորձարկումների արդյունքում ստացված տվյալները վկայում են աշխատանքի առաջարկվող բովանդակության արդյունավետությունը կրտսեր դպրոցական հասակում զարգացման շեղումներով երեխաների ինքնագիտակցության ձևավորման գործում:

Նախադրոցականների ինքնագիտակցության տարրերի ձևավորման քննարկվող հիմնախնդրի համատեքստում ուշադրության է արժանի դաստիարակության և ուսուցման ծրագիրը մանկապարտեզում, որը մշակվել է մի խումբ հեղինակների կողմից և հրատարակվել է Մ.Վասիլևայի, Վ.Գերբովայի և Տ.Կոմարովայի խմբագրությամբ¹⁹: Վերոնշյալ ծրագրում պետք է ընդգծել դրա բովանդակության ուղղվածությունը երեխայի՝ իր (Ես կերպարի), ուրիշների մասին պատկերացումների, սոցիալամետ հմտությունների դաստիարակության հաջորդաբար (2-ից 7 տարեկան) զարգացմանը:

Ե.Սլեպովիչի հետազոտությունները հաստատել են մեծահասակների բացառիկ դերը ՀԶՀ նախադրոցականների մոտ «Ես» կերպարի ձևավորման գործում: Մեծահասակը երեխայի մեջ դաստիարակում է ճիշտ վարքագիծ, ձևավորում է համարժեք ինքնավերաբերմունք, որի համար օգտագործվում է երեխայի անձի դրական գնահատականը: Արտասահմանյան հոգեբանների հետազոտությունները նույնպես հաստատում են, որ այն ծնողները, ովքեր իրենց երեխաներին վաղ տարիքից ակտիվորեն ներառել են բժշկահոգեբանական և հոգեբանամանկավար-

¹⁸ Гончарова Е., Дмитриева Д., *նշվ. աշխ.*, էջ 102-111; Гончарова Е., Кукушкина О. *Дневник событий жизни ребенка: первая рабочая тетрадь к курсу "Внутренний мир человека" // Дефектология. 1998. № 5, стр. 26-39.*

¹⁹ *Программа воспитания и обучения в детском саду /Под ред. М. Васильевой, В. Гербовой, Т. Комаровой. - 2-е изд., испр. и доп. - М., 2005.*

Ժական ուղղորդման համալիր ծրագրերում, բավականին մեծ արդյունավետություն են նկատել ինչպես երեխաների զարգացման, այնպես էլ ծնող-երեխա փոխհարաբերությունների բարելավման առումով²⁰: Այդպիսով, մեծահասակների և հասակակիցների հետ փոխգործունեությունը կարևորագույն պայման է, բայց դա անբավարար է, քանի որ ինչպես ընտանիքում, այպես էլ ՄՈՒՀ-ի պայմաններում ինտելեկտուալ զարգացման խախտումներով երեխաների սոցիալական իրավիճակը առանձնահատուկ է:

Ն. Բելոպոլսկայան առաջարկում է ինքնագիտակցության զարգացման համալիր մեթոդ, որը զուգորդում է գրույցը և սեռատարիքային նույնականացման մեթոդիկայի աշխատանքները ընտանեկան այլումների հետ: Հեղինակն առանձնացնում է ծնողների և մեծահասակների առաջատար դերը երեխաների սեռատարիքային նույնականացման ձևավորման մեջ: Մեծահասակները, հիշելով իրենց մանկության հատվածները, փոխվում են երեխայի աչքերում: Այդպիսի նպատակատուղիված աշխատանքի արդյունքում երեխան ըմբռնումով է վերաբերվում մեծահասակներին²¹: Ե.Գոնչարովան և Դ.Դմիտրիևան առաջարկում են երեխաների հետ ստեղծել այլում-գրքույկներ՝ փոքրիկ մարդու ֆոտոտարեգրությունը, և նշում են, որ լուսանկարները անհրաժեշտություն, հենարան են դառնում անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ գրույցների համար: Ֆիզիկական «Ես» կերպարի զարգացման մեջ հատուկ ուշադրություն է դարձվում հայելու, լուսանկարների, դիտողական մոդելների հետ աշխատանքին²²: Երեխաների՝ իրենց կերպարի ընկալումն ունի գրգռմունքախմբային անցարանական բնույթ: Այդ պատճառով, նրանց մեջ զարգացնելով սեփական մարմնի սխեմայի մասին պատկերացումները, անհրաժեշտ է միաժամանակ ձևավորել նաև վերաբերմունք սեփական մարմնին: Դա նվաճվում է այն դեպքում, երբ մարդու մասին պատկերացումների զարգացմանը զուգընթաց, մեծահասակը տալիս է դրական գնահատում:

Այսպիսով, ինքնագիտակցության և ինքնագնահատականի տարրեր ասելով՝ մենք հասկանում ենք այն առանձին հատկանիշները, որոնք վերաբերում են երեխայի մեջ ձևավորվող սեռատարիքային նույնականացմանը՝ որպես «Ես» կերպարի ձևավորման սկզբնական փուլ, սոցիալական ընդունման հավակնությունները, ինքնագնահատականը՝ որպես ընկալման և իրեն գնահատելու գլոբալ բնութագիր, հոգեբանական ժամանակի ձևավորումը (իր մասին պատկերացումները անցյալում և ապագայում), անձի սոցիալական տարածությունը, որում ձևավորվում և դրսևորվում է զգայական նույնականացման և ապակենտրոնացման հնարավորությունների բարոյական նորմերի հասկացումը, ինչպես նաև մեծահասակի հրահանգով ինքնուրույն գործելու ընդունակությունը:

Ինքնագիտակցության տարրերի ձևավորման հոգեբանամանկավարժական պայմաններ ասելով՝ հասկանում ենք հոգեկան զարգացման հասպտումով երեխաների գտնվելը փոխհատուցող տեսակի ՄՈՒՀ ճշտող-զարգացնող միջա-

²⁰ Слепович Е., նշվ. աշխ., էջ 45:

²¹ Белопольская Н. 1998, նշվ. աշխ., էջ 24:

²² Гончарова Е., Кужушкина О., նշվ. աշխ., էջ 3-15:

վայրում և հատուկ ծրագրերի իրականացումը՝ ուղղված նրանց ինքնագիտակցության զարգացմանը: Ծրագրերի իրականացման հիմնական սկզբունքներից են երեխայի՝ իր մասին պատկերացումների սկզբնական ասպեկտներում, գործունեության տարբեր տեսակներում մանկավարժ-դեֆեկտոլոգի, մանկավարժ-հոգեբանի, ուսուցիչ-լոգոպեդի պարապմունքների ու հնարների ներդաշնակ կիրառությունը, գործունեության արդյունավետ տեսակները, ռեժիմային պահերը, ազատ գործունեությունը, խաղը, ֆիզկուլտուրայի և երաժշտական պարապմունքները: Հատուկ պայմանները մեր կողմից դիտարկվում են որպես առաջին կարգի անկախ փոփոխական: Որպես երկրորդ կարգի անկախ փոփոխական՝ կդիտարկվեն երեխայի հոգեբանական բնութագրերը, որոնք վկայում են նրա կողմից անձնային հասունության որոշակի մակարդակի նվաճման մասին, որը թույլ է տալիս կառավարել իր վարքը:

ПРОБЛЕМЫ САМООЦЕНКИ И ПРЕТЕНЗИЙ У ДЕТЕЙ С ЗАДЕРЖАННЫМ ПСИХИЧЕСКИМ РАЗВИТИЕМ

___ *Резюме* ___

___ *О. Погосян* ___

Автор статьи обратился к исследованию возможностей формирования самосознания у детей с психическими расстройствами.

Во время расстройства интеллектуального развития психологическое формирование новосоставляющих происходит медленно. Исследователи подчеркивают, что задержанием психического развития самосознание и остальные аспекты личностного развития детей проявляются реже, чем их познавательное развитие. В то же время современные тенденции особого образования целенаправлены на жизненную осведомленность и необходимость обеспечения социальной двигательности детей с задержанием психического развития.

Տեղեկություններ հեղինակի մասին

*Պողոսյան Օլգա Արծրունու - ԳՊՄԻ հոգեբանության
ամբիոն, E-mail:olgapoghosyan85@mail.ru*

Сюзанна РОСТОМЯН

ПРОБЛЕМА ИССЛЕДОВАНИЯ КОМПЕТЕНЦИЙ В ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ

Статья рассматривает проблемы развития ключевых компетенций в образовательной системе. В статье обосновывается необходимость формирования профессиональных компетенций в средних учебных заведениях.

Тенденция развития образовательной системы показывает преимущество внедрения идеи компетентностного подхода в кредитной системе обучения и акцентирует внимание на усилении доли самостоятельности работы студента в процессе приобретения знаний, в поиске необходимой информации, в выборе методов исследования. Конечно, предполагается, что профессиональная подготовка специалистов связана с определёнными практическими умениями: основная идея состоит в том, что акцент ставится на формировании определенных компетенций в процессе постановки решения профессиональных задач как в стандартных, так и в нестандартных ситуациях.

Современная профессиональная образовательная система имеет ряд нерешённых психолого-педагогических проблем, которые часто обсуждаются в специальной литературе. И на самом деле, в условиях быстрого научно-технического развития в образовательном процессе, естественно, меняется многое; и выпускник может практически оказаться неподготовленным к требованиям рынка труда. Многие специалисты считают, что анализ на уровне "знание-умение-навыки" недостаточен для описания профессионального роста будущего специалиста. Общество стремится воспитывать таких специалистов, которые могут нести ответственность за принятые ими решения и определять образовательные мотивы, исходя из собственных ценностных ориентаций и индивидуального стиля приобретения знаний, профессионального опыта. Будущие специалисты должны обладать способностью осознавать и рефлексировать собственные ценности, объективно оценивать свои профессиональные возможности, правильно программировать пути личного профессионального становления в ожидаемой деятельности.

Среднее профессиональное образование является важным связующим звеном в обеспечении непрерывного процесса образования и в подготовке компетентных специалистов для различных отраслей производства. Современный уклад жизни требует специальной и целенаправленной и профессионально ориентированной подготовки будущих кадров со средним образованием.

В современных условиях развития системы профессионального обучения выдвигаются специальные базовые требования к специалистам и проводится их тщательный отбор по результатам степени сформированности тех или иных профессиональных и личностных компетенций, которые являются значимыми в системе профессиональной деятельности¹. Т.М.Ковалева считает, что требования рынка жёстки и вполне определены, следовательно, нужны люди не столько

¹ *Кузнецова Н., Нестеренко Б. Методика диагностики профессионально значимых качеств и базовых компетенций//ИЗВЕСТИЯ Самарского научного центра Российской академии наук. Специальный выпуск «Новейшие гуманитарные исследования». Самара, Изд-во Самарского научного центра РАН. 2006.*

знающие, сколько обладающие определённым набором компетентностей, необходимых для успешного освоения современных профессий². Этот подход к образовательному процессу уже нашёл широкое распространение в системе западных средних профессиональных учебных заведений.

Таким образом, образовательная система ориентирована на обеспечение качества подготовки специалистов, она несёт профессиональную ответственность за потребности современного мирового рынка труда, приводя их в строгое соответствие: с одной стороны, развивает потребности личности интегрировать себя в деятельность самого общества; с другой стороны, создаёт условия для того, чтобы потенциал каждого специалиста соответствовал экономическим, культурным и политическим критериям успешного развития общества. И поэтому возникает необходимость уточнить: какие именно компетенции соответствуют успешной профессиональной деятельности индивида; построить модель выпускника среднего профессионального образовательного учреждения и будущего специалиста, поэтапно определяя способы и пути его развития; сформулировать перечень необходимых и достаточных для этого компетенций. Очевидно, что при компетентностном подходе к обучению мы имеем реальные шансы обеспечить саморазвитие будущего специалиста таким образом, чтобы он смог свободно самостоятельно ориентироваться в поиске любой необходимой информации, необходимой для его профессионального и личностного роста, в постановке задач и разработке методов и путей их решения.

На основании показателей собственного социально-экономического роста и в условиях конкурентоспособности Государство может организовать свою оригинальную образовательную систему. На современном этапе условия и требования компетентностного подхода к организации образования заставляют педагогов-экспериментаторов исследовать те педагогические традиции и направления, которые позволят развить у подростков общие образовательные компетенции, в целом, и базовые компетенции, в частности.

Исходя из собственных исследовательских задач, мы анализируем систему образования в средних учебных заведениях Армении на предмет развития у подростков личностных и профессиональных компетенций. Известно, что в образовательной системе компетентностный подход представляет собой постижение студентами умений самостоятельно ориентироваться в нестандартных, новых, проблемных ситуациях, когда невозможно прогнозировать способ решения проблемы заранее. Для достижения требуемых результатов надо находить эти решения в процессе учебной деятельности. А.И. Зимняя считает, что образовательная система имеет много общего с конкретно-историческими условиями каждой страны, и это связано с периодом развития самой страны. Вследствие социально-экономических преобразований изменяется образовательная система. На данном этапе в образовательной системе наблюдается переход от традиционного типа образования к личностно - ориентированному³.

Следует заметить, что понятие "компетенция" формировалось изначально не в педагогике, а в области бизнеса, экономики, управления и подготовки кадров.

² *Ковалева Т.* Компетентностный подход как идея открытого заказа на содержание школьного образования в контексте русской культуры. М., 2007.

³ *Зимняя И.* Ключевые компетенции – новая парадигма результата образования // Высшее образование сегодня. М., 2005.

Профессиональная компетенция – это совокупность определенных требований к личности, обязательных для выполнения той или иной работы. Именно этим обусловлено то, что бакалавр должен четко и веско излагать полученные ключевые знания, точно реализовывать те методы и технологии, которые относятся к изучаемой дисциплине. Магистр же обязан обладать прочными знаниями в определенной специальности, у него должны быть сформированы умения внести самостоятельный, нетрадиционный и, вместе с тем, органичный вклад в систему норм дисциплины, отличаться развитым спектром компетенций на профессиональном уровне. На современном этапе европейская образовательная практика опирается на четыре модели компетенций, каждая из которых рассчитана на то, чтобы планировать, организовать и предоставлять высшее профессиональное образование и объективно оценивать достижения студента и возможности дальнейшего его трудоустройства. Все четыре модели компетенций являются социальными, так как они формируются, разрабатываются и проявляются именно в социуме и служат для того, чтобы специалисты могли решать новые задачи в стандартных и нестандартных ситуациях. Владение со стороны личности определенной компетенцией, которая включает его личностное отношение к дисциплине, называется компетентностью⁴.

Компетентность является персистентной частью специалиста. Она предопределяет действия и поступки человека в различных ситуациях и прогнозирует отрицательные или положительные результаты работы, которые измеряются при помощи конкретных норм и клише. В понятие компетентности включают 5 ключевых взаимозависимых качеств человека: мотивы, психофизиологические особенности личности, я – концепция, знание и навыки⁵.

Профессиональная компетенция воспринимается как кумулятивная характеристика, которая определяется умением специалиста решать определенные типичные профессиональные задачи, возникающие в процессе профессиональной деятельности с использованием жизненного и профессионального опыта, знаний, умений и устремлений. Именно с точки зрения работодателя оправдывается и обосновывается возникновение такого понятия, как “профессиональная компетентность”. Работодатель нуждается в специалисте, который обладает умением решать определенные производственные задачи. Он придает значение не столько процессу решения проблемы, сколько для него важен конкретный результат. Но с процессуальной точки зрения специалист должен иметь и определенный уровень подготовленности для достижения конечного результата. Этот уровень определяет именно та система знаний, навыков, инициативности, педантичности, ответственности, т.е. комплекс профессиональных и индивидуальных качеств специалиста, которая и формирует его профессиональную компетентность.

Традиционная система образования не может решать проблему выработки общекультурных и профессиональных компетентностей. Для достижения вышесказанного, необходима существенная перенаправленность. Е.Я Коган считает, что

⁴ Хуторский А. Ключевые компетенции: технология конструирования // Народное образование. 2003, № 5, стр. 55-61.

⁵ Компетенции в образовании: опыт проектирования: сборник научных трудов / под ред. Хуторского А. М., 2007.

б. Коган Е., Компетентностный подход и новое качество образования // Современные подходы к компетентностно-ориентированному образованию/ под ред. А. Великановой. Самара, Профи, 2001, стр. 28-32.

компетентностный подход – это принципиально новый подход, требующий переоценки позиции учителя и учащегося в процессе обучения⁶. Такой подход должен привести к универсальным изменениям как методической базы, так и сознания. С точки зрения О. С. Лебедева, компетентностный подход воспринимается как система общих норм определения целей образования, сформированность образовательного процесса и оценка образовательных результатов⁷.

Роль педагогических целей в формировании компетенций заключается в том, что они развиваются и вырабатываются не в виде действий преподавателя, а с позиции штудирования определенного социального опыта. Для преобразования же модели современного образования требуется изменение личности самого преподавателя, который будет готов к достижению социальных, коммуникативных, профессиональных и информационных компетенций, ответственности и либеральности.

ԿՈՄՊԵՏԵՆՏԻԱԼԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

___ Անփոփում ___

___ Ս. Ռոստոմյան ___

Ժամանակակից մասնագիտական ուսումնական համակարգում նկատվում են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Ապագա մասնագետի կարիերայի աճի համար միայն գիտելիքները բավական չեն: Մասնագիտական կրթությունը ապագա մասնագետների մեջ պետք է ձևավորի հիմնական կոմպետենցիաներ և սեփական արժեքահամակարգը ճանաչելու ունակություն, ինչպես նաև իրենց մասնագիտական հնարավորությունները ճիշտ գնահատելու կարողություն:

Ելնելով հետևյալ ուսումնասիրության խնդիրներից՝ հոդվածում վերլուծվում է Հայաստանի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթական համակարգը: Հոդվածը ուսումնասիրում է հիմնական կոմպետենցիաների զարգացման խնդիրը կրթական համակարգում: Հոդվածում հիմնավորվում է մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման անհրաժեշտությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Сведения об авторе

*Ростомян Сюзанна Самвеловна – кафедра психологии
ГППИ им. М.Налбандяна, E-mail:rostomyansuzi@yahoo.com*

⁷ *Лебедева О. Компетентностный подход в образовании // Школьные технологии. 2004, № 5, стр. 3-12.*

**ՄԱՅԻՍՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ**

Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից մեկի՝ Մայիսյան ապստամբության թեման հայ պատմագիտության մեջ ամենաշատ արծարծվածներից է:¹

1918-1920թթ. պատմությունն ուսումնասիրողներից թերևս ոչ մեկը չի շրջանցել այդ թեման, քանի որ դրան առանցքային դեր է հատկացվել Հայաստանի Հանրապետության անկման և խորհրդայնացման գործում: Ընդ որում, խորհրդահայ պատմաբանների և դաշնակցական գործիչների կողմից այն ներկայացվել է տրամագծորեն հակառակ մոտեցումներով՝ մի կողմից՝ որպես Հայաստանի խորհրդայնացման գլխավոր փորձ, հերոսական ապստամբություն, մյուս կողմից՝ դավաճանություն հայ ազգի և պետության շահերին: Երկու դեպքում էլ հարցին մոտեցել են գաղափարաքաղաքական առումով՝ Մայիսյան իրադարձությունների հետ կապված շատ հարցեր հարմարեցնելով նախօրոք նախանշված դերերին:²

Չնայած հետխորհրդային տարիներին այս ուղղությամբ կատարված աշխատանքներին՝ թեմային վերաբերող բազմաթիվ հարցեր դեռ կարոտ են լուսաբանման:

Խոսքը վերաբերում է թե՛ բնակչության և զորքի մասնակցությանը, թե՛ տեղական իշխանության մարմինների և թե՛ Դաշնակցության տեղական կոմիտեի ու Ալեքսանդրապոլի բոլշևիկների գործունեությանը:

Թեմայի գիտական ուսումնասիրության համար առանձնապես կարևոր են ինչպես արխիվային նոր փաստաթղթերի, այնպես էլ դեպքերի վերաբերյալ ժամանակակիցների հիշողությունների հրապարակումները:

Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հիպերիկ Չոլախյանի* կնոջ հուշերը ամուսնու մահվան հանգամանքերի մասին, որ հրատարակվել են 1920թ. հունիսին «Հառաջ» թերթում:³ Մեր կողմից հրապարակվող այս փաստաթուղթը կարող է լույս սփռել մի շարք հարցերի, մասնավորապես, Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանության մարմինների գործունեության վրա: Հայտնի է, որ Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինները քաղաքն առանց կռվի հանձնել են ապստամբներին, վերջիններս իրենց հերթին

¹ Տե՛ս **Քառյան Ս.**, 1920թ. Մայիսյան ապստամբությունը խորհրդահայ պատմագիտության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, Եր., 2003, էջ 61-71:

² Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Մայիսյան ապստամբության պատմությունից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 3, Եր., 2000, էջ 121-129:

* Հիպերիկ Չոլախյանը 1916թ. ավարտել է Պետրոգրադի գյուղատնտեսական ճեմարանը, 1918թ. թուրքերի հեռանալուց հետո աշխատել է Ալեքսանդրապոլում, 1920թ. մարտի 10-ին ընտրվել է գավառային ինքնավարության վարչության նախագահ: 1920թ. մայիսյան ապստամբության օրերին ՀՀ Դաշնակցության տեղական կոմիտեի նախագահն էր:

³ Հառաջ, 1920, Եր., երեքշաբթի, 22 հունիսի:

նույնպես առանց կովի այն հանձնել են կառավարական ուժերին: Մասնավորապես, զինվորական իշխանությունները մայիսի 1-ին կտրուկ քայլեր չեն ձեռնարկել զորքի մասնակցությունը կանխելու ուղղությամբ: Ավելին՝ Ալեքսանդրապոլի կայազորի պետ Խաչատուրովը նույնիսկ բոլշևիկյան ելույթ է ունեցել՝ նպատակ ունենալով հանգստացնել զորքին:⁴

Իր հերթին, Դաշնակցության տեղական կոմիտեն ևս բախումների չի գնացել ինչպես մայիսի 1-ին, այնպես էլ հետագա օրերին: Ավելին, Դաշնակցության տեղական կոմիտեի նախագահ Հիպերիկ Չոլախյանի հրահանգով տեղական իշխանության մարմինները և դաշնակցական կառույցի պատասխանատուներն անցել են ընդհատակ: Իսկ ավելի ուշ Չոլախյանը լուծարված է համարել նաև Դաշնակցության տեղական կոմիտեն՝ չստանձնելով առանձին դաշնակցականների ծայրահեղական գործողությունների պատասխանատվությունը:

Հրապարակվող փաստաթղթից ակնհայտ երևում է, որ Ալեքսանդրապոլի գավառի թե՛ տեղական իշխանության (զինվորական և քաղաքացիական) և թե՛ կուսակցական մարմինները, մայիսյան իրադարձությունները համարելով խռովություն, իսկ դրանց ճնշումը՝ ժամանակի հարց, խուսափել են ավելորդ բախումներից և զոհերից:

Ակնհայտորեն բախումներից խուսափել են նաև հակակառավարական շարժման ղեկավարները: Հայ բոլշևիկները, ոգևորվելով Ադրբեջանի խորհրդայնացումից և մայիսյան ցույցերի հաջողություններից, փորձել են խաղաղ ճանապարհով պետական հեղաշրջումը հասնել Հայաստանի խորհրդայնացմանը:

Տեղական զինվորական և քաղաքացիական իշխանության, նաև կառավարության ու դաշնակցական կուսակցության ներկայացուցիչները ազատ ելումուտ են ունեցել զրահագնացք և բանակցություններ վարել: Նրանց հիմնական մտահոգությունը եղել է ծայրահեղական գործողություններից բոլշևիկներին զերծ պահելը և հասարակությունն ու զորքը չպառակտելը:

Բոլշևիկները մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում հռչակում են խորհրդային իշխանություն՝ նախապես ստանալով տեղական իշխանությունների համաձայնությունը՝ քաղաքն առանց կովի հանձնելու վերաբերյալ: Իրենց հերթին ապստամբները խոստանում են չգնդակահարել այն դաշնակցականներին, որոնք, նախօրոք կազմած ցուցակի համաձայն, ձերբակալվել էին: Բանակցությունների արդյունքում վերջիններս հաջորդ օրն արդեն ազատ են արձակվում: Եվ ընդհանրապես, տեղական իշխանությունները մինչև վերջ բանակցությունների մեջ էին ապստամբների հետ՝ ձգտելով նրանց հետ պահել ծայրահեղ գործողություններից:⁵ Պ.Խաչատուրովը, վճռականորեն դեմ լինելով եղբայրասպան պատերազմին և ռազմական գործողություններին, մայիսի 13-ին գալով զրահագնացք՝ վճռակա-

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1021, ց. 3, գ. 41, թ. 1-16:

⁵ Խաչատուրովը զրահագնացքից դուրս է եկել ժամը մեկին, երբ համաձայնության է եկել բոլշևիկների հետ ռազմական գործողությունների չդիմելու հարցում:

նորեն պնդել է պատվիրակություն կազմելու և կառավարության հետ բանակցություններ վարելու անհրաժեշտության մասին:⁵

Հարկ է նշել, որ երկու կողմերն էլ իրենց կուսակիցների կողմից ենթարկվել են խիստ քննադատության՝ մեղադրվելով անվճարականության, անգործության, վախկոտության և դավաճանության համար: Պատահական չէ, որ հենց նրանք, ովքեր փորձել են խաղաղ ճանապարհով հարցերը լուծել, դարձել են առաջին զոհերը: Նրանցից երկուսը՝ զինվորական իշխանության ներկայացուցիչ, Ալեքսանդրապոլի զինվորական կայազորի պետ Պ. Խաչատուրովը և զավառային ինքնավարության վարչության նախագահ Հ. Չոլախյանը, զոհ են գնացել դաշնակցական մատուցողների գնդակներին: Ինչ վերաբերում է ապստամբներին, ապա նրանց, հատկապես Մուսայեյանի և Ղարիբջանյանի հասցեին մեղադրանքները դեռ հնչել են ՌՀԿ-ի մայիսի 13-ի նիստի ժամանակ:⁶

Կարծում ենք՝ բոլշևիկների կողմից քաղաքն առանց կռվի թողնելու գործում, նրանց իշխանության ներքին ճգնաժամի և պարենի բացակայությունից բացի, կարևոր դեր են կատարել նաև Ալեքսանդրապոլի տեղական իշխանության և Դաշնակցական տեղի ղեկավար մարմինների հավասարակշռված գործողությունները, որոնց շնորհիվ ստեղծվել էին նպաստավոր պայմաններ հասարակությունը չպատակտելու և երկրի կայունությունը չխախտելու համար: Մակայն, ցավոք, Հայաստանի Բյուրո կառավարությունը և արտակարգ լիազորություններով Ալեքսանդրապոլ ուղարկված Շիրակի նահանգապետ Կարո Սասունին չեն կարողանում օգտվել այդ նպաստավոր իրավիճակից: Թեև Բյուրո կառավարությունը իր մի շարք խիստ օրենքներով ու վճարական պատժիչ գործողություններով ճնշում է բոլշևիկյան խռովությունը, բայց իրավաքաղաքական տեսակետից երկրում կատարվող խախտումները թուլացնում են պետականության հիմքերը:

Հրապարակվող փաստաթուղթը շատ կարևոր աղբյուր է հատկապես Մայիսյան իրադարձություններից հետո ստեղծված վերոհիշյալ իրավիճակի վերաբերյալ:

Աշխեն Չոլախյան

Հիպերիկ Չոլախյանի վերջին օրերը և մահը

Արդեն ամիսն անցաւ, բայց մամուլի մէջ ոչ մի լուր չտուեց ամուսնու եղեռնական մահուան հանգամանքները պարզելու նպատակով: Համարեա օրական մի քանի անգամ ստիպւած եմ լինում ինձ այցելողների հետաքրքրութիւնը բաւարարելու համար, զէք թուցիկ կերպով, վերյիշելու ինձ համար ծանր ու սև օրերի մանրամասնութիւնները: Միւս կողմից՝ Հիպերիկի մահուան առթիւ պտտուող ու մեկը միւսին հակասող ասե-կոսէներն այսօր ստիպում են ինձ գրիչ առնել և լուսարանել այդ եղեռնական մահուան իսկական պատկերը: Մայիսի 9-ին Ալեքսպոլում պաշտօնապէս յայտնի եղավ, որ բերդի զօրաշարքերում և կայարանում բոլշևիկ տրամադրութիւններ կան:*

⁵ ՀԱՍ, ֆ. 1021, ց. 3, գ. 41, թ. 10:

⁶ ՀԱՍ, ֆ. 1457, ց. 1, գ. 164, թ. 1:

* Ի նկատի ունի մայիսի 9-ի Հ. Օհանջանյանի պաշտոնական հաղորդումը Դաշնակցության կենտրոնական կոմիտեին՝ Ալեքսանդրապոլի կայազորի և Մուսայեյանի զրահագնացքի բոլշևիկների կողմն անցնելու և քաղաքացիական կռվի անխուսափելիության մասին:

Մայիսի 10-ին, երկուշաբթի ամբողջ օրը, Հիպերիկը չափազանց մտահոգ ու ընկճած, զբաղած էր կուսակցական գործերով: Նա շարունակ կրկնում էր «մեծ յիմարություն է կատարելու և իզուր, միանգամայն անմեղ զոհեր պիտի լինեն»:

Այդ օրը քաղաքում մեծ միտինգ էր, որտեղ առաջարկեց ժողովրդին գնալ զրահապատը գրասերու:՝ Հիպերիկը դեմ էր այդ առաջարկին, ընկճած սրտով տուն եկավ, բայց շուտով գնաց, միայն վերադարձաւ ուշ գիշերը:

Մայիսի 11-ին, երեքշաբթի օրը, քաղաքից կայարան պատվիրակներ գնացին՝ դրութիւնը պարզելու համար: Խռովարարները պատվիրակութեանը ներկայացրել էին մի ցանկ, որով պահանջում էին 12 դաշնակցականների՝ իբրև պատանդների, սպառնալով, հակառակ դեպքում ժամը 4-ից գնդակոծել քաղաքը:՝ Այդ ցուցակում Հիպերիկի անունը չկար: Բայց պահանջած մարդկանցից բոլորը, բացի Մարգարեանից,՝ պահել էին:

Ինձ կանչեցին և խնդրեցին ամփոջապես գտնել Հիպերիկին և դրութեան մասին յայտնել նրան: Հիպերիկին ես գտայ Դաշնակցութեան ակումբի բակում, ուր նա վերջին հեռագիրն էր խմբագրում: Յայտնեցի ինչ ինձ յանձնարարած էր, որից յետոյ նա իսկոյն շտապեց քաղաքային վարչութիւն: Մինչ ես յետեւից հասայ, տեսայ՝ կառք նստած Հիպերիկը, Ա. Մարգարեանը, բժ. Ս. Լազարեանը և Գեղեղն Խոյեցեանը՝ գնում են կայարան՝ Ս.Մուսայելեանի մօտ: Այնտեղ Հիպերիկը խռովարարներին յայտնում է հետևեալը. «Այն ցուցակը, որ դուք ինձ այսօր էք ուղարկել, ինձ երեկ էր յայտնի, և ես՝ իբրև Դաշնակցական կօմիտէի նախագահ, հաւաքեցի ընկերներս և յայտնեցի նրանց, որ նրանց կեանքը վտանգած է, ուստի նրանք պետք է թագնեն, իսկ ես իբրև նախագահ կամովին եկել եմ ձեզ մօտ, վարվեցէք ինձ հետ այնպէս, ինչպէս ձեզ հաճելի է»: Նրանք, սակայն, պատասխանում են, որ ընկեր Չոլախյանին ձեռք չեն տալու: Հիպերիկը խռովարարներից վերցնում է ազնիւ խօսք, որ նրանք ևս ոչ մի դաշնակցականի չեն ձերբակալելու ու չեն գնդակահարելու, որ նրանց մուտքը քաղաք պետք է կրի խաղաղ բնոյթ, իսկ ՀԶԴաշնակցութիւնը սրանից յետոյ ոչ մի կրակոցի և էքսցեզի համար պատասխանատու չէ, որովհետև կուսակցական կօմիտէն ցրած է: Այդ օրը ժամը 4-ին բոլշևիկյան զօրքը մտաւ քաղաք և ամենուր դրեց իր պահակները: Նոյն գիշերը, ժամը 12-ին եկավ մի սպայ երկու զինուորի հետ, և օրդերը ցոյց տալով ձերբակալեց Հիպերիկին ու տարաւ միլիցայէտ Հ. Ամատունու մօտ:՝ Առաւօտեան իմացայ, որ ձերբակալել են նաև նախկին քաղաքապետ Հ. Մելքոնեանին,՝ Ամերիկեան կօմիտէի լիազօր Գ. Պարունակեանին,՝ Գ. Գինոսեանին և Արտ. Շահրիացեանին:

* Բնակչության նման տրամադրվածության մասին է վկայել նաև Բյուրո կառավարության կողմից արտակարգ լիազորություններով Ալեքսանդրապոլ ուղարկված Հովակիմ Բուդաղյանը:

* Հեղինակը շփոթում է. այդ պահանջը ներկայացվել է մայիսի 10-ին:

* Ա. Մարգարյանը քաղաքային վարչության անդամ էր:

* Խոսքը վերաբերում է Գևորգ Խոյեցյանին:

* Հայկ Ամատունին Մայիսյան խռովության ժամանակ եղել է քաղաքի միլիցիայի կոմիսարը: Խռովության ճնշումից հետո փախել է Թիֆլիս, ապա՝ մեկնել Բաքու, աշխատել Արտակարգ հանձնաժողովում: Հայաստանի խորհրդայնացումից հետո վերադարձել է Երևան, զբաղեցրել մի շարք պատասխանատու պաշտոններ: 1921թ. որպես ՀՀ արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ գործուղվել է Ալեքսանդրապոլ: Թուրքերի հեռանալուց հետո եղել է Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմի ներքին գործերի բաժնի վարիչ:

* Հայկ Մելքոնյանը հրաժարական էր տվել 1920թ. ապրիլի 6-ին:

* Մայիսյան ապստամբությունից հետո Ամերիկյան կոմիտէի տեղական ներկայացուցիչ Էքմանը Գ. Պարունակյանին ազատել է աշխատանքից:

Մայիսի 12-ին, չորեքշաբթի օրը, մինչև ցերեկայ 12-ը, բանտարկեալները պահեցին Ամատունու մօտ: Իմացայ, որ գիշերը, երբ բոլոր բանտարկեալներին բերում են միլիցիայեացի մօտ, Հիպերիկը դիմում է վերջինիս հետևեալ խոսքերով. «Յայտնեցէք ձեր մեծերի միջոցաւ իմ կառավարութեան, որ նա երբէք ի նկատի չառնի մեր կեանքին սպառնացող վտանգը իր քայլերի մէջ, ազատ զգայ իրեն»:

Ժամը 1-ին բոլորին ոտքով տանում են բերդ: Հասնելուն պէս իրենց գրասենակի առաջ, բանտարկեալներին յանձնելու ժամին, մօտ է վազում ինչ որ մի ուսանող և յայտնում հետևեալը. «Հայ գրահապատից հեռագիր ստացեց, հետևեալ բովանդակութեամբ- ներողութիւն խնդրել ընկեր Չոլախեանից և նրան արձակել իբրև թիւրիմացաբար ձերբակալուածի»: Հիպերիկը յայտնում է, որ թիւրիմացաբար ձերբակալուած է ոչ միայն ինքը, այլ նաև բոլորը, և եթէ միւսներին չեն արձակի, ինքը ևս կմնայ նրանց հետ: Ժամը 4-ին, երբ ես կերակուր ուղարկելու հոգսով էի զբաղուած, հերթապահ սպան եկավ յայտնելու, որ ձեր ամուսինը ազատ է յայտարարուած, միայն ինքը յամառութիւն է ամուսն և դուրս չի գալիս: Քաղաքում շատերն արդէն այդ մասին գիտեին: Ինձ մօտ եկան երկու անձնատրութիւններ և յայտնեցին, որ Հիպերիկի ներկայութիւնը քաղաքում անհրաժեշտ է, և ինձ վրայ պարտականութիւն դրեցին գնալ նրան բերելու: Ես զնացի բերդ և «Կաբանի» կոչուած բանտից մեծ դժարութեամբ կարողացայ համոզել Հիպերիկին դուրս գալու:

Երկուշեան ժամը 7-ին տուն եկանք: Հիպերիկը սաստիկ հոգնած էր: Նա մնաց տանը մինչև առաւօտ:

Մայիսի 13-ի առաւօտեան՝ ժամը 8-ին, երբ Հիպերիկը հագնում էր, այլայլուած ներս վազեցին նրա մօտ ընկեր Իսահակ Տեր-Ներսիսեանը, ապա Լ. Սարգսեանը* և շտապով կառք նստեցին ու գնացին: Իմացայ, որ բերդում լսելով, Երևանից մօտեցող զօրքի մասին, որոշել են կրակ բանալ նրանց վրայ, իսկ ռազմապաշարի պահեստները պայթեցնել: Իսկ էսերների և էսդէկների խառը ժողովը որոշել է ամէն կուսակցութիւնից մեկական մարդ ուղարկել գրահապատ, բանակցելու խռովարանների հետ ու դրութիւնը փրկելու:

Ամբողջ օրը Հիպերիկից լուր չեկավ, շատ անհանգիստ էի: Երկուշեան լուր ստացեց, որ չանհանգստանաք, եթէ Հիպերիկը ուշանայ, որովհետև պատգամավորներին կայարանից յատուկ շոգեմեքենայով դէպի կառավարութեան զօրքը ուղարկելուց յետոյ, գիծը բոլշիկները փչացրել են, երեք պատգամավորները գուցէ չվերադառնան:

Երկուշեան սկսեցին լուրեր պատել, թէ բոլշիկները քաղաքից հեռանալու են, բայց հեռանալուց առաջ զուցէ դաշնակցականների ընտանիքներին վնասեն կամ հետները պատանդ տանեն: Մեր ընտանիքում ոչ ոք չկար, և ամուսնուս եղբոր երեք որբերը, որոնց մենք էինք պահում, սաստիկ վախեցած խուճապ առաջացրին:՝ Մեր ծանօթների որոշմամբ բժիշկ Լազարեանը եկավ մեր տանը մնալու: Կէս գիշերին՝ ժամը 4-ին, Հիպերիկը տուն եկավ յոգնած, քաղցած, նրա հետ էր Իսահակ Տեր-Ներսիսեանը և բոլշիկի մի բանուոր, փոստի կօմիսարը: Հիպերիկը ուրախ էր, որ պատգամավորութեան միասիան յաջող էր անցել:՝

* Լևոն Սարգսյանը սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչն էր, 1918թ. մայիսից մինչև 1919թ. մայիսը Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության նախագահը:

* «Շիրակ» կոոպերատիվների միությունը Չոլախյանի մահից հետո ֆոնդ է բացել նրա որբերին պահելու համար՝ նվիրաբերելով 100000 ռուբլի:

* Պատվիրակությունը (Լևոն Սարգսյան, Հիպերիկ Չոլախյան, Իսահակ Տեր-Ներսիսյան) Ադրիանով մայիս 13-ին հանդիպել է Մեպուհին՝ խնդրելով թույլատրել գնալ Երևան բանակցությունների՝ ստեղծված իրավիճակից անարյուն դուրս գալու համար: Մակայն Մեպուհի

Կես ժամ չանցած, բժ. Լազարեանի հետ նրանք գնացին կայարան: Իմ խնդրին՝ մնալ քիչ և հանգստանալ, Հիպերիկը պատասխանեց. «Եթե մենք մինչև ժամը 6-ը պատասխան չտանք, Սեպուհի* և Գամազյանի զինուորները կրակ բաց կանեն և հազարուր տողովուրդ կարող է վնասել: Ժամը 4 և կեսին գնացին: Մայիսի 14-ի առաւօտեան ժամը 8-ին տոմս ստացայ Հիպերիկից, որով յայտնում էր, թէ բոլշևիկները հեռացան, ոչ մի կաթիլ արիւն չթափեց, կառավարութեան զօրքերը մտնում են քաղաք: Իսկ ինքը գնում է զօրքին դիմաւորելու:

Քիչ անց, մօտ ժամը 9-ին, մի ուրիշ նամակ ստացայ, որով մեր ծանօթ երիտասարդներից մեկը, սպայ Ս. Քեանդարեանը,* աղերսագին խնդրում էր կա՛մ ես, կա՛մ Հիպերիկը մի կերպ օգնութեան հասնենք, որովհետև իրեն բանտարկել են որպէս բոլշևիկ և գուցէ սպանեն:*

Ես քիչ սպասեցի, տեսայ Հիպերիկը չեկաւ, դուրս եկայ Քեանդարեանին օգնութիւն հասցնելու, որին զիտէի իբրև դաշնակցականի, և որը Հիպերիկի խորհրդով երկու օր փակած տանն էր և կայարան պաշտօնի չէր գնում:

Դուրս եկայ, մի քանի հանդիպած մարդու յայտնեցի, որ եթէ կայարան գնան կամ գնացածի պատահեն, յայտնեն, որ Քեանդարեանը դաշնակցական է: Այդ ժամանակ նկատեցի, որ ինձ վրայ մի այլ տեսակ են նայում: Ոմանք հարցնում են, թէ ուր է Հիպերիկը, կամ ինչ զիտեն նրա մասին: Ես յայտնում եմ, որ տոմս եմ ստացել, և նա շուտով տուն կգայ: Քիչ անց ինձ շրջապատեցին և գրեթէ ուժով բժ. Միրզոյեանն ու ...* կառք նստեցրին և տարան դէպի կայարան ու ճանապարհին շատ զգոյշ յայտնեցին, որ Հիպերիկը թեթև վիրաւորել է: Ինձ տարան երկաթուղու հիւանդանոցը, ուր արդէն շորերը փոխած պատկեցրել էին Հիպերիկին: Նա ինձ հանգստացրեց, որ չվախենամ, ասելով որ ոչինչ չկայ, վերքը թեթև է, և ինքը ցավ չի զգում:

Երկու գնդակ մտել էր մէջքից և մնացել ստամոքսում: Բժշկական խորհրդի առաջարկութեամբ համաձայնութիւն տուի անդամահատել գնդակները հանելու նպատակով: Հիպերիկը սկսել էր քիչ արիւն քթել: Նոյն օրը ժամը 4-ին անդամահատեցին գնդակները հանելու նպատակով, որից յետոյ 3 ժամ Հիպերիկը քնած մնաց, բայց արթնանալուց յետոյ շատ տանջեց հազից ու բերանից դուրս գալով գագերից: Մայիսի 15-ին մինչև ժամը 10-ը նույն վիճակն էր, յետոյ սկսեց բերանից շատ արիւն գալ: Ժամը 5-ից զարկերակը դանդաղեց, և մինչև ուշ գիշեր սիրտը պահում էին դեղ սրսկելով: Գիշերուայ ժամը 12-ին հանգիստ փչեց շունչը՝ սիրտը արնաքամ լինելուց: Գիտակցութիւնը միշտ տեղն էր և չիմացավ իր դրութեան լուրջ լինելը: Ըարունակ մտածում էր վերջին դէպքերի մասին: Պարզում է, որ ժամը 9-ին, երբ պատգամաւորները ամեն ինչ վերջացրած, Մուսայելեանի թողած փողերը* արդէն հաշւած ու կայարանապետին յանձնած՝ հեռախոսով կառք են խնդրում քաղաք գնալու, կառքը, սակայն չի գալիս, ուզում են ոտ-

չի թույլատրել պատվիրակությանը անցնել Երևան, հայտնելով, որ ինքը լիազորված է հարցը տեղում լուծելու և առաջխաղացումը չի կանգնեցնի, բայց պատրաստ է հարցն առանց կռվի վճռելու, պայմանով, որ մինչև մայիսի 14-ի առավոտյան ժամը 6-ը հեղափոխական կոմիտեն անձնատուր լինի և գրահագնացքը հանձնի անվնաս:

* Սեպուհը արտակարգ լիազորություններով շարժվում էր դէպի Ալեքսանդրապոլ ապստամբությունը ճնշելու համար:

* Քյանդարյանը կայարանի պարետն էր, դաշնակցական:

* Դաշնակցականները իրենց իրավունք էին վերապահում փողոցում ձերբակալել բոլոր նրանց ում կասկածում էին մայիսյան ապստամբությանը մասնակցելու մեջ:

* Անընթեռնելի բառ:

* Պետական գանձարանից վերցված էր 18 մլն, որից 5 մլն ռուբլին պատկանում էր քաղաքային բանկին:

քով գնալ, հենց այդ ժամին մտնեմուն են Հիպերիկին և խնդրում կուսակցական գործով կայարանում կայանալիք ինչ-որ խորհրդակցութեան գնալ:

Հիպերիկը գնում է Լ. Սարգսեանը և Իսահակ Տեր-Ներսիսեանը շատ են սպասում, ո՛չ կառք է գալիս, ո՛չ Հիպերիկը՝ վերադառնում, գնում փնտրում են և տեսնում Հիպերիկին ժողովի նստած. նա ձեռքի նշանով խնդրում է նրանց վերադառնալ քաղաք առանց իրեն: Մի քանի րոպեից, երբ Հիպերիկը դուրս է գալիս տուն դառնալու, մեկը մտնում է և յայտնում, որ սպայ Քեանդարեանին բանտարկել են: Հիպերիկը շտապում է նրա մօտ, ազատում վերջինիս և վերցնում է հետը՝ մինչև քաղաք ուղեկցելու: Կայարանից քիչ հեռու՝ հրապարակի վրա, նրանց դեմ է դուրս գալիս չարագործը և, շրջապատելով երկուսին, ատրճանակը ուղղում է Քեանդարեանին՝ վերջինիս սպանելու նպատակով: Քեանդարեանը գոռում է՝ «այ. Չոլախեան, ինձ ուզում են սպանել», ասում ու փաթաթում է Հիպերիկին: Հիպերիկը չարագործի ձեռքը բռնում է և առաջարկում չկրակել: Իսկ նա գոռում է. «Դու հեռացի՛ր, դու մի՛ խառնուիք»: Այդ րոպեին լսում է կրակոց, և Հիպերիկը վիրատուրում է մեջքից:՝ Նոյն վայրկեանին մօտից մի խանութպան շալակում է Հիպերիկին և տանում մօտակայ երկաթուղու հիւանդանոցը: Հիպերիկը վիրատուրում է առաւօտեան ժամը 9-ին:

Աելորդ չեմ համարում յայտնել նաև այն, որ հիւանդանոցում, արդէն ծանր վիրատուրած Հիպերիկի պահանջմամբ երկտողով պատահածի մասին յայտնեցի զօրաց նախարար պ. Ռուբէն Տեր-Մինասեանին, որն այդ ժամանակ գտնում էր կայարանում:*

ПО СЛЕДАМ ОДНОГО ДОКУМЕНТА, ОТНОСЯЩЕГОСЯ К МАЙСКИМ СОБЫТИЯМ

____ *Резюме* _____

____ *К. Алексанян* _____

Представленный документ является важным источником Майского восстания, где представлена деятельность местных органов самоуправления и партии Дашнакцутюн.

Документ свидетельствует, что местные органы самоуправления и партия Дашнакцутюн вели уравновешанную политику и своей деятельностью создавали условия, чтобы общество было единым, а внутренняя жизнь государства была устойчивой.

Документ является важным свидетельством той ситуации, которая создалась после подавления Майского восстания.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ալեքսանյան Կարինե Վանիչկայի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ

Շիրակի հարազտական հետազոտությունների կենտրոն,

E-mail: karineal@mail.ru

* Չոլախյանին չի հաջողվել փրկել Քյանդարյանին, նա ևս սպանվել է:

* Ռուբեն Տեր-Մինասյանը մայիսի 8-ին կառավարության նիստում հայտարարելով, որ մենք ինքներս ենք ստեղծել անկախ Հայաստանը, և ինքներս էլ պետք է պաշտպանենք այն, կամ նրա հետ մեռնենք՝ մայիսի 9-ի գիշերը եկել էր Ալեքսանդրապոլ:

ՇԻՐԱԿԻ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Շիրակում XXդ. առաջին երկու տասնամյակներին, սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված, ցանքատարածությունների մակերեսն անընդհատ փոքրացավ: Այսպես, եթե 1913թ. Հայաստանում մշակվել է 345,7 հազ. հա հողատարածք, 1919թ.՝ 82,7 հազ. հա, իսկ 1969թ.՝ 679,9 հազ. հա¹, ապա Շիրակում՝ համապատասխանաբար 40 հազ. հա, 8 հազ. հա² և 85,8 հազ. հա³: Երկրագործական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար կառավարությունը 1920թ. ստեղծեց գյուղատնտեսության և գույքի նախարարություն: Երկրագործական աշխատանքներն աստիճանաբար կարգավորվում էին: Սակայն, թուրքական բանակը կրկին ծանր հարված հասցրեց Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիությանը և համանուն քաղաքի բնակչությանը՝ 1920թ. նոյեմբերին ներխուժելով Հայաստան: Միայն Փամբակի գյուղերից Թուրքիա տարվեցին 24303 զուլի խոշոր և 96704 զուլի մանր եղջերավոր անասուն, 6296 գութան և արոք, 527927 փութ ալյուր⁴: Այդ ամենն արվում էր տեղի բնակչությանը և գաղթական հայերին սովամահության մատնելու համար: Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության նյութերից պարզվում է, որ Դուզլանդի գավառակում (ներկայիս՝ Ախուրյանի տարածաշրջան) ցանքս չունեցող 31 տնտեսություններից 27-ը «ինչ՞ու ցանքս չունեք» հարցին պատասխանել են՝ «լծկան, սերմացու ու ինվենտար չունենք»: Լույնայիսի պատասխան են տվել նաև Մուլա-Գյոքչա (ներկայիս՝ Անիի տարածաշրջան) գավառամասի 30 տնտեսությունից՝ 29-ը, Թալինի գավառամասի 28 տնտեսությունից՝ 16-ը, Հաջի-Խալիլի (ներկայիս՝ Ծաղկահովիտի տարածաշրջան) գավառամասի 21 տնտեսությունից՝ 19-ը⁵:

Խորհրդային առաջին տարիներից արմատապես փոխվեց գյուղատնտեսական քաղաքականությունը: 1920-30-ական թվականները կարելի է բնութագրել, որպես սոցիալիստական ագրարային հեղափոխության տարիներ: Հայաստանում, նաև Շիրակում ավանդական բնամթերային երկրագործությունից անցում կատարվեց առաջադիմական սոցիալիստական ապրանքային երկրագործության: Փոփոխություններ տեղի ունեցան նախևառաջ հողատիրական հարաբերություններում: Գյուղացիական հողատարածքներն ազգայնացվեցին: Խորհրդային Հայաստանի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի իշխանությունների գերինդիքն էր վերականգնել հանրային տնտեսությունը՝ հասցնելով այն 1913թ.

¹ Սովետական Հայաստանը 50 տարում, Եր., 1970, էջ 111:

² Միքայելյան Վ., Հողային հարցը և գյուղացիության դրությունը Հայաստանում 1917-1920թթ. Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), Եր., 1960, N 1, էջ 122:

³ Սովետական Հայաստանը 50 տարում, էջ 119:

⁴ Միքայելյան Վ., Հողային հարցը և գյուղացիության դրությունը Հայաստանում 1917-1920թթ., ՊԲՀ, №1, Եր., 1960, էջ 115:

⁵ Մարուխյան Ա., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները հայկական գյուղում, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N 5, էջ 10, Եր., 1948:

մակարդակին: Այդ դժվարին գործընթացն սկսվեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով⁶:

Էսպես փոխվեց բուսաբուծության զարգացման ընթացքը: Ընդունված հողային օրենսգրքի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի անմիջական օգտագործման իրավունքը վերապահվեց հողագործներին և նրանց միություններին, քաղաքային բնակավայրերի բնակչությանը և պետական ձեռնարկություններին: Օրենքով արգելվեցին հողի առք ու վաճառքը, կտակելն ու գրավ դնելը: Թույլատրվեցին հողի վարձակալություն և օժանդակ վարձու աշխատանքի օգտագործում: Հողային հասարակություններում կամ գյուղական համայնքներում հողը ենթակա էր դառնում պարբերական վերաբաժանման 9 տարի ժամկետով, և հավասարության՝ ըստ ծխերի՝ անդամների թվի՝ համաձայն շնչաբաժին նորմայի: Չնայած այդ քայլերին՝ գավառում գյուղացիների շերտավորումը և շահագործումը պահպանվում էր⁷:

Ալեքսանդրապոլի գավառում հողային հարցի լուծումը դժվար էր նաև ազատ հողերի բացակայության պատճառով: Ուստի հողի շնչաբաժնի նորման կրճատվեց: Խնդրին լուծում տալու համար որոշվեց ստեղծել կոոպերացիոն գյուղացիական տնտեսություններ: 1924թ. ՀԽՍՀ Կենտրոնական կոոպերացիոն ընդունված դեկրետով գյուղացիական կոոպերացիաներում կարող էր ընդգրկվել 15-ից ոչ պակաս գյուղացիական տնտեսություն⁸: 1927թ. դրությամբ գավառում գյուղկոոպերացիաները 41 էին և միավորել էին 5417 գյուղացիական տնտեսություն, ինչը Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական տնտեսությունների 20,4%-ն էր⁹: Նշված տարում կաթարտել կոոպերացիային էին միացել 15841 տնտեսություն, 28-ը թռչնաբուծական ընկերության անդամ էին, 4198-ը օգտվել են վարկընկերության ծառայությունից, կազմավորվել էին հողօգտագործման, ոչխարաբուծական և մեղվաբուծական ընկերություններ¹⁰: Գյուղատնտեսության, մասնավորաբար, բուսաբուծության զարգացման գործոններից մեկը եղավ գյուղատնտեսական ՓՕԿ-ի (փոխադարձ օգնության կոմիտե) կազմավորումը: 1927թ. Ալեքսանդրապոլի գավառում ՓՕԿ-երի թիվը 197 էր, նրանցում աշխատողների թիվը՝ 1368¹¹: Գյուղատնտեսության կոոպերացմանը հաջորդեց կոլեկտիվացումը:

Այդուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ պայմանավորված հիմնականում կոլեկտիվացման գործընթացով՝ նշված ժամանակահատվածում կտրուկ փոփոխվել է տարբեր տեսակի գյուղացիական տնտեսությունների ցանքատարածությունների մեծությունը: Մենատնտեսներից խլված բազմաթիվ հողատարածքներ հանձնվել են կոլեկտիվ տնտեսություններին:

⁶ *Տակոբյան Ա.*, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին (1921-1925թթ.), ՊԲՀ, N 3, Եր., 1980, էջ 31:

⁷ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, ց.1, գ.41, թ.49:

⁸ *Թամրազյան Բ.*, Սովետական Հայաստանում գյուղատնտեսական մտավորականության կազմավորման պատմությունից (1921-1925թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, հ.6(546), Եր., 1988, էջ 32:

⁹ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, ց.1, գ.7, թ.110:

¹⁰ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, ց.1, գ.7, թ.110:

¹¹ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, ց.1, գ.7, թ.97

Աղյուսակ 1

Ցանքատարածությունը Լենինականի շրջանում 1933-1935թթ.¹²

| | 1933թ. | | 1935թ. | | | | | |
|-------------------|-----------------------|----------------------|-----------------------|----------------------|-------------|------------------|------------|-------------|
| | աշխատանքային ցորեն | զարնանագրան ցորեն | աշխատանքային ցորեն | զարնանագրան ցորեն | կարտոֆիլ | շաքարի ճակնեղ | կտավատ | կերակրվառու |
| կոլտնտեսություն | 2875 | 4544,7 | 5141,0 | 17212 | 529 | 362 | 854 | 694 |
| խորհունտեսություն | 645 | 859,0 | 969,0 | 1639,0 | 522 | 355 | 1 | 880 |
| մենատնտեսություն | 727,7 | 8280,0 | 469,2 | 4686 | 86 | - | 110 | - |
| Ընդամենը | 4247,2 | 13683,7 | 6579,2 | 23537 | 1137 | 717 | 965 | 1574 |

Խորհրդային տարիների սկզբին փոխվեցին գյուղական համայնքների և գյուղացիական տնտեսությունների տեսակները, ինչը նույնպես ազդեց երկրագործական աշխատանքների կազմակերպման վրա: Շիրակում տնտեսվարում էին գյուղացիական տնտեսությունների տարբեր տեսակներ: Դրանցից էին՝ խորհրդային տնտեսությունները, աշխատանքային արտելները, մերձքաղաքային գյուղացիական կոոպերացիոն տնտեսությունները, կոլեկտիվ տնտեսությունները, մենատնտեսությունները և այլն: 1932թ. Լենինականի շրջանի 20,4 հազ. հա գյուղատնտեսական հողատարածքից 683 հա բաժին է ընկել տրեստավորված խորհրդային տնտեսությանը, 93,5-ը՝ մերձքաղաքային կոոպերացիոն տնտեսությանը, 6477-ը՝ կոլտնտեսությանը և 13160-ը՝ մենատնտեսությանը¹³:

Սկզբնական շրջանում վերափոխման մեջ որոշակի առաջնայնություն ունեցավ պետական խոշոր գյուղացիական տնտեսությունների՝ խորհրդային տնտեսությունների (սովխոզների) կազմավորումը: Լենինականում խորհրդային առաջին տնտեսությունը հիմնադրվել է 1929թ., այնտեղ հիմնականում մշակել են հացահատիկային բուսատեսակներ և շաքարի ճակնեղ: Ի դեպ, առաջին փորձերից պարզվեց, որ մշակվող ճակնեղի շաքարի պարունակությունը Շիրակում 19,5% է, այն դեպքում, երբ Կուրսկում՝ 17,5, իսկ Վրաստանում՝ 14% էր¹⁴:

Կարճ ժամանակահատվածում զգալի չափով բարձրացավ խորհունտեսությունների տեխնիկական զինվածությունը, էապես ավելացավ շարքացանների և կալսիչների թիվը¹⁵:

1931-1933թթ. շրջադարձային եղան մենատնտեսության համար: Նշված ժամանակահատվածում մենատնտեսություններին պատկանող ցանքատարածու-

¹² ՀՍՍՄ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր, ֆ. 9, ց. 1, գ. 153, թ. 13, ֆ. 9, ց. 2, գ. 200, թ. 98-121:

¹³ Նույն տեղում գ. 102, թ. 36:

¹⁴ Վիրաբյան Ա., Ուրվագծեր Հայաստանի ոռոգման պատմության, Եր., 1986, էջ 147:

¹⁵ Ղազարյան Վ., Սովխոզային շինարարությունը Հայաստանում 1921-1930թթ., Հայկական ՄՍՌ գիտությունների տեղեկագիր, N3, Եր., 1961, էջ 3:

թյունները նվազեցին 4,8 հազ. հա-ով կամ 36,6%-ով՝ 13,1 հազ. հա-ից¹⁶ հասնելով 8,3 հազարի: Լենինականի շրջանում այդ տարիները բնութագրվում են իբրև համատարած կոլեկտիվացման տարիներ, երբ ունևոր գյուղացիները կամ «կուլակները» որպես սոցիալական խումբ դադարեցին գոյություն ունենալուց: 1920-ական թվականներին գործնական նշանակություն ստացավ կուլակին որոշելու, նրա չափանիշները սահմանելու հարցը: Հարցի լուծումը կարևորվեց, երբ իշխանությունը սկսեց տարբերակված հարկային քաղաքականություն վարել գյուղացիության սոցիալական շերտերի նկատմամբ. չքավորներն ազատվում էին հարկերից, միջակները հարկվում էին չափավոր, իսկ հարկի հիմնական ծանրությունը դրվեց ունեվոր կուլակային տնտեսությունների վրա: Գործում էին մի քանի հարկատեսակներ՝ հավասարեցման հարկ, եկամտահարկ, դասային հարկ, վերչափ, գյուղմիասնարկ և այլն: Տուրքերից կարելի է առանձնացնել իրավաբանական ծառայությունների և անասունների համար վճարվող գումարները և անշարժ գույքի ու անասունների համար վճարվող տեղեկանքների դիմաց արվող մուծումները: Միանվագ տուրք գանձվում էր շուկաներից և առևտրի համար հատկացված վայրերից: Միանվագ տուրքից ազատվում էին այն գյուղացիները, որոնք վաճառում էին իրենց տնամերձից ստացած բերքը, ինչի համար պետք է ունենային գյուղխորհուրդների և քաղխորհրդի կողմից տրվող վկայական¹⁷:

1926-27 տնտեսական տարում Ալեքսանդրապոլի գավառում գրանցվեց գյուղացիական մթերքների գների իջեցում, մասնավորապես, կարագի գինը նվազեց 18%-ով, շաքարինը՝ 6,4, բրնձինը՝ 10, տավարի մսինը՝ 9 և ոչխարի մսինը՝ 7,5%-ով: Գյուղմթերքների գների անկման պատճառը նախևառաջ պետության կողմից իրականացվող գնագոյացման քաղաքականությունն էր. վերացել էր գյուղմթերքներ վերավաճառող կազմակերպություններից մի մասը, նվազել էին գյուղմթերքների առք ու վաճառքով զբաղվող պետական կազմակերպությունների վարչական ապարատի ծախսերը: Մինչ այդ գյուղմթերքը քաղաքային սպառողին հասնելու համար անցնում էր գործարան-սինդիկատ-կենտրոնական միություն-Անդրկովկասյան կոոպմիություն-Հայկոոպ-Բանկոոպ շղթան, որը թանկացնում էր վերամշակում անցած գյուղմթերքը միջինը 25-30%-ով¹⁸:

Գավառի գյուղատնտեսության, հատկապես բուսաբուծության զարգացման մեջ առանցքային նշանակություն ունեցան վարկային ընկերությունները, որոնք հիմնականում վարկ էին տրամադրում չքավոր և աղքատ գյուղացիական տնտեսություններին՝ լծկան անասուն և սերմացու ձեռք բերելու համար: Վարկավորում էին ոչ միայն պետական բանկային հաստատությունները, այլև հարուստ գյուղացիները: Խորհրդային իշխանությունը, վերջինս համարելով վաշխառություն, քրեորեն պատժելի արարք, խոչընդոտում էր դրան՝ առաջ բերելով հարուստ գյուղացիների դժգոհությանը, քանի որ նրանք զրկվում էին շահույթ ստա-

¹⁶ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ. 9, ց. 1, գ. 102, թ. 22:

¹⁷ Նույն տեղում, գ. 6, թ. 43:

¹⁸ Նույն տեղում, գ. 7, թ. 96:

նալու հնարավորությունից¹⁹: Դիմադրությունը ծայրահեղ բնույթ ստացավ, երբ մեծահարուստ գյուղացիներին արգելվեց ընտրություններին մասնակցել՝ զրկելով նրանց իշխանություն ձևավորելու հնարավորությունից:

Ըստ Լենինականի գավառային գործադիր կոմիտեի զեկուցագրերի տվյալների՝ բուսաբուծությունը 1920-ական թվականների երկրորդ կեսին գավառի տնտեսության զարգացման առաջատար ճյուղն էր: 1926-27 տնտեսական տարվա բնակչի մայական անբարենպաստությամբ (երաշտ, կարկուտ) պայմանավորված՝ բուսաբուծությանը գավառում մեծ վնաս կրեց²⁰: Ընդհանուր առմամբ, 1920-ական թվականները գավառում հացահատիկի ցածր բերքատվության տարիներ եղան: Դրա պատճառը ինչպես ցանքատարածությունների նվազումն էր, այնպես էլ ցածր արտադրողականությունը: 1920-1930-ական թվականներին գավառում նկատելի անկում ունեցավ նաև կտավատի արտադրությունը՝ պայմանավորված ինչպես էլեկտրաֆիկացումով (կտավատի ձեթը ճրագալույսի հումքն էր), այնպես էլ Ռուսաստանից արևածաղիկի ձեթի ներմուծման ծավալների ավելացմամբ²¹: Իսկ 1927-1935 թթ. հացահատիկի ցանքատարածության նվազման հիմնական պատճառը կոլեկտիվացումն էր, որը մենատնտեսներին զրկեց սեփական հողատարածքներից: Բնականաբար, այդպիսի պայմաններում հացահատիկային բուսատեսակների արտադրության համախառն արդյունքը պակասելու էր²²:

1920-ական թվականներին հացահատիկային բուսատեսակների բերքատվությունը բարձրացնելու համար ստեղծվում են փորձադաշտեր և սերմադաշտեր: Ագրոարդյունաբերական անձնակազմի կողմից գավառի 32 գյուղերի 123 տնտեսությունում 120 դեյատինի վրա ցանվում էին 12 տեսակի ցորեն, 10 տեսակի գարի և 2 տեսակի վարսակ²³: 1932 թ. երկրագործական աշխատանքները կազմակերպելու գործում կարևորվել է, այսպես կոչված, սերմֆոնդերի ապահովումը, ինչը որոշ դեպքերում հարուցել է գյուղացիների և գյուղում բնակվող բանվորների մի մասի դժգոհությունը, որոնք հրաժարվել են կատարել սերմֆոնդի գծով իրենց առաջադրանքը²⁴:

Շիրակը հանրապետության միակ շրջանն էր, որ բավարարում էր ցորենի ներքին պահանջարկը: Լենինականի գավառում 1925-1926 տնտեսական տարում հացահատիկային ցանքատարածությունը կազմել է 66456 հա: Մեկ հեկտարից ստացված բերքի քանակը (8.2g) զիջում էր հանրապետական միջին ցուցանիշին: Արժե հիշատակել, որ 1925-1926 տնտեսական տարում գավառի գյուղական բնակչության մեկ շնչին միջինը բաժին է ընկել 208կգ հացահատիկ, իսկ քաղաքում՝

¹⁹ ՀՍՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 104:

²⁰ Նույնը:

²¹ Նույն տեղում, ֆ. 9, ց. 2, գ. 117, թ. 1:

²² Նույն տեղում, ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 110:

²³ Նույն տեղում, թ. 100:

²⁴ Նույն տեղում, գ. 144, թ. 16:

176կգ²⁵: Տարեկան միջինը ցանվել է 9.2 հազ. տ ցորենի և 1.3 հազ. տ զարու սերմացու:²⁶ Ցորեն ցանվել է բոլոր գավառակներում (տե՛ս աղյուսակ 2):

Բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործոններից էր գյուղատնտեսական կրթության կազմակերպումը: Երկրագործական աշխատանքները նոր՝ ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ 1922թ. Ալեքսանդրապոլ քաղաքում տեխնիկումի բացումը, որի գյուղատնտեսական բաժանմունքում սովորում էր 23 ուսանող²⁷, որոնց փորձառություն ձեռք բերումն ապահովելու համար գավառակումը նրանցից 9 հոգու աշխատավարձ հատկացնելով ուղարկեց գավառակի գյուղերը:²⁸ Անցկացվում էին գյուղատնտեսական դասընթացներ, որոնց մասնակցում էին հազարավոր ունկնդիրներ:

Բուսաբուծության զարգացման ընթացքում կարևոր նշանակություն ունեցավ ջրանցքների կառուցումը: Շիրակի ջրանցքն այդ տարիներին մեր հանրապետության ամենախոշոր ջրաշինարարական կառույցն էր: Ջրանցքն սկիզբ էր առնում Ախուրյան գետից (Կապս գյուղի մոտերքից) ուներ 21 կմ երկարություն: Նրա շինարարության աշխատանքներն ավարտվեցին 1929թ.: Ջրանցքը հնարավորություն ընձեռեց ռոտզելու շուրջ 10 հազ հա անջրդի հողեր²⁹, նպաստեց նոր բուսատեսակների, մասնավորապես շաքարի ճակնդեղի մշակությանը: Կառուցվեց նաև Գեղարատ գետից սկիզբ առնող մի այլ ջրանցք: Այն տեղը, որտեղից սկիզբ է առնում ջրանցքը, գյուղացիները մինչև օրս անվանում են «Ռուսի բանդ»:³⁰

Լենինականի գավառում հացահատիկային գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում սկսվում էին զարնան սկզբին և շարունակվում մինչև ամառվա վերջը, որից հետո երկրագործը հողը մշակելով չէր զբաղվում: Այդ բացը լրացնելու համար գյուղացիների համար տեղական իշխանությունները կազմակերպում են ցուցադաշտեր և ցուցահողամասեր, որտեղ ցույց էր տրվում աշնանացան ցորենի մշակության կարևորությունը: Ներկայացնում էին ցանքաշրջանառությունը և մշակման տեխնիկան: 1927թ. գավառում կազմակերպվում է 149 գյուղացիական ցուցահանդեսներ, որոնց հիմնական նպատակն էր ցուցադրել գյուղացիությանը շարքացանի, սերմացանի, սերմերի ախտահանման առավելությունները:

Լենինականի շրջանում 1931-1932 տնտեսական տարում տրեստավորված խորհրդային տնտեսությունները մշակել են 673 հա հողատարածք, հիմնարկ ձեռնարկությունների ենթակայության տակ գտնվող գյուղացիական տնտեսությունները՝ 10, կոլեկտիվ տնտեսությունները՝ 6477 և մենատնտեսությունները 13160 հա, մերձքաղաքային կոոպերացիայի տնտեսությունները՝ 93.5 հա հողատարածք: Բերված թվերից երևում է, որ կոլեկտիվացման գործընթացը չի ավարտվել և հողատարածքների զգալի մասը մշակել են մենատնտեսները:

²⁵ ՀՍՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 5, թ. 1-2:

²⁶ Նույնը:

²⁷ Թամրազյան Բ., նշվ. աշխ., էջ 33-34:

²⁸ ՀՍՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 104:

²⁹ Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 147:

³⁰ Ղաշտային ազգագրական նյութեր, տետր 1, Գյումրի, 2014:

Աղյուսակ 2

Լենինականի գավառակների 1925-1926թթ. գյուղատնտեսական տարվա փաստական բերքի քանակը(գ/հա) ըստ գավառային փորձագիտական հանձնաժողովի տվյալների /հաշվարկը գ/հա-ով/

| գավառակ | Ցորեն գ/հա | | գարի | կտավատ | խոտ գ/հա | | Ծանոթություն |
|---------------|--------------|------------|------------|------------|------------|-------------|--|
| | աշնանացան հա | գարնանացան | | | բնական | ցանովի | |
| Դուզքյանդ | 7,2 | 5,8 | 8,7 | 5,8 | 6,5 | 50,1 | ա/Դուզքյանդի փորձադաշտի աշնանացան ցորեն՝ 20,5 բ/Քյաֆթառուի փորձադաշտի աշնանացան ցորեն՝ 17,9 |
| Քյաֆթառու | 7,0 | 6,5 | 7,5 | 5,8 | 7,3 | 29,1 | |
| Ղզըղոչ | - | 4,3 | 5,8 | 4,6 | 11,6 | 36,4 | |
| Մոլլա-Գյոկչա | 7,2 | 6,8 | 6,5 | 5,0 | 6,5 | - | |
| Անասիա | - | 5,8 | 7,2 | 4,6 | 11,6 | 29,1 | |
| Թալին | 7,3 | 3,9 | 5,8 | 2,6 | 4,4 | 21,9 | |
| Հաջի Խալիլ | - | 4,3 | 6,5 | 2,9 | 8,7 | 29,1 | |
| Միջինը | 7,2 | 5,3 | 6,9 | 4,5 | 8,1 | 32,6 | |

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, ց.1, գ.5,թ.1-2:

Աղյուսակ 2-ից երևում է, որ աշնանացան ցորեն ցանել են Դուզքյանդի, Քյաֆթառուի, Մոլլա-Գյոկչայի և Թալինի գավառակներում, իսկ գարնանացան՝ բոլոր գավառակներում: Գարնանացան ցորենի համեմատաբար բարձր բերքատվություն ապահովվել է Մոլլա-Գյոկչայի գավառակում՝ 6,8 գ/հա, իսկ ամենացածրը՝ Ղզըղոչի և Հաջի Խալիլ գավառակներում: Լենինականի գավառում ցորենի մշակության գլխավոր գավառներն են եղել Դուզքյանդի, Քյաֆթառուի և Թալինի գավառակները: Աշնանացան ցորենի բերքը 1 հա-ից ստացվել է 16-19 ց ցորեն, իսկ գարնանացանից 12-13 ց³¹:

Գավառը նշված ժամանակահատվածում նաև Հայաստանի գարու և կտավատի մշակության գլխավոր գոտիներից է եղել: 1925-26 տնտեսական տարում բոլոր գավառակներում մշակել են գարի և կտավատ, որտեղ գարու միջին բերքատվությունը 7 գ/հա, իսկ կտավատինը՝ 4,5 գ/հա: Թվարկած մշակաբույսերի արտադրության բարձր ցուցանիշներ են գրանցվել հատկապես Դուզքյանդի և Քյաֆթառուի գավառակներում:

Այդ շրջանում բուսաբուծության զարգացման վրա ազդող կարևոր գործոններից մեկը եղավ գյուղատնտեսական կրթության գործի կազմակերպումը տարածաշրջանում: Արդեն 1922թ. Ալեքսանդրապոլում բացվեց տեխնիկում, որի գյուղատնտեսության բաժինն ուներ 23 ուսանող: Տեխնիկումի սովորողների փորձառությունն ապահովելու նպատակով գավառակներում նրանցից իննին աշխատավարձ նշանակելով ուղարկեց գավառակի գյուղերը: Զուգահեռաբար գյուղական բնակչության համար կազմակերպվում էին նաև գյուղդասարաններ, որոնց այդ տասնամյակների ընթացքում մասնակցել են հազարավոր մարդիկ:

³¹ ՀԱՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ.9, ց.1,գ.7, թ.110:

Աղյուսակ 3

Լենինականի գավառակների 1927-1928թթ. գյուղատնտեսական տարվա փաստական բերքի քանակը(հա) (ըստ գավառային փորձագիտական հանձնաժողովի տվյալների)

| գավառ | Ցորեն | | Գարի | | Տարեկան | | Համար | Ընդամենը հացաբարձր | Կտավատ | Կարտոֆիլ | Մլակատ | Բանջարեղեն | Այլ կրկնաբեր | Ընդամենը |
|--------------|-----------|------------|-----------|------------|-----------|------------|-------|--------------------|--------|----------|--------|------------|--------------|----------|
| | աշնանացան | գարնանացան | աշնանացան | գարնանացան | աշնանացան | գարնանացան | | | | | | | | |
| Դուզքյանդ | 775,5 | 10055,6 | - | 5876 | 29,2 | 2,4 | - | 16806 | 482,2 | 46,5 | - | 83,6 | 19,1 | 631,4 |
| Քյավթառլու | - | 6957,8 | - | 4277 | 30,4 | 13,7 | 20,1 | 11299 | 242,3 | 113,8 | - | 46,5 | 24,9 | 427,5 |
| Ղզըղոչ | - | 1587,5 | - | 2279 | - | - | - | 3866,5 | 169,5 | 51,8 | - | 2,2 | - | 223,5 |
| Մոլլա-Գյոկչա | 5,8 | 9862,3 | 91,6 | 5668 | 21,5 | 15,1 | 10,7 | 15675 | 885,9 | 28,4 | - | 30,4 | 14,2 | 958,9 |
| Անասիա | - | 1974,2 | - | 1795 | - | - | 10,3 | 3779,5 | 77,0 | 1,2 | - | - | - | 78,2 |
| Թալին | 861,6 | 1512,5 | - | 1023 | - | - | - | 3397,1 | 139,9 | 14,1 | 5,9 | 4,8 | 8,9 | 173,6 |
| Հաջի Խալիլ | - | 2301,6 | - | 7125 | 69,5 | 69,5 | 28,6 | 9524,7 | 245,3 | 25,2 | - | 1,8 | 6,4 | 278,7 |
| ընդամենը | 1645,9 | 34251,5 | 91,6 | 28043 | 150,6 | 100,7 | 69,7 | 64347,8 | 2165,1 | 281,0 | 5,9 | 169,3 | 73,5 | 2771,8 |

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՍՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութերը. ֆ.9, ց.1, գ.5,թ.4

Լենինական քաղաքի մի շարք հիմնարկ ձեռնարկություններ այդ տարիներին ունեցան իրենց գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Այսպես, 1938թ. «Փորձասելեկցիոն» կայանն ուներ 302,9 հա, թոչնաբուծարանը՝ 4,0, «Բանջարաբուծական կայանը»՝ 3,8 և այլ ձեռնարկություններ՝ 280.7 հա հողատարածքներ³²: Քաղաքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվել են նաև Լենինականի ճակնդեղի խորհտնտեսությունները, որտեղ աշխատողների թիվը 1936թ. կազմել է 119 մարդ, սելեկցիոն կայանում՝ 45, «Անդրերկրամասի» բանվորական մատակարարման բաժնում՝ 85, Լենինականի տեքստիլի խորհտնտեսության ԲՄԲ-ում՝ 66 մարդ: 1939թ. քաղաքի պետական ցանքատարածությունը կազմել է 444 հա, որից 102.3 հա հատկացվել է բանվորներին և ծառայողներին³³:

Այսպիսով, 1920-30-ական թվականները, հատկապես 1930-ականները Շիրակի բուսաբուծության զարգացման շրջադարձային տարիներ էղան: Հին, ավանդական մենատնտեսական երկրագործությանը փոխարինելու եկան համեմատաբար մեքենայացված կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները: Երկրագործական աշխատանքների մեքենայացումը, հողաբարելավման աշխատանքները, նոր ջրանցքների կառուցումը, գյուղատնտեսական կրթության գործի կազմակերպումը զգալիորեն նպաստեցին բուսաբուծության համախառն արտադրանքի և ցանքատարածությունների աճին:

³² ՀՍՍ Շիրակի տարածքային մասնաճյուղի նյութեր. ֆ9, ց.2, գ.203,թ.12:
³³ Նույն տեղում, թ. 28:

РАСТЕНИЕВОДСТВО ШИРАКА В 1920-1930 гг.*Резюме**А. Бояджян*

1920-30 гг. стали поворотными в развитии растениеводства Ширака. Старое традиционно-единоличное хозяйство заменили механизированные общественные колхозы. Механизация земледелия, улучшение пахотных земель, строительство новых каналов способствовали резкому росту валового продукта. Как социальные слои исчезли кулачество, бедное и среднее крестьянство, а вместо них сформировались коллективы колхозов и совхозов. В Шираке были разработаны новые сферы развития растениеводства, в частности, сахарной свеклы. Резко повысилось выращивание картофеля.

Изменилась земледельческая культура. На смену традиционных методов была введена социалистическая земледельческая культура.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բոյաջյան Արտաշես Գևորգի – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն, ԳՊՄԻ աշխարհագրության սմբիոն,
E-mail: a.bojayyan@mail.ru

Ազատ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՅՈՒՄԸՅԻ ՊԱՏԱՆԻ ԾԱՆՈՂՈՂՆԵՐԸ ԵՎՈՂՊԱՅԻ 1996-2000թթ. ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ծանրամարտը՝ որպես սպորտային մարզաձև, մուտք է գործել Հայաստան 1922թ.: 1925թ. ծանրամարտի խմբակներ գոյություն ունեին Երևանում, Լենինականում, Կիրովականում, Էջմիածնում և այլուր: Հայ ծանրորդների առաջին մրցումները տեղի են ունեցել 1926թ. Երևանում: Այն տարիներին ծանրամարտի մարզման մշակված և երաշխավորված մեթոդիկա գոյություն չուներ, և մարզիկներն ու մարզիչները աշխատում էին իրենց անձնական նախաձեռնություններով: Սակայն հետագա 10 տարիներն ավելի արդյունավետ եղան: ԽՍՀՄ-ում աստիճանաբար սկսեց ձևավորվել մարզական աշխատանքի կազմակերպման տեսական ու մեթոդական համակարգը, որը զարգանալով ու կատարելագործվելով հետագա տարիներին ոչ միայն բերեց մարզական նշանակալի արդյունքների, այլ նաև հիմք հանդիսացավ խորհրդային սպորտի հետագա զարգացման համար:

Ծանրամարտը աստիճանաբար զարգացում էր ապրում ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մյուս քաղաքներում: Արդեն համակարգված մարզումների արդյունքում 1930թ. Անդրկովկասի առաջնությունում գյումրեցի ծանրորդ Գուրգեն Մինասյանը դարձավ անդրկովկասյան ռեկորդների հեղինակ: Հետպատերազմյան տարիները դարձան մարզական արդյունքների բարելավման լավագույն ժամանակաշրջան, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, բայց հայ մարզիկներն առավել բարձր արդյունքների հասան 1970-ական թվականներից: Հատկապես նշանակալի էին լենինականցի ծանրորդների հաջողությունները, ովքեր ոչ միայն հանրապետության, այլ նաև ԽՍՀՄ և աշխարհի առաջատարներ դարձան՝ Վարդան Միլիտոսյան, Յուրի Վարդանյան, Մերգո Չախոյան, Խաչատուր Քյափանակցյան, Իսրայել Միլիտոսյան, Ալեքսան Կարապետյան և շատ ուրիշներ: Այս մարզիկների հաջողությունները ոգևորեցին նաև պատանիներին: Ավագների օրինակը խթան հանդիսացավ պատանեկան ծանրամարտի զարգացման համար:

Այդ տարիներից սկսած՝ մարզաձևը երիտասարդացավ: Մեծ թվով պատանիներ տարբեր երկրներում սկսեցին զբաղվել ծանրամարտով և հավասար պայքար մղել մեծահասակների կողքին: Պատանի մարզիկների ընդգրկվածությունը մարզաձևում այնքան զանգվածային էր, և հաջողությունները՝ այնքան ակնհայտ, որ ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի որոշմամբ 1978թ. սկսեց անցկացվել մինչև 20 տարեկան ծանրորդների աշխարհի և Եվրոպայի երիտասարդական առաջնություն, իսկ ավելի ուշ՝ 1991թ., ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի որոշմամբ՝ մինչև 16 տարեկան պատանիների առաջնություն: Այս որոշումները խթանեցին պատանեկան ծանրամարտի զարգացումը ամբողջ աշխարհում:

Ծանրամարտի զարգացումը նոր թափ ստացավ Հայաստանում 1991թ.՝ Անկախության հռչակումից հետո: Այս ժամանակաշրջանում գյումրեցի մարզիչները Աշոտ Մխիթարյանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ պատրաստեցին ծանրորդների նոր սերունդ, որի ներկայացուցիչները 1996թ. օգոստոսի 27-31-ը Բուլղարիայի Բուրգաս քաղաքում, ցուցաբերելով շատերի համար անսպասելի ցուցանիշ, 4 մասնակցով կարողացան ունենալ 3 հաղթող: Բանն այն է, որ 90-ական թթ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը թույլ չէր տալիս գումարներ նախատեսել մրցումներին մասնակցության համար, և կազմակերպիչներն ստիպված էին հովանավորներ փնտրել: Ի պատիվ գյումրեցի մարզասերների՝ հավաքվեց պահանջվող գումարը, որի շնորհիվ մեր ծանրորդները մասնակցեցին առաջնությանը: Վերջինիս մասնակցում էին 24 երկրների 123 ծանրորդներ: Հայաստանի թիմը, որում ներկայացված էին ընդամենը 4 գյումրեցի մարզիկներ, թիմային հաշվարկով գրավեց 4-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանին, Բուլղարիային և Թուրքիային, որոնք մասնակցում էին լրիվ կազմով (9 մասնակից): Նվաճած մեդալների թվով (9 մեդալ) գյումրեցիները 3-րդ տեղում էին: (աղյուսակ 1)

Աղյուսակ 1

| Հ/հ | Անուն, ազգանուն | Պոկում | Հում | Երկամարտ | Գր.տեղը | Քաշ, կարգը | Մարզիչը |
|-----|------------------|--------|-------|----------|---------|------------|---------------------------|
| 1 | Մակար Թամրազյան | 75 | 92,5 | 167,5 | I | 46կգ | Ա.Մխիթարյան Մ.Ղազարյան |
| 2 | Ռուդիկ Պետրոսյան | 100 | 122,5 | 222,5 | I | 59կգ | Ա.Մխիթարյան |
| 3 | Ռուդիկ Պետրոսյան | 115 | 142,5 | 257,5 | I | 64կգ | Ա.Մխիթարյան |
| 4 | Վախթանգ Հակոբյան | 77,5 | 95 | 172,5 | X | 54կգ | Ա.Բաղդյան |

Գյումրեցի ծանրորդներ Մակար Թամրազյանը (46 կգ՝ 338 միավոր) և Ռուդիկ Պետրոսյանը (64կգ՝ 323 միավոր) գլխավորեցին Եվրոպայի լավագույն ծանրորդների ցուցակը: 3-րդ տեղում Ռուսաստանի ներկայացուցիչն էր՝ 320 միավորով: Ռուդիկ Պետրոսյանի հրում վարժությունը 142,5կգ գրանցվեց որպես մայրցամաքի ռեկորդ:

Ոգևորված պատանիների հաջողություններով՝ 1997թ. սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Իշխան Զաքարյանը մարզչական խորհրդի հետ քննարկումներից հետո որոշեց Հունգարիայի Թաթաբանիա քաղաքում օգոստոսի 27-30-ը կայանալիք Եվրոպայի ծանրամարտի պատանեկան առաջնությանը հանրապետության թիմին գործուղել լրիվ կազմով (ինը մասնակից)՝ Ա.Մխիթարյանի գլխավորությամբ: Հայաստանի հավաքական թիմին անդամագրվեցին վեց գյումրեցիներ (թիմի կազմի և գրաված տեղերի մասին տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

| Հ/հ | Անուն, ազգանուն | Պոկում | Հրում | Երկա-մարտ | Գր.տեղը | Քաշ. կարգը | Մարզիչը | Բնա-կության վայրը |
|-----|-----------------------|--------|-------|-----------|---------|------------|---------------------------|-------------------|
| 1 | Տիգրան Վ. Մարտիրոսյան | 75 | 97,5 | 172,5 | I | 46 | Ա.Գևորգյան | Գյումրի |
| 2 | Արմեն Ղազարյան | 77,5 | 95 | 172,5 | II | 46 | Մ.Ղազարյան | Սպիտակ |
| 3 | Մակար Թամրազյան | 87,5 | 110 | 197,5 | I | 50 | Ա.Մխիթարյան Մ.Ղազարյան | Գյումրի |
| 4 | Էդվարդ Հարությունյան | 80 | 0 | - | - | 50 | Մխիթարյան Ա. | Գյումրի |
| 5 | Գևորգ Ալեքսանյան | 87,5 | 105 | 192,5 | IV | 54 | Ա.Փիլոսյան | Էջմիածին |
| 6 | Գևորգ Դավթյան | 102,5 | 115 | 217,5 | III | 59 | Վ.Բիչախչյան | Գյումրի |
| 7 | Ռադիկ Պետրոսյան | 125 | 147,5 | 272,5 | I | 70 | Ա.Մխիթարյան | Գյումրի |
| 8 | Ալեքսան Գասպարյան | 105 | 122,5 | 227,5 | IX | 83 | Ա.Մխիթարյան | Գյումրի |
| 9 | Գագիկ Սողոմոնյան | 110 | 130 | 240 | XI | +83 | Պ.Պողոսյան | Վեդի |

Պատանի ծանրորդների հիանալի մրցելույթների շնորհիվ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմը առաջին անգամ թիմային պայքարում 578 միավորով գրավեց 2-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանի հավաքականին (645 միավոր): 3-րդը Լեհաստանի հավաքականն էր՝ 527 միավորով: Նվաճած մեդալների հաշվարկով Հայաստանի պատանիների թիմը ճանաչվեց հաղթող. 15 մեդալ՝ 9 ոսկի, 3 արծաթ և 3 բրոնզ:

1997թ. մրցումներում հայաստանցի 4 պատանի ծանրորդներ՝ Արման Ղազարյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Մակար Թամրազյանը և Ռադիկ Պետրոսյանը, սահմանեցին Եվրոպայի նոր ռեկորդներ:

Նույն հաջողությունը կրկնվեց 1998թ. օգոստոսի 26-30-ին Իսպանիայում կայացած ծանրամարտի եվրոպական պատանեկան առաջնությունում, որտեղ մասնակցում էին 27 երկրների 141 ծանրորդ: Մեր հավաքականը մասնակցեց լրիվ կազմով՝ մարզիչ Ա. Մխիթարյանի գլխավորությամբ և 658 միավորով գրավեց երկրորդ տեղը՝ 13 միավորով զիջելով Ռուսաստանի թիմին: Հայաստանի հավաքականի կազմում ներկայացված էին 5 գյումրեցիներ:

Մեդալների հաշվարկով մեր հավաքականը դարձյալ առաջինն էր՝ 9 ոսկի, 7 արծաթ և 2 բրոնզ, ընդամենը՝ 18: Այս մրցումներում լավագույն ծանրորդ ճանաչվեց Գևորգ Դավթյանը (362,74 միավոր):

1999թ. օգոստոսի 24-30-ը իտալական Լիզևանո քաղաքում անցկացվեց ծանրամարտի Եվրոպայի պատանեկան (մինչև 16 տարեկան) հերթական առաջնությունը: Մեր ազգային հավաքականը մրցումների մեկնեց լրիվ կազմով (9 ծանրորդ): Մրցումներին մասնակցում էին 24 երկրների 117 ծանրորդ և 14 երկրի 54 ծանրորդուհի: Ազգային հավաքականի կազմում ընդգրկվեցին 4 գյումրեցիներ, որոնք ցուցաբերեցին փայլուն հաջողություն՝ գրավելով 2 առաջին, 1 երկրորդ և 1 չորրորդ տեղեր՝ առաջին անգամ Եվրոպայի առաջնություններում թիմային հաշվարկում նվաճելով չեմպիոնի բարձր կոչումը: Սա մեծ հաջողություն էր հայկական ծանրամարտի համար և անցած առաջնությունների ունեցած հաջողությունների գագաթնակետը: ՀՀ ծանրամարտի ազգային պատանեկան հավաքականը վաստակեց 656 միավոր և առաջ անցավ 634 միավոր հավաքած Ռուսաստանի հավաքականից: Թուրքիայի հավաքականը 578 միավորով երրորդն էր: (մեդալների քանակով 1-3 տեղերը գրաված երկրների նվաճումները տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

| Երկիր | ոսկի | արծաթ | բրոնզ | ընդամենը |
|-----------|------|-------|-------|----------|
| Հայաստան | 9 | 5 | 2 | 16 |
| Ռուսաստան | 6 | 4 | 6 | 16 |
| Բուլղարիա | 3 | 4 | 3 | 10 |

Աղյուսակ 4

Մինգլերի աղյուսակով առաջնության լավագույն քաղակը այսպիսին էր:

| Գրաված տեղը | Անուն, Ազգանուն | Երկիր | Մարզիկի քաշը | Երկամարտի ցուցանիշ | Միավորները |
|-------------|-----------------------|-----------|--------------|--------------------|------------|
| I | Լույանին Վլադիսլավ | Ռուսաստան | 53,0 | 230կգ | 384,94 |
| II | Դավթյան Գևորգ | Հայաստան | 69,45 | 295կգ | 382,94 |
| III | Մարտիրոսյան Տիգրան Վ. | Հայաստան | 58,25 | 240կգ | 363,99 |
| IV | Բարսեղյան Արկաղի | Հայաստան | 63,60 | 257,5կգ | 359,69 |

Աղյուսակ 5

1999թ. Իտալիայում կայացած Եվրոպայի առաջնություններում
ՀՀ պատանի ծանրորդների ցուցանիշները

| Հ/հ | Անուն, ազգանուն | Պոկում | Հրում | Երկամարտ | Գր.տեղը | Ֆաշ. կարգը | Մարզիչը | Բնակության վայր |
|-----|--------------------|--------|-------|----------|---------|------------|-------------|-----------------|
| 1 | Վարդանյան Արմեն | 70 | 85 | 155 | V | 46կգ | Պալյան Բ. | Վանաձոր |
| 2 | Դանիելյան Արթուր | 97,5 | 120 | 217,5 | II | 54կգ | Միրզոյան Օ. | Էջմիածին |
| 3 | Մարտիրոսյան Տիգրան | 105 | 135 | 240 | I | 59կգ | Գևորգյան Ա. | Գյումրի |

| | | | | | | | | |
|---|-------------------|-----|-------|-------|----|-------|--------------|--------------|
| 4 | Բարսեղյան Արկադի | 120 | 137,5 | 257,5 | I | 64կգ | Ալիեվ Ֆ. | Էջմիածին |
| 5 | Դավթյան Գևորգ | 135 | 160 | 295 | I | 70կգ | Բիչախյան Վ. | Գյումրի |
| 6 | Մանուկյան Կարեն | 120 | 147,5 | 267,5 | VI | 76կգ | Մխիթարյան Ա. | Գյումրի |
| 7 | Տեր-Աղամյան Էդգար | 130 | 160 | 290 | II | 83կգ | Մխիթարյան Ա. | Գյումրի |
| 8 | Թագմազյան Վահե | 117 | 155 | 272,5 | IX | 83կգ | Մուրադյան Ա. | Հոկտեմբերյան |
| 9 | Մալումյան Վարդան | 125 | 162,5 | 287,5 | IX | +83կգ | Պայյան Պ. | Վանաձոր |

1996թ-ից մինչև 2008թ. Պեկինի օլիմպիական խաղերը գյումրեցի պատանի ծանրամարտիկները ՀՀ ազգային հավաքականի կազմում բազմիցս մասնակցել են ինչպես Եվրոպայի, այնպես էլ աշխարհի առաջնությունների և այլ մրցաշարերի, իրենց ծանրակշիռ ավանդն ունեցել հաղթանակներում: Տղաների մարզական սխրանքը 2008թ. Պեկինի օլիմպիական խաղերում Հայաստանին պարզևեց 3 բրոնզե մեդալներ, որոնց շնորհիվ ծանրամարտում Հայաստանի հավաքականը հավաքած մեդալների թվով ճանաչվեց երրորդը՝ 5 մեդալով զիջելով Չինաստանին և 4 մեդալով՝ Ռուսաստանին: Ներկայացված փաստերը վկայում են, որ նորանկախ Հայաստանի ծանրամարտի մարզական լավագույն էջերը գրվել են առաջին հերթին գյումրեցի պատանի ծանրորդների կողմից:

Ժամանակակից աշխարհում սպորտը թանկ հաճույք է, որ պահանջում է նյութական և գիտական լուրջ ներդրումներ: 1988-ադետից հետո, նաև այսօր, այն Գյումրիում ծանր ժամանակներ է ապրում՝ նյութական, սոցիալական, բարոյահոգեբանական առումներով: Ավերված քաղաքում պատանիները մարզվում էին մարզական ու կենցաղային տարրական հարմարություններից զուրկ, չճեռուցվող դահլիճներում, որոնք նույնիսկ մարզասրահ անվանել չէր կարելի: Սկզբնական շրջանում ֆինանսական միջոցների սղության պատճառով պատանիները չկարողացան մասնակցել հանրապետությունում ու նրանից դուրս կազմակերպվող բազմաթիվ հավաքների կամ ընկերական մրցումների: Այսինքն՝ ուզում ենք նշել, որ պատանի գյումրեցիների վերոնշյալ հաջողությունների հիմքում ընկած չէին նյութական լավ բազան, պետական հովանավորությունը, մարզական ակտիվ կյանքը՝ մրցակցական հարուստ փորձն ու շփումները: Այս դեպքում հաջողության միակ գրավականը մարզիկների համար մեթոդապես և հոգեբանորեն ճիշտ մշակված ու կազմակերպված մարզումների համակարգի ապահավումն էր: Գյումրեցի մարզիչների ամենօրյա քրտնաջան մարզումները կազմակերպվում և անցկացվում էին գիտականորեն հիմնավորված մեթոդներով: Հիշենք, որ ՀՀ ծանրամարտի մարզչական խորհուրդը ուներ խորհրդային մարզման լավագույն փորձը, իսկ գյումրեցիները Եվրոպայում և աշխարհում հայտնի էին իրենց բարձր ցուցանիշներով (օլիմպիական 2 ոսկի, 2 արծաթ, աշխարհի և Եվրոպայի բազմակի չեմպիոններ և մրցանակակիրներ): Նկատենք, որ 90-ական թթ. գործող մարզիչները հիմնականում դեռևս խորհրդային շրջանում ձևավորված մասնագետներ էին և տիրապետում էին խորհրդային մարզական մեթոդներին, որոնք աշխարհում լա-

վագույններից էին: Անշուշտ, այս հանգամանքը պատանի ծանրորդների հաջողության անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Պատանիների հետաքրքրությունը ծանրամարտի նկատմամբ պայմանավորված է նաև 1970-ական թթ. ձևավորված ավանդույթներով: Ավագ սերնդի ներկայացուցիչների համբավն ու փառքը մի տեսակ հմայում և ձգում է պատանիներին՝ վատահոություն ու հույս ներշնչելով: Ծանրամարտ եկած պատանիների մեծ մասի համար սպորտը դառնում է սեփական ներուժը դրսևորելու, իրականանալու, ինչ-որ բանի հասնելու միակ միջոցը: Այստեղ դրդապատճառ է ոչ միայն հայտնի դառնալու, առաջինը լինելու, աշխարհ տեսնելու մղումը, այլ նաև որպես մարդ կայանալու, ընտանիքին նեցուկ լինելու, սոցիալական ծանր վիճակից, երբեմն նաև Գյումրիից դուրս գալու ձգտումը: Եվ նրանք սպորտն ընկալում են որպես սեփական ջանքերով ինչ-որ բանի հասնելու լավագույն միջոց:

Երբ միավորվում են մարզիչների փորձը, գիտելիքը, նվիրվածությունը և մարզիկների նպատակասլացությունը, աշխատասիրությունը, անձնական մոտիվացիան, արդյունքում ստացվում է այն, ինչ մենք այսօր ունենք: Բոլորովին էլ պատահական չէ, որ նորանկախ Հայաստանի պատանի ծանրամարտիկների թիմը տարիներ շարունակ կազմված էր կա՛մ միայն գյումրեցիներից, կա՛մ հիմնական կորիզը գյումրեցիներն էին: Առավել հետաքրքիր և կարևոր է, որ նրանք ոչ միայն մասնակցում են, այլ նաև ցուցադրում լավագույն արդյունքներ՝ մրցակցելով աշխարհաքաղաքական, տնտեսական, մարզական գերտերությունների (Ռուսաստան, Չինաստան) մարզիկների հետ, որոնք հսկայական միջոցներ են ներդնում մարզաձևում: Գյումրեցիների երկար տարիների մարզչական առաջադեմ փորձը սովել է իր պտուղները՝ կրկին ապացուցելով, որ բարձր ցուցանիշները մարզական առաջադեմ համակարգի և մեթոդիկայի մշակման ու կիրառման արդյունք են:

ЮНЫЕ ТЯЖЕЛОАТЛЕТЫ ИЗ ГЮМРИ НА ПЕРВЕНСТВАХ ЕВРОПЫ В 1996-2000ГГ.

___ *Резюме* ___

___ *А. Матевосян* ___

Статья посвящена анализу спортивных достижений юных тяжелоатлетов из Гюмри, представлявших Армению на первенствах Европы в 1996-2000гг. Обширный фактический материал проанализирован с точки зрения особенностей условий и методов подготовки гюмрийских тяжелоатлетов и актуален для изучения истории тяжелой атлетики в Армении.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մաթևոսյան Ազատ Վարշամի – պրոֆեսոր, ԳՊՄԻ ֆիզիկական դաստիարակության ամբիոն, E-mail: elenavard@rambler.ru

Անահիտ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Աստուծոյ հետ խօսելու միակ լեզուն հայերէնն է:
Հայերէնը հարուստ լեզու է, լիովին պարունակում է
մարդկային ձայների բոլոր հնչիւնները:
Ջորջ Բայրոն

Բայրոնը բազմաթափառ և բազմաչարչար իր կյանքի ընթացքում մի օր Վենետիկի մոտ, մի կղզում, հանդիպում է թուրքական բնակալությունից փախած և այնտեղ մշտական բնակության համար հաստատած մի խումբ հայերի: Այդ կղզին գտնվում է Վենետիկի հարավային կողմում, և 12-րդ դարի երկրորդ կեսին անվանվել է Սբ Ղազար, 13-րդ դարից հայտնի է դարձել որպէս Հայոց Տուն: Սակայն այն ավելի հռչակվում և հայտնի է դառնում, երբ Մխիթար Մեքաստացին իր 11 աշակերտներով հաստատվում է այստեղ, ստեղծում Մխիթարյանների միաբանությունը՝ հոգևոր կարգի մի հիմնարկություն, 1717թ. սեպտեմբերի 8-ին: Այդ օրից այն դառնում է հայ լեզվի, գրականության և մշակույթի ուրույն կենտրոն, որը աշխարհին ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունն ու պայքարը:

Անգլիական խավարամուլներին մերկացնող և օսմանյան բնակալության տակ խոշտանգված ժողովուրդների պաշտպան բանաստեղծը չէր կարող անտարբերությամբ անցնել այդ նույն բնակալության տակ տառապող հայ ժողովրդի կողքով: 1816թ. նոյեմբերի 11-ին, ժամանելով Վենետիկ, Բայրոնը հրապուրվում է Սբ Ղազարի Հայկական Վանքով և միաբանությամբ: «Այդ ժամանակ ուրիշ ճամփորդների նման ես էլ խիստ հետաքրքրվում էի «Սբ Ղազարի մենաստանի ընկերությամբ», - գրում է նա:¹ 1816թ. դեկտեմբերի 1-ին տարագիր բանաստեղծը, գոնդով նստած, դիմում է դեպի Սբ Ղազար կղզին: «Դեկտեմբերի 1-ին մեծահռչակ և աշխարհաքարոզ անգլիացի բանաստեղծ Lord Byron-ը, որի գրվածքները ոսկու արժեք ունեին, այցելության եկավ մեր վանքը... Նա աշխույժ, ուրախ բնավորությամբ և կրակոտ աչքերով մի երիտասարդ էր. թեև կաղ էր մի ոտքից, բայց գեղեցիկ էր դեմքով», - գրում է Հ. Ավգերյանը իր «Ինքնապատում օրագրության» մեջ:²

Սբ Ղազարում մի ամբողջ հետաքրքիր աշխարհ է բացվում Բայրոնի համար: Նրան դիմավորում են Ս. Սումայանը, Հ. Ավգերյանը և այլ վանականներ:

Վարդապետ Հարություն Ավգերյանի պաշտոնն է եղել ընդունել և ուղեկցել կղզի այցելած հյուրերին: Ավգերյանը Բայրոնին առաջնորդում է վանքի գրադարան: Նրան ցույց են տրվում մագաղաթյա թանկարժեք նմուշներ հայ հին գրչագրերից, այդ թվում նաև՝ Մլքե թագուհու պատմական նշանավոր ավետարանը, ինչպես և հազվագյուտ թարգմանություններ հունարեն կորած բնագրերից, ասորերենից և պարսկերենից: Բայրոնը ծանոթանում է հայ բանաստեղծության, նկարչու-

¹ *Ղաշտենց Խ.*, *Բայրոնը և հայերը*, Եր., 1959, էջ 38:

² *Նույն տեղում*, էջ 41:

թյան և ճարտարապետության հատընտիրներին: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան, Բայրոնը նորից է գալիս: Նա այցելում է վանքի տպարանը և Ավգերյանի հետ երկար զրուցում է հայ պատմության և մատենագրության շուրջ:

Զրույցի վերջում Բայրոնը խնդրում է Ադոնց արքահորը և վարդապետ Ավգերյանին թույլ տալ իրեն բնակվել վանքի մեջ՝ հայերեն սովորելու և հայ մշակույթին ավելի հանգամանորեն ծանոթանալու համար: Սակայն հայտնի է, որ Ադոնց արքահայրը մերժել է նրան վանքում բնակվել՝ վախենալով այդ այցելության քաղաքական բնույթից. Բայրոնը, հայտնի բանաստեղծ լինելով հանդերձ, քաղաքական խոշոր դեմք էր՝ տարագրված Անգլիայից:

Մերժելով ըմբոստ բանաստեղծին կողմում բնակվել՝ վանականները միաբերան խոստանում են ամեն հարմարություն տրամադրել նրան իրենց վանք հաճախելու, հայերեն սովորելու և հայ մշակույթին մոտիկից ծանոթանալու համար:

Երկօրյա այցելության տպավորությունն այնքան խորն էր, որ Բայրոնը համաձայնում է վանահոր առաջարկին: Նա գոհ էր տեսածից և լսածից: Նրա վրա հատուկ տպավորություն է թողնում վանականներից մեկը՝ Հարություն Ավգերյանը, որը քառասունն անց, կորովի դեմքով, կրակոտ աչքերով, սև մորուքով և հրաշալի ձայնով մեկն էր: Այդ ամբողջ ընթացքում նա էր առաջնորդել մեծ բանաստեղծին: Հայրենասեր և զարգացած այս մարդը, հայերենից բացի, գիտեր մի քանի հին ու նոր լեզուներ՝ հունարեն, լատիներեն, եբրայերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հունգարերեն և գերմաներեն: Հնուտ լեզվաբան էր և թարգմանիչ: Նա է հայերեն թարգմանել Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Լամբրոնացու «Ճարտասանություն»-ը և Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ը առաջինը հնչեցրել իտալերեն և այլ լեզուներով:

Ավգերյանը միաժամանակ երևելի պատմաբան էր, անգիր գիտեր Խորենացու, Եղիշեի և մյուս նշանավոր մատենագիրների գործերը: Պատրաստակամ էր որպես ուսուցիչ և արժանապատիվ իբրև վանական: Հենց նա էլ, հուրախություն Բայրոնի, դառնում է նրա հայերենի ուսուցիչը:

«Հայր Պասկալ» (Padre Pascual) է անվանում Բայրոնն իր ուսուցչին, Ավգերյանը նրան փառաբանելով անվանում է խենթ:

Վանականները հայերեն դասերի համար Բայրոնին հատկացրել էին Գրչագրաց կամ Փոքր մատենադարան կոչվող սենյակը, որի լուսամուտը նայում էր ծովին: «Եվ ահա այդ սենյակում, որից արևելքի հնության շունչ էր փչում, նա սկսեց պարապել հայոց լեզվով» (Յու. Վեսելովսկի «Բայրոնը Մխիթարյանների մոտ» Գիր և արվեստ):³

Դեկտեմբերի 9-ին Մըրրեին ուղղած նամակում Բայրոնը գրում է. «Սկսել եմ և առաջ եմ տանում իմ հայոց լեզվի ուսումը, որը ես հաղթահարում եմ ուժերիս չափով, հայոց Մենաստանում, ուր ես հաճախում եմ ամեն օր, դասեր առնելու մի գիտնական արեղայից և ձեռք եմ բերել մի շարք եզակի և օգտակար տեղեկություններ այդ արևելյան ժողովրդի գրականության և բարբերի վերաբերյալ: Նրանք

³ *Դաշտենց Խ., նշվ. աշխ., էջ 50:*

մի հաստատություն ունեն այստեղ՝ մի եկեղեցի և Վանք՝ 90 արեղաներով, որոնցից ոմանք շատ գիտուն և զարգացած մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Հայերենը (որ կրկին է՝ գրաբար և աշխարհաբար) ես գտնում եմ դժվար, բայց ոչ անհաղթահարելի (գեթ այդպես հույս ունեմ)».⁴

Հայերեն սովորելու շարժառիթը Բայրոնի բացատրությամբ չափազանց ուշագրավ է:

Դեկտեմբերի 5-ին Թոմաս Մուրին ուղարկած նամակում Բայրոնը Վենետիկից գրում է.

«Զբոսանքի կարգով ես ամեն օր հայերեն եմ սովորում հայոց Մենաստանում: Ես գտա, որ միտքս զբաղեցնելու համար մի դժվար աշխատանք էր հարկավոր ինձ: Սրանից ավելի դժվար զբոսանք ես չէի կարող գտնել այստեղ: Ես այն ընտրեցի, որ նրանով զբաղվելով՝ միտքս տանջեմ: Դա մի հարուստ լեզու է, այսուամենայնիվ, և կարող է մեծապես հաստուցել իրեն սովորողի նեղությունը: Ես ջանում եմ և պիտի առաջ գնամ, բայց չեմ երաշխավորի իմ դիտավորությունների կամ հաջողությունների համար»:⁵

Սակայն Բայրոնի հայերեն սովորելու հիմնական շարժառիթը պետք է որոնել այն բացառիկ մեծ սիրո մեջ, որ նա տածում էր դեպի աշխարհի ճնշված հնագույն ժողովուրդները:

Ավգերյանի հիշատակությամբ, Բայրոնը բուռն ցանկություն է հայտնել սովորել հայերեն՝ հայ բանաստեղծության ընտիր հատվածները կարդալու համար:

Քերականական կանոններին զուգընթաց, Ավգերյանը իր անգլիացի աշակերտին հրամայում էր կտորներ հայ հին և միջնադարյան գրականությունից: Հայերենից բացի, նա ավանդում էր հայոց պատմության դասեր, որը Բայրոնն ունկնդրում էր լարված ուշադրությամբ՝ աչքը երկար պահելով Արարատի վեհատեսիլ պատկերին:

Դեկտեմբերի 24-ին Թոմաս Մուրին ուղղած իր նամակում Բայրոնը գրում է. «Կյանքս շատ կանոնավոր ընթացքի մեջ մտավ: Առավոտները գոնդոլով գնում եմ հայերեն կադալու (hobbie) Մբ Ղազարի միաբանության արեղաների հետ և օգնելու նրանցից մեկին, սրբագրելով անգլերենի բաժինը մի անգլո-հայ քերականության, որ նա այժմ հրատարակում է»:⁶

Մարտի 25-ին Բայրոնը գրում է Սըրրեին. «Հայերեն քերականությունը լույս տեսավ, այսինքն՝ միայն մեկը, իսկ մյուսը դեռ ձեռագիր վիճակում է»:⁷

Բայրոնը հայերեն է սովորել մի ամբողջ ձմեռ:

«Եվ նա սկսեց վանք հաճախել հիսուն օր շարունակ ու սովորում էր օրական երկու-երեք ժամ և, մանավանդ, զրույցներ էր ունենում սփոփանքի համար» (Ավգերյան «Ինքնապատում օրագրության»):⁸

⁴ *Դաշտենց Խ.*, նշվ. աշխ., էջ 50:

⁵ *Նույն տեղում*, էջ 52:

⁶ *Նույն տեղում*, էջ 54:

⁷ *Նույն տեղում*, էջ 58:

Ավգերյանի և Բայրոնի մտերմությունը օրավուր խորանում էր: Բայրոնի հետաքրքրությունը և համակրանքը հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի հանդեպ սկիզբ դրեցին մի համագործակցության, որը տվեց իր արգասիքը. 1817թ. առաջին անգամ լույս տեսավ անգլո-հայ քերականության դասագիրքը, որ կոչվում էր «Քերականություն Անգլիական և Հայերեն»: Նրա ճակատին՝ ներսի կողմից, անգլերեն և հայերեն գրված էր. «Որչափ լեզուս գիտե ոք խոսիլ, այնչափ անգամ ևս մարդ է նա»: 1817թ. հունվարի 2-ին Բայրոնը Սըրբրեին գրում է. «Մի ուրիշ ծրարով քեզ եմ ուղարկում Անգլո-հայ քերականությունից մի քանի թերթեր, հայերի օգտագործման համար, որը ես քաջալերեցի և որի հրատարակությունը արդարև աջակից եղա (դա ինձ վրա նստում է միայն 1000 ֆրանսիական լիվրե)»:՝⁹ Սա հաստատում է, որ Բայրոնը ոչ միայն հայերեն է սովորել, այլև իր ծախսով տպագրել է վերոհիշյալ Անգլո-հայ քերականության դասագիրքը: Ավգերյանը առաջաբանի վերջում շնորհակալություն է հայտնում Բայրոնին. «... և լինել շնորհակալ երախտապարտ Միլորտին»:

Անգլո-հայ քերականությունը Բայրոնի և Ավգերյանի առաջին գրական համագործակցության արգասիքն էր:

Միացյալ ջանքերով ձեռնարկելով Անգլո-հայ քերականության դասագրքի հրատարակությունը հայերի համար՝ Բայրոնի առաջարկությամբ և քաջալերանքով նրանք միաժամանակ կազմում են հայ լեզվի քերականության դասագիրք անգլիախոս ուսանողների համար: Ավգերյանը գրում է. «Այա հաղորդեց կազմել նաև մեկ ուրիշ հայերեն և անգլերեն քերականություն հօգուտ իր ազգակիցների»:՝¹⁰ Այս աշխատությունը լույս է տեսնում 1819թ.-ին, ապա 1832թ.-ին և կոչվում է «Քերականություն հայերեն և անգլիական» («A Grammar Armenian and English»): Բայրոնի նպատակն է եղել իր եվրոպացի հայրենակիցներին ուսուցանել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի լեզուն, հետաքրքրություն արթնացնել նրանց մեջ դեպի հայերի հայրենիքը և մշակույթը: Այդ նպատակով դասագրքի ճակատին իբրև բնաբան գրված է Օննոց գրքի խոսքը.

«Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ»:

Դասագրքի բաժիններից մեկում բնագրի հետ զետեղված են մի շարք թարգմանություններ, այդ թվում և Բայրոնի՝ հայերենից կատարած թարգմանությունները:

Թե բարեկամության ինչպիսի մտերմություն էր հաստատվել Բայրոնի և իր ուսուցչի միջև, երևում է 1818թ. հունվարի 27-ին Սըրբրեին գրած նամակից. «Իմ հայրը, այսինքն՝ իմ հայ Հարություն հայրը, մեր Մենաստանի բոլոր մյուս հայերի անունից հղում է քեզ հարգալից ողջույններ»:՝¹¹

Կազմված և հրատարակված էր Անգլո-հայ քերականությունը: Լույս էր տեսել Հայ-անգլերեն առաջին քերականության դասագիրքը: Ասպարեզ եկավ

⁸ *Դաշտենց Խ.*, նշվ. աշխ., էջ 59:

⁹ Նույն տեղում, էջ 61:

¹⁰ Նույն տեղում, էջ 67:

¹¹ Նույն տեղում, էջ 71:

Անգլո-հայ բառարանը: Չնայած բառարանի փաստական հեղինակը համարվում է Հարություն Ավգերյանը, խիստ զգալի է մեծ բանաստեղծի մասնակցությունը այդ գործում ևս: Բառարանը տպագրվեց 1821թ.-ին: Այն ունի անգլերեն ընդարձակ առաջաբան, հայերեն առաջաբանից զատ, որում կարդում ենք. «... մենք հայարտ ենք անվանելու Լորդ Բայրոնին՝ ամենասկանալորը անգլիական բանաստեղծներից, անգամ անգլիական բանաստեղծության ներկա հրաշալի դարում, որը մեր միջև հայերեն սովորելուց հետո դրդեց մեզ հրատարակել անգլերեն լեզվի համառոտ մի քերականություն և նույնպես օգնեց մեզ կազմելու հայ լեզվի մի անգլերեն քերականություն իր հայրենակիցների օգտագործման համար»:¹²

Այնուհետև Բայրոնը Վենետիկի Սբ Ղազար կղզում ծանոթացել է հայերեն Աստվածաշնչին, նույնիսկ թարգմանություններ է կատարել դրանից (այն մասերը, որ պակասել են անգլիական Bible-ում): 1818թ. մարտի 31-ին նա գրում է Ջոն Սըրրբեին. «Գրել եմ արդյոք քեզ, որ ես թարգմանել եմ առաքելական թղթերից երկուսը: Դա մի թղթակցություն է Սբ Պողոսի և կորնթացոց միջև, որ մեր թարգմանության մեջ գոյություն չունի, այլ կա հայերենում, և, ըստ իս, խիստ վավերական է: Ես այն թարգմանել եմ Սբ Գրքի հատուկ անգլերենով»:¹³

Բայրոնի՝ հայերեն արձակից կատարած թարգմանությունները, թարգմանական վարժություններ լինելով հանդերձ, արտահայտում են մեծ բանաստեղծի բուն հետաքրքրությունն ու սերը դեպի հայ ժողովուրդը և նրա գիրն ու գրականությունը: Բայրոնը՝ որպես բանաստեղծ, մեծապես հետաքրքրվել է նաև հայ պոեզիայով: Չկարողանալով լրիվ հասկանալ մեր բանաստեղծական երկերը՝ նա խնդրել է իր ուսուցչին հայ բանաստեղծության ընտիր հատվածները հայերենից իտալերեն թարգմանել, որ ինքը կարողանա կարդալ դրանք: Ավգերյանի օրագրության մեջ ասված է. «Այս խնդրեց, որ իտալերեն թարգմանվի հայոց բանաստեղծությունների ընտիր հատվածներ ... որոնց մեջ նրան դուր եկավ Հովհաննիսի մասին Շնորհալու գրած հանձարեղ երգը»:¹⁴

Շատերն են փորձել գտնել Բայրոնի հայերով համաշխարհային լինելու պատճառները. «Նա (Բայրոնը) սիրում ու հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ոգին: Այս էր գուցե հայերի նկատմամբ ունեցած իր հիացմունքի բանալին, որովհետև նա գտավ նրանց մեջ մի ազգ, որին բնությունն ու ազգության կորուստը չէին կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որը, հակառակ իր պարտության՝ անաղարտ է պահել իր ավանդույթների վեհությունը և իր հին համոզմունքների գեղեցկությունը»:¹⁵

Կազմելով Հայ-անգլերեն քերականության դասագիրքը՝ Ավգերյանը խնդրում է Բայրոնին մի առաջաբան գրել: Բանաստեղծը սիրով հանձն է առնում այդ գործը: Եվ ահա հրապարակ է գալիս Բայրոնի վերոհիշյալ նշանավոր Առաջաբանը, որը գրված է անկեղծ ու ջերմ շնչով: Այն քաղաքական կարևոր փաստա-

¹² Տե՛ս «Բառարան Անգլիական և Հայերեն»-ի անգլերեն առաջաբանը, Վենետիկ, 1821:

¹³ *Պաշտենկ Խ.*, նշվ. աշխ., էջ 81:

¹⁴ *Նույն տեղում*, էջ 87:

¹⁵ *Պաշտենկ Խ.*, նշվ. աշխ., էջ 88:

թուղթ է, որում հանճարեղ բանաստեղծն արտահայտել է իր հույզերն ու մտքերը հայոց լեզվի և հայ ժողովրդի մասին.

«Անգլիացի ընթերցողը հավանորեն պիտի զարմանա իմ անունը այսպիսի մի գործի հետ առնչված տեսնելով և գուցե ինձ, իբրև լեզվագետի, իմ արժանիքից ավելի դրվատի: Չուզենալով գիտակցաբար մեղսակից լինել այդպիսի մի պատրանքի, կարելոյն չափ համառոտակի պիտի բացատրեմ իմ անձնական դերը սույն գործի հորինման մեջ և այն դրոշապատճառները, որ ինձ դեպի այն մղեցին: Երբ 1816թ. Վենետիկ հասա իմ միտքն այնպիսի վիճակի մեջ էր, որ կարիք էր զգում ծանր զբաղումի և այնպիսի մի զբաղումի, որ իմ երևակայության համար քիչ ասպարեզ թողներ և հետապնդումիս համար բավականաչափ դժվարություն հարուցեր: Այդ ժամանակ ես էլ մյուս ուղևորների նման խիստ հետաքրքրվում էի Մ. Ղազարի մենաստանի հասարակությամբ, որը կղերական հաստատության մեջ միավորում էր բոլոր առավելությունները առանց յուրացնելու դրա մոլություններից որևէ մեկը: Կացարանի մաքրությունը, հանգստավետությունը, արեղաների ազնվությունը, բարեկրթությունը և եղբայրական առաքինությունները անտարակույս պետք է համոզեն աշխարհիկ մարդուն, թե «կա մի ուրիշ և ավելի լավ բան» նույնիսկ այս կյանքի մեջ:

Այս մարդիկ քահանաներ են մի հարստահարված և ազնվական ազգի, որը հրեաների և հույների նման տարագիր և ստրուկ է եղել առանց առաջինների պես խստասիրտ կամ վերջինների պես գերի դառնալու: Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխառության և վաստակել է ամեն պատիվ, որ կարող են գերության մեջ վաստակել առանց խարդախության: Բայց նրանք, այնուամենայնիվ, երկար ժամանակ գրավեցին իրենց բաժինը «Գերության Տան» մեջ, որ վերջերս բազմապատկել էր իր անթիվ օթևանները:

Գուցե դժվար կլինեք որևէ այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիրներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրտության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, - իսկ դա անցյալում դառն է եղել, - ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս միայն նրանց լեզուն կարիք ունի ավելի շատ ուսումնասիրվելու, ավելի գրավիչ դառնալու համար: Եթե Մ. Գիրքը ուղիղ ըմբռնենք, Հայաստանի մեջ էր, որ զետեղված էր դրախտը, Հայաստան, որ Ադամի սերունդների չափ նույնքան թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության համար այն մարդու երջանկությանը, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանի մեջ նախ ջրհեղեղը տեղաց և ապա աղավնին հանգչեց: Բայց կարելի է ասել, թե դրախտի անհետացման հետ սկսվեց նաև այս երկրի տարաբախտությունը, որովհետև թեպետև երկար ժամանակ նա եղավ մի գորավոր թագավորություն, բայց հազիվ երբեք անկախ մնաց. և՛ պարսից սատրապները, և՛ թուր-

քական փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն ըստ իր հատուկ պատկերի»:¹⁶

Բայրոնն այս Առաջաբանը ներկայացնում է Ավգերյանին, բայց Մխիթարյանները հրաժարվեցին այն տպագրելուց քաղաքական նկատառումներից ելնելով: Բայրոնը ազդեցիկ ուժ էր դարձել Եվրոպայում: Նրա ամեն մի անգգույշ խոսքը (նա երգիծել էր թուրքերին և պարսիկներին) կարող էր Մենաստանի խաղաղությունը վրդովելու պատճառ դառնալ: Նրան առաջարկում են ավելի «անվնաս» առաջաբան գրել Հայ-անգլերեն քերականության համար: Նա խոստանում է և, Ավգերյանի պատմաձի համաձայն, այլևս դադարում է Հայոց կղզի հաճախելուց:

«Դուք վախենում եք խիստ կարծիք տալել ձեզ ճնշողների մասին: Ստրուկնե՛ր և վախկոտնե՛ր, դուք արժանի եք բիրտ իշխանավորների: Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք», - գոչել է նա Մխիթարյան հայրերի երեսին:¹⁷

Այդուհանդերձ, լռող Բայրոնի Առաջաբանը այդ օրերում մի ուժգին անհագանգ էր Եվրոպայի մեջ՝ մեր ազգի զարթոնքին ու դատին նվիրված: Նրանով Բայրոնը ասպարեզ էր իջնում որպես Հայաստանի և հայ ժողովրդի ազատության մեծ ջատագով:

Թումաս Մուրը այս Առաջաբանը գտավ բանաստեղծի թղթերում և հրապարակեց նրա կենսագրության մեջ, որտեղից էլ թարգմանվեց ու տարածվեց ամբողջ աշխարհում, գրեթե բոլոր քաղաքակիրթ լեզուներով:

Առաջաբանը գրված էր անգլերեն լեզվով, քանի որ Բայրոնն այնքան չէր սովորել հայերեն, որ կարողանար իր վերոհիշյալ առաջաբանը շարադրել հայերենով, բացի այդ նրա նպատակն էր անգլիացիներին հասու դարձնել այն, կցել իր հայրենակիցների համար կազմած Հայերեն-անգլերեն քերականության դասագրքին:

Թեպետ Բայրոնն Առաջաբանի կապակցությամբ գծոված էր Մխիթարյանների հետ, Հունաստան մեկնելուց առաջ նա այցելել է Մբ Ղազար կղզի: Սրտառույշ է եղել նրա հրաժեշտը իր հայ բարեկամներին: Բանաստեղծի մեկնումից հետո երկու ծերերը՝ «հայր Սոմայանը և հայր Ավգերյանը, իրարու երես նայեցան... մեկնած էր ան, զոր տարիներով սիրած էին իրենց անառակ տղուն պես. ան պիտի մեկներ դեպի Արևելք... և երկուքի ալ աչքերեն գույգ մը արցունքի կաթիլներ գլորեցան, ու տղու պես լացին»:¹⁸

Կղզու հայ բնակիչները սիրով են պահպանում Բայրոնին հիշեցնող և նրա անվան հետ կապված բոլոր մասունքները՝ Բայրոնի փոքրիկ գրչահատը, պատից կախված նրա երիտասարդ հասակի նկարը, կղզու վրա մինչև օրս գոյություն ունեն մեծ բանաստեղծի ձիթենիները, որոնք կոչվում են «Բայրոնյան ձիթենիք»: Այդ ծառերի տակ է երագել Անգլիայի մրրկաշունչ զավակը: Պահպանվում է նաև բանաստեղծի հայերեն ստորագրությունը վանքի այցելուների գրքում: Այդ ստորագրու-

¹⁶ *Դաշտենց Խ.*, նշվ. աշխ., էջ 91-93:

¹⁷ *Նույն տեղում*, էջ 95:

¹⁸ *Նույն տեղում*, էջ 109:

